

ՆՈՐ ԾՐԱԿԱ

ՎՐԱՅԻ

# ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա. Մ Ա Ա Գ Ի Բ

№ 9

ՍԵՊՏԵՄԲԵՐ

1906



Թ. Ե. Հ. Լ. Բ. Ռ.

Տպարան՝ Հայ ԲՈՒԺԵՐԵՐ. Խովարդութ. № 15.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

### № 9

1. ՎՈԼՏԵՐԻ ԿԱՆԴԻՑ վէպ, թարգմ. Ա. Կ.	5
2. STANCES, ոտանաւոր Պահանձ 8. Գը-ի . . . . .	69
4. ԴՕՆ ԿԱՐԱՊԵՏԻ ԱՐՃԱՀԱՅՆՔԸ Դէղի Կղերաստան Փերնամոք . . . . .	116 —
5. ԵՐԲ (Էստոնիականից), ոտան. Պահանձ 8. Գը. . . . .	120
6. ԱԴՐԱՐ. ՀԱՐՑԸ ԵՒ ՆՐԱ ԼՈՒԾՈՒՄՔ ՌՈՒՍԱՍՏԱ- ՆՈՒՄ Երուանդ Սարգսեան . . . . .	121
7. «ԱԶԴԱՅՑԻՆ ԿԱՐԱՎԱՐՈՒԹԻՒՆ» (փաստաթղթեր) . .	133
8. ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԴԵԱԲՐԵՐԸ Սար.—Յով. . . . .	139
9. ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՏԵՆԱԽՈՍՈՒԹԻՒՆ — 1) Դանցեանի «Պատմական բերականութիւն», — 2) Կա- խազիծ, Կանոնակը, եւ ծրագիր ճայց եկեղ. տարք, ուսումն. — 3) Լեռմանալրուետարիստը եւ յեղափո- խութիւնը: . . . . .	140
10. ՆՈՐ ՄԱՅՈՒԱՆ ԳՐԲԵՐ . . . . .	
11. ՆԵՐԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ — մի տարուայ յեղափոխական դաստիարակութիւն: — Արեան բաղանիք: — Հասարակա- կան կարծիքի որոտմ: — Ծուս բիւրօկրատների ամօթ- խածութիւնը: — Ա.-Դ.հմ.-իան բռնի միջոցներով փող կոր- դերու մասին: — Գիտակից մասսայի գերը: — Էջմիածնի Կենտրոնական ժողովի բնորոշումը մի քանի խօսքերով: — Թարմութիւն թէ խակութիւն: Լ. Ս.-ի: . . . . .	163
12. ԱՐՏԱՐԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. — Պարսկաստանի եւ Թիւրքիա- յի վերածնութիւնը: Լ. Ս.-ի: . . . . .	169
13. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ . . . . .	

Նոր շրջան VI տարի

Հրատ. XVIII տարի

# ՄՈՒՐՃ

ԴՐԱԿԱՆ, ՀԱՍՏԱՏԻՎԱԿԱՆ ԵԲ ՔԱՂՋԵՑԻՆ

Ա.Մ Ա Ա.Գ Ի Ռ

№ 9

ՍԵՊՏԵՄԲԵՐ

1906



ԹԻՖԼԻՍ

Տպարան „ՀԵՐՄԱՆ“ Ընկ. Մալաք. փող., 15.  
1906



ԱՅՆ ՏԵՍԻԿ

ԲՈԼԵՆԴԻԿԱՊԻԹԻՒՆ

ԳԵՂՈՒՆԻՆ իր ծանօթ ծրագրով,  
իրեն յատուկ գեղարուեստական և  
զրական բովանդակութեամբ հրա-  
սարակուած է, Կովկասահայ մեծ  
զանգուածը փուլկոսորէն սփոփեց  
արկած եւ թքքահայը, հիմա ինքն է  
լացողը, ինքն է վիրաւորուածը, և  
ինքն է սովի ու լըակի մատնուածը.  
այդ մեր հայութիւն ամենէն ադնիւ-  
դաւակներուն հիմա ձեռք կու տայ  
ՔԱՐՄԻՐԾՈՒԹԻՒՆԸ, ձեռնպահ չի  
մնար և Գեղունին, որ Կովկասահա-  
յուն սրախն մէջ համալրանքի բագին  
մ'ունի. Ս. Ղազար 1000 օրինակ  
այս նոր Գեղունին (1906) յոց  
թիֆլիցի ի նպաստ կովկասահայ  
արկածեալներու յանձնածողովնի,  
ընդհանուր հայութեան այն ամեն  
անհատ որ տառապեալներու զանձա-  
նակն մէջ համեստ լումայ մը—10  
ֆու. Կետելու կարողութիւնն ունի,  
ցանկալի է որ զիմէ այդ յանձնա-  
ժողովին, ուսկից փոխարէն իր բա-  
րեկործութեան, կը ստանայ նոր  
հրատարակուած Գեղունին, որուն  
կատարելութեան հումար թերթին մի  
հնոյն վարչութիւնը ամեն ճիգ ու  
ջանք թափած է և աւելի նուան-  
գով:  
Գեղունին բաժնեգինն է 10 ֆր..

ԳԵՂՈՒՆԻՆ յօդուածներու ցուցա-  
հանդէս մը չի բանար, այլ ըստ Եւ-  
րոպական բացառիկ պատկերազարդ  
թերթերու, հրատարակած է գեղեց-  
կագիտականին վերաբերեալ թատե-  
րագրութիւն մը, ուր կը կարգանք  
Ֆառաւուէն աւելի հրատուրիչ, Մէ-  
ֆիսանգիւլէն աւելին զերագոյն լիդ-  
ալի տէր և որ Պայրընի Մանքրէ-  
մին ոգերանսութեան խոսովը, այն  
լեզուով, ինչ որ մատշելի և սիրելի  
է Ռուսահայունն եւ ի միջի մէկ քա-  
նի յօդուածիկներու, նոր Գեղունին  
հրատարակած է Ռուսահայոց վրայ  
ժամանակակից զէպքերու առթիւ  
ամիսով յօդուած մը—նկարագրու-  
թիւն ուսւհայ-թաթար քաղաքակ-  
տական տառանումին: Պատկերներէն  
մեծ մասը հայութեան անցեալ փառ-  
քի ցոլացումներն են. և այս ժամուս  
երր մեր աշուշներուն վրայ զես կը  
թրիսոյաց վեհերստ արցունքը, կընանք  
մասիթարուիլ որ ունինք անցեալ մը  
ոչ միայն խիզախօրէն նահատա-  
կուած, այլ աւելի գիւցանական:  
Ընդհամենը 115-էն աւելի շքեղատիպ  
միագոյն և կը միագոյն պատկերներ  
կը գեղարադէն նոր Գեղունիի  
էջերն:

Մեր հասցէն է՝ Imprimerie  
Armenienne  
St. Lasare VENISE (Italie)

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

### № 9

1. ՎՈԼՏԵՐԻ ԿԱՆԴԻՏ վէպ, թարգմ. Ա. Կ. . . . .	5
2. STANCES, ոտանաւոր վարչական Տ. Դը-ի . . . . .	69 96
4. ԴՕՆ ԿԱՐԱՊԵՏԻ ԱՐՇԱԿԱՆՔԸ ԴԵՊԻ ԿՂԵՐԱՍԱՆ Փեղնանդո . . . . .	116
5. ԵՐԲ (Էստոներէնից), ոտան. վարչական Տ. Դը. . . . .	120
6. ԱԳՐԱՐ. ՀԱՐՑԸ ԵՒ ՆՐԱ ԼՈՒԾՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱ- ՆՈՒՄ Երուանդ Սարգսեան . . . . .	121
7. «ԱԶԳԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ» (փաստաթղթեր) . .	133
8. ՊԱՐՍԿԱՍԱՆԻ ԳԵԱԲՐԵՐԸ Սար.—Յով. . . . .	139
9. ՔՆՆԱԴԱՏԱԽԹԻՒՆ ԵՒ ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ — 1)	
Վանցեանի «Պատմական քիրականութիւն», — 2) Նո- խափիծ, կանոնադր, եւ ծրագիր հայոց Եկեղ. տարր. ուսումն. — 3) Լումպենարոլիստարիատը եւ յեղափո- խութիւնը: . . . . .	
10. ՆՈՐ ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ . . . . .	
11. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ — Մի տարուայ յեղափոխական դաստիարակութիւն: — Արևան բաղնիք: — Հասարակա- կան կարծիքի որում: — Ռուս բիւրժիրատների ամօթ- իսածութիւնը: — Ա.-Դ.հմ.-իան քռնի միջոցներով փող կոր- գելու մասին: — Գիտակից մասայի գերը: — Էջմիածնի կենտրոնական Ֆողովի բնորոշումը մի քանի խօսքերով: — Թարմութիւն թէ խալութիւն: Լ. Ս.-ի . . . . .	163
12. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. — Պարսկաստանի եւ Թիւրքիա- յի վերածնութիւնը: Լ. Ս.-ի: . . . . .	169
13. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ . . . . .	

## ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Խմբագրութիւնը յատուկ խնդրում է յօդուածագրերից՝ գրել պարզ մանաւանդ բուերը, յատուկ անուններն ու օսար բառերը, և բերի միայն մի երեսի վրայ. առանձնապէս ուս դարձնել կէտադրութեան, ուղղագրութեան եւ նոր պարբերութիւնները որոշակի լինելու վրայ: Թարգմանութեան հետ պէտք է ուղարկել խմբագրութեանը նաև բնագիրը:

2. Զընդունուած մեծ յօդուածները պահուում են խմբագրատանը 6 ամիս, իսկ յետոյ ոչնչացնուում են: Ձեռագիրը յետ ստանալու համար պէտք է ուղարկել ճանապարհախոսը: Փոքը յօդուածներն ու ստանաւորները չեն վերագրանուում:

3. Գրուածքների վարձատրութեան չափը որոշում է խմբագրութիւնը: Խմբագրութեան առանց պայմանների ուղարկուած ձեռագիրները համարուում են անվճարելի:

4. Խմբագրութիւնը իրան է վերապահուում ուղարկուած յօդուածները փոփոխելու կամ կրծատելու իրաւունքը:

5. «Մուրին» համարը չստացուելու դէպքում պէտք է խմբագրութեանը տեղեկութիւն տալ ոչ ուշ քան յաջորդ համարի լոյս տեսնելը:

6. Խմբագրութեանը զանազան հարցումներով դիմող անձինք պէտք է պատասխանի համար ուղարկեն նամակադրոշմ կամ պոստային բլանկ:

7. Հասցէ փոփոխելու համար պէտք է ուղարկել 40 կոպէկ: Հասցէի փոփոխումը պէտք է ստացուի իւլաքանչեւր ամսի 10-ից ոչ ուշ, որպէսզի առաջիկայ համարն ուղարկուի նոր հասցէով: Նոր հասցէի հետ պէտք է յայնել նաև հին հասցէն:

## ՅՈՎՀԱՆՆԻՍ ԴԱԻԹԵԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՄԲ

լոյս են տեսել՝

№ 5. Մօպասան — «Մի կեանք»

Թարգմ. Ա. Տէր-Անանեան 1 ռ.

№ 6. Ա. Ագարօնի, Կսոչեկъ խթճա, ուժուած

թարգմանեց Վ. Բարեան. 10. կ.

№ 7. Ա. Աննենսկայա, «Հանրապետութիւն»

Թարգմ. Ա. Տէր-Անանեան 5. »

№ 8. Ա. Բերեկ, «Քրիստոնէութիւն և Սօցիալիզմ»

Թարգմ. Ա. Տէր-Անանեան 10. »

«Շուտով լոյս պիտի տեսնեն.

№ 9. «Զւիցէրիս» և

№ 10. «Կորչին Սօցիալ Դեմօկրատաները»:

# Կ Ա Ն Գ Ի Տ

Կ Ա Մ

ՕՊՏԻՄԻԶՄ

Վ Ե Պ

Վ Ո Լ Տ Ե Բ Ը Ի Ռ \*

(Հեղինակութիւն Ռայլի վարդապետի, Թարգմանութիւն կերմանիքից յա-  
ւելաւածներով, որ գտնուել է վարդապետի ծոցազիբում նրա մահից յետոյ  
1859-ին «Մինդին քաղաքում»):

ԳԼՈՒԽ I.

Կանդիսի ստացած կրթութիւնը գեղեցիկ դպեակում և այն-  
տեղից արտաքսուիլը

Վեստֆալիայմ գտնուած Բարոն Տունդիր-Տին-Տրոնկի  
դպեակում ապրում էր մի պատանի, որ բնութիւնից օժառուած  
էր շատ խոնարհ բնաւորութեամբ, նրա կերպարանքը համապա-  
տասխանում էր հոգու հեղութեանը: Մաքի անսովոր պարզութեան  
հետ ի միասին նա ունէր առողջ բանականութիւն: Հէնց այդ պատ-

\*.) Մեր «ազգային» գրականութիւնը ստեղծել է հայկական ուղեղնե-  
րում այնպիսի ցնորական գրութիւն, որից դուրս բնրելու համար անհրա-  
ժեշտ են բոմանախզմը, իմաստակութիւնը և սնհաւատութիւնները գարմա-  
նող առողջամիտ գրուածքներ: Հռչակաւոր վոլտերի (1624—1778) այս  
վեպը այդպիսի գեղեցից մէկն է: «Թող կորչին հին մոլորութիւնները, ե-  
րկակայական պաշտամունքները մեր վրդոված սրտերից» կամ ինչպէս ինքը  
փիլիսոփան է ասել, իր մի ոտանաւորի մէջ.

Vieille erreur, respect chimerique,  
Sortir de nos coeurs matinés!

Ծ. Խմբ.

ճառով էր, ես կարծում եմ, նրան Կանգիս (սպիտակ, մաքուր) էին կանչում: Դղեակի հին ծառաները կարծում էին, թէ նա Բարսնի քրօջ և մի պատուական հարեան—ազնուականի ապորինի դաւակն էր, որին այդյարգելի օրիորդը չէր ցանկացել մարդու գնալ միշտ այն այն պատճառով, որ նա չէր կարողացել ապացուցանել իր ազնուական ծագումը եօթանսուն և մէկ սերունդից աւելի, որովհետեւ նրա ճիւղագրական ծառի մնացած մասը ոչնչացրել էր ամենաւեր ժամանակը:

Բարսնը Վեստֆալիաի ամենահարուստ կալուածատէրերից մէկն էր, որովհետեւ նրա դղեակն ունէր գոներ և լուսամուտներ: Դղեակի մեծ դահլիճը մինչեւ անգամ պաստառած էր: Նա ունէր բարսուշների մի մեծ վոհմակ, այնպէս որ կարող էր զուարձանալ նրանց հիու որսի գնալով և այդ ժամանակ ձիազանները կատարում էին առաջընթաց որոկանի պաշտօն: Գիւղի քահանան էլ նրա պալատ սկան աւագ երեցն էր: Նրան մեծարում էին Զերդ գերազանցութիւն տիտղոսով, և դուր գալու համար ծիծաղում էին նրա ստախ սութիւնների ժամանակի:

Իշխանուհին (Բարսնի կինը) ունէր 350 ֆունտ ծանրութիւն, որի պատճառով մեծ յարգանը էր վայելում և ինչպէս տանտիկին իրան պահում էր այնպիսի արժանապատութեամբ, որ ևս առաւել յարգելի էր երեսում:

Նրա ազջիկը՝ կունիզունդան մի տաճա-եօթ տարեկան վարդագոյն, թարմ, լիքը և գաշթակզեցութիւն պատճառով օցիորդ էր: Բարսնի որսին ըստ երեսյթին տմեն կողմից իր հօր արժանի դաւակն էր: Ուսուցիչ Պանգլոսսը \*) համարում էր տան փիլիսոփան և փոքրիկ Կանգիտը լսում էր նրա խրատները կատարեալ հաւատով, որ յատուկ էր իր հասակին և բնաւորութեանը:

Պանգլոսսը դասախոսում էր բնագանցաւաստուածարանաւտիերաբանական—ոչնչաբանութիւննա հիանալի կերպով ապացուցանում էր թէ չկայ ոչ մի հետեւնք առանց պատճառի և թե այսօր բոլոր կարելի եղած աշխարհների մէջ այս լաւագոյն աշխարհներս բարսնի դղեակը ամենալաւ դղեակն է, իոկ իշխանութիւն բոլոր իշխանութիւններից գերազանց: «Յայտնի է որ, ասում էր նա, —ամեն ըան այնպէս է ինչպէս կայ, և ոչ մի ըան չի կարող ուրիշ կերպ լինել ըան թէ է, որովհետեւ ամեն բան ստեղծուած է որոշ նպատակի համար, հետեապէս և ամենալաւ նպատակի համար: Օրինակքիթը ստեղծուած է նրա համար որ ակնոց գնենք, և անա թէ ինչու համար ակնոց ենք զնում, ոտները

\*) Pan-gloria, glossa-լեզու (Ճնթ. Փր. թբգմ.)

ակնյայտնի կերպով գոյութիւն ունին շալվարի համար, արպարե մենք շալվար ենք հազնում, քարերը ստեղծուած են տաշելու համար և դդեակներ շինելու. և անա նորին դերազանցութիւնը ունի հիանալի դպեակ, և հասկանալի է. որովհետեւ ամենանշանաւոր թարսուն վայել է լաւագոյն բնակարան ունենալը: Խոկ տես՝ խոզերը նրանք ս ոեղծուած են նրա համար որ նրանց ուտեն, և ահաւասիկ մենք ամբողջ տարին ուտում ենք խոզի ապուխտ: Ուրիշն նշանակում է, յիմարութիւն է ասել թէ, կարծես ամեն բան լու է, պէտք է ասել, ամեն բան հիանալի է»:

Կանգիւար լսում էր ուշաղրութեամբ և հոգեկան պարզութեամբ հաւատում էր, գտնելով կունիգունդին չափից դուրս դեղեցիկ, թէ այս բանը չէր համարձակւուած նրան ասել: Նա կարծում էր որ ամենաառաջին բաղդաւորութիւնն է դասնալ Տունդեր-Տին-Տրոնկ, երկրորդը՝ լինել կունիգունդա, երրորդը տեսնել նրան ամեն օր և չորրորդը՝ լսել ուսուցիչ Պանդոսին, ամբողջ գաւառի և հետեաբար բոլոր աիեղերքի ամենաամեծ փիլիսոփային:

Մի անգամ կունիգունդա, գգեակի մօտի պուրակում, որի տիտղոսն էր ծառաստան, զբօսնելիս տեսաւ թվերի մէջ զոկուոր Պանդոսին, սա փորձառական ֆիզիքայի (Բնագիտութեան) զառ էր տալիս իշխանուհու ազախնուն, որը մի փոքրիկ, սիրուն և թխաչք աղջիկ էր և շատ աշխատասէր աշակերտուհի: Զգալով սաստիկ հակումն դէպի բնական գիտութիւնները, կունիգունդան լուռ և ուշի-ուշով դիտում էր իր սուաջ կատարուող զիանական փորձերը: Նա իրազննական միթոգով որոշելով գոկտորի գոհացուցիչ փաստը, բոլոր հետեանքների պատճառները, վերադարձաւ յուզուած, մտածմունքի մէջ ընկած և վառուած ուսանելու ցանկութեամբ, գտնելով որ ինքն էլ կարող էր ծառայել իբրև գոհացուցիչ փաստ հրիտասարդ կանդիտի համար, որը իր կողմից իբրև նոյնպիսի փաստ ծառայէր իր համար:

Մանելով գգեակ նա հանտիպեց կանգիտին և կարմրեց: Կանգիտն էլ կարմրեց: Նա բարեկց նրան դողդոջուն ձայնով: Կանգիտը պատասխանեց նրան ինքն էլ չիմանալով թէ ի՞նչ է ասում: Միւս օրը ճաշից յետոյ, երբ բոլորը վերկացան սեղանից, կունիգունդան և Կանգիտը յանկարծ պատահաբար իրանց գգացին շիրմաների ետեռում: Կունիգունդան վայր զցից թաշկինակը, կանգիտը վերցրեց, օրիորդը անմեղութեամբ բռնեց նրա ձեռքից, երիտասարդը միամտութեամբ համբուրեց ջանիլ աղջկայ ձեռքը, արտայայտելով միկայոն ժամանակ մի անսովոր աշխոյժ, զգայնութիւն և սիրելութիւն. Նրանց զբթունքները

հանդիպեցին, աչքերը վառուեցին, ծնկները գողացին, ձեռները միախառնուեցան:

Պարոն Տունդիր-Տին-Տրոնկը անց էր կենում շիրմաների մօտից և տեսնելով պատճառը իր հետեանքով վանտեց Կանդիտին դղեակից եռանդուտ աքայիներ և հարուածներ քամակին տալով: Կունիգունդան ուշբից գնաց. և հէնց որ նա աչքերը բացեց իշխանուհին մի լաւ շրի-շրփացրեց նրա թշերին և երեւակայելու հնարաւոր ամենագեղեցիկ ու զուարձալի ամրոցներից մէկում թագաւորեց սարսափը:

### ԳԼՈՒԽ I.

Կանդիտը բուլղարների մօտ:

Երկրային դրախտից արտաքսուած, Կանդիտը երկար ժամանակ գնում էր ինքն էլ չիմանալով թէ ուր, լաց էր լինում, աչքերը դէպի երկինք բարձրացնում և յաճախ դարձնում հայցը դէպի այն ամրոցը, որտեղ ապրում էր իշխանուհիներից ամենագեղեցիկը: Նա առանց ընթրիքի պատկեց քնելու զաշտի մէջ, երկու ակոսների արանքում. ձիւնը գալիս էր մեծ քուլաներով: Միւս առաւոտ Կանդիտը, ամրողջապէս դողովուալով մի կերպով քաշ եկաւ առանց մի գրօշ փողի հարևան Վիլլբերգով՝ տուարբղ-դիկորժ-քաղաքը, քաղցածութիւնից և յոգնածութիւնից մահուան դուռն ընկած: Նա տխուր կանգնեց զինետան առաջ: Այստեղ նրան նկատեցին երկու մարդ կապոյտ նշանազգեստներով. «Նայիր, ասաց մէկը միւսին, ինչ բարձրահասակ և վայելչակազմ տղայ է»: Նրանք մօտեցան Կանդիտին և շատ քաղաքավարի հրաւիրեցին նրան ճաշելու: «Շատ շնորհակալ եմ պարոններ, ասաց Կանդիտը, սիրելի համեստութեամբ, բայց ես փող չունիմ»: «Օ, բաւական է, վրաբերեց կապոյտը, ձեր արտաքինը և ձեր առաւելութիւններ ունեցող մարդիկ երբէք չեն վճարում, չէ՞ որ ձեր հասակը հինգ ֆուտ և 5 դիւյմ կը լինի»:—Ձիշտ այդպէս, պարոններ, այդ է իմ հասակը, ասաց նա սիրալիր բարեկելով: «Դէն, ուրեմն նստեցէք սկսանի մօտ, մենք ձեր փոխարէն կը վճարենք և առհասարակ չենք թոյլտայ որ ձեզ նման մարդը փողի կարօտութիւն զգայ. մարդիկ ստեղծուած են իրար օգնելու համար»:—«Դուք իրաւ էք, ասաց Կանդիտը, այդ Պանզլօսն էլ ինձ միշտ մինենոյն էը ասում. և ես էլ եմ այժմ տեսնում, որ իրաւ ամէն բան դէպի լաւն է գնում»: Յետոյ նրան խնդրում են վերցնել մի քանի էկիւ. նա վերցնում է այդ դրամը և կամե-

Նում է ձեռացագիր տալ, բայց չեն առնում, և ամենքը նստում են սեղանի շուրջը:

«Դիտեք, կարծեմ դուք չափից դուրս սիրում եք...»

—Այո, այո, ես սիրում եմ Կունիգունդին, պատասխանեց

Կանդիտը:

«Ո՞չ, վրայ բերեց անծանօթը, — ես ձեզ հարցնում եմ սիրում եք բուլգարների թագաւորին:»

—Ամենեին, պատասխանեց նա, որովհետև կեանքումս չեմ տեսել նրան:

«Ի՞նչպէս, ախար դա ամենասիրելի թագաւորն է. պէտք է նրա կեսացը խմել:»

—Ամենամեծ ուրախութեամբ, պարոններ: Նա խմեց:

«Դէն, բաւական է, ասում են նրան, այժմ դուք բուլգարական ժողովրդի նեցուկը, պաշտպանը և հերոսն էք, ձեր ասպարեզը որոշուած և ձեր փառքը ապահոված է: Այս խօսքերով նրա ուներին հագցնում են փայտի կոճղեր և ուղարկում են զօրագնդի մէջ ծառայելու: Մյոտեղ նրան ստիպում են աջ ու ձախ գառնալ, լցնել հրացանը, նշան առնել արձակել, քայլել չինարի նման և վերջապէս քամակին հասցնում են գաւազանով երեսուն հարուած, միւս օրը նոյն պատմութիւնը կրկնում է, բայց նա արդէն աւելի լաւ էր քայլում և բնդամենը քսան հարուած է ստանում. երրորդ օրը տալիս են նրան տասն հարուած և այդ յառաջադիմութիւնը հրաշբի պէս զարմացնում է ընկերներին:

Եշկլուած Կանդիտը չէր կարողանում լաւ ըմբռնել թէ ինչ կերպով նա հերոսների շարքն անցաւ: Մի գեղեցիկ գարնանային օր, նրա խելքին վիշեց գնալ զրօննելու և նա գնաց ուր որ աչքը կտրում էր, կարծելով որ մարդիկն էլ անասունների պէս իրաւունք ունեն իրանց ոտքերով օգտուելու: Նա դեռ երկու վերստ չանցած չորս հատ սաժենանոց հերոսներ վրայ են համառում, կապում են և տանում բանտ: Նրան իրաւաբանօրէն հարցնում են, թէ ո՞րն է գերադասում արդեօք երեսուն և վեց անգամ ամբողջ գնդի շարքերի միջից անցնելով զրօննելը թէ միանգամից տառներկու գնդակ ճաղատին ստանալը:

Իդուր նա աշխատում էր համոզել թէ կամքն ազատ է, և թէ նա չի ցանկանում ստանալ ոչ մէկը և ոչ միւսը, վերջ ի վերջոյ ստիպուած եղաւ ընտրութիւն անել յանուն այդ ստառածային պարզեցի որ կոչւում է ազատութիւն: Նա վճռեց երեսուն վից անգամ անցնել շարքերի միջից հարուածներ ստանալով և կարողացաւ երկու այդտեսակ զրօնանը տանել: Գունդը կազմուած էր երկու հազար հոգուց, այնպէս որ նա

ստացաւ չորս հազար հարուած, որից մերկացան նրա բոլոր մկանունքները և ջղերը ծոծրակից. մինչև նստելատեղը Երբոք կամենում էին սկսել երրորդ զրօնանքը, Կանգիտը ցաւից ուժասպառ լինելով, սկսեց խնդրել ինչպէս ամենամեծ ողորմութիւն որ գոնէ այժմ էլ գլխին խիեն. Նրան զիջողութիւն արին, — աշքերը կապեցին և չոփացրին: Այդ բոլէին անցնում էր բուրդացոց թագաւորը և տեղեկացաւ գանահարուողի յանցանքի մասին: Ունենալով հանձարեղ միտք նա հասկացաւ Կանգիտի մասին բոլոր լսածներից, որ դա երիտասարդ մետաֆիզիկոս է, որը բոլորովին չի իմանում այս աշխարհի օրէնքները և այդ պատճառով վեհանձնաբար ողորմեց նրան, որի համար յաւիտեանս կը փառաբանուի բոլոր լրագիրների մէջ մինչեւ աշխարհիս վերջը, հմուտ վիրաբոյժը առողջացրեց Կանգիտին երեք շաբաթում, Դիոսկորոսի գեղագրերի համաձայն պատրաստած սպեղանիներով:

Նոր էր սկսել Կանգիտի մէջըին մի փոքր կաշի դալ և նա ոտքի էր կանգնել երբ բուլղարական թագաւորը պատերազմ սկսեց աւարացոց թագաւորի հետ:

### ԳԼՈՒԽ 11

Կանգիտի բուլղարների մօտից փախչելու և յետազայ արկածների մասին:

Ոչ մի բան չի կարող համեմատուել այս երկու զօրքերի գեղեցզաւթեան, շքեղութեան և լարեկազմութեան հետ: Փողերը, սրինգները, շեփորները, թմրուկները և թնդանօթները մի այնպիսի ներդաշնակութիւն էին առաջացնում, որ գժոխքումն էլ լսուած չէր: Սկզբում թնդանօթները կոտորեցին վեց-վեց հազար մարդ ամեն կողմից, ապա հրացանաձգութիւնը ալատեց աշխարհներից ամենալաւը իրան փշացնող ինն կամ տասնազար անպիտաններից:

Սույնները ծառայեցին իբրև գոհացուցիչ փաստ մի քանի հազար մարդկանց մահուան. բոլոր սպանուածներն էին մօտերեսուն հազար հոգի:

Կանգիտը որ սարսափից զողղողում էր ինչպէս բուն փիլիսոփա, աշխատեց թաքնուել հերոսական ջարդի ժամանակ: Վերջապէս երբ երկու թագաւորներն էլ սկսեցին բանակներում կատարել գոհաբանական մաղթանքներ նա վճռեց տուանձնանալ ուրիշ տեղ, պատճառների և հետևանքների մասին մտածելու: Մեռածների և վիրաւորների կոյտերի վերայից անցնելով

նա հասաւ հարևան գիւղը, որ բոլորովին այրուած էր. սո մի տւարական գիւղ էր որ բուլղարները այրել էին միջազգային իրաւոնքի զօրութեամբ. Այստեղ վայր էին թափուած խեղաթիւրուած ծերեր, իսկ նրանց աշքի առաջ մեռնում էին նոցա մողթուուած կանայքը, որոնց արիւնաշաղախ կրծքերի մօտ էրեւում էին գետնին ճգմուած երեխաները. պատուած փորերով տղջիկները, որոնց վերայ ուղմական հերոսները իրանց բնական կարիքներն էին գոհացրել, պառկած էին վերջին շունչը փշելու մօտ. միւսները կարմիր արիւնով ներկուած հեծեծանքով աղաղակում էին, ինսղելով անցնողներից մեռցնել իրանց, Գետնի վրայ թափթափած էին. ուղեղներ, կտրտած ձեռներ և սոքեր:

Կանդիտը շտագով փախաւ միւս գիւղը. դա պատկանում էր բուլղարներին և ճիշտ միւնոյն վիճակին էր հասնել աւարացւոց հերոսներից. Կանդիտը գնում էր բոլոր ժամանակը դողովացող դիակների կտորների վրայով, տւերակների միջից և վերջապէս իրան տիսաւ պատերազմի դաշտից դուրս, տանելով իր հետ ինչ որ պաշար պարկի մէջ, ոչ մի բոպէ չմոռանալով Կունիգունդին: Երբ որ նա հասաւ Հօլանդեա, նրա պաշարը հատաւ, բայց նա լսել էր որ այս երկրում բոլորը հարուստ և բոլորը բարի քրիստոնեաներ են, և չէր կասկածում, որ կը գտնի այդտեղ այնպիսի լաւ ընդունելութիւն, որպիսին չունէր և Բարօնի գլեակում, Կունիգունդայի գեղեցիկ աշքերի համար արտաքսուելուց առաջ: Նա ինսղեց ողորմութիւն մի քանի ծանրաբարոյ մարդկանցից, որոնք բոլորն էլ պատասխանեցին նրան, որ եթէ նա կը շարունակի պարապել այդ արհեստով, այն ժամանակ նրան կը դնեն ուղղիչ տանը, որտեղ նրան խելքի կը բերեն:

Այս ժամանակ նա դիմից մի մարդու, որը նոր էր որ մեծ բազմութեան առաջ մի ամբողջ ժամ խօսում էր ողորմածութեան մասին: Այս մարդը ծուռ-ծուռ նայեց նրա վրայ և առաց. «Ի՞նչ էք ուզում, զուք արդար զործի կողմն էք»:—«Ամեն դործ էլ արդար է որովհետեւ ամեն բան ունի իր պատճառները, և բոլոր պատճառները ունին իրանց հետեանքները, — համեստօրէնս պատասխանեց Կանդիտը, — ամեն բան իրար հետ կապուած է և ամենքը տանում են դէպի լաւն: Երեսում է հարկաւոր էր որ ինձ դուրս անէին Կունիգունդի մօտից, շարքի միջից քշէին, իսկ այժմ պէտք է ողորմութիւն ինսղեմ մինչև սովորեմ աշխատել, այս բոլորը ուրիշ տեսակ չէր կարող լինել:»—«Սիրելիս, գործ նորանումն է, — ասաց ճարտասանը, — հաւատում ես որ Փափը սուտ Քրիստոն է»:—«Չեմ լսել, — պատասխանեց Կանդի-

տը. բայց Սուտ Քրիստոս է նա թէ ոչ, միայն թէ ես հաց չունիմ:» «Դու արժանի չես հաց ուտելու, — ասաց նրան ճարտասանը: — «Կորի՞ր անզործ ծոյլ, կորի՞ր, անպիտոն, չհամարձակուես ոչ մի ժամանակ ինձ մօտենալ»: Ճարտասանի կլնր, պատուհանից նայելով և լսելով որ անծանօթը կտակածում է թէ Փափր Սուտ Քրիստոս է, նրա գլխին թափեց լիբը... Ո՞հ երկնք ինչպիսի ծայրայեղութեանց է հասնում տիկինների բուռն ջերմեանդութիւնը դէպի կրօնը:

Մի չմկրտուած, բարի անարաբտիստ ժակ անունով, տեսաւ ինչպէս խիստ և անարժան կերպով վարուեցին ընկերի, երկոտնանի էակի հետ, որ փետուրներ չունի բայց հոգի ունի. նա ըերեց նրան իր մօտ, մաքրեց կեղտերը, տուեց նրան հաց և գարեջուր, ընծայեց Զ Փլորին և ուղում էր մինչև անդամ սովորեցնել նրան իր գործարանում գործել պարսկական կտորներ, որոնք պատրաստում են Հօլլանդիայում: Կանդիտը քիչ մնաց ընկնէր նրա ոտքերը և աղաղակեց. — »Պանդոս վարժապետը ուղիղ էր սասում որ ամեն բան դէպի լաւն է գնում այս աշխարհում, որովհետև ինձ անհամեմատ աւելի է շարժում ձեր մեծահոգութիւնը, քան սև թիկնոց հագնող պարոնի և նրա կնոջ քարասրտութիւնը»:

## ԳԼՈՒԽ IV

Կանդիտի հանգիպում է իր նախկին փիլիսոփայութեան ուսուցիչ դոկտոր Պանդոսսին և թէ զբանից ի՞նչ դուրս եկաւ:

Կանդիտը յաղթահարուած աւելի խղճահարութիւնից քան սաբասփից տուեց այդ զարհուրելի թափառաշըջիկին երկու Փլորինը որ ստացել էր բարի անարաբտիստ ժաքից: Այլանդակ մարդը անբթիթ նայեց նրան և ողրալով փաթաթուեց նրա զգովը: Կանդիտը վախեցած գուրս պրծաւ նրա ձեռքից: Աւազ, տասց հաշմանդամը, աղքատին միթէ դուք չէք ճանաչում՝ ձեր Պանդոսսին, որին այնքան սիրում էիք»: «Այս ի՞նչ եմ լսում, այդ դժուք էք սիրելի ուսուցիչ, դուք այդ զարհուրելի դրութեան մէջ, ի՞նչ պատահեց ձեզ, ի՞նչու դուք թողիք դղիակներից ամենագեղեցիկը, ի՞նչպէս է Կունիգունդան այդ գեղեցկութեան մարդարիտը, այդ բնութեան արտազրութիւններից ամենահրաշալին»: «Ո՞հ, չիմ կարող ասել, հեծեծեց Պանդոսը»: Կանդիտը Պանդոսսին տարաւ անարաբտիստի զոուը, որտեղ նրան հաց տուեց ուտելու և երբ Պանդոսսը ուժի եկաւ, դարձեալ հարցրեց. «Թէն ի՞նչպէս է Կունիգունդան»: — «Մեռաւ,

պատասխանեց փիլիսոփան։ Պանդլոսսը նրան ուշքի բերեց, հոտ քաշել տալով գարշելի քացախից, որ պատահմամբ զտու գոմում, կանդիխոն աչքերը բացեց։ «Կունիփունգան մեռու, ախ, աշխարհներից ամենալաւը օրտեղ ես։ Ինչու նա մեռաւ, նրա նից արդեօք որ ինձ կեցիր տալով դուրս արին նրա հօր ամենափեղեցիկ դղեակից»։ —«Ոչ, պատասխանեց Պանդլոսսը, բուլդարական զինւորները նրա փորը ճղեցին, տուաջուց բանարարելով նրան մինչև վերջին աստիճանի հնարաւորութիւնը. նրանք ճեղքեցին նոյն իսկ բարոնի գլուխուը, որը կամենում էր պաշտպանել նրան, և կտոր-կտոր արին իշխանուհուն. իմ անբաղդանը ենթարկուեց բոլորովին նոյն վիճակին ինչ որ նրա քոյրը, իսկ ինչ վերաբերում է ամրոցին, քարը քարի վրայ չմնաց. —շտեմարամները, ոչխարները, բաղերը, ծառերը—բոլորը ոչնչացրին, բայց մեր վրէժը լուծուեցաւ, որովհետեւ տւարները նոյն ձեռվ վարուեցին հարեան կալուածքում, որ պատկանում էր բուլպարական Բարոնին։

Այս պատմութիւնից յետոյ կանդիթը կրկին ուշագնաց եղաւ. բայց նորից խելքի գալով և ամեն բան ասելուց յետոյ ինչ որ վայել է այս տեսակ դէմքերում, հետաքրքրուեց Պանդլոսսի այդքան ողորմելի վիճակի պատճառների և հետևանք ների և նոյնպէս գոհացուցիչ փաստերի մասին։ «Աւազ, ասաց իմաստունը, —սէրը, սէրը մարդկային ցեղի միսիթարիչը, ավել զերքի պահապնը, բոլոր զգայուն էակների հոգին, քնքնց սէրը»։ Աւազ ասաց կանդիթը, ևս էլ ճանաչեցի սէրը, սրտերի թագուհուն, մեր հոգիների հոգուն, նա նուիրեց ինձ միայն մի համրոյթ, և քսան քայցի քամակիս։ Բայց ինչալէս կարողացաւ այդ չափ գեղեցիկ պատճառը ձեր մէջ յառաջացնել այդ քարշելի հետևանքներ։

«Ով իս թանկագին կանդիխ. —պատասխանեց Պանդլոսսը, դուք ճանաչում էք Պակետտին, մեր օդոստափառ իշխանունու գեղեցիկ աղախնուն. նրա զրկում ևս ճաշակում էի եղեմական զուարձութիւն, որոնք ճնեցրին դժոխային տանջանքներ և որոնք այժմ ինձ չարչարում և խոշտանգում են։ Նա վարակուած էր և գուցէ այժմ մեռած է զրանից։ Պակետտան ստացել էր այդ ընծան մի շատ գիտնական Գրանցիսկեան կրօնաւորից, որը իր կողմից եթէ աղբեւը վնատուելու լինինք, ստացել էր մի պառաւ կոմսուհուց, կոմսուհին ստացել էր հեծելազօրքի կապիտանից. կապիտանը մարկիզուհուց, մարկիզուհին մանկւածիկից, մանկլաւիկը եղուիտից իսկ եղուիտը գեռ փոքրաւոր եղած ժամանակ ժառանգարար ուղիղ գծով Բրիստուֆոր կո-

լումբոսի ուղեկիցներից: Իսկ ինչ վերաբերում է ինձ, ես նրան-ու ոքի չեմ տալ, որովհետև շուտով կը մեռնեմ:

Այդ ինչ ազգաբանութիւն է, Պանդոսս, աղաղակեց կանդիտը:—Արգեօք նոյն ինքն սատանան չէ զրա նախահայրը: Ո՛հ, ոչ, պատասխանեց մեծ մարդը:—սա մի անհրաժեշտ համեմունք է մեր ամենալաւ աշխարհում, ըստ որում եթէ Քրիստոափոր Կոլումբոսը չատանար ամերիկական կղզիներից մէկում այս հիւանդութիւնը, որը թունաւորում է աճեցողութեան աղբիւրը, յաճախ բոլորովին ոչչացնում է նրան և ակրնյայնի հակառակում է բնութեան մեծ նոպատակին, մենք չէինք ունենալ ոչ շոկրագ և ոչ կաշենիլ. Նկատենք նոյնույնս որ մեր մայրցամաքում այս հիւանդութիւնը աստուածաբանական վէճերի նման, բացառապէս միմիայն մեզ է յատաւկ: Թուրքերը, հսդիկները, պարսիկները, չինացիք, սիամցիք, ճապոնացիք գեռ չեն ճանաչում նրան, բայց բաւական գորեղ պատճառ կայ որ նրանք ևս ճանաչնեն նրան մի քանի զարյեաոյ<sup>\*)</sup>: Այս յուսով նա մեր մէջ զարմանալի յառաջադիմութիւններ է անում, մանաւանդ ահագին գօրաբանակներում որ բավկացած են քաջարի և բարեկիրթ ձրիակերներից, որոնք վճռում են տէրութիւնների վիճակը. տիսնելով երկու երեսուն հազարանոց գօրաբանակներ, մէկ-մէկու զիմաց պատերազմական գիրք բռնած, հաւատացած եղէք որ ամեն կողմից կարելի է գտնել քսան հազար սիֆիլիսով վարակուածներ»:

«Զարմանալի է, ասաց Կանդիտաը, բայց այնուամնայնիւ ձեզ հարկաւոր է բժշկուել»:—«Բայց ինչպէս անել այդ, հարցրեց Պանդոսսը, ինձ մօտ ոչ մի զրօշ չկայ, բարեկամ, և բոլոր երկրագնդի վրայ չի կարելի արիւն թողնել և ոչ զրեխ զընել ասանց վճարելու իր զրպանից, կամ առանց խնդրելու որ ուրիշը վճարի քո փոխանակ: Այս խօսքերը ստիպեցին Կանդիտին զիմելու հետևեալ միջոցին. նա ընկաւ բարեկործ անարարտիստ Ժակի-ուսքերը, և այնպէս սրտառուչ կերպով նկարագրեց իր բարեկամի դրութիւնը, որ բարեհոգի մարդը առանց երկար մտածելու ապաստան տուեց իր մօտ գօկաօր Պանդոսսին և սկսեց բժշկել իր հաշուով: Բժշկուելիս Պանդոսսը կորցրեց միմիայն մի աչքը և մի ականջը: Նա լաւ էր զրում և հիանալի զիտէր թուաբանութիւն: Անարարտիստ Ժակը նրան գարձրեց իր հաշուապահը: Երկու ամսից յետոյ, վաճառականական գործերով Լիսսարօն գնալու կարիք ունենալով, նա տարաւ իր նաւով

<sup>\*)</sup> Այժմ այս ախտը անյայտ է միմիայն կենդրօնական Ափրիկայում և իսլանդիայում: Ծան, Ռուս, թարգմանչի.

երկու փիլիսոփաններին։ Պանդոսը նրան բացատրում էր, որ ամէն բան այնպէս լու է որ աւելի լու չէր կարող լինել ժամանակում։ «Ես հաւատացած եմ—ասաց նա, որ մարդիկ մասսամբ խեղաթիւրել և ապականել են իրանց բնութիւնը, որովհետեւ գայլ չեն ծնուած և գայլեր են դառել։»

«Աստուած չէր տուել նրանց ոչ թնդանօթներ և ոչ սուրիններ, բայց նոքա շինեցին թնդանօթներ և սուիններ միմիանց կոտորելու համար, մնանկութիւնն էլ նոքա մտածեցին, նոյնպէս և արգարադատութիւնը,որը կողոպառում է մնանկացողների ստացուածքը, որ պարտատէրերին խաբի»։ «Այդ բոլորն արհրաժեշտ է, պատասխանեց բերսնը ծոմոտած զօկոորը, մասնաւոր գժրաղզութիւններից կազմում է ընդհանուրի բարիքը, այնպէս որ ինչքան շատ են մամնաւոր գժրաղզութիւնները այնքան բարձր կը լինի ընդհանուրի բարօրութիւնը։» Մինչդեռ նրանք վիճում էին երկինքը մեացաւ, քամին սկսեց փշել բոլոր չորս կողմերից, և նաւը բռնուեց զարհուրելի փոթորկից Լիսարօնի նաւահանգստի առաջ։

### ԳԼՈՒԽ V.

Փոթորիկ, նաւակոծութիւն, երկրաշարժ և ճակատագրի բերմունքը դոկտոր Պանդոսսի, Կանդիտի և անաբապտիստ Ժակի վերաբերութեամբ։

Նաւորդների կէսը հիւանդացաւ և մեռաւ անտանելի տանջանքներից, որ նաւի կողքի տատանումը ենթարկում է մարդու ջղերին և մարմնի բոլոր հիւթերը թափելով հակառակ կողմից գուրս, այն գրութեան էր հասնում որ նրանք ոյժ էլ չունէին վտանգից վախենալու։ Միւս կէսը ազաղակում և ազօթում էր։ Առազատաները պատասխուեցին, կայմերը կոտրտուեցան և նաւը խորտակուեց։ Ովկարող էր աշխատում էր, բայց ոչ ոք ոչինչ չէր հասկանում ոչ ոք չէր հրամայում։ Անաբարտիստը տախտամածի վրայ կանգնած մի քիչ օգնում էր նաւը կառավարելուն։ Մի զայրացած նաւաստի այնպէս հրեց նրան որ նա ընկաւ յատակի վրայ, բայց ինքը նաւաստին ուժեղ հարուածից կորցրեց հաւասարակշռութիւնը և նաւից ընկաւ զլսիվայր դէպի ցած։ Նա կախուեց բռնելով կոտրած կայմից։

Բարի Ժակը վրայ հասաւ նրան ազատելու և օգնեց նրան նաւի վրայ բարձրանալու, բայց ոյժով քաշելիս ձեռքը նաւից պոկ եկաւ և ընկաւ ծովը նաւաստիի աչքի առաջ, որը թողեց նրան խեղդուելու, մի հայեացքի անգամ նրան չարժանացնեւ։

լով։ Կանդիտը մօտենում է և տեսնում իր բարերարին, որը մի ըոպէ գուրս եկաւ ջրի երեսը, և իսկոյն գարձեալ կուլ գնաց ալիքներին ընդ միշտ։ Նա կամենում է նրա յետեկից ընկնել ծովը. բայց փիլիսոփա Պանզլոսը նրան յետ է պահում, ապացուցանելով որ Լիստարոնի նաւակայանը հէնց նրա համար էր շինած որ այդ անարարտիստը նրա մէջ խեղդուի։ Մինչդեռ նա այս բանը ձ բրօւ ապացուցում էր, նաւը ճեղքուեց և բոլորը խեղդուեցին բացի Պանզլոսից, Կանդիտից, և գաղանաբարոյ նաւաստիից; որը խեղճեց բարեգործ անաբապտիստին։ Այն անպիտանին յաջողուեց գուրս լուղաց ափը, որտեղ ալիքները մի տախտակի վրայ գուրս էին բերել Պանզլոսին Կանդիտի հետ։

Մի քիչ բւշքի գալով նրանք ուղեւորուեցին Լիստարոն։ Նրանց մօտ գանուեց մի քիչ փող, որով նրանք յոյս ունեին, փոթորկից ազատուելով, ազատուել և սովամահ լինելուց։

Դեռ քաղաք չմտած, մինչդեռ նրանք ողբում էին իրանց բարերարի մահը, զգացին որ գետինը իրանց ստքերի տակ տատանուում է։ Փոթորկալից ծովը նաւահանգստում բարձրանալով կոտրատում էր խարիսխ զցած նաւերը։ Բոցը և մոխիրը մրրկապտոյտ լինելով ծածկում էին փողոցներն ու հրապարակները. տները քանզլուում էին, կառւրները կործանուում էին, հիմքերը քայբայլում էին, երեսուն հազար բնակիչներ զանազան հասակի և սեփի ճխլուեցին աւերակների տակ մնալով։ Նաւաստին հայնոյելով և շրւշըւացնելով ասաց լաւ զարկուածք (կողոպտու) կը լինի։ «Բայց հետաքրքիր է իմանալ, արգեօք ի՞նչ տեսակ դոհացուցիչ փաստ կարող է ունենալ այս օտարութի երեսյթը», նկատեց Պանզլոսը։ «Սա աշխարհիս վերջն է» բացականչեց Կանդիտը։ Նաւաստին յանդուզն վստահութեամբ կեանքը վտանգելով անյապաղ մտաւ աւերակների մէջ փող վնատուելու, գտաւ, առաւ հարբեց, քնեց և զարթնելով գնեց առաջին տեսած աղջկայ ոչըր, որը պատահեց նրան քանզուած տների աւերակների վրայ դիմակների և մեռնողների մէջ։ Պանզլոսը նրա թերից քաշելով ասաց «բարեկա՛, լաւ չէ գուրք անպատում էր համաշխահային բանականութիւնը։ Այսպիսի ժամանակ»։ «Դրոգը տանի, պատասխանեց նա, ես նաւաստի եմ, բատաւիտում ծնուած, չորս անգամ դնացել եմ Ճսփոնիա և չորս անգամն էլ խաչելութիւնը ուսնակոխ եմ արել համա գուէլ մարդ գտար քո համաշխարային բանականութիւնդ աչքը կոխելու»։

Կանդիտը վիրաւորուած քարի կտորներով պառկել էր ափողոցում, աւերակների զանազան բեկորներով ծածկուած։ Ա-

ւաղ, ասաց նա Պանգլոսին, մի քիչ գինի և իւղ հասցրէք ինձ,  
թէ չէ ես մեսնուռ եմ»:—Այս երկրաշարժը նոր բան չէ, պա-  
տասխանեց Պանդլոսը, անցեալ տարի Ամերիկայի Լիմա քաղա-  
քը ճիշտ նոյնանման երկրաշարժի ենթարկուեց, միանման պատ-  
ճառները միանման հետևանքներ են յառաջ բերում. հաւանա-  
կան է որ Լիմայից-Լիսարօն ստորերկրեայ ծծմբային անցք  
կայ: «Եյ՛, դա շատ ճշմարտանման է պատասխանեց Կանդիտը,  
բայց ի սէր Աստուծոյ, տուէք ինձ մի քիչ իւղ և գինի»: Ի՞նչ-  
պէս թէ ճշմարտանման է, բացականչեց փիլիսոփան, ևս հաս-  
տառում եմ, որ այդ փորձով իմացուած բան է»: Կանդիտը ուշ-  
քից գնաց: Պանգլոսը նրան ջուր բերեց, ամենամօտ աղբիւրից:

Միւս օրը աւերակների վրայ թափառելիս, նրանք մի քիչ  
ուտելիք զտան և փոքր ինչ վերականգնեցին իրանց ոյժերը:  
Յետոյ նրանք ուսկեցին օգնութիւն հասցնել կենդանի մնացած  
բնակիչներին: Նրանց ձեռքով ապատած մի քանի քաղաքացի-  
ներ կերակրեցին նրանց այգակի համագամանքների մէջ բաւա-  
րար համարուող ճաշով, ուղիղ է ճաշը տիտոր էր անցնում, ո-  
րովհետեւ խօսակիցները իրանց կերած հացը արտասուքով էին  
թրջում, բայց Պանգլոսը միմիթարում էր, հաւատացնելով որ  
ուրիշ կերպ չէր կարող լինել: «Ըստ որում, ասում էր նա, ո-  
չինչ չի կարող լինել աւելի լաւ քան ինչ որ կայ. ըստ որում  
ևթէ Լիսարօնի տակ հրարուխ կայ, հետևաբար նա ուրիշ տեղ  
չէր կարող լինել քան որ են. ըստ որում ամենայն ինչ գեղեցիկ է»:

Մի սեազգեստ ինկվիզիտայի պաշտօնեայ, որ նրանց  
մօտ նստած էր այդ խօսքերի վրայ քաղաքավարի կերպով  
դարձաւ դէսպի նա.

«Պատուելի պարոն, ըստ երևոյթին դուք չէք հաւատում՝  
սկզբնական մեղքին, որովհետեւ եթէ ամեն բան դէմի լաւն է  
զնում, ուրեմն չկայ ոչ մեղքի մէջ ընկնել և ոչ պատիժ»:

«Խոնարհ յարգանքով իննդրում եմ ներողութիւն ձերդ  
գերազանցութիւնից, աւելի քաղաքավարի պատասխանեց Պան-  
գլոսը. մարդու մեղանչելը և նրա անիծութիլը, անհրաժեշտ էին  
աշխարհներից ամենալաւը մէջ»:—«Ասէլ է թէ դուք մերժում  
էք կամքի ազատութիւնը, հարցրեց ինկվիզիտորը»: «Համարձակ-  
ւում եմ նկատել ձերդ գերազանցութեանը, որ ազատութիւնը  
միացած է անպայման անհրաժեշտութեան հետ. ըստ որում ան-  
հրաժեշտ էր որ մենք ազատ լինէինք, ըստ որում նախասահ-  
մաննեալ կամքը...—Բայց այստեղ ինկվիզիտորը գլխով արեց  
իր սպասաւորին, որը մատուակում էր նրա համար պօրտ-  
վէյն կամ օպօրտօ»:

## ԳԼՈՒԽ VI.

Երկրաշարժը արգելելու համար սարքած հիմնալի աւտօ-դա-ֆէի  
և Կանդիտի կերած քեօթակի մասին:

Երկրաշարժից յետոյ, որ իմասրօնի երեք—չորրորդ մա-  
սը քանդուեց, տեղական իմաստունները վճռեցին, որ քաղաքը  
վերջնական կործանումից ազատելու համար ամենալաւ մի-  
ջոցն է, ժողովրդի համար աւտօ-դա-ֆէյ գեղեցիկ տեսարան  
ներկայացնել: Կօիմբրի համարսարանը համոզուած էր, որ հան-  
դարտ կրակի վերայ մի քանի մարդկանց հանդիսաւոր այրելը  
ամենաճիշտ միջոցն է գետնի տատանուում արգելելու:

Այս նպատակով բանեցին մի լիսկայեցու, որին մեղա-  
դրում էին ունամօր վրայ պատկուած լինելու մէջ, և երկու  
որօտառգալացու, որոնք կերել էին խողի ճարպով պատրաստած  
վասիկներ, բայց ճարպը թողել էին. ճաշից յետոյ կապեցին  
դոկտօր Պանդոսսին և նրա աշակերտ Կանդիտին, առաջինին  
խօսելու և երկրորդին համակրութեամբ ըսելու համար: Նրանց  
գցեցին ամէն մէկին ասանձին—ցուրտ նկուղների մէջ. որտեղ  
արեգակը երբեք չէր կարող նրաց անհանգիստ անել: Ութ օրից  
յետոյ նըսնց վրայ կպցրին սան-բէնիտօ իսկ զլուխները զար-  
դարեցին թղթէ կնդուղներով: Կանդիտի հազցրած կապոցի և  
գլխարկի վերայ նկարուած էին հրեղէն լեզուներ ծայրելը գէ-  
պի ներքե և անպոչ ու առանց ճիրանների սատանաներ, իսկ  
Պանդոսսի վերայ սատանանները պոչաւոր և ճիրաններով էին,  
իսկ հրեղէն լեզուները գէպի վեր էին զարձրած: Այսպէս զգեստա-  
ւորուած նրանք հանդիսաւոր մուտք գործեցին, լսեցին մի շատ  
սրտառուչ քարոզ և հիանալի ութնաձայն երգեցողութիւն: Այս  
երգի հղանակով Կանդիտին գորսեցին երգի տակտը պահպանե-  
լով, բիսկայեցուն և խողի իւզ սիրող երկուսին այրեցին, իսկ  
Պանդոսսին հակառակ ինկվիզիցիայի ծէսերին կախաղան բար-  
ձրացրին: Այդ նոյն օրը երկիրը գարձեալ շարժուեց սարսա-  
փելի զդրդիւնով:

Կանդիտը զարհուրած, տանջուած, արնաշաղախ, խելքը  
կորած և սարսափահար զողալով ինքն իրան մտածում էր այս-  
պէս. «Է՛, եթէ սա ամենալաւ աշխարհն է, բա մնացածներն  
ինչպէս են, ելի թող ինձ ծեծէին, ինձ առաջին անգամը չէ,  
ես արդէն բուզարների մօտ մի տնապատ կերել եմ, բայց ով իմ  
թանկապին Պանդոսս, աշխարհիս ամենամեծ փիլիսոփան, ի՞նչ  
ու օր էր որ ես քեզ տեսայ կախաղան բարձրանալիս, այդ ով

զիտէ թէ ինչու համար: Ո՞վ իմ թանկագին ո՞նաբարդիստ,  
մարգկանցից ամենալաւը: Միթէ դու պէտք է անպատճառ  
հէնց նաւահանգատի մէջ խեղուէիր: Ո՞վ Կունիգունդա, աղ-  
ջկների մարգարիտը, միթէ հարկաւոր էր որ քո փորդ պատ-  
ռէին:

Քարոզից, ծեծուելուց, արձակումից և օրհնութիւնից յե-  
տոյ նա հաղիւ ոտի վերայ կանգնելով մի կերպ քաշ էր գալիս  
երբ նրան մօտեցաւ մի պառաւ և ասաց.

«Արի անցիր, որդեակ, և հետեիր ինձ:

### ԳԼՈՒԽ Vll.

Թէ ինչպէս պառաւը ինսամեց կանգիտին և ինչպէս պառաւ  
նու իր սիրոյ առարկան:

Կանգիտը չարիոցաւ, բայց հետեւելով պառաւին մտաւ մի  
խրճիթ, որտեղ պառաւը տուեց նրան սրուակով մի ինչ որ  
գեղ, մարմնին քսելու համար, բերեց ուտելիք և ըմպելիք և  
ցոյց տուեց համեստ և բաւականին մաքուր անկողին, որի մօտ  
գարսած էին բոլոր հարկաւոր շորերը: «Կերէք, խմէք, քնեցէք,  
—ասաց նա,—և թող վրկէ, աղատէ քեղ—Ատոխի սուրբ  
Առողջածածինը, Պատուանի սուրբ Անտոնը և Կոմքոստե-  
լի սուրբ Յակոբ բահանայապետը: Վաղը եռ կը զամ ըել  
մօտ»: Կանգիտը ապշած իր տեսած և քաշած բաներից, մանա-  
ւանդ պառաւի բարեսրութիւնից, ուզում էր համբուրել նրա  
ձեսքը: «Դուք ինձանից չպէտք չնորդակալ լինէք, —ասաց  
ոլառաւը, —վաղը եռ գարձեալ կը զամ: Դեղը քսիր, հաց կեր  
և քնիր»:

Զնայելով իր բոլոր գժբաղտութիւններին, Կանգիտը կե-  
րաւ և քնից: Միւս օրը պառաւը բերեց նրան նախաճաշ, նա-  
յեց մէջքը և ուրիշ գեղ քսեց: Ապա բերեց ճաշը, երեկոյեան  
գարձեալ եկաւ և բերեց նրան ընթրիք: Հետեւալ օրը միւնոյն  
բանը կրկնուեց: «Ո՞վ էք դուք, —հարցրեց նրան Կանգիտը, —  
ո՞վ ձեզ ներշնչեց այզպիսի բարեսրութիւն, ի՞նչով եռ կարող  
եմ ձեզ վարձահատոյց լինել»: Բարի պառաւը բնաւ մի խօսք  
էլ չէր պատասխանում: Երեկոյեան եկաւ առանց ընթրքի կու-  
թեամբ հետեւնցէք ինձ», ասաց պառաւը նրան: «Նա, Կանգիտի  
թեն ընկած դնաց նրա հետ գաշտի միջով մօտ քառորդ մղոն.  
Նրանք մօտեցան այզիներով և արխերով շրջապատած մի ա-  
ռանձնացած տան:

Պառաւը ծեծեց տան փոքրիկ դուռը, որը իսկոյն բաց

արին և նա գաղտնի սանդուխներով տարաւ կանդիտին մի ոսկելոծած առանձնառենհակ, նստեցը նրան մետաքսեայ բազմոցի վրայ, դուռը փակեց և հեռացաւ: Կանդիտն սկսեց կառկածել թէ այս ըոլորը երազ կը լինի: Նրա ամբողջ կեանքը թւում էր նրան մի գարճուրելի բան, իսկ ներկայ ըուղէն մի քաղցր տեսիլք: Պառաւը շուտով վերագարձաւ, դժուարութեամբ պահելով ընկնելուց մի մեծաշուք և վրդովմունքից դուզող կնոջ, որ փայլում էր թանկագին բարերով և ծածկուած էր քօղով: «Երցը քօղը», — ասաց պառաւը կանդիտին: Երբառասարդը մօտենում է, անվստահ ձեռքով բարձրացնում քօղը: Ի՞նչ անսպասելի հանդիպումն, միթէ սա կունիդունդան է, այս իսկ և իսկ նաև է, կանդիտն ուժասպառ է լինում: Հի կարողանում մի խօսք անդամ արտասանել և ընկնում է նրա ոտքերը: Կունիգունդան ընկնում է բազմոցի վրայ: Պառաւը նրա վրայ սրսկեց ուշքի բերող ողիներ, նրանք դգաստացան և սկսեցին խօսել, ոկրքը լսում էին միմիայն կցկառուր խօսքեր, հարցեր և պատասխաններ, հառաջանքներ արտասունքներ, բացականչութիւններ: Պառաւը խորհուրդ է տալիս նրանց աւելի քիչ աղմուկ հանել և թողնում է առանձին:

«Միթէ այդ գուք էք, դարձաւ կանդիտը կունիգունդին: — գուք կենդանի՞ էք, և ես ձեզ Պորտուգալիայն եմ տեսնում: ուրեմն ձեզ չեն բռնարարել և ոչ ձեր փորը պատուել ի՞նչպէս ինձ հաւատայնում էր փիլիսոփայ Պանդոսը»: «Այդ բոլորն ճիշտ է, — առաց գեղեցիկ կունիգունդան, — բայց արդպիսի դէպքերը միշտ մահառիթ չեն լինում»: «Բայց ձեր հայրը և մայրը, միթէ նրանք սպանուած են»: «Դժբաղեարար, այն, պատասխանեց կունիգունդան ողբարով»: «Իսկ եղբայրոց»: — «Նոյնու սպանուած է»: «Բայց ի՞նչ դէպքով գուք լնկաք Պորտուգալիա, ի՞նչպէս գուը իմացաք որ ես այստեղ եմ, և ի՞նչ օտարոսի պատահմունքով ինձ բերին այս տունը: «Ես ամեն բան ձեզ կը պատմեմ, — պատասխանեց կունիգունդան, — բայց տաւջուց ուզում եմ լսել ձեր պատմութիւնը այն վայրկենից, երբ գուք ինձ տուիք մի անմեղ համբոյը և փոխարէնն ոտացաք քացիներ: Կանդիտն հնագանդուեց ամենախորին յարգանքով թէն նա յուղուած էր, և թէպէտ նրա ձայնը դողում էր և մէջքը գեռ ցաւում էր, բայց պատմեց նրան բոլորովին պարզստութեամբ ամեն բան, ինչ որ հարժեշտի փայրկեանից յետոյ նրա զլսովին անցել էր: Կունիգունդան աչքերը դէպի երկինք բարձրացրեց, ողբաց բարի անարաբտիստի և Պանդոսի մահը և երբ որ կանդիտը վերջացրեց, նա սկսեց իր պատմութիւնը:

Կանդիմը լուսմ էր նրան առանց մի խօսք փախցնելու և բոլոր ժամանակ կլանում էր նրան աչքերով:

## ԳԼՈՒԽ V III

Կունիգունդի պատմութիւնը:

Ես անկողնում պառկած և խորը քնած էի երբ երկինքը կամեցաւ ուղարկել բուլղարներին մեր գեղեցիկ Տունդեր-Տիհ-Տրոնկ ամրոցը: Նրանք մորթեցին հայրիկիս և եղբօրս, կտորկտոր արին մայրիկիս: Յաղթանդամ Յ Փուտ հասակով բուլղարը, տեսնելով որ զարհուրելի տեսարանից ես ուշադնաց եղայ, սկսեց ինձ բռնարարել: Այս բանը ինձ սթափեցրեց, ես ուշքի եկայ, սկսեցի աղաղակել կծոտել, ճանկուտել, ուզում էի եղունգներովս վիթխարի բուլղարի աչքերը բնահան անել: Ես չդիտէի որ իմ հօր ամրոցում բոլոր պատահածները—սովորական բաներ են: Զարագործը մի դանակի հարուած հասցրեց ձախ կողքիս, որտեղ մինչև այժմ նշանը կայ»: «Աւմդ, յոյս ունեմ որ կը տեսնեմ նշանը»,—ասաց միամիտ Կանդիմը: «Կը տեսնէք, պատասխանեց Կունիգունդան», լայց շարունակենք: «Շարունակեցք»—ասաց Կանդիմը:

Եւ նա շարունակեց: «Եկաւ բուլղարացի կապիտանը և տեսաւ ինձ ամրողջովին արեան մէջ: Զինուորը շարունակում էր իր զբագմունքները: Կապիտանը զայրացաւ այդպիսի անարգանքի դէմ և սպանեց նրան ինձ վրայ: Յետոյ նա հրամայեց կապել վէրքու և զերի տարաւ ինձ իր սենեակը: Ես լուանում էի նրա շապիկները, որոնք շատ թիչ էին և կերակուր էի պատրաստում: Պէտք է խոստովանուել, որ նա ինձ գտնում էր շատ սիրուն, և ես էլ իմ կողմից չիմ կարող չասել, որ նա հիանալի կազմուածք ունէր: Նրա կաշին սպիտակ և քնչքոյշ էր. բայց նու խելօք չէր, և փիլիսոփայ լինելուց շատ հնուռ էր, իսկոյն երեսում էր որ նրան գոկտոր Պանգլուսը չէր կրթել: Երեք ամսից յետոյ, երբ նա ծախսեց բոլոր փողերը և ես նրան ճանձրացրի, նա ինձ ծախսեց Դօն-Խսափար անունով մի ջնուզի, որը առետուր էր անում Հոլլանդիայում և Փորթուգալիայում և սաստիկ սիրում էր կանանց: Այս ջնուզը, սիրահարուեց ինձ վրայ բայց չկարողացաւ յաղթահարել ինձ: Նրան ես աւելի լաւ կարողացայ ընդգիմոնալ քան բուլղարացի զինուորին: Առհասարակ մի անդամ միայն կարելի է բանաբարել պատուաւոր կնոջ, բայց դրանից նրա առաքինութիւնը աւելի կը պնդի: Իրան վրայ սիրահարեցնելու համար ինձ Սեպտեմբեր, 1906.

ջնուղը բերեց այս տմարանոցը, որ դուք տեսնում էք: Մինչև  
այդ ժամանակ ես կարծում էի որ աշխարհում Տունդեր-Տին-  
Տրոնկ ամրոցից գեղեցիկ բան չկայ, բայց այժմ կարծիքս փո-  
խեցի:

«Մի անգամ մեծ ինկվիզիտորը տեսաւ ինձ պատարագի  
ժամանակ, նա ուշի-ուշով նայեց վրաս և հրամայեց իմաց տալ  
ինձ թէ ուզում է հետո խօսել մի գաղանի գործի մասին: Ինձ  
տարան նրա պալատը և ես նրան յայտնեցի իմ ծագումը, նա  
ինձ ցոյց տուեց թէ ինչ աստիճան իմ կոչմանս անվայել է  
մի խորայէլացու պատկանելը: Դօն-Խոսաքարին նրա կողմից  
առաջարկուեց թողնել ինձ, գիշելով նորին բարձր-սրբազնու-  
թեանը: Բայց որովհետեւ Դօն-Խոսաքարը արքունի գանձապետ  
(պալատական բանկիր էր) և դիրքով մարդ էր, այդ պատճա-  
ռով նա այդ բանը լսել անգամ չէր ուզում: Ինկվիզիտորը  
սպանաց նրան «առւտօ-գա-ֆէ» ով:

Վերջապէս մեր ջնուղը փափկեց և պայման կապեց, որի  
համաձայն տունը և ես պէտք է նրանց մէջ հասարակաց լի-  
նէինք: Զնուղին ընկաւ երկու-շարթի, չորեքշաբթի և շաբաթի  
օրերը, իսկ ինկվիզիտորին շաբաթուայ միւս օրերը: Ահա վեց  
ամիս է արդէն որ այդ պայմանը կապուած է: Գործը առանց  
կռուի զլուխ չեկաւ. մինչև այժմ էլ չեն կարողանում վճռել  
թէ որ ուխտին է պատկանում շաբաթ գիշեր լոյս կիրակին,  
չի՞ն թէ նոր: Ասենք մինչև այժմ ես երկուսին էլ դիմագրել  
եմ, և կարելի է հէսց այդ պատճառով էլ նրանք չեն գաղաքում  
ինձ սիրելուց:

«Վերջապէս երկրաշարժի սարսափը փարատելու և Դօն-  
Խոսաքարին հեռացնելու համար, նորին բարձր սրբազնութիւն  
պարոն ինկվիզիտորը բարուոք զատից տօնել առւտօ-գա-ֆէ:  
Նա ինձ պատուեց հրաւիրելով այդ ահսարանին ներկալ լինե-  
լու. ինձ տուին առաջնակարդ տեղ. պատարագի և այրելու  
ծիսի միջարաբում տիկիններին մասուցին զովացուցիչ խմիչք-  
ներ: Ես սարսափեցի, երբ այրում էին շնուղին և այդ խեղճ  
բիսկայեցուն, որ պսակուած էր սանամօր վրայ: Բայց ինչ  
տարին անմասն կամ զարմանը, վիշտը և իմ սարսափը, երբ  
ես տիսայ Պանզլոսին, զգեստաւորուած սան-րենիտոյով և հե-  
րետիկոսական կնդուղով: Ես շփում էի աշքերս, խորը նայում  
էի մինչև վերջապէս նրան կախեցին: Այն ժամանակ ես ինձ  
շատ վատ զգացի: Հազիւ ես ուշքի եկայ, երբ տիսայ ձեզ ո-  
տից զլուխ մերկացրած. այդ բանը ինձ ծայրայեղ ոարսափի,  
զարմանքի, վշտի և յուսահատութեան մէջ զցեց: Ես ձեզ ուզիղն  
ասեմ, ձեր կաշին աւելի սպիտակ և քնքոյշ էր քան իմ բուլ-

գարացի կապիտանինը: Այդ տեսարանը ինձ ճնշող և տանջող բոլոր զգացմունքները կրկնապատկեց: Ես ձայն տուեցի կամենալով առել: — «Սպասեցէք, բարբարոսներ, բայց իմ ձայնս գուրս չեկաւ, մէկ էլ իմ աղաղակներս բոլորովին անօգուտ լը լինէին: Երբոր ձեզ ծեծեցին ես սկսեցի մտածել. թէ այս ինչպէս էր պատահել որ սիրելի կանդիտը և իմաստուն Պանդլոսը Լիսարօն են ընկել, առաջինը մտրակի հարիւր հարուած ստանալու, իսկ երկրորդը իմ սիրեկան նորին բարձր սրբազնութիւն պարոն ինկվիզիտորի հրամանով կախուելու համար»: Այս նշանակուժ է որ Պանդլոսը ինձ անխղճօրէն խարել է ասելով որ ամեն բան դէպի լաւն է գնում:

Վրդովուած և զարդուրած, ես երբեմն սարսափից ինքս ինձ մոռանում էի, և երբեմն թուլանալուց քիչ էր մնում մեռնէի: Իմ գլուխս լցուած էր յիշողութիւններով, որոնք պատկերացնում էին հօրս, մօրս և եղբօրս սպանութիւնը, անպիտան քուլզարացի զինուորի լրբութիւնը և նրա զանակավ ինձ հասցրած հարուածը, իմ գերութեանս և խոհարարունու պաշտօնը, որ ես կատարում էի, յիշում էի նոյնպէս քուլզարացի կապիտանին, զգուելի Դօն-իսաքարին և գարշելի ինկվիզիտորին, Պանդլոսին կախ տալը, հանդիսաւոր ութնաձայն miserere-ը, որի տակտով ձեզ ձաղկեցին, և մանաւանդ այն համբոյրը, որ զուք ինձ տուիք շիրմաների ետևում, այն օրը երբ վերջին անգամ ես ձեզ տեսայ: Ես շնորհակալ եղայ Աստուծուց, որը բերեց ձեզ ինձ մօտ այսքան փորձութիւնից յետոյ: Ես յանձնեցի իմ պառաւին հոգ տանել ձեր մասին և ընթել ձեզ այստեղ հէնց որ այդ կարելի կը լինի: Նա շատ լաւ կատարեց իմ յանձնարարութիւնս և ես զգացի անբացատրելի հաճոյք ձեզ տեսնելով և լսելով և ձեզ հետ խօսակցելով: Հաւանական է որ զուք սարսափելի քաղցած լինիք, ես էլ եմ քաղցած, ուրեմն առաջ մի լու ընթրենք:»

Նրանք սեղան հոստեցին, և ընթրիքից յետոյ երկուսն էլ տեղաւորուեցին այն վատաւոր բազմոցի վրայ, որի մասին խօսել էինք: Այս գրութեամիք նրանց դտաւ աանտէրերից մէկը Դօն-իսաքարը: Այդ օրը շաբաշ էր և նա եկել էր իր իրաւունքներից օգտուելու և սիրոյ հաւաստիքը մատուցանելու:

## ԳԼՈՒԽ IX

Պունիկունդի, կանդիտի և մի ջնուդի հետ պատահած անցքը:

Դօն-իսաքարը ամենասաստիկ բարկացող մի ջնուդ էր,

որպիսին երբեմիցէ կարող էր լինել իսրաէլացոց թագաւորութեան մէջ բարելոնական գերութիւնից սկսած: «Այ դու քած շուն գալիէացի, պարոն ինկվիզիտորը քիզ բաւական չէր, ես պէտք է այս անպիտանին էլ բաժին հանեմ»:

Այս ասելով նա հանեց երկար սուրբ, որը միշտ իր վրայ էր կրում, չմտածելով որ թշնամին էլ է զինուած, յարձակուեց կանդիտի վրայ, բայց միը բարի վեստֆալիացին շրերի հետ պտուաւից ստացել էր և մի լաւ սուրբ Նա մերկացրեց սուրբ և չնայելով իր հեզ բնաւորութեանը, իսրայելցուն մեռած պառկեցրեց գեղեցիկ Կունիգունդի սուրբերի տակ:

«Ո՞վ սուրբ Աստուածածին, բայց կանչեց նա, ի՞նչ կը լինի մեր դրութիւնը, իմ տան մէջ սպանութիւն, եթէ ոստիկանութիւնը գայ, մենք կորած ենք»: Եթէ Պանգլուսը կախուած չլինէր, նա մեզ այս գրբազտութեան մէջ լաւ խորհուրդ կը տար, որովհետեւ մեծ փիլիսոփայ էր: Նրա փոխարէն պառաւի հետ խորհուրդ անենք: Պառաւը շատ փորձառու էր, և արդէն սկսել էր կարծիք յայտնել, երբ բացուեց միւս դուռը: Ժամանակ մէկն էր, սկսուել էր լոյս կիրակին: Այս օրը պատկանում էր նորին բարձր սրբազնութեան ինկվիզիտորին: Նա մտաւ և տեսաւ—ծեծուած կանդիտին սուրբ ձեռքին, յատակին ընկած դիակ, շիռթուած Կունիգունդին և պառաւին որ խորհորդ էր տալիս:

Ահա թէ ինչ առաջացաւ կանդիտի հոգու մէջ և թէ նա ի՞նչպէս դատեց, «Եթէ այս սուրբ մարդը օգնութիւն կանչի, այն ժամանակ ինձ անպատճառ կայրեն, գուցէ և կունիգունդին. նա ինձ անխնայ կերպով ծեծեց, նու իմ հակառակորդն է և նրան սպանելու կիրքս գուխս է խփել, աւելորդ է մտածելը: Այս դատողութիւնը պարզ և արագ էր, և շտալով ինկվիզիտորին զարմանքից սթափուելու ժամանակ, նա նրանից թափ անցրեց իր սուրբ, և ինկվիզիտորն էլ ձգուեց. ջնուղի կողքին: «Միւսին էլ սպանեց, ազաղակեց Կունիգունդան, էլ մեզ չեն խղճալ և ինայիլ մենք կը բանազլուենք և մեզ կ'անջատեն եկեղեցուց մեր վերջին ժամը հասել է: Ի՞նչպէս կարողացաք դուք, որ այգքան հեզ էիր, առանց շունչ քաշելու սպանել ջնուղին և պրելատին»:

«Քեղեցիկ Կունիգունդա, ասաց կանդիտը, երբ որ մարդ սիրահարւում է, խանդուած, ինկվիզիտորից ծեծուած, Աստուած վկայ ինքն էլ չգիտէ ի՞նչ է անուեմ»:

Այդ ժամանակ պառաւը մօտեցաւ և ասաց. «Գոմում կապած է երեք—անդալուզական ձի, թամբեր և սանձերով, թողքաջ կանդիտը նրանց թամբէ, ձեզ մօտ Կունիգունդա կամ մօ-

հագորներ և աղամանդներ, նստենք շուտով ձիերի վրայ, թէն  
ես մի կողմովս միայն կարող եմ ձի նստել, և ուղևրուինք  
Կադիկս, եղանակը հիանալի է և զով գիշերուայ ճանապար-  
հորդութիւը շատ դուրեկան կը լինի:

Կանդիտն խկոյն ձիերը թամքեց, Նրանք անցան երե-  
սուն մղոն առանց հանգստանալու: Այդ ժամանակ ինկվիզիցա-  
յի սուրբ Գերմանդատան խուժեց դատարկ տան վրայ, նորին  
բարձր սրբադնութեանը թաղեցին մի փառաւոր եկեղեցում,  
իսկ հսաքարին քաշ տալով զցեցին դաշտը, որտեղ սատկած  
անստուններ էին քերթում:

Կանդիտը, Կունիգունդան և պառաւը արգէն Աւասին  
փոքրիկ քաղաք էին հասել, որ Սիերա-Մօրենա լեռներումն է  
և հետեւեալ խօսակցութիւնն էին անում:

#### ԳԼՈՒԽ X

«Ո՞վ կարող էր գողանալ իմ փողերն և աղամանդները, ա-  
սում էր լաց լինելով Կունիգունդան.—Բնչոլէս այժմ ապրենք,  
որտեղից գտնենք ինկվիզիտորներ և ջնուղներ, որոնք դարձ-  
եալ այդ բոլորը տայինն:—Աւազ, պատասխանից պառաւը, դու  
արժանապատիւ հայր Փրանցիսկեանն էր, որը երեկ Բաղա-  
խօսում մեզ հետ գիշերեց միենոյն հիւրանոցում: Աստուած  
ինձ թող ների եթէ անգոյշ եմ դատում, բայց նա երկու ան-  
գամ մտաւ մեր սենեւակը և գնաց մեղնից շատ վաղ: «Աւազ,  
ասաց Կանդիտը.—բարի Պանդուսը յածախ ինձ ապացուցա-  
նում էր, որ երկրիս հարստութիւնները պատկանում են բոլո-  
րիս և ամենը հաւասարապէս իրաւոնք ունին օգտուելու  
նրանից: Բայց եթէ հայր Փրանցիսկեանը այդ օրէնքով էր ա-  
ռաջնորդուում, գոնէ մեզ մի քիչ բան թողնէր ճանապարհոր-  
դութիւններս վերջացնելու: Մթթէ ձեզ մօտ ոչինչ չմնաց,  
գեղեցիկ Կունիգունդա:—«Եւ ոչ մի մարտվելիս»,—«Ո՞սչ անենք,  
ասաց Կանդիտը: Պէտք է մի ձին ծախել. ասաց պառաւը, ես  
կը նստեմ Կունիգունդի հետ մի ձիու վրայ, թէն մի կողմովս  
միայն կարողանում եմ նստել, և մենք կը համենք մինչև Կա-  
դիկս:

Միենոյն հիւրանոցում իջևանել էր մի բենեգիքտեան  
վանքի վանահայր, որը շատ էժան գնեց ձին: Կանդիտը, Կու-  
նիգունդան և պառաւը անցկացան լիւստինի, Զիլլասը և Լեռքիկաը  
և հասան Կադիկս: Կանդիկսուն նաւատորմիզը զրահաւորում և  
զօրք էին հաւաքում, Պարագուայի արժանապատիւ եղուիտ  
հայրերին խելքի բերելու, որոնք մեղադրում էին սուրբ Սակ-

բամինսո քաղաքի մօտ գտնուած իրանց հնդիկ ցեղերի հրոսակները խսպանացոց և պորտագալացոց թագաւորների գէմ զրգուելու մէջ։ Կանդիտը, որ բուլղարների մօտ ծառայել էր, բուլղարերէն կատարեց բոլոր զինաշարժական արհեստը՝ արշաւանքի պատրաստուող հրամանատարի առաջ, ցոյց տալով այդ ժամանակ այնքան շնորփ, արագութիւն, ճարպիկութիւն և արժանապատութիւն, որ նրա հրամանին յանձնեցին մի հետեւակ վաշտ։

Այսպէս Կանդիտը դառաւ կապիտան, և նստեց նաւը՝ Կունիգունդի, պառաւի, երկու ծառայի, երկու անդալուզեան ձիու հետ միասին, որոնք երբեմն պատկանուած էին Պորտուգալիայի մեծ ինկվիզիտորին։

Ճանապարհորդութեան ժամանակ նրանք երկար ժամանակ դատում էին խեղճ Պանդուսի փիլիսոփայութեան մասին։ Մենք ուղևորում ենք միւս աշխարհ, ասաց Կանդիտը, որտեղ անկասկած ամեն բան հիմնալի կը լինի։ Իսկ ինչ վերաբերում է մեր աշխարհին, խոստովանուում եմ, որ կարելի է խղճալ այն բաների մասին, ինչ որ կատարում է այնտեղ, ինչպէս Փիզիքական նոյնպէս և բարոյական կողմից։ «Ես ձեզ սիրում եմ բոլոր սրտով, — ասաց Կունիգունդան, — բայց մինչև այժմ չեմ կարողանում խելքի գալ այնտեղի խառնակութիւններից։» «Ամեն բան լաւ կը գնայ, — ասաց Կանդիտը, նոր աշխարհի ծովը մեր եւրոպականից լաւ է, նա խաղաղ է ու քամին էլ աւելի տեսական է։ Հաւանական է որ աշխարհներից ամենալաւը պէտք է լինի։» «Աստուած տայ, — ասաց Կունիգունդան, — ես այնպէս գժբախտ էի մեր աշխարհում, որ իս սրտին յոյսը անմատչելի է։» «Դուք տրտնջում էք, — ասաց նրանց պատուը — այն ինչ ձեր գժբախտութիւնները շատ հետու են իմինիս հետ համեմատուելուց։» Կունիգունդան քիչ մնաց բրդշար ծիծաղեց, որ այդ բարի կինը ձգտում է յայտնուած իրանից աւելի գժբախտ լինելու։ «Մայրիկ, ասաց նա — որպէսով իրաւունք ունենաք ինձանից տեկի գժբախտ լինելու, գուք պէտք է երկու անգամ բըռնալրաբուած լինիք և փորիդ պանակի երկու հարուած ստացած պէտք է լինիք, ձեր երկու զղեակը կործանուած, երկու հօր և երկու մօր սպանուած, երկու սիրահարներից առւտօ-գափէում ձաղկած, սրա հետ ի նկատի ունեցէք, որ ես ծագումով՝ բարոնեսսա՞նմ և եօթանասուն երկու սերունդ նախահայրեր ունիմ։ Հապա ինչպէս էի ես խոհարարուհու պաշտօն կատարում։»

«Ճիրուհիս, — ասաց պառաւը, — զուք չզիտէք իմ ծագումը, բայց բաւական է միայն որ ես ձեզ իմ յետքս ցոյց տամ, որ գուք ձեր լեզուն փոխէք, և տեսնէք, թէ որքան խուճապով է

տրած ձեր գատողութիւնը: Այս խօսքերը դարթեցրին կունիւ գունդի և կանդիտի մէջ սաստիկ հետաքրքրութիւն: Պառաւը սկսեց իր պատմութիւնը այսպէս:

## X1

Պառաւի պատմութիւնը:

Իմ աչքերը միշտ կարմիր և արտասուալից չէին, քիթս միշտ գնչիս կպած չէր և ես միշտ ազախին չէի: Ես պատ Ռւբենսոս Խ-ի \*) և իշխանուհի Պալեստրինսկու աղջիկն ևմ: Մինչև տասն և չորս տարեկան հասակս ես կրթւում էի մի այնպիսի վառաւոր պալատում, որ ձեր գերմանացոց բարոնների բոլոր գղեակները նրանց համար իրբե ախոռատուն էլ պէտք չէին գալ, իմ ամեն մի հագուստ ձեր բոլոր վեսֆալական շքեղութիւններից թանկազին էր: Ես աճում էի իրբե գեղեցիկ, շնորհալի և տաղանդաւոր աղջիկ զուանութիւնների, երկրպագուների և յշսերի մէջ: Ես արգէս սէր էի ներշնչում, իմ կուրծքս կլորանում էր, և ինչ սպիտակ կուրծք էր գա, սպիտակ, առոյգ ինչպէս Մելիչեան Վեներայինը. իսկ աչքերը, ինչ արտեամունք և ինչ ունքեր, սև ինչպէս սաթ, ինչ կրակ էր այրւում իմ աչքերում, նրանը նսեմացնում էին ասաղերի փայլը, ինչպէս ասում էին ինձ տեղական բանաստեղծները: Ինձ հաղցնող և հանուեցնող կանայք առաջից և յիշեից գիտելով զմայլում էին և բոլոր տղամարդիկ նախանձում էին այդ կանանց:

«Ես նշանուած էի տիրապետող իշխան Մասսա Կարրասկու հետ: Ի՞նչ իշխան: Գեղեցկութեամբ ինձ հաւասար, մարմացած քողցրութիւն և սէր, նա փայլում էր հանճարով և վառուած էր սիրով: Ես սիրում էի նրան ասածին սիրովս, այնպիսի յափշտակութիւնով որ հասնում էր աստուածացման: Հարսանիքի պատրաստութիւններ էին տեսնում, որի փառայեղութիւնն և շքեղութիւնը անհերակայելի էին, անվերջ տօնել էին կատարւում կարուսելներ, օպեր-բուֆֆեր ամբողջ Բատլիայում ինձ սօնեաններ էին նուիրում. նրանց մէջ և ոչ մէկը մի բանի նման չէր: Երջանկութեան վայրկեանը մօտենում էր, երբ յանկարծ մի պառաւ մարկիզունի, որ իմ իշխանի նախակին սիրուհին էր, նրան նրաւիրում է

\*) Ինկատի ունեցեր հեղինակի նուրը համեստութիւնը, մինչև այսօր Ռւբենսոս Խ-րդ պատ չի եղել, նա չի համարձակում վերապրել այդպատօքին աղջիկը մի որհեց յայտնի պապի. Ի՞նչ շրջահայեցողութիւն, ի՞ն զգացմունքների ազնութիւն:

մի բաժակ շօկոլադ խմելու, և երկու ժամից յետոյ փեսացուս մեռնում է զարհուընի ջղաձգութիւններով. բայց դեռ իմ զըժքախտութիւններիս ծայրը նոր է երկում: Իմ մայրս յուսահատութեան մէջ ընկած, թէև իհարկէ ոչ այնքան ինչքան ես, ցանկացաւ ժամանակաւորապէս հիսանալ տխուր տեղերից: Նա ունէր հիսանալի կալուած Գայէտայի մօտ: Մենք նստեցինք Հոսմի սուրբ Պետրոսի աթոռի նման ոսկէզօծած մի ցոկանաւի մէջ և ծովով ճանապարհ ընկանք: Յանկարծ մեղ հանգիպում է Սալէից եկած մի ծովահէն և յարձակում է մեզ վրայ: Մեր զինուորները պաշտպանում էին ինչպէս պապի զինուորներին վայել է: Նրանք գէնքերը գցեցին ծովը, ծնկների վրայ չողեցին խնդրելով ծովահէնից թուզութիւն ու articulo mortis.

«Նրանց իսկոյն բոլորովին մերկացրին կապիկների նման, միենայն կերպով վարուեցին իմ մօր, մեր նաժիշտաների և հնձի զարմացրեց, երբ նրանք սկսեցին մատները կոխել բոլորիս այն տեղերը, որտեղ մենք կանայք սովորաբար զնում ենք միմիայն զրեխի խողովակի ծայրը: Այս ծխակատարութիւնը ինձ շատ տարօրինակ էր թւում. ոյ ինչ ասել է միամիտ ջահիլութիւն, քանի որ զեռ աշխարհը չես տեսել: Վերջն ես իմացայ որ այդ անւում է իմանալու համար թէ այն տեղերում ագամանդներ չեն պահուած արգեօք: Այս սովորութիւնը գոյութիւն ունէր անյիշելի ժամանակներից լուսաւորուած ազգերի մէջ, որոնք պարապում են ծովագնացութեամբ: Ասում են, որ Մալթեան կղզու պարոն ասպետները երբ որ նրանց գերի էին ընկնում թուրքեր կամ թրքուհիներ, երբէք չէին զանց առնում այդ բանը կատարելը. սա միջազգային իրաւունքի մի օրէնք էր և որոշ մի ժամանակ չէր խախտում:

«Ես ձեզ աւելորդ եմ համարում ասել, թէ ինչքան գառն է մի իշխանունու համար իր մօր հետ գերի զնալ Մարոկկօ. դուք կարող էք երեակայել թէ ինչ նեղութիւններ քաշեցինք ծովահէնների նսւում: Իմ մայրը դեռ շատ գեղցիկ էր, մեր նաժիշտները, մինչև անդամ խոհարարուհիները ունէին հրապուրիչ տեսք, որպիսիք ի հարկէ չէին գտնուի ամբողջ Անդրիկայում: իսկ իմ մասին խօսելն անզամ աւելորդ է, ես սքանչելի էի ինչպէս գեղեցկութեան տիպար և այն էլ կոյս, միայն աւանդ—ոչ երկար ժամանակ: Վայելչագեղ իշխան Մասսակարասկու համար փայփայած ծաղիկը ինձանից քաղեց ծովահէնների կապիտանը, սա մի գարշելի նեղը էր որ զես երեակայում էր թէ ինձ մեծ պատիւ է անում: Ճիշտ ասած, երեխ ես և իշխանուհի Պալիստրինսկի շատ պինդ էինք որ կարողացանք զիմանալ ինչ որ Մարոկկօի ճանապարհին մենք քա-

շեցինք: Բաւական է այս մասին. դրանքը բոլորն էլ այնպիսի  
հասարակ բաներ են, որ խօսել էր չարժի գրանց մասին:

«Երբ որ մենք տեղ հասանք, Մարոկկօն արիւնով լցուած  
էր: Մոլէյ-իզմայիլի<sup>\*)</sup> յիսուն որդկերանցից ամեն-մէկը ունէր  
առանձին կուսակցութիւն, այնպէս որ դուրս էր եկել յիսուն  
հատ ներքին պատերազմ սեերի ընդդէմ սեերի, սեերի ընդ-  
դէմ թխամորթների, մուլատների ընդդէմ մուլատների, առ-  
բողջ տէրութեան մէջ անդադար միմիանց վրայ:

«Հազիւ մենք զուրս եկանք ափը, որ մեր ծովահենին  
հակառակ կուսակցութեան պատկանող սեերը վրայ վազեցին  
սրա տւարը յափշտակելու: Ազամանդներից և ոսկուց յետոյ  
ամենաթանկագինը մենք էինք: Ես վկայ եղայ մի այնպիսի  
տեսպանի որպիսին երբէք ձեր եւրոպայում դուք չեք տեսնի:  
Հիւսիսային ազգերը ստուարիւն են, նրանց մէջ չկայ այն  
ըուն կիրքը գեպի կանայք, որով յայտնի են Աֆրիկայի բոլոր  
բնակիչները: Զեր եւրոպացիների երակներում արիւն չի հո-  
սում այլ կաթը, այն ինչ Ատլանտիս լեռների և հարեան եր-  
կրների բնակիչների երակներում հոսում է—արջասպ, կըտկի-  
նրանք մեզ համար կուռում էին իրանց երկրի առիւծների, յո-  
վագների և իժերի կատաղութեամբ: Մի մաւր բռնեց մօրս աջ  
թիկից, իմ կապիտան լէյտենտանտը կպաւ ձախից, մի մաւր  
քաշում էր մի ոտից և պիրատների մէկն էլ ձգում էր միւս  
ոտից: Այս նոյն եղանակով քաշկոտեցին մեր բոլոր աղջիկ-  
ներին ամեն մէկին չօրս զինուորով միանգամից: Իմ կապի-  
տանը պահում էր ինձ իր ետեւ և ձեռքում բռնած ահազին  
սակը սպանում էր բոլորին ով որ նրա վայրագութեան ըն-  
դիմանում էր: Վերջապէս ես տեսայ որ բոլոր մեր իտալունիք  
եղան պատառուած, կտրատած և յօշոտած այս հրէշներից,  
որոնք իրար ձեռքից խլում էին նրանց: Վերջապէս բոլոր մեր  
ճանապարհորդակից գերիները, նրանց բռնող զինուորները,  
նաւաստիները, սեերը, թխամորթները, սպիտակները, և նոյն  
իսկ իմ կապիտանը, բոլորը սպանուեցին և ես կիսամեռ պառ-  
կած էի դիակոյտի վըայ: Այսպիսի տեսարաններ տեղի էին  
ունենում այս կայսրութեան մէջ ինչպէս յայտնի է երեք հա-  
րիւր մդոնից աւելի տարածութեան վրայ: Բայց և այնպէս չէ-  
ին մոռանում օրը հինգ անգամ աղօթել ինչպէս պատուիրել է  
Մուհամմէդը:

«Դժուարութեամբ գուրս սողալով արիւնաշաղաղ զիակների

<sup>\*)</sup> Մոլէյ-իզմայիլը թագաւորում էր 1702 թ. և ազրից 105 տարի+  
ծան. Փը. հըտա:

կոյտի տակից, ես քաշ նկայ առուի ափում կանգնած մեծ նարնջի ծառի մօտ և ընկայ նրա տակ վախից, յոպնածութիւնից, յուսահատութիւնից և քաղցից բոլորովին ուժասպառ եղած: Շուտով իմ տկարութիւնը փոխուեց քնի, որը աւելի նըման էր ուշադնացութեան քան թէ հանգմառութեան: Այսպէս պատկած էի ես թուլացած և անզգայ կեանքի և մահուան մէջ, երբ յանկարծ զզացի որ մի ինչ որ բան ճնշում է ինձ դանդաղ կերպով աատանուելով ինձ վրայ: Ես բաց արի աչքերս և ահասյ վայելուչ կերպարանքով մի սպիտակամորթ մարդ, որը հոգւոց էր հանում և մոմուում էր բթի տակ.—«Օ քե սիացարաց առաջնորդ!»:

## ԳԼՈՒԽ XIX

Պառաւի թշուառութիւնների չարունակութիւնը:

Զարմացած և ուրախացած մայրենի լեզուի հնչիւններից ես նկատեցի անծանօթին, որ սրանից աւելի վաս գժբախտութիւններ էլ են պատահում. ես կարճ խօսքերով պատմեցի իմ կրած բոլոր սարսափները և նորից ուշագնաց եղայ: Նա տարաւ ինձ հարեան տունը, հրամայեց դնել ինձ անկողնի մէջ և կերակրել, ինձ խնամում էր միսիթարում և փայփայում, ասում էր որ ինձանից աւելի զեղեցիկ արարած չի տեսել և որ երբէք այլպէս ցաւելով չի զղջացել իր ինչ որ անտանելի կորուսի վրայ: Ես ծնուել եմ Նէապոլում,—ասաց նա,—որտեղ ամեն տարի ներբինացնում են երկու երեք հազար երեխաններ, մի մասը զրանցից մեանում են, ոմանք ձեռք են բերում կանանց ձայնից աւելի լաւ ձայն, իսկ մի քանիսը դառնում են աէրութիւնների կառավարիչներ (\*).

Ինձ վրայ այդ օպերացիան շատ յաջող կերպով կատարեցին, և ես երգիչ էի իշխանուհի Պալիսարինովի մատուում»: Իմ մօր, աղաղակեցի ես: «Չեր մօր, կանչեց նա հեկեկալով. ուրեմն զուք այն փոքրիկ իշխանուհին էր, որին ես զատիշարակել եմ մինչև 6 տարեկան հասակը և որն այն ժամանակ խոստանում էր դառնալ այնպիսի զեղեցկուհի, որպիսին գուք էք»: «Այն, այդ ես եմ, իմ մայրս չորս հարիւր քոյլ սրանից հեռու լընկած է գիտիների կոյտի տակ, չորս մասի պատառուած:

\*) Կարլո Ֆարենհելի, որը իսպանիայում մերդինանդ Վլի ժամանակ մեծ դեր էր խաղում:

Ծան, ֆր. հրատ.

«Ես պատմեցի նրան բոլորը ինչ որ ինձ հետ պատահել էր. նա ևս ինձ պատմեց իր արկածները և հաղորդեց ինձ որ մի քրիստոնեայ թագաւորի կողմից ուղարկուած է եղել դաշն կապելու Մարովկօի կայսեր մօտ, որով պարտաւորւում հնք հասցնել նրան վառութ, թնդանօթներ և նաւեր, այն պայմանով որ նա օգնի միզ միւս քրիստոնեաների առևտուրը ոչնչացնելու»  
«Ես կատարեցի այդ յանձնարարութիւնը,—ասաց այդ աղջիւ ներքինին.—Եւյտում ես նաև կը նստեմ և ձեզ հետո կը վերադարձնեմ իտալիա: Ma che sciagura d'essere senza coglioni!»

«Ես չնորհակալ եղայ նրանից գորովալից արաւասուըներով, բայց փոխանակ Խոտալիա հասցնելու նա տարաւ ինձ Ալժիր և վաճառեց այնաեղի լեշին: Դեռ նոր էր ինձ ծախել, երբ ժանդակութ Աֆրիկան, Սախան և Եւրոպան անցնելով կատաղարար ճարակուեց Ալժիրում: Խշանուհի, գուք երկրաշարժ տեսել էք, բայց ժանդարման էլ երբեկցէ փորձած կաք:

—Ամենին, ասաց կունիգունդան:

—Եթէ փորձած լինէիք, այն ժամանակ կը համաձայնէիք, որ նա անհամեմատ աւելի զարհուրելի է երկրաշարժից: Աֆրիկայում նա շատ յաճախ է պատահում և ես նրանով հիւանդացել եմ: Երեակայեցեք պատի տամնենինդ տարեկան աղջկա վիճակը, երբ նա երեք ամսուայ ընթացքում փորձեց ակքատութիւն, գերութիւն, բանարարուում էր համարեան ամենայն օր, տեսել էր, ինչպէս նրա մօր ձեռքերն և ուները պոկոտել էին, դիմացաւ բաղցին և պատերազմին և մեռնում էր Ալժիրում ժանտախտից վարակուած: Սակայն ես չմեռայ՝ բայց իմ ներքինին, տէրը և համարեան ամբողջ ալժիրական սիրայլը\*) ևս կոստրուեցան:

«Երբ որ ժանդախտին առաջին սարսափը դադարեց, բէյի գերիներին սկսեցին ծախել: Ինձ մի վաճառական գնեց և տարաւ Տունիս, այնտեղ նա ինձ ծախեց ուրիշ վաճառականի, որն որ ինձ վերսախին վաճառեց Տրիպոլում, այդտեղից ես ծախուեցի Ալէքսանդրիա, Ալէքսանդրիայից Զմիւռնիա, իսկ Զմիւռնիայից Կոստանդնուպոլիս, վերջապէս ինձ գնեց մի ենիչէրի աղա, որին ուղարկեցին պատերազմ ուուներից պաշարուած Ալզիրով պաշտպանելու:

Աղան, որ կանանց սեսի սաստիկ սիրահար էր, տարաւ իր հետ ամբողջ հարեմը, և տեղաւորեց մեզ Պալուս—Մհօղիտէս փոքրիկ ամբոցի մէջ: Ամբոցը պաշտպանում էին երկու սեամորթ ներքինիներ և քսան զինուոր: Մերօնք սպանեցին

\*) Պալատականանոց.

Ժան. հայ. Բարդմանչի:

բազմաթիւ ոռւսներ, բայց և նրանք իրանց կողմից լաւ հատուցին մեզ փոխարէնը: Ազովը մատնուեց հրի և որի \*), չեխն ինայում ոչ հասակ և ոչ սեռ, միայն մեր փոքրիկ ամրոցն էր դիմանում. թշնամին ուղում էր հարկադրել սովից անձնատուր լինելու: Քանի ենիչերնը երգուեցին անձնատուր չկիսել: Սարսափելի սովը ստիպեց նրանց ուտել մեր երկու ներքիներին, միայն թէ երդմանը չգրժին: Մի քանի օրից յետոյ նրանք վճռեցին կանանց ուտել: Մեզ հետ կար մի բարեբաշտ և գթասիրտ իմաս: Նա մի գեղեցիկ քարոզ ասաց ենիչերներին, համոզելով նրանց չսպանել մեզ լուղորովին:—«Կտրեցէք, ասաց նա, իւրաքանչիւր կնոջ յետոյքից մի-մի թուշը, և դուք կ'ունենաք համադամ խորտիք, իսկ եթէ մի քանի օրից յետոյ հարկաւոր լինի մի՞ւ դուք սիենոյն միջոցին դիմելով, գարձեալ կ'ունենաք փառաւոր կերակուր, երկինքը այսպիսի առարինի վարմունքի համար կը վարձատրի և կ'օգնի ձեզ»:

«Իմամը շատ պերճախօս էր և համոզեց նրանց: Մեզ այս սարսափելի օպերացիային ենթարկեցին. իմամը մեզ բժշկում էր նոյն բալասանով, որ զնում են երիտասարդին թլպատութիւնից յետոյ, մենք բոլորս մերձի մահ ընկած էինք:

«Հազիւ ենիչերիները վերջացրել էին մեր մսից պատրսատուած ճաշը, երբ ոռւսները, որ մօտեցել էին մեզ տափակ մակոյկներով, յանկարծակի ներս խուժեցին և բոլոր ենիչերիներին մորթուեցին: Խուսներ ոչ մի ուշազրութիւն չեխն գարձնում մեր այդպիսի օպերացիայի ենթարկուած լինելուն: Բայց յայտնի է որ ֆրանսիական բժիշկներ ամեն տեղ պատահում են: Նրանցից մի շատ հմուտը յանձն ասաւ մեզ բժշկելու և բըժըշկեց: Ես երբէք չեմ մոռանաւ որ հազիւ վերքերս ծածկուել էին երբ նա եալսից կպաւ իր առաջարկութիւններով: Միայն նու մեզ բոլորիս խորհուրդ տուից մխիթարուել, հաւատացնելով, որ առաջին անգամը չեն պաշարման ժամանակ այդպիսի պատհամունքները, և որ պատերազմի օրէնքն այդպիս է:

«Հազիւ իմ ընկերունիներս ոտքի կանգնեցին, որ մեզ ուղարկեցին Մոսկուա: Ես ընկայ մի բօյեարինի ձեռք, որը ինձ շինեց իր այգեպանունին և ամեն օր տալիս էր ինձ քսան հարուած մարտկով: Բայց մի երկու տարից յետոյ սրան ու-

\* ) Խուսներն առան Ազովը Պետրոս Մեծի ժամանակ 1696 թ. և վերագրձրին 1711 թուին խաղաղութիւն հաստատուելիս, 1739 նրանք նորից առան և ամրացըլին, բայց 1739 թ. հաշտութիւնից յետոյ կրկին վերագրձրին քանդելով ամրութիւնները: Ազովի առումը Եկատերինա Ռ-ի ժամանակ տեղի ունեցաւ, «Կանգիալ» հրատարակութեաւց տասը տարի յետոյ:

րիշ երեսուն բօյեարինների հետ անուաման արին պալատական մի ինչ որ գատարկ գժտութեան—համար և ես օդառւելով այդ հանգամանքից փախայ. ես ամբողջ Ծուսաստանն ոտքով անցայ, երկար ժամանակ ծառայեցի Միզայում մի գինեան մէջ, յետոյ Ռոշտոկում, Վէյցարում, Էէյցիգիդում, Կասսելու և Ռոտտերդամում, ես պառաւեցի աղքատութեան և անարդանիք մէջ կէս յետոյքով. շատ առգամ մոտաքերելով որ ես պապի աղջիկն եմ, հարիւր անգամ ցանկացել եմ ինձ կեանքից զրկել, բայց չնայելով այդ բոլորին կեանքը ես սիրում էի: Այս տարօրինակ թուլութիւնը իմ կարգիքով մեր ամենավտաւոր հակումն է, որորհետեւ կարող է լինել մշտական ծանր բեռը կրելու ցանկութիւնից աւելի յիմար բան, մինչդեռ ամեն քայլափոխում—մարդ փափագում է այդ բեռը վայր զցել, զզալ իր գոյութեան զարհուրելի վիճակը, և այնուամենայնիւ շարունակում է փայլայել նրան, տաքայնել թունաւոր օձը մինչև որ նա բոլորովին կրծելով մաշի սիրտու:

Բախտը ինձ որտեղ էլ որ գցել է, մինչե իսկ դիսեւաներում, ես ամեն տեղ հանդիպել եմ բազմաթիւ մարդկանց, որոնք անիծում էին իրանց գոյութիւնը. բայց ամբողջ կեանքում ես պատահել եմ միայն տասներկու մարդու, որոնք յօժարակամ վերջ են տուել նրան.—զրանք էին երեք նեզը, չորս անգլիացի, չորս ժենեցի և մի գերմանացի պրոֆեսոր Ռոբէկ<sup>\*)</sup>) անունով: Վերջապէս ես բնկայ ջնուք Դօն Խոաքարի մօտ ծառայութեան: Նա ինձ դրեց ձեզ մօտ, ով իմ գեղեցկուհի. ձեր վիճակն ինձ հետաքրքրեց և ես զրադուեցի ձեր արկաւծներով աւելի քան թէ իմով: Ես մինչե անգամ շէի պատմի ձեզ իմ դժբախտութիւնների մասին, երբ ինձ վիճաւորելով չգրգռէիք և եթէ սովորութիւն չլինէր ձանձրալի նաւարկութիւնը կարձել զրոյցներով: Ես փորձուած եմ, տիկին, գիտեմ կհանքը. չքցանկանալ արդեօք առաջարկել նաւորդներից որին կուզէք, պատմել իր կեանքը, և եթէ գանուի գոնէ մէկը, որն իր կեանքի ընթացքում յաճախ չէ անիծել իր գոյութեան ժամը և զգացել իրան մահկօնացուներից ամենադժբախտը, այն ժամանակ ինձ դնդի գլոր ծովը շպրտեցէք»:

\*) Ռոբէկը ծնուել է Շվեյցիայի Կայլմար քաղաքում 1672 թ.: Նա խեղպուեց ջըռում 1739 թ.:

## ԳԼՈՒԽ XIM

Թէ ինչպէս Կանգիալ հարկադրուած էր բաժանուել գեղեցիկ  
Կունիգունդայից և պառաւից:

Լսելով պառաւի պատմութիւնը գեղեցիկ կունիգունդան  
սկսեց ցոյց տալ այդ անձնաւորութեանը իր կոչման և արժա-  
նաւորութիւններին վայել յարգանք: Նա ընդունեց նրա առա-  
ջարկութիւնը և խնդրեց բոլոր նաւորզներին մէկը միւսի յե-  
տեից պատմել իրանց արկածները: Կանգիալ և Կունիգունդան  
համոզուեցին որ պառաւն ուղիղ է ասում: «Ե՞նչպէս ափսոսում  
եմ, ասաց Կանգիալը, որ Պանգլուն առուտո-դա-ֆէի ժամանակ,  
ծիսակատարութեան հայանակ, կախ առուին, նա հիանալի կը  
բացատրէր մեզ երկիրն ու ծովը ծածկող նիւթական և բարո-  
յական չարիբը: ուղիղն առած այժմ ես զգում եմ որ կարող էի  
ամենայն յարգանօք նրան ներկայացնել մի քանի թեթև առար-  
կութիւններ»:

Մինչգեռ նաւորդներն պատմում էին իրանց գլխից ան-  
ցածները, նուը մօտենում էր ափին: Դուրս եկան Բուէնոս-Այ-  
րէս: Կունիգունդան, կապիտանը, կանգիալը և պառաւը ուղե-  
ւորուեցին երկրի կառավարչառեսի մօտ, որի անունն էր Դոն-  
Ֆերնանդօ-դ'իբարաա և Ֆիգէօրա և Մասկարինեաս և Լամ-  
պուրգոս և Սուլա:

Այս բարձրաստիճան իշխանը գոսոգ էր, ինչպէս կը վա-  
յելէր այսքան երկար անուն ունեցող մարդուն: Նա խօսում էր  
մարդկանց հետ ամենաազնիւ արհամարհանքով, այնպէս քիթը  
անկելով, այնպէս ձայնը բարձրացնելով, այնպիսի հրամայողա-  
կան գիրք բռնելով, որ նրա մօտ այցելութեան գնացողները  
սաստիկ ցանկութիւն էին զգում նրան թակելու: Նա կանանց  
կատաղի սիրահարը էր: Կունիգունդան չափազանց դուր եկաւ  
նրան: Նա նախ և առաջ հարցրեց, թէ նա կապիտանի կինը չէ  
արդեօք: Նա այս հարցն առաջարկեց այնպիսի եղանակով. որ  
Կանգիալը սրգողեց: Նա չհամարձակուեց ասել թէ Կունիգուն-  
դան իր կինն է, որովհետեւ նա նրա կինը չէր: Նոյնպէս չվճռեց  
նրան քոյք անուանել, որովհետեւ այդ էլ սուտ կը լինէր. թէն  
այս անմեղ սուտը ամեն ազգերի մէջ սովորական էր և նորե-  
րին էլ շատ օգտաւետ կը լինէր. Կանգիալ ոգին զեռ չափա-  
զանց մաքուր էր որ կարողանար ճշմարտութեան դաւաճանել:

«Ես նոր պէտք է պատիւ ունենամ այս օրիորդի հետ ա-  
մուսնանալու, ասաց նա, և մենք ինսդրում ենք ձերդ պայծա-

ռավայլութիւնից, որ բարեհաճէք մեր հարսանիքը կարգադրել:

Դոն Ֆեղնանդո—զ'իրարաս և Ֆիգեօրս և Մասկուրէնիաս և Լամբուրդոս և Սուզան բեխերը ոլորեց դառնութեամբ ժըպտաց և հրամայեց կապիտան Կանդիտին գնալ իր զօրքն արձակելու: Կանդիտը հնազանդուեց. կտուավարիչը մնաց կունիգունդի հետ մինակ: Նա յայտնեց օրիորդին որ վառւում է բուռն սիրով դէպի նա և խօսք տուեց վաղն և եթ պսակուել նրա հետ ի գէմս եկեղեցու, կամ այլապէս ինչպէս հաճելի կը վիճին նորին գերւողանցութեանը: Կունիդունդան խնդրեց նրանից քառորդ ժամ մտածելու համար, որպէսզի վճռելուց առաջ պառակի հետ խորհրդակցի:

Պառաւն ասաց կունիգունդին. «Տիրուհի, գուք եօթանասուն երկու սերունդ նախահայր ունէք բայց մի զրոշ փող չունէք, բաւական է միայն ցանկանաք և գուք կը վիճէք Հարաւային Ամերիկայի առաջին իշխանի կինը, այն էլ այդպիսով գեղեցիկ ընչացքներով: Արժէ այդքան չմահաւան և պատկառուկ վիճել:

Ձեզ բանարարել են բոլգարները, ձեզ պահել են ջնուգն ու ինկլիպիտաօրը, ինչ կուզէք ասացէք բայց զժբաղդութիւնը տալիս է որոշեալ իրաւունքներ: Խոստովանւում եմ ես ձեր տեղը վիճէի, մարդու կը գնայի պարոն կառավարչապետին, և կապիտան Կանդիտին բաղդաւոր ապագայ կը պատրաստէի:» Մինչդեռ պառաւը գտառում էր իր հասակից և փորձառութիւնից ստացած խոհականութեամբ, նաւահանգիստ մտաւ մի փոքր նաւ. վրէն նոտած էին ալկադը ալդվագիլներով (քաղաքագլուխը և ոստիկաններ) պատահել էր հետևեալ գէպքը:

Պառաւը գուշակել էր, որ կիսաբոնից փախչելու կունիգունդի փողերն ու թանկազին իրերը գողացել էր Բաղախօսուում մի Քրանցիսկեան կրօնաւոր երկար ու լայն թերեւով: Այս արեղայի խելքին փչեց ծախել ակնավաճառին մի քանի թանկագին քարեր. վաճառականը ճանաչեց որ այդ քարերը մեծ ինկվիզիտորինն են: Ֆրանցիսկեանը կախաղանի առջև խոստովանուեց որ գողացել է, ասաց նոյնպէս թէ ումից և ցոյց տուեց ճանապարհը, թէ ուր էին գնում այն անձինքը: Կունիգունդի և Կանդիտի փախուստը գեռ առաջուց էլ յայտնի էր:

Արեղայի ցուցմունքով նրա շաւզով յետևեցին մինչև կազիկս և խկոյն նաւ ուղարկեցին նրանց հետքով: Նաւը եկաւ Բուէնոսայրէսի նաւահանգիստը: Խոկոյն տարածուցաւ Ալկազի գալատեան լուրը, որ հետապնդում էր մեծ ինկվիզիտորի սպանիչներին: Փորձառու պառաւը խկոյն գլխի ընկաւ թէ ինչ պէտք էր անել:—«Փախչել չի կարելի—ասաց նա կունի-

գունդին,—նոյնպէս և վախենալու բան չկայ. դուք հօ չէք սպանել նորին սրբազնութեանը, կառավարչապետն էլ ձեղ սիրում է, թոյլ չի տալ որ ձեղ նեղացնեն... մնացէք». Յետոյ նա վազեց Կանդիտի մօս, «Փախէք,—ասաց նրան, —թէ չէ մի ժամից յետոյ ձեղ կ'այրեն»: Զէր կարելի մի վայրկեան անգամ կորցնել... բայց ի՞նչպէս բաժանուել Կունիգունդից և մըտեղ թաքչել...

## ԳԼՈՒԽ ՀԻՎ

**Թէ ինչպէս Պարագուայի եզրուիտներն ընդունեցին Կանդիտին և Կակամբօխն:**

Կանդիտը բերել էր Կադիկսից իր հետ մի ծառայ, որպիսիք առ են Խսպանիայի ափերում և գաղութներում: Սա էր մի իսպանական ըգալիք ծնուած տուկումնից մետիսից: Նա եղել էր երգիչ, ժամկոչ, նաւասարի, աբեղայ, գործակատար, զինուոր և պաշտակ (լակեյ). Նրա անունն էր Կակամբօ, նա շատ սիրում էր իր տիրոջը, որովհետև Կանդիտը պարզամիտ և բարի մարդ էր: Նա շտապով թամբեց երկու անդալուգական ձիերը: «Դէ՛ն, պարոն, հարկաւոր է լսել պառաւին, քշենք առանց յետ նայելու»: Կանդիտը արտասուրք էր թափում: «Ո՞գ թանկապին Կունիգունդա, միթէ պէտք էր քեղ գցել գնալ հէնց այժմ, երբ պարոն կառավարիչը պատրաստում էր մեզ պատկելու... Կունիգունդա արզեօք ի՞նչ կը պատահի բեղ այստեղ, հեռու օտարութեան մէջ»: «Մի կերպ կ'ասլրի, ասաց Կակամբօն, կանայք միշտ լաւ են իմանում իրանց մասին հոգալ. ինքն Աստուած է նրանց խնամում... Փախչենք»: «Ուր ես տանում գու ինձ: Մենք ուր պէտք է գնանք: Ի՞նչ պէտք է անենք մենք առանց Կունիգունդի», ասում էր Կանդիտը: «Մեզայ քեզ ովուրբ Յակոր Կոմբոստելի, Էստեղ էլ ի՞նչ մտածելու բան կայ եղբայր, բայց անչեց Կակամբօն, զուք գնում էիր եզրուիտների դէմ կոռւելու, ուրմն հիմայ, պէտք է գնալ նրանց պաշտպանելու:

Ես ճանապարհը զիտեմ և կը տանեմ ձեղ նրանց կաշլուածները, նրանք ուրախութեամբ կընդունեն բոլգարական ծառայութիւն իմացող մի կապիտանի, զուք կը վաստակէր ահագին կարողութիւն, եթէ այս աշխարհում անյաջողութիւն է, կարելի է ուրիշ տեղ վնասի փոխարէնը հանել: Այս էլ կայ որ նոր բաներ տեսնելն և անելը շատ հաճելի է: «Միթէ դու Պարագվայում եղել ես» ասաց Կանդիտը: Ի հարկ է պատասխանեց Կակամբօն, ես Ասումսոնի Կոլլէֆում գոնապան էի և

սուրբ հայրերի կառավարութիւնն այնովէս ևմ ճանաչում ինչպէս Կաղիկսի փողոցները։ Բայց ինչ ասեմ, սրանցը կառավարութիւն չէ, այլ մի զարմանալի հրաշք։ Սուրբ հայրերի կալուածները երեսուն մղոնից աւել լայնութեամբ տարածում են ամեն կողմ և բաժանում են երեսուն գաւառների։ Ամեն բան պատկանում է սուրբ-հայրերին, իսկ ժողովրդին ոչ մի բան։ սա կատարելազործութեան ամենաբարձր աստիճանն է թէ մտքի է թէ արդարութեան տեսակէտից։ Գոնէ ևս ոչ մի բան չեմ ճանաչում առաւել աստուածային քանի սուրբ հայրերը։ Այստեղ նրանք կաւում են իսպանացոց և պորտուգալացոց թագաւորների հետ, իսկ Եւրոպայում նրանց խոստովանցնուում են, այստեղ սպանում են իսպանացիներին, իսկ Մադրիդում նրանց ուղարկում են երկինք։ Հրաշալի բան։ — բայց շատապենք։ Բոլորը ձեզ է սպանում։ Ի՞նչպէս կ'ուրախանան սուրբ-հայրերը բողարական ծառայութիւնն իմացող կապիտանի գալուստն իմանալով։ Երբ որ նրանք հասան առաջին պատահած սահմանադրան, Կակամբօն յայտնեց պահնորդ խորին, թէ մի կապիտան կամենում է բանակցել պարոն հրամանատարի հետ։ Մարդ ուղարկեցին պահմանակին աղջարարելու։ Պարագվաի սպան վագեց հրամանատարի մօտ և նրա առաջ ծունը չոքելով, յայտարարնց կապիտանի գլխարկ մասին։ Կանգիպից և Կակամբօց առան գէնքերն և երկու անդաշուղական ձիերին։ Յեսոյ նրանց երկու շարք զինուորների միջով տարան հրամանատարի մօտ։ Նա եռանկլունի գլխարկ էր զրել, փիլոնի փէշերն հաւաքել էր, կողքից կախ էր արել սուրբն, իսկ ձեռքում բռնել էր դաշոյն (ԷՇՈՒԹՈՒ)։ Հրամանատարը գլխով արեց և քսան և չորս զինուոր շրջապատեցին ենուորներին։ Ենթասապան հրամայեց նրանց սպասել, որովհետեւ պարոն հրամանատարը չի կարող նրանց հետ խօսել, քան որում արժանապատիւ հայր գաւառապետը չի թոյլ տալիս ոչ մի իսպանացու բերանը բաց անել առանց իր ներկայութեան և երեք ժամից աւել մնալ իրանց երկրում։

«Որտեղ է արժանապատիւ հայր գաւառապետը, հորցը կակամբօն։ «Նա պատարագիչ էր, պատարազը վերջացրեց և զնաց զօրահանդէս, պատասխաննեց ենթասապան, և երեք ժամից շատ շուտ դուք չեք կարող նրա կօշկախթանները համերութել»։ «Բայց լսէք ասաց Կակամբօն, — ևս և պարոն կապիտանը քաղցածութիւնից մեռնում ենք, կապիտանն էլ ոչ թէ իսպանացի այլ գերմանացի է... չենք կարող արդեօք մի փոքր նախաճաշել մինչև նորին արժանապատութեան դալը»։

Ենթասապան զնաց այս խօսակցութիւնը հրամանատարին  
Սեպտեմբեր, 1906.

հաղորդելու: Փառք Աստուծոյ, —ասաց հրամանատարը: Եթէ նա գերմանացի է, այն ժամանակ ևս կարող եմ նրա հետ խօսել. տարեք նրան իմ հովանոցը: Կանգիտին տարան կանաչից հիւսուած հովանոցը, որ զարդարուած էր նրբակերտ կանաչ մարմարիօնից և ոսկուց շինած սիւներով, և թութակնեղի, թոչուածանձերի, ցիցարների և ուրիշ հարուագիւտ թռչունների վանդակներով: Ոսկեղէն անօթների մէջ պատրաստած էր պատուական նախաճաշ, և մինչդեռ պարսպուացիք լափուս էին խաշած եղիպատայորենը փայտէ ամաների միջից բաց երկնքի և կիզիչ արեգակի տակ, արժանապատիւ հրամանատար հայրը բազմեց նախաճաշելու իր հովանոցում:

Սա էր մի շատ գեղեցիկ երիտասարդ, լիքը երեսով, սպիտակ, կարմրաթուշ, բարձր յօնքերով, վառվուն աչքերով, վարդագոյն ականջներով, ալ շրթունքներով և հպարտ կերպարանքով. բայց այս հպարտութիւնը խապանացու կամ եզուիտի հպարտութիւն չէր: Կանգիտը և կակամբօյն վերագարձրին զէնքերն և երկու անդալուզական ձիերն: Կակամբօն նրանց գարի տուեց հովանոցի մօտ և նախազգուշութիւնից շուտ-շուտ նայում էր նրանց վրայ: Կանգիտը պլազմորեց հրամանատարի փիլոնի փեշերը, նստեցին սեղան: «Ուրեմն գուք դերմանաց՞ էր», ասաց նրան եզուիտը գերմաներէն: «Ճիշտ այդպէս, ձերդ արժանապատութիւն», պատասխանեց կանգիտը: Այս ասեիով նրանք նայեցին միմիանց վրայ մեծ զարմանքով և յուզումով որին չկարողացան յաղթել: «Ո՞ւսեղացի էր», հարցրեց եզուիտը: «Ճեխոս Վեստֆալիայից, ասաց կանգիտը, —իս ծնուել իմ Տունդիլ-Տին-Տրօնկ դղեակում»: —Ո՞հ երկինք միթէ կարելի բան է, աղաղակեց հրամանատարը: «Հրաշք», կանչեց կանգիտը: —Մթթէ այդ գուք էք, ասաց հրամանատարը: —«Ո՞նհաւատալի բան», վրա բերեց կանգիտը: Նրանք ընկնում են երեսների վրայ գետին, ապա վագում գրկախանուում են, արտասուքի հեղեղներ են թափում: «Ի՞նչպէս, այդ գուք էք, արժանապատիւ հայր, գեղեցիկ կոնհկունկի եղբայրը, զուք, որ բոլղարներից սպանուել էիք, զուք Բարօնի որդին, զուք՝ Պարագուացի եզուիտ, ինչ հրաշքներ են պատահում այս աշխարհում: Ո՞հ, Պանզիլոս, Պանզիլոս: Ի՞նչպէս կ'ուրախանայիր, եթէ կախտուած չլինէիր»:

Հրամանատարը գուրս ուղարկեց գերի նեղըերին և պարագուացիներին, որոնք մատուցանուում էին գինի հանգայիր բիւրեղից շինած գաւաթներով: Նա հազար անգամ շնորհակալ եղաւ Աստուծուց և սուրբ Իգնատիոսից, գրկախանեց կանգիտին և երկուսն էլ ողողուեցան արտասուքներով: «Դուք ևս

առաւել կը դարձանաք, կը զգացուէք և կ'ուրախանաք, եթէ  
առեմ որ ձեր քոյրը, կունիգունդան, որին գուք համարում էիր  
ապանուած, ողջ և ասողջ է»: — «Ո՞րտեղ է»: «Մօտիկ, Բուշնոս  
Այրէսի պարոն կառավարչապետի մօտ, իսկ ես եկել էի այս-  
տեղ ձեր դէմ կոսւելու»: Ամեն մի խօսք որ արտասանում էին  
նրանք այդ երկար պատմութիւնն անելիս, բաց էր անում նը-  
քանց առաջ մի-մի հրաշք: Նրանց ալեկոծուած հոգիները,  
սարսառում էին նրանց լեզուների վրայ, լուռում էին նրանց ա-  
մանջներում և փայլում նրանց աշքերում: Ինչպէս գերմանացի-  
ներ նրանք երկար նստեցին սեղանի վրայ սպասելով նորին  
արժանապատռութիւն հայր գաւառապետին: Հրամանատարն  
ասաց իր թանկագին կանդիտին:

## ԳԼՈՒԽ ٨

**Թէ ինչպէս կանդիտն սպանեց իր թանկագին կունիգունդի  
եղբօրը:**

«Ես ամբողջ կեանքում չեմ մուանալ այն դարհութելի  
օրը, երբ սպանեցին իմ քրոջ: Բոլղարների գնալուց յետոյ  
իմ պաշտելի բրոջը չգտան, իսկ մօրս, հօրս ինձ, երկու աղա-  
խիններին և երեք մորթած երեխաներին դրին սայլի մէջ և  
տարան թաղելու եղանակութիւն մատուի մէջ, որ երկու մղոն  
հեռաւորութիւն ունէր մեր նախահայրերի գվեակից: Այստեղ  
եղուխոը մեղ սուրբ ջրով ցողեց, որը սաստիկ աղի էր և մի  
քանի կաթիլ ընկաւ իմ աշքի մէջ, բահանան նկատեց իմ կո-  
պերի մէջ շարժում, նա ձեռքը կուրծքիս գրեց և զգաց բարա-  
խում. ինձ օգնութիւն հասցրին և երեք շարաթից յետոյ ես  
ոտքի կանգնեցի: Դուք գիտէք սիրելի Կանդիտ, որ ես շատ  
գեղեցիկ էի, հիւանդութիւնից յետոյ ես աւելի սիրունա-  
ցայ, այնպէս որ վանքի վանահայր արժանապատիւ հայր  
կրուստը, կապուեց ինձ հետ ամենաքնքոյշ բարեկամութեամբ  
և ինձ շինեց իրան փոքրաւը: Մի քանի ժամանակից յետոյ  
ինձ ուղարկեցին Հոռոմ: Հայր գեներալը գերմանացի ջահէլ  
եպուխաներից գօրաժողով էր անում:

Պարագայի տիրապետովները չեն ընդունում իսպա-  
նական եղուխաներին. նրանք գերազասում էին օտարազգի-  
ներին, մտածելով որ նոցա հրամայելը հեշտ է: Արժանապա-  
տիւ հայրը դառաւ ինձ ընդունակ այս այլում գործելու: Եկանք  
երեք հոգի, մի լեհացի մի տերոլցի և ես: Այստեղ որ հասանք  
ինձ արժանացը ին սարկաւագի կոչման և սպահանի.

այժմ ես գնդապետ եմ և քահանայ: Մենք կը կարողանանք յետ մզել խպանական թագաւորի զօրքերին: Հաւատացած եղէք, որ մենք նրանց կը բանտարկենք և կը ջարդենք: Ինքը նախախնամութիւնը ձեզ ուղարկել է մեզ օգնութեան: Բայց միթէ ճշմարիտ է որ իմ սիրելի Կունիգունդա քոյրս հեռու չէ, և Բուէնոս ։ Այրեսի կառավարչապէտի մօտ է: Կանդիտը պատասխանեց որ այդ բոլորովին ճշմարիտ է, և նրա արտասուքները նորից թափուեցին:

Բարոնը անդադար գրկախառնում էր Կանդիտին, անուանում էր նրան իր եղանակը ու գրիկիչը: «Կարելի է, ասում էր նա, մեզ կը յաջողուի յաղթական կերպով մանել քաղաք և ազգատել Կունիգունդին»: «Ես էլ հէնց այդ եմ ցանկանում, — առաջ Կանդիտը, — որովհետեւ յոյս ունիմ նրա հետ ամուսնակալ յոյսս գեռ չեմ կորցրել»: — Ի՞նչ դաւ... այդ ի՞նչ լրութիւն է, — աղաղակեց բարոնը: — գու համարձակելում ես երազիլ պատկեւլու եմ բրոջ հետ, որը եօթանասուներկու սերունդ նախահայրեր ունի և բոլորն էլ բարոն: Եւ ինչպէս ես յանդգնում այդ բանն իմ երեսիս ասելու: Կանդիտը զարմացած այս խօսքերից ասաց: «Արժանապատճեւ հայր, իթէ ձեր բոլոր նախահայրերն էլ հաւաքուեն չեն կարող այս պասկը խանգարել. ես աղատեցի ձեր քրոջը ջնուզի և ինկվիզիտորի ձեռքից. նու ինձ չափից գորս երախտապարտ է և յանկանում է ինձ հետ ամուսնակալ: Պանդուսը միշտ ասում էր որ մարդիկն հաւասար են և ես վճռել եմ ձեր քրոջ վրայ ամուսնակալ և կ'ամուսնանամ: «Տեսնենք, լիրը անդգամ, վրա ըերեց բարոն Տունգեր-Տեն-Տրոնկը և հասցրեց սրի տափակ կողքով Կանդիտի երեսին: Կանդիտը վայրկենարար մերկացրեց սուրբ և մինչեւ կոթը կոխեց բարոն եզուիտի փորը. բայց գորս քաշելով նրան բոլորովին արինաշաղագլաց եղաւ: «Սւամպ, Աստուած իմ, բացականչեց նա, — ես սովորեցի իմ նախակին տիրոջը, բարեկամիս և աներձագիս, ես ամենախոնարհ մարդն եմ աշխարհիս վրայ, բայց այնուամենայնիւ ահա երրորդ սպանութիւնն եմ կատարում, որոնց թւում արգէն երկուան հոգեւորական են»:

Կակամբօն, որ պահպանութիւն էր անում հովանոցի մուտքի առաջ, շատապեց Կանդիտի մօտ: «Մեզ մնում է միայն ըստ կարելոյն թանկ ծախսել մեր կեանքը, — ասաց նրան Կանդիտը. — երկի իսկոյն կը մտնեն հովանոց, մեսնենք զէնքերս ձեռքներիս»: Սակայն Կակամբօն որ իր կեանքում սրանից էլ դեռ լաւ տեսարաններ էր տեսել, չշփոթուեց, հանեց եզուիտի շորերը հազցրեց կանդիտին, գրեց նրան զլիխն հանգուցեալի քառանկիւնի զլիխարելը, և նստացրեց նրան ձիու վրայ: Այս բոլորը

կատարուեց մի ակնթարթում: «Քշենք,—ասաց նա.—ձեզ բոլորը եղուխտի տեղ կ'ընդունեն, կը կարծեն թէ գնում էք կարգադրութիւններ անելու, և մենք կ'անցնենք սահմանը, աւելի շուտ քան մեզ կըսկսեն որոնել, և այս ասելով նա արդէն արշաւում էր ճանապարհով իսպաներէն գուալով:—«Հեռու, հեռու ճանապարհ բացէք արժանապատիւ հայր գնդապետին»:

## ԳԼՈՒԽ XVL

Թէ ի՞նչ պատահեց մեր երկու ճանապարհորդներին, երկու աղջկայ, երկու կապկի և Օրիլիօն անունով վայրենիներին հանգիպելիս:

Կանդիտը և նրա ծաւան սահմանագունից անց էին կացել՝ քայլ բանակում գետ չգիտէին գերմանացի եղուխտի սպանութիւն: Նախատեսող կակամքոն հոգացել էր հետո առնելու հաց, շոկուտադ, խողապուխտ, պտուղներ և մի քանի չափ գինի: Նրանք իրանց անդալուզական ձիերով մտան անծանօթ երկրի խորքը, ոչ մի տեղ ճանապարհ չգտնելով: Վերջապէս նրանց առաջ բացուեց մի զեղեցիկ դաշտավայր, որ ոռոգւում էր վտակներով: Մեր ճանապարհորդները թողեցին իրանց ձիերին խոտի վրայ արածելու: Կակամքոն հրաւիրեց տիրողը ճաշակել, ինըը նրան օքինակ տալով: «Կարող եմ խողապուխտ ուտել, — ասաց կանգիտար, — սպանելով տէր բարօնի որդուն, և դատապարտուած լինելով ամրող կեանքում կունիզունդին չտեսնելու: Ինչու համար պահպանեմ իմ ողորմելի գոյութիւնս, երբ որ պէտք է քաշ տամ նրան կունիգունդից հեռու, խոճի խայթից և յուսահատութիւնից տանջուելով: Եւ ի՞նչ կ'ասի Տրիվու լրագիրը: Այս ասելով նա կերաւ խողապուխտը: Սրեգակը մայր է մըտնում: Յանկարծ ճանապարհորդները լսեցին մի ձիչ, որ կարծես կնոջ ձայն լիներ: Նրանք չկարողացան որոշել թէ այդ ճիշը վիշտ թէ ուրախութիւն էր արտայայտում, սակայն վեր թռամ աեղերից զգալով անհանգստութիւն և երկիւզ, որոնք անդադար մարդու տիրապետում են անծանօթ տեղեր գտնուելիս: Ազիորում ճիշ բարձրացնողներն, ինչապէս երկաց, երկու բոլորովին մերկ աղջիկ էին, նրանք թեթևակի վազում էին գաշտի եղերը, հալածուելով երկու կապիկներից, որոնք խածուում էին նրանց ազդրերը: Կանգիտը խղճաց նրանց վրայ և որովհետեւ նա սովորել էր բոլգարների մօտ այնպէս նշան առնել, որ կարող էր վայր զցել թփի միջից ընկոյզը առանց տերեկն գիտչելու, վերցրեց իր իսպանական երկփող հրացանը

արձակեց և ոպանսեց երկու կապիկներին. «Փառք Աստուծոյ, Կակամրօ բարեկամմ, ևս ազատեցի այս խեղճ աղջիկներին: Թէ ես մեղանչեցի ինկվիզիտորին և եղուհիտին սպանելով բայց այժմ, այդ մեղքս քաւեցի, այս երկու կորսուհան ևնթարկուած էտկների կեանըը փրկելով: Կարելի է սրանք ազնուատո՞մ օրիորդներ են, այնպէս որ այս գէպքը մեղ յաջողութեան պատճառ կը լինի այս երկում ... նա կամենում էր շարունակել, բայց նրա լեզուն կապուեց զարմանքից, երբ նա տեսաւ, որ իր ազատած երկու կանայքը բնաքշաբար զակախառնում են սպանուած կապիկներին. թափում են նրանց վրայ արտասուր և յուսահատ ազադակներ են արձակում: «Ի՞նչ բարեսիրո էակներ են», աղաղակից նա դառնալով Կակամբօին. բայց կակամբօն պատասխանեց: «Պարոն, այ թէ աչքը հանեցիք մեր աղատելով հա, ախար դուք սպանեցիք այս օրիորդների տարկածուներին»: Տարիածուներին, ինչպէս թէ, զու հանամք ես անում, կակամրօ, այդ կարելի՞ բան է:—Այս իմ պատառական տէրս, ամէն բանի վրայ դուք միայն զարմանալ գիտէք, ի՞նչ տարօրինակ ըան է որ կան երկրներ, որտեղ կապիկները վայելում են կանանց բարեկամութիւնը: Կապիկներն էլ նոյնպիսի էվաստրոններ են մարդկանց վերաբերութեամբ, ինչպէսի հո եմ խսդանացոց վերաբերութեամբ: «Այս, — ասաց կանգիտը, — ես յիշում եմ, Պանդոս վարժապետն ասում էր, որ հին ժամանակ այդպիսի դէպքեր ելիք են և որ այդ տեսակ կապիրից ասաջացել են ֆազները և սատիրները, որ հներից մի բանի մեծ մարդիկ տեսուի են այդ տեսակ խասնածիներ, բայց հս այդ հեքիաթ էի կարծում»:—Այժմ դուք համոզուեցի՞ք, — ասաց կակամբօն, — որ այդ ճշմարդիս է, որովհետեւ ինըներդ տեսաք թէ ինչպէս են վերաբերում դէպի կապիկները որոշեալ աստիճանի կրթութիւն չստայած մարդիկ, մի բանից եմ վախենում, որ այս օրիորդները մեր գլխին մի զէշ խաղ կը խաղան»:

Այս հաւանական ևնթարլութիւնը դրդեց կանգիտին թողնել զաշտը և մանել անտառի խորքը: Այստեղ նա ընթրեց կակամբօի հետ և անիծելով Պորտուգալիայի ինկվիզիտորին. Բուէնոս-Այրէսի կառավարչապետին և Բարոնին, նրանք քննեցին մամուսի վրայ: Զարթելով նրանք գգացին որ չին կարողանում շարժուել այս բանի պատճառն այն էր, որ գիշերը այս երկրի լնակիչ Օրէլիօնները, որոնց երկու կանայք իմացրել էին ճանապարհորդների մասին, կատկապել էին նրանց ծասի կեղեցից հիւսած թողելով: Նրանց շրջապատել էին յիսուն հոգի մերկանգամ Օրիլիօններ, զիսաւորուած նետերով, գագանակներով և բարէ կացիններով. մի քանիսը ջուր էին

տաքացնում մեծ կաթսայի մէջ, միւսները պատրաստում էին շամփուրներ և բոլորը գորում էին.— Սա եղուիտ է, ուս եղուիտ է, մեր վրէժը կ'առնենք, իշտահով կ'ուտենք, կ'ուտենք եղուիտի միա»:

«Իս զուշակեցի, իմ տէր աղաւնեակո—տխուր ասաց Կակամօն,—որ այս աղջիկները մեր զլախն վասաւոր խաղ կը խաղան». Կանդիտը տեսնելով կաթսաներն ու շամփուրներն աղաղակեց. «Մեկ կամ կը խորովին կամ կ'եփին: Ա՛խ, ի՞նչ կ'առէր Պանդլոս վարժապետը, եթէ կարողանար տեսնել թէ ի՞նչ ասել է անաղարտ բնութիւնը»:

Ասենք թէ ամեն բան գէսիլի լուն է գնում, բայց անզթութիւն չէ զրկուել գեղեցիկ կունիգունից և խորովուել Օրիլիօնների ձեռքով շամփուրի վրայ: «Մակայն Կակամօն չկորցրից իր սառնասրտութիւնը: «Մի վհատուեք, —տուաց նա տխուր Կանդիտին, ևս մի քիչ հասկանում եմ այս վայրենիների լրվլը վոցը և կը խօսիմ նրանց հետ: «Չժոռանանք բացատրել նրանց, — ասաց Կանդիտը, թէ ինչքան տմարդի բան է մարդկանց եփիը և որքան այդ հակառակ է բրիստունէութեանը»:

«Պարոններ, —ասաց Կակամօն, —զուք կարծեմ այսօր պատրաստում էք եղուիտ ուտելու: — Եատ զովելի է: Բոլորովին արգարացի է թշնամիների հետ այդպէս վարուելլ, և բնական օրէնքն էլ սովորեցնում է սովորել մերձաւորներին, ինչպէս այդ անում են ամբողջ երկրագնատի վրայ: Եթէ մինք միշտ չենք օգտառմ թշնամիներին ուտելու իրաւունքից, այդ նրանից է որ մենք ունենք ուրիշ համեղ բաներ... բայց դուք... ձերը ուրիշ բան է: Զեզ մօտ կերակուրն այնքան առատ չէ ինչքան մեզ մօտ: Դրանից գուրս լին էլ պարզ է, որ լաւ է ուտել թշնամուն, քան թէ ագռաներին թողնել յաղթութեան պատղները: Բայց, պարոններ, գուք ի հարկէ չէք ցանկանայ ուտել ձեր բարեկամներին: Դուք ցանկանում էք եղուիտին շամփուր անցկացնել, այն ի՞նչ գուրս կը զայ որ կը խորովէք ձեր պաշտպանին, ձեր թշնամիների թշնամուն: Ես այստեղացի ևս իսկ այս պարոնը իմ տէրս է, նա ոչ միայն եղուիտ չէ, այլ և մի բիչ առաջ սպանեց մի եղուիտի և հագաւ նրա շորերը, և հէնց այս է ձեզ սխալեցրել: Եթէ ցանկանում էք իմանալ թէ ճիշտ հմ առում թէ ոչ վերցրէք նրա շորերը, տարէք ուուրը հայրերի կալուածքների ամենամօտ սահմանը և իմացէք, թէ սովանմէլ է իմ տէրը եղուիտական մի սպայի թէ չէ: Այդ բանը երկար չի քաշիլ և եթէ գուրս եկաւ որ ես խարել եմ, գուք էլի ժամանակ կ'ունենաք մեզ ուտելու: Բայց եթէ ևս ուղիղ եմ առում, այն ժամանակ յոյս ունիմ որ զոք չսպազանց յարդելով աղպային

իրաւունքները, սովորութիւնները և օրէնքները, անկասկած մեղ կը խնայէք:

Օրէլիօններին այս ճառը շատ հիմնաւոր երեաց և ուղարկեցին երկու հոգի երեսելի մարդկանցից պատգամաւոր, շուտով ճշմարտութիւնը իմանալու: Պատգամաւորները խեղամուտ կերպով կատարեցին յանձնարարութիւնը և շուտով վերապարձան լաւ լուրերով: Օրէլիօններն ազատեցին գերիներին, նրանց սիրալիր ցոյցեր արին, աղջիկներ առաջարկեցին, հրւասչերեցին և ճանապարհ զցեցին մինչև իրանց տէրութեան սահմանագլխից ուրախուրախ կանչելով, «Նա եղուիտ չէ, նա եղուիտ չէ»:

Կանդիտը զարմանքից ապշել էր ազատութեան պատճառի վրայ: «Այս ի՞նչ ժողովուրդ է, — ասում էր նա — ի՞նչ մարդիկ, ի՞նչ սովորութիւններ: Եթէ ես բաղդ չունենայի գեղեցիկ կունիգունդայի եղոր փորը սրով ծակելու, ես այժմ անընայ կերպով կերուած կը լինէի: Սակայն անաղարտ բնութիւնը իսկ որ գեղեցիկ է, փոխանակ ուտելու, նրանք ինձ ամեն տեսակ առատ հիւրասիրութիւններ ցոյց տուին, հէնց որ իմացան թէ ես եղուիտ չեմ:

### ԳԼՈՒԽ ՀՎԴ

Կանդիտի և նրա ծառայի էլ'զորակօ գնալը և թէ ի՞նչ տեսան նրանք այնտեղ:

Օրէլիօնների սահմանն անցնելով, կակամբօն առաց կանգիտին, «Դուք տեսնում էք, որ այս կիսագունդը, ոչնչով լու չէ միւսից: Հաւատացէք, լաւ է ամենակարճ ճանաղարհով վերապահանք եւրոպա: «Բայց ի՞նչպէս վերապահանք, ասաց կանդիտը, և ուր գնանք: Եթէ հայրենիք զնամ, այնտեղ ըռզդալներն ու աւարներն են աջ ու ձախ պատահողներին կոտորում: Եթէ այսուեղ մնանք, ամեն բոլէ շամփուրն անցկենալու վտանգի մէջ կը լինինք: Եւ կարելի բան է թողնել աշխարհի այն մասը, որտեղ ապրում է կունիգունդան»:

Գնանք կայէննա, — ասաց Կակամբօն, — այնտեղ մենք կը գտնենք ֆրանսիացիներ, որոնք աշխարհիո ամեն կողմ ճանապարհորդում են: Նրանք կարող են մեզ օգնել: Կարելի է Աստուած մեզ խղճայ:

Հեշտ չէր մինչև Կայէննա գնալը, նրանք մասամբ գիտէին թէ ո՞ր կողմը պէտք էր գնալ, բայց լիսները, գետերը, անդունդներն, աւագակներն ու վայրենիներն ամեն կողմից սարսափելի

արդելքներ էին ներկայացնում: Նրանց ձիերն ընկան յոդնաշութիւնից, բոլոր պաշարը կերել պրծել էին, ամբողջ մի ամիս նրանք կերակրում էին վայրենի պատուղներով և վերջապէս գուրս եկան մի գետակի մօտ, շրջապատուած կոկոսի ընկուզենիներով, որոնք պահպանեցին նրանց ոյժերը և յայռը:

Կակամրոն, որ միշտ տալիս էր այնպիսի լաւ խորհուրդներ ինչպէս և պատուը, ասաց Կանդիտարն: «Մենք ուժից ընկանք, բաւական է դնալ քայլելով, աճա ափի մօտ զատարկ առկոյլ, բեռնաւորենք նրան կոկոսի ընկոյզներով, նստենք և իջնինք գետի հոսանքով, գետը անպատճառ մեզ կը հանի մի որեկցէ մարդարնալ տեղ: Եթէ մենք ոչ մի ախորժելի բան չգըտնենք, գոնէ մի նոր բան էլ է կը տեսնենք: Քնանք ասաց Կանդիտը, յանձնենք մեզ նախախմամութեանը:

Նրանք երկար նաւում էին երկու ափերի մէջաեղով, ուրոնք մերթ կանաչազարդ էին, մերթ ամայի, մերթ տափարակ և մերթ զատիվայր: Գետը աստիճանաբար լայնանում էր և վերջապէս ծածկում էր մի կամարի տակ որ կազմուած էր սալսափելի ժայռերից, որոնք համարեա մինչև երկինք էին բարձրանում: Ճանապարհորդները վճռեցին ալիքների կամքին անձնատուը լինել, որոնք անում էին զրանց այդ կամարի տակ: Այստեղում գետը սեղմուելով տանում էր նրանց սարսափելի արագութեամբ և աղմուկով: Բոսն և չորս ժամից յետոյ նրանք վերջապէս տեսան լոյսը, բայց մակույկը կոտրուեց ջրի տակի ժայռին զիազելով, նրանք ստիպուեցին մագլցիլ մի ժայռից դէպի միւսը և անցկենալ այդ կերպով մի ամբողջ մըղոն: Վերջապէս նրանց առաջ բացուեց անսահման հորիզոնը շրջապատուած անմատչելի բարձր լինսերով: Երկիրը մշակուած էր և բաւականութեան, և օգտի համար. ամեն տեղ օգտակարը միացած զուարձալի հետ: Ճանապարհներն ծածկուած էին կամ լաւ ևս տսել զարդարուած էին կասերով, որոնք թէ ձևով և թէ կերտուածքով հրաշալի էին, նրանց մէջ նստած էին անսովոր գեղեցիկ աղամարդիկ և կանայք. կառքերում լծուած էին մեծ կարմիր ոչխարներ, որոնք տրավավազութեամբ զերազանցում էին նոյնիսկ ամենալաւ անդալուզական, տէտուանական և մեկինեջեան ձիերին:

«Հա, ոս մի օրիչ լաւ է Վեսֆալիայից», ասաց Կանդիտը: Նրանք դուրս եկան ափ առաջին գիւղում: Երեխայքը ոսկեպործ կոտորից շինած պատառուած շորերով, ըլլակի մօտ հոլ էին խաղում: Մեր ճանապարհորդները կանդնեցին նրանց նայելու: Նրանք խաղում էին վայլուն քարերով, որոնք էին, տափակ, կըլոր, գեղին, կանաչ և կարմիր զոյներով: Ճանապարհորդները

մի քանի հատ վերցրին. երեաց որ գրանք են. ոսկի, զմբուխոտ և ազամանդ, այնպիսի մեծութիւնով որ ամենափոքը կարող էր Մեծ Մողոլի գահին տմենաշքեղ զարդարանքը լինել: «Հաւանական է, —ասաց Կակամբօն, —որ որանք արքայորդիքն են»: Այդ միջոցին գիւղի ուսուցիչը կանչեց երեխաներին վարժարան: «Իսկ սա, նկատեց Կանդիուը, արքայորդիների դաստիարակիչ պէտք է լինի»:

Փոքրիկ պատառոտունները զարդեցին իւազալուց, թողնելով հողի վրայ քարերը և բոլոր իրանց խաղալիքները: Կանդիտը հաւաքում է զրանց, վազում է գաստիարակի մօտ և, յարգանքով ողջունելով, տալիս է՝ նրան, աշխատնով բացատրել նշաններով որ նրա արքայական բարձրութիւնները մոռացան իրանց ոսկին և թանկաղին քարերը: Գիւղական ուսուցիչը ժպանակով դէն զցեց քարերը, նայեց Կանդիտի վրայ մեծ հետեքքրութեամբ և հեռացաւ: Ճանապարհորդները շատակեցին վերցնել ոսկին, աղամանանելին և զմբուխանները: «Ես որսեղ ենք ընկել», աղամակեց Կանդիտը: —Ի՞նչպէս հիմանալի զատարակութիւն են տալիս այսակող թագաւորի որդիններին, ոսկորեցնելով նրանց արհամարել ոսկին և թանկաղին քարերը: Կակամբօն ևս զարմացել էր ոչ պակաս Կանդիտից: Նրանք մօտեցան գիւղի տուաջին տանը, նա նման էր եւրոպտկան պալատի: Ժողովուրդը հաւաքուել էր զոների մօտ և լցըել սենենակները, լուսում էր գեղեցիկ երաժշտութիւն և համեղ կերակուրների հոտը ախորժակ էր զրդում: Կակամբօն մօտեցաւ զոներին և լսեց որ խօսում են պէրուերէն, ոս նրա մօր լեզուն էր, որովհետեւ, ինչպէս յայտնի է ամենքին, Կակամբօն ծնուել էր Տուկուման գիւղում, որտեղ զրանից զատ ուրիշ լեզու չգիտէին: «Ես ձեզ կը ծառայեմ իբրև թարգման, —ասաց նա Կանդիտին, —մտնենք, ոտ հիւրանց է»:

Հազիւ նրանք մտան ներս, երբ երկու պաշտակներ և երկու աղայիններ ոսկեղին զբեսաներով, մազերի մէջ կապած ժապաւէններ, հրաւիրեցին նրանց ընդհանուր սեղան: Ճաշին տուին չորս տեսակ արգանակ և ամեն մի արգանակի հին երկ-երկու թութակ, մի եփած ցին, երկու հարիւր ֆունտ ծանրութեամբ, երկու տապակած կազիկ հիմանալի համով, մի ափսէ երեք-հարիւր թոչնածոննից, միւսը վեց-հարիւր մեղրածուծից (թոչուն), ամենահամեղ բաղու, տմենապատուական կարկանդակ, բոլոր կերակուրները համեմած էին ափսէնների մէջ մի ինչ որ բանով, որ նման էր հանքային բիւրեղի: Ծուանաներն ու աղախինները լցնում էին շաքար-եղէղնից պատրաստած խմիչքներ:

Այցելուները մեծ ժառամբ վաճառականներ և կառապաններ էին, բոլորն աչքի էին ըկնում իրանց նուրբ քաղաքավարութեամբ. նրանք առաջարկեցին Կակամբօին մի քանի համեստ և շնորհալի հարցուներ պատասխանելով փոխադարձաբար նրա բոլոր հարցելին շատ գործացուցիչ կերպով:

Ճաշից յիսոյ Կակամբօն և Կանդիֆալ զցեցին սեղանի վրայ երկու մեծ ոսկու կտորներ, որ վերցրել էին փողոցից, մտածելով որ շատ առատ են վարձատրում. հիւրանոցի տէրը և տանտիկինը ծիծաղից բռնելով կողքերը թուլացան: Վերջապէս նրանք համսպատացան: «Պարոններ, — ասաց նրանց տէրը, — դուք ինչպէս երեւոմ է օտարականներ էք, որոնք մեկնում շատ հաղուագիւտ են: Ներկցէք որ մենք ծիծաղիցինք, մեզ ծիծաղից այս, որ գուշ մեզ ճաշի համար վճարում էք փողոցից վերցրած քարերով: Հաւանական է որ ձեզ մօտ չկան մեր փողերից, բայց այստեղ վճար չեն վերցնում: Հիւրանոցները հիմնուած են վաճառականների յարմարութեան համար և պահպանուած են կառավարութիւնից: Դուք վատ ճաշեցիք, բայց ինչ անենք, մեր գիւղն աղքատ է, դրա փոխարէն ուրիշ տեղեր ձեզ կը հիւրասիրեն ինչպէս հարկն է»: Կակամբօն հաղորդեց Կանդիտին տանտիրոջ խօսքերը նոյնքան հիացմունքով, ինչքանավ լսում էր նրան Կանդիտը: «Արդեօք այս ի՞նչ երկիր է, — ասում էին նրանք միմիանց, որ ոչ ոքի ծանօթ չէ միւս աշխարհում: Բնութիւնն էլ այստեղ նման չէ մերինին: Գուցէ հենց այս է այն աշխարհը, որտեղ ամեն բան հիանալի է, ուրեմն զուրս է գալիս որ ոյս տեսակ աշխարհ կայ: Ոչ, ինչ ուզում է ասի վարժապետ Պանզլոսով, բայց ես յաճախ նկատում էի, որ Վեստֆալիայում մի քիչ անյարմար էր»:

## ԳԼՈՒԽ ԽVIII

Կակամբօն արտայայտեց տանտիրոջը իւր ծայրայեղ հետաքրքրութիւնը: Տահաէլն ասաց որան. «Ես բոլորովին անզէտ մարդ եմ, բայց ուղիղն տապ հոգս չիմ մնում դրա համար. սակայն այստեղ կայ մի ծերունի, որ պալատից հեռացել է, նա տմենագիտուն մարդն է ամբողջ թաղաւորութեան մէջ և ամենքից աւելի հաղորդակցուող:» Նա տարաւ Կակամբօին ծերունու մօտ: Կանդիտը երկրորդական դիր էր կատարում և ուղղեկցում էր իւր ծառային: Նրանք մտան մի ոչ բարձր տուն, զուտն արծաթից էր, սևսեակներում շատ հասարակ—պաստեռներ էին ոսկուց շինուած, բայց այնպէս նրբուկերտ, որ ամենաթանկագիններից աւելի յաւ էին երեւում: Նախասենեա-

կը շատ հասաբակ կերպով, չորս կողմից շինուած էր զմբուխտով և յակինթ քարերով, բայց մաքրութիւնը և կարգը մի քիչ ծածկում էին այս ծայրայիդ անշքութիւնը:

Ծերունին նստեցրեց օտարականներին թռչնածանձի աղուամազով լցրած բազմոցի վերայ, հիւրասիրեց նրանց լիկեօրով որ մատուցանում էին ագամանղեայ գաւաթներով՝ և ապա գոհացրեց նրանց հետաքրքրութիւնը հետևեալ խօսակցութեամբ:

«Ես հարիւր եօթանասուն և երկու տարեկան եմ, ևս լսել եմ հանգուցեալ հօրիցս, որը արքայի ախոռապետ (ՇՏԱԼ-ՄԵЙСԵՐԵ) էր, այն զարմանալի յեղափոխութիւնների մասին, որոնց նա իրեւ ականատես դեռ յիշում էր: Մեր տէրութիւնը հին ինչիների հայրենիքն է, որոնք անմտօքն թողին նորան և գնացին ուրիշ երկիրներ տիրապետելու: բայց իսպանացիներից կոտորուեցին: Տասը մնացած խելացի արքայորդիները բոլոր ժողովրդի համաձայնութեամբ վճիռ կայացրին, որ ոչ մի բնակիչ երկեք դուրս չը զայ մեր փոքրիկ թագաւորութիւնից: Հնորհիւ այդ օրէնքի մենք պահպաննեցինք միամտութիւն և բաղդաւորութիւնը: Խոպանացիք ունեին մութը տեղեկութիւններ մեր երկրի մասին և անուանեցին նրան ելգորածօ: Մօտ հարիւր տարի սորանից առաջ մի անգլիացի ասակետ Բալէյ անունով, մօտեցաւ մեր երկրին, բայց մեզ շրջապատող անմերձինալի ժայռերն ու անդունդներն մինչև այժմ պաշտպանեցին մեզ եւրոպական ժողովրդի աւագակային յափշտակութիւնից, որոնք տոգարուած են մեր երկրի քարերն ու ցեխը ձեռք բերելու անհասանելի կրօվի և զրա համար նոքա պատրաստ են մեզ բոլորիս մինչև վերջինը կոտորելու:» Խօսակցութիւնը երկար շարունակեց. Խօսեցին կասավարութեան եղանակի, սովորութիւնների, կանանց, հասարակական տեսարանների և արուեստների մասին: Վերջապէս կանգիտը, որ միշտ սիրում էր մետափիզիքան, խնդրեց Կակամբօին հարցնել ծերունուց, թէ որիցուցիք կրօն ունին:

Ծերունին թեթևակի կարմրեց. — «Ի՞նչպէս չէ, — ասաց նա. — Ե՞նչ տարօրինակ հարց է: Միթէ դուք մեզ երախտամոռ էք համարում:» Կակամբօն հեղաբար շարունակում էր տեղեկանալ թէ ինչ կրօն են զաւանում ելգորազօի մէջ: Ծերունին դարձեալ կարմրեց: «Միթէ կարող է երկու կրօն լինել, ասաց նա. — Ես կարծում եմ որ մեր կրօնն էլ նոյն տեսակ է ինչպէս և ձերը, մենք օրու գիշեր երկրագում հնք Աստծուն:» — «Բայց միակ Աստծուծուն, հարցրեց Կակամբօն շարունակելով թարգմանել Կանգիտի տարակուանքը: «Ես կարծում եմ. — ասաց ծերունին, որ Աստծուած մէկ է: Միթէ կարող են լինել երկու,

ելեք կամ չորս Աստուած, ի՞նչ ատրօրինակ հարցեր են առաջարկում ձեր աշխարհամասի մարդիկը։ Կանդիան այնուամենայնիւ շարունակում էր հարցնել բարի ծերունու իսկ ի՞նչպէս են ձեզնում աղօթում։ «Աղօթել», սենք բնաւ չենք աղօթում և խնդրում Աստծուց, —պատասխանից իմաստունը, աղերսելու կարօտութիւն չունենք, նա մեզ ամէն բան տուելէ, մենք անդադար շնորհակալութիւն ենք յայտնում նրան»։ Կանդիտը ցանկացաւ տեսնել քահանաներին, նա հարցեց թէ Քրտեղ նրանց կարելի է տեսնել։ Բարի ծերունին ժպաաց։ «Բարեկամներս, —ասաց նա, —մենք բոլորս քահանաներ ենք, ամէն առաւօտթագաւորը և բոլոր ընտանիքների գլխաւորները հանդիսաւոր կերպով երգում են գոհացողական օրհներգութիւններ հինգ կամ վեց հազար երաժիշտների նուազակցութեամբ։

—Ի՞նչպէս, դուք չունիք կրօնաւորներ որ ուսուցանէին, վիճէին, կառավարէին, խառնակէին, համակարծիք չեղող մարդկանց այրէին։ —«Մենք փառք Աստծոյ անմիտ չենք, —ասաց Եերունին, —մենք բոլորս էլ մի կարծիքի ենք և չենք համառնում, թէ այդ ինչ կրօնաւորների մասին էք դուք խօսում։ Լսելով այս խօսքերը Կանգիտը յափշտակուել էր և ինըն իրան մտածում էր։

«Սակայն սա նման չէ Վեստֆալիային և մեր Բարոնի գղեակին։ Եթէ մեր բարեկամ Պանդլուր տեսնէր Ելգօրտօն, այն ժամանակ չէր պնդէ, թէ Տոնդեր—Տին-Տրօնկ դղեակը, ամենալաւ դղեակին է աշխարհիս երևնին։ տես, թէ ի՞նչպէս օգտակար է ճանապարհորդութիւնը։»

Այս երկար խօսակցութիւնից յետոյ բարի ծերունին պատուիրեց լծել կասրը վեց ոչխարներ և առաջարկեց ճանապարհորդներին տառներկու ոլաշտակ, որ առաջնորդին նրանց արքունիքը։ «Եերկիցք, —ասաց ստ, —որ իմ տարիքի ստիպում են ինձ ձեզ ուզկեցելու պատուից հրաժարուելու։ յոյս ունիմ որ դուք զոհ կը մնաք թագաւորի ընդունելութիւնից և ներոզամիա աշքով կը նայէք այն բոլորին, ինչ որ մեր սովորութիւններից ձեզ անհաճոյ կը լինի։

Կանդիտը ու Կակամբօն կառքը նոտեցին, վեց ոչխարները սրաբշաւ վագեցին և չորս ժամ չանցած կանգնեցին արքայական պալատի առաջ, որ գտնւում էր մայրաքաղաքի ծայրում։ Պալատն ունէր երկու հարիւր քսան ոտնաշափ բարձրութիւն և հարիւր ոտնաշափ լայնութիւն, անհնար է պաղափար տալ այն սքանչելի նիւթի մասին, որից շինուած էր նա։ Կարելի է միմիշայն ասել, որ նա անչափս գերազանց էր այս կայծարարից

և աւագից, որոնց մենք անուանում ենք ոսկի և թանկագին քարեր:

Հետո որ Կանդիտն և Կալվամբօն կառքից դուրս էին գալիս նրանց գիմաւորեցին քսան զեղեցիկ աղջիկներ արքունի թիկնապահներից: Սոքա ճիւրերին տարան բաղանիք և հազը ցրին թոշնածաններից աղուամազից շինած շորեր, սրանցից յետոյ իշխաններն և իշխանուհիներն, սահմանուած կանոնի համաձայն, առաջնորդեցին նրանց արքայական առարանքը երկու կարգ երաժեշտների միջով, որոնցից իւրաքանչիւրն բաղկացած էր հազար մարդուց: Երբոր նրանք մօտենում էին գահական դահլիճին, Կակամբօն հարցրեց սպային թէ ինչպէս պէտք է ներկայանալ նորին մեծութեանը. պէտք է նրա առաջ ծունկ չոփել, թէ երեսի վրայ գետին ընկնել, ձեռքերը գլխի վերայ գնել թէ յետոյքի, պէտք է արգեօք դահլիճի յատակը լիզել. մի խօսքով ինչպէս է նրանց մէջ ընդունելութեան ծիսակատարութիւնը: «Մեր մէջ, ասաց սպան, թագաւորին գրկում են և երկու թուշը համբուրում:» Կանդիտն և Կակամբօն ընկան նորին մեծութեան պարանոցովը, որը շատ սիրալիր ընդունեց նրանց և քաղաքավարի կերպով հրաւիրեց ընթրելու:

Մինչև ընթրիքի ժամը նրանց ցոյց տուին քաղաքի նշանաւոր տեղերը, հասարակական շինութիւնները, որոնք համարեա հասնում էին ամպերին, հազարտուոր սիւներով զարդարուած տատիճաններ. շատրուաններ մաքուր ջրի, վարդաղոյն ջրի և շաքարեղինի նլրթի, որոնք անզագար խփում էին բուլոր հրապարակների վերայ, որ մայթած էին միխակի և գարշինի հոտ ունեցող քարերով: Կանդիտը ցանկութիւն յայտնեց տեսնել դատական պալատը և պարլամենտը. նրան ասացին որ այստեղ այգպէս բաներ չկան, որ այստեղ ոչ ոք ոչ մի ժամանակ չի գտաւում: Նա տեղեկացաւ նոյնպէս թէ բանտեր կմնն, նրան պատասխանեցին թէ ոչ: Բայց ամենից շատ զարմացրեց նրան և դուք եկաւ զիտութեանց ճեմարանը, որտեղ նա տեսաւ մի թանգարան երկու հազար քայլ երկարութեամբ, ամէն տեղ շարուած մաթեմաթիքական և ֆիզիքական գործիքներ: Ճաշից յետոյ բոլոր ժամանակը նուիրելով քաղաքի արժանայիշատակ տեղերի զննութեանը, չկարողանալով նրանց մի հազարերորդ մասն էլ տեսնել, նրանք վերադարձան թազաւորի մօտ: Կանդիտին սեղան նոտեցրին թագաւորի, Կակամբօնին մի քանի տիկնանց հետ: Ընթրիքը հիանալի էր, իսկ սրամտութիւնը գերազանց: Կակամբօն թարգմանում էր թագաւորի սրախօսութիւնները, որոնք այն առաջանի սրամիտ էին, որ թարգմանելիս ևս մնում էին սրախօսութիւն: Սա

առանձնապէս զարմացրեց կանգիտին։ Նրանք մի ամիս անց-  
կացրին այս երկրում։ Կանգիտն ասում էր կակամբօխն։ «Իհար-  
կէ, բարեկամ, ես այժմ էլ կ'ասեմ, որ այն ամբոցը որտեղ  
ես ծնուել եմ, անպիտան բան է այս երկրի հետ համեմատե-  
լով, բայց այստեղ չկայ Կունիգունդա, և դուք էլ անպատճառ  
Եւրոպայում սիրուհի կ'ունենար. այստեղ մենք բոլորին հա-  
ւասար ենք, բայց եթէ մենք վերագաւանանք հայրենիք, վերց-  
նելով այստեղից տանելու շատ այստեղի ոչխառներից, բեռ-  
նաւորուած ելլորագօի քարերով, այն ժամանակ կը լինենք  
աւելի հարուստ քանի թէ բոլոր թագաւորները միասին վերց-  
րած, ինկվիզիտօրներն էլ այնպէս սարսափելի չեն լինի և Կու-  
նիգունդան հեշտութեամբ կարող է ազատուել։

Այս ճառին կակամբօն հաւանեց, և որովհետեւ բոլոր մար-  
դիկ սիրում են աշխարհիս հրեսին քաշ դալ որ յետոյ պար-  
ծենան տանը, այդ պատճառով մեր բախտախնդիրներն էլ  
վճռեցին հրաժարուել իրանց բազգաւորութիւններից և խն-  
դրեցին նորին մեծութիւնից արծակել իրանց։

«Յիմարութիւն էք անում, առայ նրանց թագաւորը.—  
ի հարկէ իմ թագաւորութիւնս Աստծուն յայտնի է որ մի քան  
չէ, բայց եթէ ձեզ համար այստեղ վատ չէ, լաւ չէր լինի  
մնայիք։ Սակայն ես իրաւունք չունիմ օտարականներին արգե-  
լելու. այդ տեսակ բնութիւն մեղանում չկայ, ոչ մեր սովորու-  
թեանց և ոչ էլ օրէնքների մէջ. բոլոր մարդիկն ազատ են. դուք  
կարող էք գնալ երբ ցանկանում էք. միայն այստեղից դուրս  
գալը դժուար է։ Այն գետը, որի վերայից հրաշքով եկաք մեզ  
մօտ, նրա հոսանքի հակառակ չէք կարող գնալ, մանաւանդ ժայ-  
ռերի կամարների տակ։ Իմ ամբողջ թագաւորութեան չորս կող-  
մը շրջապատող լեռներն ունին տասն հազար սոնաչափ քարձ-  
րութիւն և պատի նման ուղղաձիգ են։ Նրանցից ամեն մինը  
տասն մզոն աւելի լայնութիւն ունի և առանց անգունդներից  
անցկենալու, այդ լեռներն անցնելու ուրիշ ճանապարհ չկայ։  
Սակայն եթէ դուք անպատճառ ցանկանում էք գնալ, այն ժա-  
մանակ ես կը հրաժայեմ մերենական վարչութեանը շինել մի  
մերենայ, որի վրայ կը կարողանաք յարմար կերպով ցած իջնել։  
Ձեզ կ'առաջնորդին մինչև լեռների ստորոտը, բայց աւելի հե-  
ռու ձեր յետեկից ոչ ոք չի գնալ, որովհետեւ իմ հպատակներս  
ինձ խոստացել են և ուխտ գրել, երբէք չը թողնել իրանց  
երկիրը և նրանք այնքան խելօք են որ չեն խախտի այդ ուխտը։  
Հրաժեշտի ժամանակ ինպրեսէք ինչ որ ցանկանում էք։» Մենք  
ինդրում ենք, ձերդ մեծութիւնից, առայ կակամբօն, — տալ  
մեզ մի քանի ոչխար. բնոնաւորուած մսեղէնով, քարերով և

այստեղի ցեխով՝» թագաւորը ծիծաղեց. «Զեմ հասկանում,— ասաց նա, — թէ դուք երոպացիներդ ի՞նչ անյազ սէր ունէք զէսի մեր գեղին ցեխը: Վերցրէք, ինչքան ուզում էք, ցանկանում եմ որ նա ձեզ օգտակար լինի:» Նա հրամայեց իր ինժեներներին շինել մի մեջնաց այս երկու այլակերպներին (Կուդակ) տէրութեան սահմանից անցկացնելու համար: Երեք հազար գերազանց ֆիզիկոսներ գրայ մասնեհինդ օր աշխատեցին: Նա այստեղի փողերով քսան միլիօն ֆունտ ստերլինգից աւելի չը նստեց: Կանգիտն ու Կակամբօն նստեցին մեքենայի վերայ, որտեղ արդէն կանգնած էին երկու մեծ կարմիր թամբած և սանձած ոչխարներ, որոնք լեռներից իջնելուց յետոյ նրանց պէտք է տանէին, քսան բեռնաւորուած ոչխարներ մսի պաշարեղէնով, երեսուն հատ բեռնաւորած երկրի բոլոր արժանայիշատակ առարկաներով, և յիսուն հատ բեռնաւորուած ուկով, թանկագին քարերով և ազամանդներով: Թագաւորն ընքշարար հրաժեշտ առեց թափառաշրջիկներին: Նրանց դուրս գալը և լեռներից անցնելու սրամիտ եղանակը ներկայացնում էին հիանալի տեսարան: Ֆիզիկոսները մնաս րարե ասացին նրանց լեռների ետեւում երբոր նրանք բոլոր վտանգներից ազատ էին: Կանգիտը ամերողջապէս զրադուած էր իր ոչխարները կունիգունդին շուտով ներկայացնելու երեւակայութեամբ և ցանկութեամբ: «Բաւական բան կայ, Բուէնոս Այէսի կառավարչակետին կաշառելու համար, — առում էր նա, — և մենք կը գնինք կունիգունդին, եթէ միայն նրան կարելի է գնահատել: Ուզիւրուենք Կայէնսա, նստենք նաև, իսկ յետոյ կը տեսնենք թէ ո՞ր թագաւորութիւնը լաւ կը լինի գնել:

## ԳԼՈՒԽ ՀՀ.

Թէ ի՞նչ պատահեց նրանց Սուրինամում և ի՞նչոք Կանգիտը ծանօթացաւ Մարտինի հետ:

Առաջին օրը մեր ճանապարհորդները լաւ անցկացրին, այն միտքը՝ թէ նրանք տիրում են այսպիսի գանձերի, որոնք զերազանցում են Ասիայի, Եւրոպայի և Աֆրիկայի բոլոր հարաստութիւնները, շատ քաջալերում էր նրանց: Կանգիտը յափշտակուած գրում էր ծառերի վրայ կունիգունդի անունը: Հետևեալ օրը երկու ոչխարը ընկան ճահճի մէջ և բեռների հետ կորան, մի քանի օրից յետոյ յոզնածութիւնից երկուսն էլ ընկան, եօթն թէ ութը հատ փչացան անապատում քաղցածութիւնից, մի քանիսն էլ գլորւեցան անդունդը, Վերջապէս

հարիւրօրեայ ճանապարհորդութիւնից ողջ մնացին երկու ոչխար: Կանդիտն ասաց Կակամբօին. «Տեսնում ես, բարեկամ, ի՞նչպէս անցաւոր են այս աշխարհիս գանձերը. հաստատուն են միայն ասաքինութիւնը և Կունիգունդին նորից տեսնելու բաղդաւորութիւնը:» «Ճշմարիտ է, ասաց Կակամբօն, բայց մեզ էլի մնացել է երկու ոչխար այնպիսի զանձերով, որպիսին իւսպանական թագաւորը երազումն էլ չի տեսել. բայց ահա հեռուում ես տեսնում եմ քաղաք, գուցէ հէնց այս է Սուրբինամը, նա պատկանում է հոլլանդացիներին. Վերջացան մեր դժբաղդութիւնները, սկսում է բաղդաւորութիւնը: Քաղաքին մօտենալիս նրանք տեսան գետնի վրայ գտուած մի նեղրի, կիսով շափ հագնուած. այսինքն միմիայն կապսյա կտաւի վարտիքով. այս անբաղդը զրկուած էր ձախ ոտից և աջ ձեռքից:

«Տէր ողորմեա,—ասաց նրան հոլլանդերէն կանդիտը, ի՞նչ ես անում գու այստեղ այս սարսափելի գրութեան մէջ:» «Սպասում եմ իմ տիրոջը, պարոն Վանդերգինտուրին, որ նշանաւոր վաճառական է», պատառխանեց նեգրը: «Այդ պարոն Վանդիրդինտուրն է քեզ այդ օրը զցել», հարցրեց կանդիտը: «Այս, տէր, այդպէս է մեզանում սովորութիւնը,—պատասխանեց նեգրը:—Մեզ տալիս են ընդգամենը տարին երկու կտաւի վարտիք: Երբոր շոքարի զործարանում ջրադացաքարը մէկի մատը թոցնում է, նրա ամրող ձեռքն են կտրում, իսկ եթէ մեզանից մէկի խելքին փչէ փտխչել, նրա էլ ոտն են կտրում. ինձ հետ պատահել է թէ մէկը և թէ միւսը: Ահա, թէ ի՞նչ զնով էք առնում շոքարը! Իմ մայրս ծախելով ինձ Գվինէի ափերում տասն էֆմիկի (գրամ) առում էր ինձ. «Միրելի՛ որդեակ, փառարանիր մեր ֆետիշներին, յաւիտեանս երկրպագիր նրանց: Նրանք կուպարկին քեզ երջանկութիւն. այժմ գու պատիւ ունիս մեր սպիտակ իշխանաւորների ստրուկը լինելու, և դրանով բաղդաւորեցնելու քո հօրն և մօրը:» «Աւանդ, չը գիտեմ թէ ես նրանց բաղդաւորեցըրել եմ թէ ոչ, բայց նրանք ինձ չբաղդաւորեցըրին: Շները, կապիկներն ու թութակները հազար անդամ մեզանից երջանիկ են: Հոլլանդական ֆետիշներն, որոնք ինձ ճշմարտութեան ճանապարհն են զարձրել, ամէն կիրակի օր հաւատացնում են, որ սպիտակներն ու սևերը ըոլորն էլ հաւասարապէս Ագումի որդիքն են: Ես իհարեկէ քիչ հասկացողութիւն ունիմ ճիւղագրութիւնից, բայց եթէ այդ քարոզիչները ճշմարիտ են առում, ուրեմն բանից երևում է որ մենք այն մարդու թոռներն ենք: Հաւատացէք որ մարդ զէպի իլ ազգականներն սրճնից աւելի վատթար վարմունք չի էլ կարող մտածել:»

Սկսումէքը, 1906.

«Ո՞հ, Պանդլոս, —աղաղակեց կանդիտը, —դու չէիր նախատեսել այսպիսի սարսափներ! Բաւական է, հարկաւոր է վերջապէս հրաժարուել լաւատեսութիւնից:» —«Լաւատեսութիւնը ինչ բան է, հարցրեց Կակամբօն: «Աւագ, ասաց կանդիտը, սամի ախտ է շարունակ պնդելու թէ ամէն բան շատ լաւ է գընում, երբ իսկապէս ամէն բան շատ վատ է գնում:»

Նա նայելով սևամորթին սկսեց արտասուել և լաց լինելով մտաւ Սուրբինամ:

Ամենից առաջ նրանք տեղեկացան թէ նաւահանգստում Բուէնոս-Այրէս զնացող նույն չկայ արդեօք: Նրանք առաջին քայլում պատահեցին մի իսպանական նաւապետին, որն առաջարկեց նրանց պայման կապել: Նա տեսակլցութիւն նշանակեց մի յետ ընկած կապելիօնում: Կանողիտն և հաւատարիմ կակամբօն զնացին իրանց ոչխարներով այնտեղ նաւապետին սպասելու: Անկեզծ կանողիալ, որ չէր կարողանում լեզուն իրան քաշել, պատմեց նաւապետին իր բոլոր արկածները և յայտնեց իր մտադրութիւնը կունիզունդին առևանգելու: «Ի՞նչ, ուրեմն ևս համաձայն չեմ ձեզ Բուէնոս-Այրէս տանելու, ասաց նաւապետը. ևս ցանկութիւն չունիմ ձեզ հետ կորչելու. գեղեցիկ Կունիզունդան նորին գերազանցութեան ամենասիրելի տարփուհին է: Այս խօսքերը խելք Կանդիտին շանթահար արին: Նա երկար լաց էր լինում, վերջապէս կակամբօն մի կողմ տարաւ. և ասաց: «Ես քեզ մի խնդիր ունիմ, բարեկամ: Ամէն մէկիս գրպանում հինգվեց միլիոնի աղամանգներ կան. դու ինձանից ճարպիկ ես, զնա Բուէնոս-Այրէս Կունիզունդի ետեկից: Եթէ կառավարչապետի կողմից գժուարութիւններ ծագեն, տուր նրան մի միլիոն, իսկ եթէ չը կոտրուի, երկուսը տուր. դու ինկվիզիտոր չես սպանել, քեզ վրայ չին կասկածի: Ես էլ այստեղ նույն կը պատրաստեմ և վիճետիկ կ'ուղարկեմ քեզ սպասելու: Այստեղ ազատ երկիր է և ոչ լուլզարներից, ոչ աւարներից, ոչ ջնուզներից և ոչ էլ ինկվիզիտորներից վախենալու բան չկայ: Կակամբօն հաւանաց այս խելացի ծրագրին: Նա սաստիկ գժուարանում էր բաժանուել իր բարի տիրոջից, որը դարձել էր նրա ամենալաւ բարեկամը, բայց նա այնքան ուրախ էր նրան ծառայութիւն մատուցանելու, որ այս միտքը գերակշնեց բաժանուելու վշտին: Նրանք արտասուրքն աչքերին գրկախառնուեցին: Կանդիտն յանձնարարեց կակամբօն՝ պառաւին չմուանալ: Կակամբօն գուրս հկաւ միհնոյն օրը, հիանալի՛ մարդ էր այս կակամբօն:

Կանդիտը մնաց Սուրբինամում, սպասելով մի նաւատիրոջ, որը իրան և իր երկու ոչխարներին յանձն առնէր իտալիա

տանելու: Նա վարձեց իր համար ծառաներ և գնեց բոլոր հարկաւոր բաները: Վերջապէս մի անգամ նրան ներկայացաւ պարոն Ալանդիրդերտուրը, որ մի մեծ նաւի տէրն էր: «Ի՞նչքան կը առնէք, հարցրեց նրան Կանդիտը, որ ինձ, իմ ծառաներիս, բեռներս և այս երկու ոչխարներս ուղղի Վենիտիկ հասցնէք:» Նաւատէրը միանդամից տասն հազար պիաստր պահանջեց: Կանդիտն առանց տատանուելու համաձայնուեց:

— Օհօ, մտածեց բանիմաց Վանդերդինառուը. այս օտար երկրացին առանց սակարկելու տասն հազար պիաստր է տաշվաս, երեսում է որ նա շատ հարուստ է, և մի բոսէից յետոյ վերադառնալով նա յայտնեց որ քսան հազարից պակաս նա չկ կարող տանել: «Լաւ,» ասաց Կանդիտը: «Այ թէ էդպէս, հմ, — մոմաաց վաճառականը. — որա համար քսան հազար էլ դատարկ բան է, ինչպէս և տասն հազարը.» Նա նորից վերադառն և առաց որ կարող է միայն երեսուն հազար պիաստրի տանել նրան: «Լաւ,» պատասխանեց Կանդիտը:

«Էսէ, մտածեց դարձեալ հոլլանդական վաճառականը, երեսուն հազար պիաստրն էլ այս մարդու համար չնչին բան է. երեխ սրա ոչխարները բեռնաւորուած են ահագին գանձերով. էլ նրան չձանձրացնեմ, դիո առաջուց երեսուն հազար պիաստրն առնեմ, յետոյ կը տեսնենք:» Կանդիտը ծախեց երկու փոքրիկ աղամանդ, որոնցից փոքրագոյնը արժեց երեսուն հազար պիաստրից աւելի: Նա փողերն առաջուց տուեց: Երկու ոչխարը տարան նաւ: Կանդիտը հետեւում էր նրանց մակոյկով որպէս զի նաւահանգստում մտնի նաւի մէջ. նաւատէրն օգտուելով այս հանգամանքից բարձրացրեց առագաստներն և նաւը գնաց յաջող քամուց մզուելով: Խելացնոր եղած և քարցած Կանդիտը շուտով կորցրեց նրան տեսքից: «Աւանդ, կանչեց նա, ահա մի բան, որ հին աշխարհին էր վայել:» Նա վերադառն ափը խորը կերպով վշտացած, և հասկանալի էր, որովհետեւ նրա կորցրած գանձերը կարող էին քսան միապետ հարստացնել:

Նա գիմեց հոլլանդական գատաւորին և սաստիկ վրդովուած լինելով սկսեց ուժգին կերպով գուռը ծեծել: Ներս մտնելով, նա պատմեց զէաքի մասին, խօսելով աւելի բարձր ձայնով քան նարկաւոր էր:

Դատաւորն ամենից առաջ ստիպեց նրան տասն հազար պիաստր տուղանք տալու նրա բարձրացրած աղմուկի համար. ապա համբերութեամբ լսեց նրան, խօստացաւ քննել զործը խոկոյն վաճառականի վերադառնալուց յետոյ և պահանջեց նրանից դարձեալ տասն հազար պիաստր գատական ծախսերի համար:

Դատաւորի վարմունքն կանդիտի յուսահատութիւնը ծայրայեղութեան հասցրեց։ Թէև նրան սրանից էլ վատ դժբաղդութիւններ էին պատահել, բայց գատաւորի և վաճառականի սանարինութիւնը, որով նրան կողոպահցին, զրգուեցին և խորասուզեցին նրան մոռայլ մտածմունքների մէջ։ Մարդկային մոլորութիւնները ներկայացան նրանց բոլոր տգեղութեամբ. նրա գլուխը լցուել էր տխուր մտածմունքներով։ Վերջապէս կանդիտը վարձեց իր համար սովորական մի կայիտ ֆրանսիական նաւի վերայ, որ գնում էր Բորգօ, որովհետեւ այլ ևս ստիպուած չէր իր հետ ազամանդներով բեռնաւորուած ոչխարներ տանել։ Նա յայտարարեց քաղաքում, որ առաջարկում է իր հաշուով տեղափոխել և երկու հազար պիտառ տալ մի ազնիւ մարդու, որը կը ցանկանայ իր հետ զընալ. այն պայմանով միայն որ նա լինի ամենադժբաղդ և դժգոհ մարդը ամբողջ գտաւուում։

Սրա համար այնքան թեկնածուներ գուրս հկան, որ մի ամբողջ նաւատառմիդ չէր կարող նրանց տեղաւորել։

Կանդիտը ջոկելովնրանցից ամենայայտնիներին, զուրաբերեց քսան մարդ, որոնք երկեցին նրան հետաքրքիր և որոնք ունէին յաւակնութիւն միւսներից գերադասուելու։ Նա հրաւիրեց նրանց կապելին և ընթրիք տալով ինդրեց պատմել իրանց արկածները առանց դարդարանքի և խոստացաւ ընտրել նրանց միջից նրան, ով որ ճշմարտապէս զուրս կը գոյ ամենաթըշուառ և ամենազգժգոհը, իսկ մնացածներին կը վարձատրի փողով։

Նիստը շարունակուեց մինչև տուաւոտեան ժամի չորսը։ Լսելով այս բոլոր արկածները, կանդիտը մտարելում էր պառաւի խօսքերը որ ասել էր Ռուէնոս Այրէսի ճանապարհին և նորա գրադ գալը, որ նաւի մէջ չը կայ մի մարդ, որը կրած ը լինէր զարհուրելի զժրազդութիւններ։ Ամեն մի պատմութեան ժամանակ նա մտածում էր Պանզլոսի մասին։ Պանզլոսին շատ գժուար կը լինէր իւր թէօրիան պաշտպանել, —ասում էր ինքն իրան կանդիտը, —ես կը ցանկայի որ նա այստեղ լինէր ելզորազոյում, իհարկէ, լաւ է, բայց ուրիշ ոչ մի տեղ։» Վերջապէս նա վճռեց ընտրել մի աղքատ գիտնականի, որ տասն տարի չարչարուել էր Ամստերդամի գրավաճառների համար։ Նա մտածեց որ աշխարհում չկայ ոչ մի արուեստ, որ կարողանայ այնքան սաստիկ զգուեցնել, ինչքան գիտնական լինել։

Բայց սրա հետ ի միասին այս գիտնականն յայտնի էր իբրև լաւ մարդ, որին իր կինը կողոպահել էր, որդին ծեծել էր, իսկ աղջիկը անտէր թողնելով նրան փախել էր ինչքան գիտնական մի պոր-

տուգալացու հետ: Մի քիչ տուաջ նրան զրկեցին մի չնչին պաշտօնից, որով նա իր ապրուստն էր հայթայթում: Սուրբնամի քարոզիչները հալածում էին նրան՝ կառկածելով թէ նա սոցիսիան աղանդից է: Պէտք է խօստովանուել սահանդիս, որ միւսները պակաս թշուառ չէին սրտնից, բայց կանդիտն յոյս ունէր, որ գիտնականը ճանապարհին կը զբաղեցնի իրան: Միւսները բոլորը բողոքեցին ասելով թէ կանդիտը մեծ անարդարութիւն արեց, բայց նա հաճախացրեց նըստանց ամեն-մէկի ըստեխը հարիւր պեաստր գցելով:

## ԳԼՈՒԽ ՀՀ

Թէ ինչ պատահեց ծովի վրայ կանդիտի և Մարտինի հետ:

Այսպէս ծերունի գիտնական Մարտինը կանդիտի հետ ուղևորուեց Բորգո: Նրանք երկուսն էլ շատ բան էին տեսել և շատ բան քաշել և եթէ նրանք ստիպուած լինէին Սուրբնամից Ճապանիա նաև Բարի-Յուսոյ հրուանդանի մօտով, այնուամենայնիւ ամբողջ ճանապարհին բարոյական և նիւթական չարիքների մասին խօսալու համար բաւական պաշար կը լինէր:

Սակայն կանդիտն ունէր ահազին առաւելութիւն Մարտինի գէմ: Նա գոնէ գեռ յոյս ունէր Կունիգունդին տեսնելու, մինչդեռ Մարտինը ոչ մի բանի յոյս չունէր. բայց գրանից կանդիտն ունէր ոսկի և աղամանդիներ և թէպէտ նա կորցրեց հարիւր հատ կարմիր աշխար բեռնաւորուած աշխարհիս ամենամեծ գանձերով, թէպէտ և հոլլանդական կապիտանի խարդախութիւնը ծանր բար էր դառել սրտին, բայց այնուամենայնիւ երբ որ նա մտածում էր թէ ինչեր կան իր գրպանում և խօսում էր Կունիգունդի մասին, մասնաւանդ ճաշից յետոյ, այն ժամանակ առաւել հակւում էր դէպի Պանգլոսի թէօրիան:

«Իսկ գուք, պարօն Մարտին, —ասաց նա գիտնականին —մտածում էք այս բոլոր բաների մասին: Ի՞նչպէս է ձեր հայեացքը բարոյական և նիւթական չարիքների վերաբերութեամբ: —«Յարգելի ալարոն, —ասաց Մարտինը, —իմ քահանաներս մեղադրում էին ինձ սոցիսեան աղանդի մէջ, բայց իս խկապէս մանիքեցի ամ»: Դուք ծաղրհում էք, —ասաց կանդիտը, —մի՛թկ այժմ կան մանիքեցիներ»: «Կան, մարդ օրինակ ես, —պատասխանեց Մարտինը. —իս չգիտեմ ի՞նչ

անեմ, բայց իմ կարծիքներս փոխել չեմ կարող»: «Կարելի է քո մէջդ սատանան բուն է դրել, ասաց Կանդիտը: «Այն, նա իր քիթը կոխում է այս աշխարհի բոլոր գործերի մէջ,—ասաց Մարտինը,—շատ կարելի է, որ նա իմ մէջն էլ է մտել ինչպէս ամեն բանի մէջ. բայց ուղիղն ասած երբ որ մարդ տեսնում է թէ ինչ է կատարում այս երկրագնտի կամ աւելի ճիշտը. գնտակի վրայ, այն ժամանակ իսկապէս մարդ մտածում է թէ Աստուած թողել էր սրան մի ինչ որ չար արարածի կամայականութեանը. ես էլորագօի մասին չեմ խօսում: Բայց ես չեմ տեսել մի քաղաք, որ չցանկանար հարեան քաղաքի կործանումը, չեմ տեսել մի ընտանիք որ չուզենար միւսի ամբաղդութիւնը: Ամեն տեղ թոյլերն ատում են զօրեղներին և միենոյն ժամանակ սողում են նրանց առաջ. իսկ ուժեղները վարւում են թոյլերի հետ ինչպէս հօտի հետ: որի կաշին և միսը ծախում են: Միլիօնաւոր արտօնեալ մարդասպաննեւը թափառում են Եւրոպայի մի ծայրից միւսը, կանոնաւոր կերպով պարապելով աւագակութեամբ և մարդասպանութեամբ. նրանք սրանով հաց հնայթհայթում, ըստորում աւելի ազնիւ արհեստ չգիտեն: Քաղաքներում, որտեղ ըստ երեսյթին թագաւորում է խաղաղութիւնը և ծաղկում են արուեստները, մարդիկ աւելի են տանջւում նախանձից, հոգսերից և վրդովմունքից, քան պաշարուած քաղաքները պատերազմի արհաւիրքներից: Ծածուկ նեղութիւններն աւելի սարսափելի են հասարակական աղէտներից: Միխօսքով ես այնքան տեսայ, այնքան փորձեցի, որ դարձայ մանիքեց!»:

«Սակայն լաւ բաներ էլ կան», հակաճառեց Կանդիտը: «Կարելի է,—ասաց Մարտինը,—բայց ես չեմ տեսել: Այդ ժամանակ որոտաց թնդանօթի բոմբիւնը: Ամեն բոսէ թնդանօթաձգութիւնը արագանում էր: Բոլորեքեան զինուեցին հեռազիւտակներով և տեսան երկու նաւեր, որ պատերազմում էին իրար հետ իրանցից երեք մղոն հեռաւորութեամբ: Քամին նրանց այնքան մօտեցրեց Քրանսիական նաւին, որ նաւորդները կարող էին լիապէս զուարձանալ պատերազմի տեսարանով: Վերջապէս մի նաւը կրակեց միւսի վրայ այնպէս ցածրից և շիտակ որ ընկղմեց ծովը: Կանդիտն և Մարտինը պարզ տեսնում էին հարիւրաւոր մարդկանց կործանուող նաւի տախտակամածի վրայ: Նրանք բարձրացնում էին ձեռներն զէպի երկինք և յուսակտուր պալազակում էին... Մի ըուպէից յետոյ ամեն բան կուղնաց ալիքներին:

Հիմի ինչ կ'առէք,—ասաց Մարտինը,—առեսնում էր թէ.

ի՞նչպէս են մարդիկ իրար հետ վարւում»: «Ճշմարիտ է,—ասաց Կանդիտը,—սրա մէջ իսկապէս մի ինչ որ դիւական բան կայ»: Այս ասելիս նա նկատեց որ իրանց նաւի հոգից լողում է մի ինչ որ պայծառ կարմիր բան: Վայր թողեցին մակոյիլը որ տեսնեն թէ ինչ է,—զա ոչխարներից մէկն էր: Կանդիտն այնքան ուլախացաւ այդ ոչխարը զանելու վրայ որքան չէր տիրել հարիւր ոչխար կորցնելիս, որոնք բեռնաւորուած էին էլլորադոից վերցրած ահագին աղամանդներով: Ֆրանսիական նաւապետն ստուգեց որ յաղթողը իսպանական նաւն էր, իսկ յաղթուողը—հոլլանդական ծովահենը սա էր նոյնիսկ Վանդերդինաուրի նաւը, որը կողովածել էր Կանդիտին: Ահագին հարստութիւնները, որոնց աիրապետել էր այս ելուզակը, ծովին կուլ գնացին իրան հետ միասին և աղամանց միմիայն մի ոչխար: «Դուք ահսնում էք,—ասաց Կանդիտը Մարտինին,—որ յանցանքը երբեմն պատուհասւում է, այս զողաւազակ հոլլանդացին բոլորովին արժանի էր այս վիճակին»—«Այն,—ասաց Մարտինը,—բայց ի՞նչ բանի համար էր պէտք այսքան նաւորդոների կորուստը, որոնք նրա նաւի վրայ էին: Աւազակին պատրժեց Աստուած, իսկ միւսներին խեղդեց նատանան»:

Այս միջոցին ֆրանսիական և իսպանական նաւերը շարունակում էին իրանց ճանապարհը, իսկ Կանդիտը շարունակում էր իր խօսակցութիւններն Մարտինի հետ: Նրանք տասն և հինգ օր շարունակ վիճեցին, և տասնեհինգերորդ օրն էլ նոյնպէս հակառակ համոզմունքի էին ինչպէս և առաջին օրը. յամենայն դէպս նրանք խօսում էին, հազորդում էին միմնանց իրանց մտքերը, և միմիթարում էին իրար: Կանդիտը վրայիայում էր իր ոչխարին: «Եթէ ես քեզ գտայ, — ասում էր նա, — կարելի է կունիդունգին էլ զանեմ»:

## ԳԼՈՒԽ ՀՀԻ

Կանդիտն ու Մարտինը մօտենում են Ֆրանսիայի ափերին և դատողութիւններ են տալիս:

Վերջապէս տեսան Ֆրանսիայի ափերը: «Դուք Ֆրանսիայում եղել էք, պարոն Մարտինը,» հարցրեց Կանդիտը:

«Այն,—պատախանեց Մարտինը,—ես եղել եմ մի քանի զաւառներում. մի քանիսում ժողովրդի կէսը անխելք են, միւսներում անտանելի խարերայ, մի երրորդում նրանք հանդարատ և յիմար են, մի քանիսն էլ խօսակցութիւնը զարդարում են սրախօսութիւններով. իսկ առհասարակ ամէն-տեղ մարդ-

կանց գլխաւոր պարապմունքն է —սիրահարութիւնը, երկրորդ պարապմունքը —չարախօսութիւն, իսկ երրորդը —յիմար գատարկաբանութիւն:» «Իսկ Պարիղ տեսնէլ էք, պարսն Մարտին:» —Այս, տեսել իմ Պարիղը, այստեղ այդ բոլոր տեսակի մարդկանցից էլ կան: Սա քառս է, սա մի ժխոր է որտեղ ամենքն էլ որոնում են զուարձութիւն և համարեա ոչ ոք չի կարողանում գտնել, գոնէ ինձ այդ պէս երևեց, ես երկար այնուեղ չաղըցի: երբ որ բաղադր հասայ, Սէնժերմենի տօնավաճառում ջիրկիրները ինձ խստակ կողոպատեցին, ինձ էլ իրքի գողի բըռնեցին և ես ութ օր նստեցի բանառում. երբ ինձ արձակեցին ես մտայ տպարան որբագրիչի պաշտօնով, որ մի քիչ փող աշխատեմ ոտքով Հոլլանդեա վերադառնալու համար: Ես ծանօթացայ այդտեղ գրող սինլիքորների, խառնակիչ սինլիքորների և ջղածղական ցնցումներ անող սինլիքորների հետ. ասում են Պարիղում շատ սիրելի անձնաւորութիւններ կան, ես պատրաստ իմ հաւատարու:» «Իսկ ինչ վերաբերում է ինձ, ասաց Կանդիտը, ես ամենելու չեմ հետաքրքրում Պարիղը տեսնելու և կարծեմ հասկանալի է, մի ամիս էլլուստրում մնալուց յետոյ, մարդ ոչինչ չի ցանկանայ տեսնել բացի կունիգունդից. որին ես ուզում եմ սպասել վենետիկում. մենք կ'անցնենք Ֆրանսիան և կ'ուղերուենք Բատիա: Զէք ցանկանալ արդեօք ինձ ուղիկցել:» Մեծ ուրախութեամբ ասաց Մարտինը, —ասում են Վենետիկում լաւ են ապրում միայն հարուստ վենետիկիցիները, սակայն այստեղ սիրով են ընդունում օտարականներին, իհարկէ հարուստներին, ես փող չունիմ, իսկ գուք ունիք, ես ամեն տեղ կը հնակեմ ձեզ:»—Հա, լաւ միտքս եկաւ, ասաց Կանդիտը, գուք ի՞նչպէս էք կարծում, ոկզբում երկիրս ծովով ծածկուած է եղել, ինչպէս զրած էր այն հաստ գրքի մէջ, որ կապիտանի մօս տեսանք:» «Իսկի մի գոռշի էլ չեմ հաւատում դրան, —ասաց Մարտինը —ինչպէս և միւս բոլոր տիմար ըաներին, որոնք այս բանի ժամանակներս սկսել են սարսափելի զահլա տանել:»

«Բայց ի՞նչ նպատակով է աշխարհս ստեղծուած», հարցրեց Կանդիտը: «Մեղ կատաղեցնելու համար», պատասխանեց Մարտինը, Կարծեմ ձեզ զարմացնում է օրիորդների սէրը դէպի կապիկները, շարունակեց Կանդիտը, որի օրինակը ես տեսայ Օրելիօնների մէջ և ձեզ պատմեցի:» «Ամենեին, ասաց Մարտինը ես չեմ տեսնում ոչ մի տարօրինակ բան այդ կրքի մէջ, ես այնքան անսովոր բաներ իմ տեսել, որ ոչ սի բանի վրայ չեմ զարմանում: Ի՞նչպէս էք կարծում, արդեօք միշտ մարդիկ իրար կոտորում էին ինչպէս այժմ, և արդեօք ամէն ժամանակ

նրանք եղել են ստախօս, խարերայ, զաւաճան, երախտամոռ, չարագործ, վախկոտ, դատարկ, կեղտոռ, նախանձոտ, ագահ, հարբեցող, ժլատ, եսական, չարասիրտ, զրպարտիչ, շնացող, Փանատիկոս, կեղծ-բարեպաշտ և յիմսար:» «Լաւ, բայց դուք ի՞նչպէս էք կարծում, — ասաց Մարտինը, — արդեօք միշտ բազէնքը կերել են աղաւնիներին, երբ որ նրանց պատահել են:» «Ի՞արեկէ,» ասաց Կանդիտը:

«Ուրիմն ասաց Մարտինը, — եթէ բազէների բնաւորութիւնը չի փոխուել, մարդկանցն ինչո՞ւ պէտք է փոխուէլ:» «Զէ, ասաց Կանդիտը, — մեծ զանազանութիւն կայ, աղաւ կամըը...»: Այսպէս խորհրդածելով նրանք հասան Բորդօ:

## ԳԼՈՒԽ XXII

Թէ ի՞նչ պատահեց Կանդիտին և Մարտինին Թրանսիայում:

Կանդիտն երկար չմնաց Բորդօյում, նու ծախսեց Ելգորագոյի քարի կտորներից մի քանիսը, և վարձեց մի յարմար երկու տեղանի փոստի կառք: Նա արդին առանց վիլիսուիայ Մարտինին չէր կարող եօլաւգնալ, բայց նրան շատ ծանր էր իր ոչխարից բաժանուել, որը նա ընծայեց Բորդօի գիտութեանց ձեմարանին և որը նոյն տարին մրցանակի դրեց հետեւալ հարցը. թէ ի՞նչ պատճառով այդ ոչխարի ըուրդը կարմիր է, մրցանակը տարաւ մի զիտնական հիւսիսից, որը ապացուցեց թէ A+B-C բաժանում է Z վրայ, հետեւարար ոչխարը պէտք է լինէր կարմիր և սատկէր քոսոտութիւնից:

Բոլոր ճանապարհորդները, որոնց Կանդիտը ճանապարհի հիւրանոցներում պատահում էր, նրան ասում էին. «Մէնք գնում ենք Պարիզ», Այս լնդհանուը ձգտումը նրա մէջ ծնեցրեց ցանկութիւն մայրաքաղաքը տեսնելու, մի քիչ միայն պէտք էր շեղուել Վենետիկի ճանապարհից:

Նա մտաւ Պարիզ Սն-Մարսօի արուարձանից և կարծեց թէ ընկաւ ամենաանպիտան վիստֆալական մի զիւդ:

Հազիւ նա հիւրանոց հասաւ, որ հիւանդացաւ յոպնածութիւնից: Որովհետեւ նա ունէր մի մատանի անազին աղամանդով, և նրա կառքի մէջ նշմարել էին մի ծանրակշիռ արկղիկ, այդ պատճառով նրա մօտ բուսան երկու բժիշկ, որոնց նա չէր կանչել, և մի քանի մօտ բարեկամներ, որոնք ոչ մի բոզէ նրանց չէին հեռանում, և երկու կոյսեր, որոնք նրա համար կերակուը էին տաքացնում: Մարտինն ասում էր. «Ես յիշում եմ որ ես նոյնպէս հիւանդացայ առաջին անգամ Պարիզ գալիս.

ևս շատ աղքատ էի. բայց չունէի ոչ բարեկամներ, ոչ կոյսեր և ոչ բժիշկներ, և առողջացայ:

Մակայն լուծողականներից և արիւնապնդուց Կանդիտի հիւանդութիւնը լուրջ բնաւրութիւն ստացաւ: Նրան ներկայացաւ: Թաղական պաշտօննեան և համեստութեամբ խնդրեց տալ նրան հաստուցափի՝ դագաղ շինովին վճարելու համար: Կանդիտը լսել անգամ չէր ուզում: Կոյսերը նրան համոզում էին որ դա նոր մօղա է: Կանդիտը պատասխանեց որ նա նոր մօղի մարդ չէ: Մարտինն ուզում էր պաշտօնեային պատռւհանից դուրս զցել: Գրագիրն երդում էր որ Կանդիտին չին թաղիլ: Մարտինն երդում էր, որ կը թաղի իրան—գրագրին, եթէ նա շարունակի ձանձրացնել: Վէճը տաքացաւ: Մարտինը բանեց գրագրի ուսերից և կողտութեամբ զուրս հրեց դանից, որի համար առաջ եկու սարսափելի սկանդալ և կազմուց արձանագրութիւն:

Կանդիտն առողջացաւ: Երբոր նա փոքր ինչ կաղդուրուց նրա մօտ սկսեց հաւաքուել ընթրիքի ընտիր հասարակութիւն: Մեծ թղթախաղեր էին խաղացում: Կանդիտալ շատ զարմանում էր որ իրան մօտ քաղաքի մեծամեծներից չեն գալիս, բայց Մարտինին այդ բանը ամենակին չէր զարմացնում:

Տարեկամները նրան ծանօթացրին քաղաքի հետ: Դրանց թւումն էր մի փոքրիկ արելոյ Պերիգորից, որը ճարպիկ, միշտ աշխոյժ, միշտ ծասայելու պատրաստակամ, լիբր, ողջագուըող, և համակերպող անձնաւորութիւններից էր, որոնք թակարդ են մտնում օտարականներ որսալու, պատմում են նրանց քաղաքի սկանդալների մասին և ինչ էլ որ լիսի, նրանց վզիցը զանազան զուարծութիւններ են կազում: Նա կանդիտին և Մարտինին առաջ տարաւ թատրոն, որտեղ ներկայացնում էին մի նոր ողբերգութիւն: Կանդիտը նստել էր մի խումբ սրախօսների մէջ և այդ բանը չէր արգելում նրան լաց լինելու լաւ խաղացած տեսարաններում: Մի շատախօս, որ նստած էր նրա մօտ, ասաց նրան անտրակտի ժամանակ: «Դուք իզուր էք լաց լինում, սա ամենավատ գերասանուհի է, նրա հետ խաղացող զերասանն աւելի վաս է, իսկ ինքը պիհսան առաւել ևս վատ քան գերասանները, հեղինակն մի խօսք չի իմանում արաբերէն, այն-ինչ գործողութիւնը կատարւում է Որաբիայում, բացի այս նա բնածին գաղափարների չը հաւատացող մարդ է. ես վաղը կը բերեմ ձեզ քսան բրօշիւր, որ նրա գէմ են գրուած: «Յարգելի պարոն, ձեր ֆրանսիայում քանի թատրոնական գրուածքներ կան», հարցրեց Կանդիտն արբային: Նա պատասխանեց: «Հինգ կամ վեց հազար:»—«Բաւա-

կան շատ է—ասաց Կանդիտը.—իսկ նրանից քանիսն են լաւ.»  
«Տանուուհինք կտմ տասնու վեց,» պատասխանեց աբրան. «Բաւական շատ է,» նկատնց Մարտինը:

Կանդիտին շատ դուք եկաւ մի գերասանուհի, որ կատարում էր Եղիսարէթ թագուհու գերը մի բաւական տափակ ողբերգութեան մէջ, որը շատ քիչ են ներկայացնում: «Այս գերասանուհին—զարձաւ նու Մարտինին—ինձ շատ է դուք գալիս. նա մասամբ յիշեցնում է ինձ կունիգունդին. ես շատ կը ցանկայի նրա հետ ծանօթանալ» Պերիգորցի արբան յանձն առաւ նրան ներկայացնել: Գերմանիայում կրթուած Կանդիտը հարցրեց, թէ այս մասին էտիկէտը ի՞նչպէս է, Մրանսիայում ի՞նչպէս է ընդունուած վարուել անգլիական թագուհիների հետ: Շատ տարբեր,—ասաց աբրան,—գաւառներում նրանց տանում են գինետուն, իսկ Պարիզում նրանց շատ յարգանքով են վերաբերում, եթէ նրանք գեղեցիկ են, իսկ մահից յետոյ նրանց զցում են սատկած անասունների գաշտը:» Թագուհիներին են դաշտ զցում, բացականչեց Կանդիտը: Այս, ասաց Մարտինը, —պարոն արբան ճշմարիտ է ասում. ես Պարիզումն էի երրորդը Մոնմիլը, ինչպէս ասում են՝ փոխուեց այս կեանքից գէպի հանդերձեալը, և նրան մերժեցին այստեղի պարոնների ասելով թաղման հանդէսից, այսինքն գարշելի գերեզմանատնում զանազմն լրբերի հետ միասին փոխելու պատուից. բայց այնուամենայնիւ նրան թաղեցին բուրգունդեան փողոցի անկիւնում, հաւանական է որ այս բանը նրան մեծ անախորժութիւն պատճառեց, որովհետեւ նա վերին աստիճանի մաքի արիստօկրատիքական ուղղութիւն ունէր:»

«Ի՞նչ անքաղավավարութիւն,» ասաց Կանդիտը: «Ի՞նչ արած,—ասաց Մարտինը,—այդպէս են այդ մարդիկը: Երկարակայեցէք ամէն տեսակ հակասութիւններ, ամէն տեսակ անհետեթիութիւններ և դուք այդ բոլորը կը գտնէք թէ կառավարութեան մէջ, թէ դատաստանատներում, թէ նկեղեցիներում: և թէ այս զուարձալի ազգի ներկայացումների մէջ:» «Ուզի՞զ է որ Պարիզում միշտ ծիծաղում են», հարցրեց Կանդիտը: «Այս, —պատասխանեց աբրան, —բայց ծիծաղում են կատաղութեան ծիծաղով, որովհետեւ այստեղ ամէն բանի վերայ գանգատում են քրքիջով, ամենանողկալի գործերը կատարեւում են քրքիջով:

«Ո՞վ է այս հաստափոր խոզը, որն այնքան վատարանեց ինձ շարժող պիիեսան և ինձ այնքան բաւականութիւն պատճառող զերասանուհիներին:»

«Սա—ընթացիկ չարութիւնն է, —պատասխանեց աբրան: Նա

հէնց նրանով է ապրում, որ հայհոյում է բոլոր պիեսներն և բոլոր գրքերը, նա առում է ամենքին, ով որ յաջողութիւն է գտնում, ինչպէս ներքինիներն առում են ամենքին, ով որ զուարձանում է. սա գրականական-այն սողուններից մէկն է, որոնք սննդում են ցեխով և թոյնով. սա մրոտող է»: «Ի՞նչ բան է թուղթ մրոտովը», հարցրեց Կանդիտը. «Նա, ով որ ծնում է անպիտան գրքեր. սա ֆրեռնն է», պատասխանեց արքան:

Կանդիտը Մարտինին ու Պերիգորցին խորհրդածում էին սանդուխքների վրայ, որտեղով խատրոնից զուրս եկող հասարակութիւնն էր իջնում: «Թէկ ես վառում ևմ Կունիգունդին տեսնելու անհամբերութիւնը, — ասաց Կանդիտը, — այնուամենայնիւ կը ցանկանայի ընթրել օրիորդ Կերոնի հետ, որպէս շատ շատ սքանչելի երեաց»: Արքան չհամարձակուեց մօտենալ օրիորդ Կերոնին, որը ծանօթ էր միայն լաւ զասակորդի մարդկանց հնու և ետ մի ինչ որ տեղ հրաւիրած է այս երեկոյ— ասաց նա, բայց եռ պատիւ կունենամ ձեզ ներկայացնելու մի պատուարժան տիկնոջ, որտեղ զուր այնպէս կը ծանօթանաք Պարիզի հետ, որ կը կարծէք թէ ապրել էք նրա մէջ չորս տարի»:

Կանդիտը, որ բնականից հետաքրքիր էր, համաձայնուեց գնալ տիկնոջ մօտ, որ կենում էր Սէնտ-Բնորէ արուարձանի ծայրում, այնուեղ խաղում էին փարաւոն թղթախաղը. տասներկու տիսրագէմ քէրծէնիր ձեռներում բռնել էին մի-մի պրակ խաղաթուղթ—իրանց զժրախտութեան համարակարգը: Թուգաւորում էր խորին լուսութիւն. քէրծէնիր գէմքերը գժոյն էր, իսկ բանկ բռնողինը անհանդիսա, տանտիկինը, որ նոտած էր անգութ բանկը բռնողի մօտ, հետեւում էր շարժուն աչքերով զրած զբանիներին և խիստ բայց քաղաքավարի ձեռվ բացանել էր տալիս խաղացողներին շատ շտապով ծալած պարունիրը, ցոյց չտալով սակայն և ոչ մի նշան բարկութեան, իր յաճախորդները կորցնելու երկիւղից: Տանտիկինն իրան ներկայացնում էր որպէս մարքիզուհի Պարօլինեակ: Նրա տասնեհինգ ամիայ գուսարը խաղացողների թւումն էր և աչքի նշաններով նախաղուշացնում էր այս գժբաղկ մարդկանց արած խարդախութիւնների մասին, որոնք աշխատում էին մեղմացնել բազկի գառնութիւններ: Երբ որ մտան Պերիգորցի արրան, Կանդիտն ու Մարտինը, ոչ ոք չիերկացաւ ահղից, չբարեկց նրանց և մինչև անդամ չնայից նրանց վրայ. բոլորն էլ զբաղուած էին իրանց խաղաթղթերով: Տիկին բարօնէսս Տունդեր-Տին-Տրոնկը շատ աւելի բաղաքավարի էր», մտածեց Կանդիտը:

Աբբան մօտեցաւ մարքիզուհուն և ականջին փսփսաց. նա վեր կացու տեղից, արժանացրեց կանդիտին մի սիրելի ժողովի. իսկ Մարտինին մեծաշուք կերպով գլուխ խոնարհեցրեց և հրամայեց տալ կանդիտին մի սեղան և մի պրակ խաղաթուղի. նա հէնց սռաջին երկու ձհսքում տարուեց յիսուն հազար ֆրանկ. զրանից յետոյ բոլորը ուրախ կերպով նստեցին ընթիթիքի, զարմանալով կանդիտի անտարբերութեան վրայ զէպի տարուած գրամը. պաշտակներից մէկը միւսին ասում էին իրանց գուհին կատուղաթիւնները.—«Սա անպատճառ անզգիական միլորդ կը լինի»: Ընթիթը, ինչպէս Պարիզի ընթիթների մեծ մասը, ոկուտեց լուռթեամբ, յետոյ տեղի ունեցաւ ընդհանուր խօսակցութիւն, որի մէջ անկարելի էր որոշել խօսքերը, մեծ մասամբ անձունի հանաքնները, բամբասանները, մի քիչ քաղաքականութիւնից և մեծ մասը չորաբանութիւն. խօսեցին մինչև անգամ նոր գրքերի մասին: Կարդացին էք գուք հարցրեց Պարիզորցի արբան, աստուածաբանութեան գոկտոր Գոշմի վիստասանութիւնը»: «Եյո,—պատասխանից մէկը, բայց ևս չգարողացայ նրա վերջն առնել՝ Մեզնում անհեթեթ գրքերն անթիւ են, բայց եթէ բոլորն ի միասնին վերցնենք, այնուամենայնիւ շին հաւասարութիւնուածաբանութեան դոկտոր Գոշմահ անմտութեան հետ: \*)» Ես այն ասուին կշտացել եմ անհամար զգուելի գրքերից, որոնք ողողել են ամբողջ տշխարհքը, որ սկսել եմ խազալ «իմարաւոն»: Իսկ ի՞նչ կատար գուք աւագարկաւակ Տրուբէի խառնուրդի մասին, հարցրեց արքան: Ա՛խ, այդ ի՞նչ ձանձբալի մահկանացու է: — ասաց տիկին Պարուինիսակը, — ի՞նչպէս հետարքբութեամբ նա բարզարանում է այն ինչ որ բոլորին վարուց յայտնի է: Ի՞նչպէս ծանրակշիռ կերպով մեկնում է այն որ արժանի չէ ոչ մի ուշադրութեան. ի՞նչպէս տիմար կերպով իւրացնում է ուրիշի միտքը: Ի՞նչպէս փաշցնում է նա այն ինչ որ ուրիշներից դողանում է: Ի՞նչ զգուելին է, բայց նա այլ ևս ինձ չի զգուեցնի. բաւական է աւագ սարկաւագի գրքից մի քանի երես կարդալ:

Սեղանին նստած էր գրականութեան մէջ հմուտ մի դիտնական: Նա հաստատեց մարքիզուհու խօսքերը: Սկսեցին խօսել ողբերգութիւնների մասին, տանտիկինը հարցրեց, թէ ինչու մի քանի ողբերգութիւնների նայել կարելի է բայց կարդալ չի կարելի: Հմուտ գրականագէտը հիանալի կերպով բացատրեց,

\*) Նա գրեց մի վառ շաբադրութիւն հետեւալ վերնազրով. Նամակներ մեր ժամանակի մի քանի շաբադրութիւնների մասին: Նրան տուին արքայութիւն և նա աւելի առատ վարձատրուեց քան եթէ գրած լիներ «Օքինաց Հռովին» և վճած լիներ զիշերահաւասարի ինդիրը:

թատերգութիւնը կարսդ է լինել մի քիչ հետաքրքիր, բայց չունինալ ոչ մի արժանաւորութիւն. նա մի քանի խօսքերով ապացուցեց որ բաւական չէ մէջ տեղ բերել մի կամ երկու գրութիւններ, ինչպիսիք պատահում են վէպերի մէջ և միշտ հանգիսականներին հիացնում են. պէտք է միշտ մի նոր բան առել, առանց մի տարօրինակ բան առելու. պէտք է երբեմն խօսել բարձր նիւթերի մասին, բայց խօսել միշտ ընական կերպով. պէտք է զիտենալ մարդկային սիրտը և ստիպել նրան խօսելու. պէտք է լինել մեծ բանաստեղծ և միհնոյն ժամանակ պէտք է, որ թատերգութեան մէջ ոչ մի գործող անձն բանաստեղծ չերևի, պէտք է գերազանց կերպով իմանալ լեզուն, զիտենալ կատարելապէս ուղիղ և ներդաշնակ գրել, բայց երբէք միտքը չզոհել հանգը տեղը բերելուն: Ով որ չի պահպանի այս բոլոր կանոնները կարող է գրել երկու-երեք կատակերգութիւն, որոնց կը ծափանարեն թատրոնում, բայց երբէք չի դասուի լաւ գրողների շարքում. լաւ ողբերգութիւններ շատ քիչ կան. մի քանիսը լաւ գրուած և լաւ հանգաւորուած տրամախօսութիւն (ճալօրց) են, միւսները քնեցնող քաղաքական դասողութիւններ և կամ հակակրելի չափալանցութիւններ, ոմանք էլ մոլեգին ցնդարանութիւններ բարբարոսական լեզուով, կցկուուր խօսակցութիւններ, երկար ներբողներ աստուծներին, մարդկանց հիւ խօսել չկարողանալու պատճառով, ստայօդ ասացուածներ և փրուոսց բնողհանուր խօսքեր:

Կանդիտն ուշադրութեամբ լսում էր այս գատողութիւնները, կազմեց բարձր կարծիք խօսողի վրայ, մարքիուհին հոգ տարաւ նրան իր մօտ նստեցնելու: Նա թեքուեց գէպի տիկինը և համարձակուեց հարցնել շնչնջիւնով թէ ով է այս պարոնը որ այսպէս լաւ տանում է: «Սա զիտնական է, —պատասխանեց տանտիկինը. —Նա երբէք թուղթ չի խաղում. արքան բերում է նրան երբեմն ընթրիքի, նա երեսի մասնագէտ է ողբերգութիւնների և գրքերի և ինքն էլ գրել է մի ողբերգութիւն, որին թատրոնում շուացընել են և մի գիրք, որից իր գրավաճանի խանութից դուրս միայն մի օրինակ են տեսնել, այն օրինակը, որ նա ինձ էր նուիրել»: Մեծ մարդ, ասաց կանդիտը. —սա մի երկրորդ Պանդոսն է:»

Կանդիտը դառնալով նրան տասց. «Յարգելի պարոն, ձշմարիտ չէ արգեօք որ ամէն բան դէպի լաւն է զնուում ինչով նիւթական նոյնպէս և բարեյական աշխարհում, և որ ոչ մի բան ուրիշ կերպ չէր կարող լինել»: «Եերեցէք, յարգելի պարոն, —պատասխանեց նրան զիտնականը, —ես առենսկն այդ կարծիքին չեմ. —ընհգակառակը ես գոնում եմ որ մեր մէջ

տմեն բան թարու ու շիտակ չէ գնում, որ ոչ չոք չգիտէ ոչ իր տեղը, ոչ իր կոչումը, ոչ այն թէ ի՞նչ է անում և ոչ էլ այն, թէ ի՞նչ պէտք է անեն և բացի ընթրիքից, որը անցնում է բաւականին ուրախ և որտեղ ըստ երկոյթին համերաշխութիւն է տիրում, բոլոր մնացած ժամանակն անցնում է անվայիլ վիճաբանութիւններով. եանսինիսաները կուռմ են մօլինիսաների հետ, պարլամենտը եկեղեցու հետ, հեղինակներն հեղինակների հետ, պալատականները պալատականների, ֆինանսիսաները՝ ժողովրդի, տղամարդիկը՝ կանանց և աղդականներն աղգականների հետ. յաւիտենական կուր է»:

Կանդիտը պատասխանեց: Ես տեսել եմ աւելի վատ բաներ, բայց մի փիլիսոփա, որը յետոյ գիքաղգարար կախաղան բարձրացաւ, ինձ ասում էր որ այս բոլորը գերազանց է, և որ այս բաները միայն ստուերներ են պատկերի վրայ»: «Չեր այդ կախուերլուն ծաղրելիս է հղել աշխարհը, ասաց Մարտինը, —այդ ստուերները սուրսափելի բծեր են»: «Մարդիկն են բծեր զցում, —ասաց Կանդիտը, —ըստյ ուրիշ կերպ չի կարող լինել», «Ուրիմն այդ իրանց մեղքը չէ, ասաց Մարտինը: Խաղացողների մեծ մասը չէին լսում այս խօսակցութիւնը և խում էին, Մարտինը դատում էր գիտականի հետ, իսկ Կանդիտը պատում էր տանտիկնոջն իր արկածներն»:

Ընթրիքից յետոյ մարգիզուհին տարաւ Կանդիտին իր առանձնասենեեակը և նոսկեցից նրան բազմոցի վրայ: «Այսպէս ուրեմն զուք շարունակում էք խելացնոր կերպով սիրել օրիորդ կունիգունդա Տունդիր. Տիս-Ճըօնկին. —«Այս, տիկին»,» պատասխանեց Կանդիտը: Մարդիկուհին նկատեց նրան քնքոյշ ժպիտով. —«Դուք պատասխանում էք ինձ, ինչպէս խսկական երիտասարդ վեստֆալացի. Փրանսիացին ինձ կասէր. —«Ուղիղ է, ես սիրում եմ Կունիգունդին, բայց վախենում եմ, որ ձեզ տեսնելով դադարիմ նրան սիրելուց: «Այս, տիկին, —ասաց Կանդիտը, —ես կը խօսեմ այնպէս, ինչպէս զուք կը հրամայէք. —«Չեր սէրը դէպի նա—ասաց մարգիզուհին—սկսուեց այն բոպէից, երբ դուք լարձրացրիք նրա թաշկինակը. ես ցանկանում եմ որ դուք վերցնէք իս սրունքի կապը. —» «Երոլոր սրտէ», ասաց Կանդիտն և վերցրեց: «Բայց ես ցանկանում եմ որ դուք նորից կատէք» ասաց տիկինը, և Կանդիտը նորից կապեց: »Դուք օտարական էք, —ասաց մարգիզուհին, —ես ստիպում եմ իմ Պարիզի սիրահարներիցս շատերին 15 ական օրով տանջուել, բայց ձեզ անձնատուր կը լինեմ հէնց առաջին գիշերը, որովհետեւ պէտք է հիւրասիրութիւն ցոյց

տալ մի վեստֆալացի երիտասարդի:» Տեսնելով երիտասարդ օտարուկանի մատների վրայ երկու ահագին աղամանդներ, զեղեցկուհին սկսեց այնպէս պարզաբար հիանալ նրանցով, որ Կանդիտի մատներից նրանք անցան մարքիզուհու մատները:

Վերադառնալով իր Պերիզորցի արրայի հետ, Կանդիտը զգաց խղճի խայթ Կունիգունդին զաւաճանելու պատճառով: Արբան ցաւակից եղաւ նրա վշտին, նրան քիչ բաժին հասաւ այն յիսուն հաղարից, որ Կանդիտը տարուել էր և այն երկու աղամանդների արժողութիւնից, որոնք աւելի շուտ դուրս էին կորզած քան թէ ընծայուած: Նա ցանկանում էր աւելի շահուել Կանդիտի հետ ունեցած ծանօթութիւնից: Նա շատ խօսեց նրա հետ Կունիգունդի մասին, և Կանդիտն ասաց նրան որ ներոզութիւն պէտք է խնդրի իր գեղեցկուհուց անհաւատարմութեան համար, երբ որ նրա հետ Վենետիկում տեսանուեն:

Պերիզորցին կրկնապտկեց իր քաղաքավարութիւնն և ուշադրութիւնը, նա բնիշարար մասնակից էր լինում ամէն մի բանի ինչ որ Կանդիտն խօսում էր, անում էր և պէտք է անէր:

«Ուրեմն,—ասաց նա Կանդիտին, —ձեր տեսակցութիւնը նրա հետ նշանակուած է Վենետիկում:» «Այո, պարսն արբա, —ասաց Կանդիտը. —ինձ անհրաժեշտ է զնալ Կունիգունդի մօտ». և ոգևորուելով իր սիրոյ առարկայի մասին խօսելու գոհունակութիւնը, նա սովորականին համաձայն պատմեց այս նշանաւոր վեստֆալուհու հետ պատահած արկածների մի մասը: «Անկառկած օրիորդ Կունիգունդան, —ասաց արբան շատ խելացի է և զրում է ձեղ յափշտակիչ նամակներ:» Ես երբէք նրանից նամակ չեմ ստացել, —ասաց Կանդիտը—որովհետեւ դէպի նա ունեցած սիրոյ համար զղեակից արտաքսուելով, չը կարողացայ նրան զրել. շուտով յետոյ իմացայ որ նա մեռել է, յետոյ գտոյ նրան և գարձեալ կորցրի: Իսկ հիմա ուղարկեցի նրա մօտ երկու հաղար հինգ հարիւր մզոն տարածութեամբ առանձին բանքեր, որից սպասում եմ պատասխանի: Աբբան ուշադրութեամբ լոււմ էր և երեսում էր որ ընկաւ մտածմունքի մէջ: Շուտով նա հրաժեշտ տուեց օտարականներին, քնքշաբար նրանց համբուրելով: Միւս օրը զարթելով, Կանդիտը ստացաւ նամակ հետեւալ բովանդակութեամբ:

«Թանկագին սիրեցեալդ իմ, ահա արդէն ութ օր է որ ես այս քաղաքում հիւանդ ընկած եմ. ես իմացայ որ դուք այստեղ էք: Եթէ ես կարողանայի շարժուել, ես կը թուչէի գէպի ձեր զիրկը: Ես գիտեմ որ դուք անցել էք Բորդոյով. զո թողեցի այստեղ հաւատարիմ Կակամբօին և պառաւին,

որոնք պէտք է շուտով իմ յետեից գային: Բուէնոս—Այրենի նահանգապետն առաւ բոլորը ինչ որ ունէինք, թողնելով սակայն ինձ մօտ ձեր սիրտը: Եկէք, ձեր ներկայութիւնը կը վերադարձնի ինձ իմ կեանքը, եթէ միայն չեմ մեռնի ուրախութիւնից:»

Այս անսպասելի սիրալիր նուռակլով կանգիտին աննկարագրելի հիացմունք պատճառեց, իսկ թանկազին կունիզունզի հիւանդութեան լուրն նորից գցեց նրան ծանր վշտի մէջ: Այս երկու զգացմունքներից ալեկոծուելով, նա հաւաքեց իր ոսկիներն և թանկազին քարերն և ուղերուտեց Մարտինի հետ այն հիւրանոցն, որտեղ գանւում էր Կունիզունզան: Նա մանում է, զողղողալով յուզմունքից, նրա սիրտը բարախում է. ձայնը կորում է. նա կամենում է բարձրացնել անկողնի վարագոյրը, ուզում է հրամայել որ ճրագ բերեն. «Չանէք այդ բանը, ասում է նրան հիւանդապահ կինը.—լոյսը նրան կը սպանի». և նա շտապով ծածկում է վարագոյրը. «Սիրելի Կունիդունդա,—ասում է կանգիտն լաց լինելով,—ի՞նչպէս էք դուք ձեզ զգում. Եթէ դուք չէք կարող ինձ տեսնել, դոնէ խօսեցէք հետքամ:» Նա չի կարող խօսել ասաց հիւանդապահ կինը: Այդ ժամանակ հիւանդը դուրս հանեց իր թիլիկ ձեռքը, որը կանգիտը երկար ժամանակ ողողում էր արտասունքներով, և յետոյ լցնում է ձեռքը բրելիանստներով, թողնելով բացի դրանից բաղկաթոոի վերայ մի տոպրակ ոսկի:

Այս հիւացմունքների ժամանակ ներս է մտնում ժանդարմ Պիրոգորցի արրայի և մի խումբ սատիկսնութեան զինուորաներով: «Այս են ուրեմն այն երկու կասկածելի օտարականներն», ասում է նա և հրամայում իսկոցն ըսնել և պատուիրում է իր քաջերին քաշ տալ նրանց բանտը: «Էլզորագում այդպէս չեն վարում օտարականների հետ», ասաց կանգիտը: «Եյժմ ես աւելի կը յարուիմ մանիքեցոց դաւանութեանը, բան թէ առաջ», ասաց Մարտինը: «Սակայն այս ուր էք տանում մեղ, պատուելի պարոն, հարցրեց կանգիտը: «Բանտ» պատստիանեց ժանդարմը:

Մարտինը զինուելով իր սառնարիւնութեամբ, մտածեց որ մի խարերայ կին իրան կունիզունզի տեղն է գրել, և որ պարոն Պիրոգորցի աբբան խաբերայ է, որ շտապել է օգտուելու կանգիտի անփորձութիւնից, և ժանդարմը նոյնպէս խաբերայ է, որից հեշտ է ազատիլը:

Կամենալով խոյս տալ զատի ենթարկուելուց և իսկական կունիզունզային տեսնելու վափագով տոգորուած, կանգիտը Մարտինի խորհրդով իր միտքը լուսաւորելով, առաջարկեց Սեպտեմբեր, 1906.

ժանդարմին երեք փոքրիկ աղամանդներ, իւրաքանչիւրը երեք հազար պիստօլ արժէքով։ «Օ՛, ողորմած տէր,—ասաց այս զողանջող և որոտացող էալը.—թէկուզ կատարած լինէիք ամէն տեսակ ոճքագործութիւններ, բայց այնու ամենայնիւ գուք ամենաազնիւ մարդն էք աշխարհում. երեք աղամանդներ, երեք հազար պիստօլ արժէքով իւրաքանչիւրը։ Ողորմած տէր, ես ոչ թէ ձեզ բանա կը տանեմ, այլ կեանքս պատրաստ եմ ձեղ համար զոհելու։ Այստեղ ձերբակալում են բոլոր օտարականներին. բայց ես ձեր գործը կը հոգամ. ես ունիմ եղբայր Դիէպպում, Նորմանդիայի մէջ. ես ձեզ կը տանեմ նրա մօտ և իթէ զուք կարող էք տալ նրան մի քանի աղամանդներ, այն ժամանակ նա ձեր մտախն ինձանից աւելի հոգս կը տանի։

«Ի՞նչո՞ւ են ձերբակալում օտարականներին», հարցրեց Կանդիտը. այստեղ Պիրիզորցի աբրան խաւուեց խօսակցութեան մէջ և ասաց. «Երա համար որ մի խեղճ մարդ Արտուրյանց\*) ականջ զրեց զանազան յիմարութիւնների, որը զրդեց նրան վախեցնելու մի պարսնի, ոչ այսպէս ինչպէս վախեցրին 1610 թ. մայիսին\*\*), այլ ինչպէս 1594 թ. գելտեմբերին\*\*\*) և ինչպէս վախեցրել են ուրիշներին ուրիշ տարինում և ուրիշ տմիսներում։»

Ժանդարմը պատասխանեց թէ բանս ինչումն է։ «Ի՞նչպէս է, բացականչեց Կանդիտը.—Ի՞նչ զործեր են կատարելու ժողովրդի մէջ, որը միշտ երգում է և պարում։ Ի՞նչպէս շուտով դուրս գամ այս երկրից, որտեղ անմիտները զայրացնում են վագրերին։ Իմ հայրենիքում ես տեսել եմ արջեր, իսկ մարդիկ միմիայն ելլորագոյում։ «Իսէր Աստծոյ, պարոն ժանդարմ, տարէք Վենետիկ, որտեղ ես պէտք է սպասեմ կունիգունդին։» Ես կալուզ իմ ձեղ տանել միմիայն Նորմանդիա», պատասխանեց ժանդարմը։ Նա հրամայեց նրա շղթաները քանդիլ, տսելով որ սխալուել է, և ուզարկելով զինուորներին, տարաւ Մարտինին և Կանդիտին Դիևզով և թողեց նրանց իր եղօր մօտ։ Մի փոքրիկ հոլլանդական նաւ կանգնած էր նաւահանգըստում։ Նորմանդացին երեք ուրիշ աղամանդների շնորհիւ դարձաւ աշխարհիս մէջ ամենապատրաստակամ մարդը, նա նստեցրեց Կանդիտին և նրա մարդկանցը նաւի վրայ, որ գնում

\*) Դամէէն (Կեօշնի հրատ.)

\*\*) 14 Մայիսի 1610 Բավելիակն սպանեց Հենրիխ IV (Փր. հրատ.)

\*\*\*) Ժան-Շատէյի անվաս փոքրձը նոյն թագաւորի կեանքի գ' մ Փր. հրատ.)

Էր Անդիքա—դէպի Պողտսմուտ։ Սա Վեճնետկի ճանապարհից գուրս էր, բայց Կանդիքախն թւում էր, որ գժողքից է ազատուել և նա ովասում էր ամենաառաջին դէպըում ուղղենորուել Վեճնետիկ։

## ԳԼՈՒԽ ԽXIII

«Ո՞վ Պանզլոսս, Պանզլոսս, ո՞վ Մարտին, Մարտին, ո՞վ իմ թանկապին կունիզունդա։ Ի՞նչ է ուրեմն այս աշխարհը։ Ասում էր Կանդիքան հոլլանդական նաւի վրայ։ «Մի անմիտ և զգուելի բան», պատասխանեց Մարտինը։ «Դուք Անդիքայի հետ ծանօթ էք. մ՞թէ այնուել էլ նոյնպէս յիմար են ինչպէս և Ֆրանսիայում»։ «Այստեղինը ուրիշ տեսակ յիմարութիւն է, —պատասխանեց Մարտինը։—Դուք զիտէք, որ այս երկու ազգերը կուռում են իրար հետ մի քանի դեսեատին ձիւնավատ տեղի համար Կանադայում և ծախսում են այս փառաւոր պատերազմի վրայ չափից գուրս աւելի շատ քան թէ ամրող Կանադան արժի։ Իս ունեցած զուզնաքեայ զիտութիւններս թոյլ չեն տալիս ինձ ճշտութեամբ վճռելու թէ այս երկու երկրներից որի մէջ խելազարներ չատ կան. միայն զիտեմ, որ այդ մարդիկը, որոնց պէտք է տեսնենք, սարսափելի զայրացկոտ են»։

Այսպէս խօսակցելով նրանք հասան Պողտսմուտ։ Ամբոխը լցրել էր ամբողջ ափը, և հետաքրքրութեամբ նայում էր աչքերը կապած մի գեր մարդու վրայ, որը չոքած էր մի զինուուրական նաւի տախտակամածի վրայ։ Նրա հանդէպ կանգնեցրած չորս զինուուրները հրացաններն արձակեցին նրա ճակատին—իւրաքանչիւրն հանդարտութեամբ երեք-երեք գնդակ մտցնելով նրա գանգի մէջ»։

Ամբոխը ցրուեց, շատ գոհ տեսարանից։ «Այս ի՞նչ է կատարւում, ասաց Կանդիքա.՝ այս ո՞ր դեն է ո՞ր ամենուրեք տիրապետում է»։ Նա հարցրեց թէ ո՞վ էր այն հաստ մարդը, որին այդ բուդիւն այնպիսի հանդիսով սպանեցին։ «Սա մի ծովագետ էր», պատասխանեցին նրան։ «Ի՞նչ բանի համար սպանեցին այդ ծովագետին»։ «Նրա համար, պատասխանեցին նրան, —որ նա քիչ մարդ սպանել տուեց. նա կուռում էր Փրան-

\*) Ծովագետ Բինգը. պ. Վոլթերը չէր ճանաչում նրա և ամեն միջոց գործ զրեց նրան ազատելու համար։ Նրան միատեսակ զգուելի էին ինչպէս քաղաքական նոյնպէս և աստուածաբանական անդիտութիւնները. նա գիտէր որ Բինգը զնի զնաց անդիքական մինիստրների փառասիրութեան, որունք ցանկանում էին իրանց գիրքը պահպանել։

սիական ծովագետի հետ, և դաել են որ նա բաւականաչափ մօտ չի զնացել նրան»: «Բայց—ասաց Կանդիտը—չչ որ Փրանս-սիական ծովագետն էլ նոյնպէս չեր մօտեցել անգլիականին, ինչպէս և անգլիականը Փրանսիականին»: «Անշուշտ, —պատասխանեցին նրան, —բայց այստեղ աւելորդ չեն համարում երբեմն սպանել մի ծովագետին, միւսներին քաջալերելու համար:»

Կանդիտն այնպէս շշմել էր և այնքան զայրացել էր այն բաներից ինչ որ տեսել էր և ինչ որ լսել էր, որ չը կամեցաւ մինչեւ անգամ տիֆ գուրս գալ և հենց տեղն ու տեղը պայմանաւորւեց հոլլանդական նաւի կատվատանի հետ (ենթարկելով իրեն կողոպտուելու վտանգին, ինչպէս Սուրենամում) առանց դանդաղելու նաւել Վենետիկ:

Կապիտանը երկու օրից գուրս եկաւ: Նաւեցին Փրանս-սիական ափերով, անցկացան Լիսարօնի դէմից, որտեղ Կանդիտը սարսուռ զգաց: Նաւը մտաւ ջրանցքը և Միջերկրական ծովը և վերջապէս հասաւ Վենետիկ: Փառք Աստուծոյ, —ասաց Կանդիտը, գրկախառնելով Մարտինին. —այստեղ զարձեալ կը տեսնեմ գեղեցիկ Կունիգունդին: Ես հաւատում եմ Կակամբօին, ինչպէս ինքս ինձ: Ամէն բան լաւ է, ամէն բան գնում է գեղեցիկ, ամէն բան գնում է այնքան լաւ, որ աւելի չի կարելի պահանջել:

## ԳԼՈՒԽ ՀՀԻԿ

Վենետիկ գալով նա իսկոյն սկսեց որոնել Կակամբօյին բոլոր գինետներում, սրճարաններում և հասարակաց աներում և ոչ մի տեղ նորան չէր գտնում: Նա ամեն օր ուղարկում էր բոլոր նորեկ նաւերն ու նաւակներն նայելու, Կակամբօն չէր երևում: «Ի՞նչպէս, —ասաց Կանգիտաը Մարտինին. —ես կարողացայ Սուրենամուց Բորդո գնալ, Բորդոյց Պարիզ, Պարիզից —Դիպու, Դիպուից—Պօրտուտ, նաւեցինը Պորտուզալիայի և Իսպանիայի ափերի մօտով, անցանք Միջերկրական ծովը, արդէն մի քանի ամիս է Վենետիկում ենք, —բայց գեղեցիկ Կունիգունդան չկայ ու չկայ: Նրա փոխարէն ինձ պատահեց մի կեղտոտ անառակունի և պերիգորցի աբբան: Կունիգունդան երեկ մեռել է և ինձ էլ մնում է միայն մեռնել: Ա՛խ, լաւ կը լինէր որ ես մնայի երկրային դրախտում, ելդորադօյում, քանի թէ վերադառնյափ այս անիծուած եւրոպան: Այն, գուք ճշմարիտ էր իմ թանկագին Մարտին, այստեղ ամէն-ինչ խարեցայութիւն է, ամէն-ինչ չարութիւն:»

\* Նա ընկաւ մուսյլ մատածմունքների մէջ և ամենակին չէր մասնակցում «alla moda» օպերային և ոչ բարիկենդանի միւս ուրախութիւններին. ոչ մէկն մի մազաղափ անգամ նրան չէր գայթակղեցնում: Մարտինն ասաց նրան: «Սակայն ինչքան պարզամիտ մարդ էք եղել: Դուք երևակայում էք, որ ձեր մետիւը գրպանում հինգ-վեց միլիոն ունենալով կը գնայ աշխարհի միւս ծայրը որոնելու ձեր սիրուհուն և կը բերի Վենետիկ ձեզ յանձնելու: Նա իրան կը վերցնի, եթէ գոտած լինի, իսկ եթէ ոչ, մի ուրիշին կառնի: Խորհուրդ եմ տալիս ձեզ մօռանալ թէ ձեր կակամք ծառային և թէ ձեր կունիդունդա սիրուհուն:» Մարտինի խօսքերը մխիթարական չէին: Կանդիտի վիշտը քանի գնում մեծանում էր, իսկ Մարտինը չէր դադարում ապացուցանելու, որ երկրի վերայ շատ քիչ առաքինութիւն և շատ սակաւ բաղդաւորութիւն կայ. գուցէ բացի ելգորագոից, որտեղ ոչ ոք չի կարող մտնել:

Վիճելով այս երենելի առարկայի մասին և սպասելով Կունիգունդային, Կանդիտը տիսաւ սուրբ Մարկոսի հրապարակի վերայ մի երիտասարդ տէատինցու, որ կանգնած էր թիւ-թերի մի աղջկայ հետ: Տէատինցին մի թարժ, թխլիկ, հաստ ու պինտ արեղայ էր, նա ունէր կենդանի աչքեր, ինքնավստահ կերպարանք և համարձակ քայլուածք: Աղջիկը շատ գեղեցիկ էր և մի ինչ որ երգ էր երգում. նա նայում էր իր տէատինցուն սիրավառ աչքերով և մերթ ընդ մերթ կսմթում էր նրա հաստ թշերը: «Համաձայնուեցէք, — ասաց Կանդիտը Մարտինին, որ որանք գոնէ բաղդաւոր են»:

Մինչեւ այժմ ես հանգիպում էի բոլոր մարզաբնակ երկրներում, բացի Ելգորագոյից, միմիայն զժբախտների. բայց նայեցէք այս աղջկան և այս տէատինցուն. գրաղ կը գամ, որ սրանք ամենաբաղդաւոր էտիներեն են:» Ախոկ ես կը երաշխաւորեմ որ ոչ, ասաց Մարտինը: «Հրաւիրենք նրանց ճաշելու, — ասաց Կանդիտը, — և դուք կը տեսնէք, թէ որքան եմ արդեօր ես սիալւում:»

Նա մօտեցաւ, բարեկեց նրանց և հրաւիրեց իւր մօս կատելիօն ճաշի, այսինքն մակարոն, լուբարդական կաքաւներ, ձկնկիթ ուտելու և մօնտէ պուլչիանսօի, լակրիմկրիստի, Կիպրոսի և Սամօսի գինիներ խմելու: Աղջիկը կարմրեց, տէատինցին ընդունոց նրա տուաջարկութիւնը, և աղջիկն հետեւց նորան, նայելով Կանդիտի վրայ տրտասուալից աչքերով, զարմանքով և յուզմունքով: Մասնելով Կանդիտի սենեակը, նա ասաց. «Միթէ, պարոն Կանդիտ, դուք չէք ճանաչում Պակետտին:» Այս խօսքերի վրայ, Կանդիտը, որ մինչև այժմ նրա

վրայ ուշադրութիւն չէր գարձրել, որովհետև մտածուս այն Կունիգունդի վրայ, գարձաւ դէպի նա. «Աւազ, խեղճ աղջիկ, ուրեմն այդ գուք էիք գոկառը Պահպասսին գցել այն դրութեան մէջ, ինչպէս որ ես նրան գտայ»:

«Աւազ, պարոն Կանդիտ, ես էի, — պատասխանեց Պակեանն. — ես տեսնում եմ որ ամեն բան ձեզ յայտնի է: Ես իմացայ, այն բոլոր գարճուրելի գժբախտութիւնների մասին, որ պատահել է տիկին Բարոնեսսի և գեղեցիկ Կունիգունդի տանը: Հաւատացնում եմ ձեզ, որ իմ վիճակս դրանից պակաս ողբավի չէր: Այն ժամանակ երբ գուք ինձ ճանաչեցիք, ես բոլորովմին անմեղ էի: Մի քրանսիական կրօնաւոր, իմ խոստովանահայրս, հեղառութեամբ ինձ զայթալղեցրեց: Հետեանքը զարհուրելի էր. ես ստիպուած էի թողնել ամրոցը այն գէպքից յետոյ, երբ բարոնը արաւաբսեց ձեզ յետոյքիդ ուժեղ կիցեր տալով: Եթէ մի հմուտ բժիշկ չխղճար ինձ վրայ, ես կը մեռնէի: Մի քանի ժամանակ ես շնորհակալութեան զգացմունքից զրգուած դարձայ նրա սիրունին: Նրա կինը մի կատաղի խանդոտ կին էր և ամեն օր անխղճաբար ծեծում էր ինձ, նա կարծ խօսրով մի ֆուրեա էր: Բժիշկը ըոլոր մարդկանցից ամենաանճունին էր. իսկ ես ամենաամբաղջը ըոլոր էակներից, որովհետև ինձ ծեծում էին մի մարդու դաստիառվ որին ես չէի սիրում: Բայց զիտքք պարոն Կանդիտ, քմահամոյ կնոջ համար որքան վտանգաւոր է բժիշկի ամուսին լինելը: Կնոջ վարմունքից բժիշկը համբերութիւնից զուրս գալով, մի անգամ նրան տունց թեթև մրսկու դէմ մի այնպիսի զօրեղ գեղ, որ երկու ժամից յետոյ կինը մնուաւ սարսափելի ջղաճգութիւններով: Տիրուհու ազգականները աիրոջս դէմ քրէական դատ բաց արին, նա փախաւ, իսկ ինձ բանտարկեցին: Իմ անմեղութիւնը ինձ չէր ազատի, եթէ ես մի քիչ զեղեցիկ չլինէի: Դատաւորն արձակեց ինձ այն պայմանով որ ինքը բանի բժիշկի տեղը: Շուտով ես դուրս քշուեցի դատաւորի միս սիրունոց և արտաքսուեցի ոչ մի վարձատրութիւն չստանալով և ստիպուած եղայ շարունակել այս զղուելի արհեստը, որը ձեզ տղամարդոցդ երկում է այնքան զուրեկան, իսկ մեզ համար աղքատութեան մի ահազին անդունդ է: Ես սովորուեցի Վենետիկ արհեստս բանացնելու: Այս, պարոն Կանդիտ, եթէ դուք կարողանայիք երեակայել, թէ ինչ ասել է ստիպուած լիոնել փայփայելու քաւթառ վաճառականին, փաստաբանին, արեղային, նաւատառուն և վանահօրն, ենթարկուել ամեն տեսակ վիրաւորանքի և անպատութեան, յաճախ լինել անհրաժեշտ կարիքի մէջ քրէհով վերցնելու մի շրջապահու, որ յետոյ մի

ողիէ այլանդակ հրէշ բարձրացնի ու շուռ տայ: Յաճախ ուստահում է, որ այսօր մէկն ընծայում է մի բան, իսկ վազը մի ուրիշը զողանում է: Շատ անգամ ստիպուած ևս լինում ուստիկանների ձեռքից ազատուելու համար փրկանը տալ. իսկ ապագայում սպասում է սարսափելի ծերութիւնը, հիւանդանոցը և փսեացի վրայ մեռել. ընդունեցէք որ ես աշխարհում ամենալժեազդ արարածներից մէկն եմ»:

Պակետան, տուանձնասինեակում նստած, այսպէս բաց էր անում իր սիրտը Մարտինին բարի Կանդիտի ներկայութեամբ, որը ասաց Կանդիտին. «Տեսում էք, դրազի կէսը ևս արգէն տարել եմ»:

Այդ ժամանակ եղբայր Ժերօֆլէն նստած էր սեղանաւանը և սպասելով ճաշին գարեջուր էր կոնծում: «Ապա էս լուչոլէս է որ, ասաց Կանդիտը Պակետախն. — Երբ ևս ձեզ պատահեցի դուք այնպէս գոհունակ և ուրախ կերպարանոք ունէիք: Դուք երգութեամբ: Դուք երեցաք ինձ այնքան բազգաւոր, բայց դուքս է գալիս որ ձեզ համարում էք դժբազդ»: — Ա՞խ, պարսն Կանդիտ, — պատասխանեց Պակետան, — հէնց այս արհեստի ամենազդախաւոր անախորժութիւններից մէկն էլ դրանումն է կայանում: Երեկ մի սպայ կողովտեց և ծեծեց ինձ, իսկ այսօր ևս պէտք է ուրախ երեխմ, որ դուք գամ կուսակցոնին: Կանդիտը չկամեցաւ այլիս նրան լսել. նա խոստովանուեց որ Մարտինն ուղիղ էր ասում: Նոտեցին սեղան Պակետախն և տէատինցու հետ. ճաշը բաւական ուրախ էր և վերջում բոլորը բացուեցին և սկսեցին խօսել անկեղծօրէն: «Հայր սնուրը, — ասաց Կանդիտն աբեղային, ինձ թւում է որ դուք նախանձելի վիճակ ունիք. տողջութիւնը վայլում է ձեր դէմքի վրայ և բազգաւորութիւնը արտացոլանում է նրանից, դուք արձանաւու համամ դուք ունիք ամենազդեցիկ աղջիկ, և ըստ երևոյթին բոլորովին դոհ էք տէատինցու վիճակով»:

«Ա՞խ, յարգելի պարոն, ևս կը ցանկանայի որ ըոլոր տէատինցիները գետինն անցնեէին, — պատասխանեց Ժերօֆլէն: — Ես հարիւր անգամ մտադրուել եմ կը ակ տալ վանքը և լնուգունել թուրքի հաւատ: Երբ ևս տասնմէնդինդ տարեկան էի, ծնողներս ինձ ստիպեցին վրէս զցել այս ատելի փիլոնը, որ թողնեմ բոլոր կարողութիւնս անիծուած մեծ եղբօրս, զրոյը տանի նրան: Նախանձը, կագն ու կոիւը թագաւորում են մեր վանքում: Ուղիղ է, ևս իմ կեանքումս ասել եմ մի քանի վատ քարոզներ, որոնք ինձ մի քիչ դրամ բերեցին, բայց նրանց կէսը գողացաւ փոքրաւորս, իսկ մնացածը ևս ծախում եմ աղ-

ջկների վրայ. բայց երբ ես երեկոյեան վանք եմ մտնում, ես պատրաստ եմ գլուխս պատին խփելով ջնջիւլ, և ճիշտ միեւնոյն են զգում իմ բոլոր միաբանակից եղբայրներս։»

Մարտինը դառնալով Կանդիտին ասաց իր սովորական համբարտութեամբ. «Դէհ, ահա ես ամրող գրադր տարայ։» Կանդիտը տուեց երկու հազար պիաստր Պակետտին և հազար պիաստր հայր Ժէրօֆլէին։ «Հաւատացնում եմ ձեզ,—ասաց նա, —որ սրանով նրանք բաղդառոր կը լինեն։» «Չը կարծիմ, —ասաց Մարտինը. —կարելի է այս պիաստրները նրանց աւելի դժբախտացնեն։» «Ի՞նչ զառնալու է զառնայ, —ասաց Կանդիտը. —բայց ինձ մի բան մխիթարում է. ես տեսնում եմ, որ յաճախ պատահում ես մարդկանց, որոնց ամեննեին չես սպասում, թէ կարող ես պատահել. իմ կարմիր ոչխարս և Պակետտին գտնելուց յետոյ շատ հաւանական է որ գտնեմ և իմ Կունիգունդիս։» «Ի սրտէ ցանկանում եմ, —ասաց Մարտինը, —որ նա ձեզ բաղդառորեցնի, բայց սաստիկ կասկածում եմ։» «Ի՞նչ խստասիրու էք դուք», ասաց Կանդիտը. «Նրանից է որ բաւականին ապրել եմ», պատասխանեց Մարտինը. «Բայց նայեցէք զոնդոլիերներին—ասաց Կանդիտը. —նրանք շարունակ երգում են.» «Բայց դուք չէք տեսնում նրանց տանը, իրանց կանանց և երիխանների հետ։ —Դօժն ունի իր ցաւերը, զոնդուերներն իրանցը։

Թէև ճշմարիտ, ընդհանրապէս վերցրած, զոնդուերների վիճակը գոյմերի վիճակից լաւ է. բայց զանազանութիւնն այնքան աննշան է, որ խօսել անգամ չարժի։»

«Պոկոկուրանտէ սենատորը, որը ապրում է Բրէնտի վրայ զանուած այս հիանալի պալատում, մարդավարի ընդունում է օտարականներին. ասում են, որ այս մարդը ոչ մի վիշտ չէ կրել, —ասաց Կանդիտը. «Ծատ կը ցանկայի տեսնել այլպիսի մի հաղուազիւս արարած,» ասաց Մարտինը. Կանդիտան իսկոյն ուղարկեց Պոկոկուրանտէի մօտ, թոյլտութիւնն ինդրելու հետևեալ օրը նրան ներկայանալու։

### ԳԼՈՒԽ ՀՀՎ.

Այցելութիւն վենետիկեցի վաճառական սինեօր Պոկոկուրանտէին։

---

Կանդիտան ու Մարտինը նստեցին գոնդոլ և Բրէնտի վերայով մօտեցան ազնուազարմ Պոկոկուրանտէի պալատին. Նրա գեղեցիկ այգիներն զարդարուած էին մարդարիօննէ արձաննե-

րով, սլալատը շինած էր գերազանց ճարտարապետութեամբ։ Տանաէրը, վաթոռն տարեկան մի սարսափելի հարուստ մարդ, ընդունեց երկու հետաքրքիր հիւրերին շատ քաղաքավարի, բայց առանց որևէ է նախապատրաստութեան, որը կանդիտին շփոթեցրեց, բայց Մարտինին դուր եկաւ։

Երկու գեղեցիկ, մաքուր հազնուած աղջիկներ մատուցին շոկոլադ, որը հիանալի փրփրում էր։ Կանդիտը առիթը բաց չթողեց գովելու նրանց գեղեցկութիւնը, դիւրասպասութիւնը և ճարպիկութիւնը։ «Բարի արարածներ են, —ասաց սենատոր Պոկոկուրանտէն։ —Ես երեմն նրանց ինձ հետ պարկեցնում եմ անկողնումս, որովհետեւ ինձ սարսափելի ձանձրացրել են քաղաքի տիկիններն իրանց հաճոյասիրութեամբ, խանդուութեամբ, հպարտութեամբ, հպարտութեամբ, առնէտներով և բանաստեղծութիւններով, որ կամ պէտք է ինքդ զրես կամ ուրիշին պատուիրես նրանց համար զրելու, սակայն այս երկու աղջիկն էլ սկսել են ինձ ձանձրացել»։

Ընթրիքից յետոյ, զրօննելով երկու սլահում, կանդիտը յափշտակուեց մի քանի պատկերների գեղեցկութեամբ։ Նա հարցրեց թէ ինչ չկոլայի են պատկանում առաջին երկու պատկերը։ «Նրանք Ռաֆայէլինն են, —ասաց սենատորը։ —Ես սնափառութիւնից դրդուած գնեցի սրանից մի քանի տարի առաջ շատ թանկ գնով։ Ասում են սրանից աւելի գեղեցիկ պատկերներ Խտալիայում չկան։ բայց նրանք ինձ դուր չեն գալիս. գոյների դասաւորութիւնը սաստիկ մուայլ է, ձևերը քաւականաչափ չեն բոլորակացրած և համարեա չեն պատկերնում. զգեստաւորութիւնը սակաւ է, ընդհանրապէս կարծես գործած լինի։ Մի խօսքով ինչ ուզում են ասեն, ես նրանց մէջ չեմ գտնում բնականին ճշգրիտ նմանողութիւն։ Իսկ ինձ կարող էր դուր գալ միայն այնպիսի պատկեր, որին ես կարուզանայի խսկական բնականի տեղ ընդունել. այդպիսի պատկերներ չկան։ Ես շատ պատկերներ ունիմ, բայց այլ ես նրանց վրայ չեմ նայում։ Մինչև ճաշի նստելը, Պոկոկուրանտէն հրամայեց իրան մի կոնցերտ տալ։ Կանդիտին երաժշտութիւնը շատ հիանալի երեաց։ «Այս աղմուկը, —ասաց Պոկոկուրանտէն, —կարող է ամենաշատը կէս ժամ գուտրճացնել, բայց նրանից աւելլ մարդու ձանձրացնում է, թէն ոչ ոք այդ բանը չի խոստովանում։ Ներկայումս երաժշտութիւնը դասել է գըտար եղանակներ գուրս բերելու մի արտեստ, իսկ այն, ինչ որ միայն գտուար է, շուտով մարդու ձանձրացնում է։»

«Կարելի է օպերան ինձ դուր գար, բայց խելքերին

զու տալով նրան մի անձունի բան են դարձել, որը գրգռումէ կայրոյթս: Թող ցանկացողները աչքէ անցնեն վատ ողբերգութիւններն հանդերձ երաժշտութեամբ, որտեղ բոլոր տեսարանները միայն նրա համար են բերուած, որ խելքը փչած տեղը մի բանի յիմար բան երգեն, որոնցով գերասանուհին կարողանայ պարձենալ իր կոկորդով. թեղ, ով կարող է, խելաթուց լինի յափշտակութիւնից լսելով մի որիէ կոտած գերասանի երգողութիւնը կեսարի կամ Կատոնի դերում, նայելով թէ ինչպէս է նա կոտրառելով քաշ գալիս ըեմի զբայ: Իսկ ես վաղուց եմ հրաժարուել այս տխմար բանից որը ներկայումս իտալիայի փառքն է համարւում և որի համար թագաւորներն այնքան թմնեն են վճարում: Կանդիտն սկսեց վիճել այս բանի մասին միայն շատ համեստ կերպով: Մարտինը բոլորովին համակարծիք էր սենատորի հետ:

Նստեցին սեղան և փառաւոր ճաշից յետոյ, անցան գրագարան: Կանդիտը՝ տեսնելով Հոմերոսի շարադրութիւններն հիանալի կազմով, զովեց նորին գերազանցութեան ճաշակը: «Այս գիրքն,—ասաց նա—Գերմանիայի առաջէն փիլիսոփայ մեծ Պանովոսսի բերկրամքն էր»: «Ե՞ն, —ասուաց սան կերպով Պոկոկուրանտէն, —նո ինձ բերկրութիւն չի պատճառում, ինձ էլ ուղում էին համոզել, որ նրա ընթերցումը զուարճութիւն է պատճառում, բայց այս անվերջ պատերազմներն, մէկը միւսի նման, այս աստուածներն, որ միշտ գործում են և բոլորովին ոչինչ չեն անում, այս Հեղինէն, պատերազմի զլխաւոր պատճառն, այն ինչ ամենաչնչին դեր խաղացովը, այս Տրոյան, որ պաշարում են և չեն կարողանում առնել—այս բոլորը ինձ մի մեսելային ձանձրութեան մէջ զցեցին:

Ես հարցըի գիտնականներին, թէ այդ ընթերցանութիւնը ձանձրացնում է նրանց, ինչպէս և ինձ, և բոլոր անկիզծ պատասխան տուողներն խոստովանում էին, որ յիրաւի այդ գիրքը ընկցնում է, բայց անհրաժեշտ է այդ գիրքն ունենալ զրադարանում, որպէս հնութեան յիշատակ, այնպէս ինչպէս պատճառում: Ենթադրութիւնը կամ առաջաւոր գործադութիւնից զուրս եկած զրաժանան:

«Միթէ ձերդ գերազանցութիւնը վիրափիլոսի մասին էլ նոյն կարծիքին է:—Հարցըեց Կանդիտը: Ո՞չ.—պատասխանեց Պոկոկուրանտէն, —ես համաձայն եմ, որ էնէիզի երկրորդ, չորրորդ և վեցերորդ գրքերը հիանալի են, բայց նրա բարեպաշտ էնէյը, ուժեղ կլօնատը և Ալսատ բարեկամը, փոքրիկ Ասքանիսը, յիմար լատին թագաւորը, քաղքենուհի (Անդանակ) Աւմատան և անտանելի Լաւինիան, ձանձրալի և անալի զրուած-

քի գեղեցիկ օրինակներ են: Այս, էլի Տառու աւելի լաւ է, և նոյնպէս Արիօստի քնեցնող հեքիաթները»:

«Համարձակում եմ հարցնելու ձերդ գերազանցութիւնից, —ասաց Կանդիտը, —ինչքան է դուք գալիս ձեզ Հորացիօն:» «Այս, նրա մէջ պատահում են ուղիղ նկատողութիւններ, —ասաց Պոկոլուրանաէն, —որոնցով աշխարհիկ մարդը կարող է օգտուել, արտայայտուած լինելով հակիրճ և եռանդուս ոտանաւորներով, նրանք իրանց իրանց մտարերում են, բայց ինչ մի լաւ բան է նրա՝ ճանապարհորդութիւնը դէախի Բրինդիզի կամ նրա հիւսիսային ճաշի նկարագրութիւնը և ջիբագիւների կոպիտ վէճը, այն է մի ինչ որ Խուալիլի, որի խօսքերը ժահրով լիքն է մի ուրիշ անհատի հիտ, որի հայհոյանքներն էին ինչպէս քացախ: Ես ամենամեծ զգուանքով կարգացի նրա կոպիտ ու տանաւորները պառաւների և կախարգունեների դէմ գրուած, և միթէ կարող են դուք գալ մարդու այնպիսի խօսքեր ինչ պէս նրա խօսքերը իր բարեկամ Մեկնասին, թէ նրա բարձր ճակատը կը գիտչի երկնային լուսաւորներին, եթէ բարեկամը նրան բանաստեղծ խոստովանի: Յիմարներն յտփշտակում են ամէն բանով ինչ որ զբում է նշանաւոր հեղինակը. իսկ հս միայն կարգում եմ իմ բաւականութեան համար և սիրում եմ միայն այն ինչ որ ինձ գուրեկան է,» Կանդիտար, որ մանկութիւնից վարժեցրած էր ոչ մի բանի մասին սեպհական կարծիք չունենալու, սաստիկ զարմացաւ իր բոլոր լսածների մասին: Բայց Մարտինը գանում էր Պոկոլուրանաէի մոքերը բաւականին ուղիղ:

«Բայց ահաւասիկ Ցիցերօնը, —ասաց Կանդիտը, —ես համոզուած եմ որ այս մեծ մարդու արտագրութիւնները դուք միշտ գուարճութեամբ կարգալիս կը լինէք:» «Բնդիակառակը, ամեննեին չեմ կարգում, —իմ ինչ գործն է թէ նա ոլաշտպանում է Թարիբին կամ Կուէնցին: Ես առանց այն էլ շատ փաստեր ունիմ վճռելու, ես կը գերադասէի պարապել նրա փիլիսոփայական շարագրութիւնով, բայց տեսնելով որ նա ամէն բանի մէջ կասկածում է, հղակացրի, որ իմ դիտցածը նրանից պահաս չի, և կարող եմ տգէտ մնալ առանց կողմնակի օգնութեան ևս Քսանեչորս հասար ժողովածու գիտութեանց ճեմարանի. —գոչեց Մարտինը. —Է, կարելի է այսաեղ մի պիտքական բան լինի:» «Կը լինէք. մի բան, եթէ միայն այս դաւզէկութեան հեղինակներից գոնէ մէկը հնարեր, թէ ինչպէս շինել զնդասեկուներ, բայց այս բոլոր գրքերը լցուած են դատարկ համակարգութիւններով և նրանց մէջ վճռական կերպով կարելի է ուսել, որ ոչ մի օգտակար բան չկայ:

«Ի՞նչ բազմաթիւ թատրոնական պիեսներ կան, —ասաց Կանդիտը, —իտալական, իսպանական, ֆրանսիական...»: —Այս, ասաց սենատորը, —այստեղ երեք հազար հատ կայ, բայց լաւերը երեք գիւժին էլ չեն լինի...: Իսկ ինչ վերաբերում է այս քարոզների հաւաքածուին, ճշմարիտն եմ ասում, որ սըրանք բոլորն միասին Սհնեկի մի երեսը չարժին: Իսկ այս աստուածաբանութեան հաստափոր հաստորներն իհարկէ ոչ ոք և ոչ մի անգամ չի բաց արել:»

Մարտինը տեսաւ անգլիական գրքերով լիք շաբուած դարակները: «Կարծում եմ ասաց նա, —հասարակալուպետականին պէտք է զուր գան այդ գրքերը, նրանք զրուած են այնքան ազատ:» «Այս, —պատասխանեց Պոկոկուրանտէն, —լաւ բան է զրել այն ինչ որ մտածում ես. սրանումն է կայանում մարդուս գլխաւոր արժանաւորութիւնը: Մեզնում իտալիայում զրում են միայն այս ինչ որ չէին մտածել. կեսարների և Անտօնիների հայրենիքում ոչ ոք չի համարձակում մի միտք արտայայտել առանց վարդապետի թոյլտութեան: Ես կը յարգէի անգլիական տաղանդներն ոգևորող այդ ազատութիւնը, եթէ կը քիմ և կուսակցական ոգին չփաշցնէին այդ թանկաղին ազատութիւնն:» Կանդիտը, տեսնելով Միլանին, հարցրեց սենատորին, թէ համարժում է նա արդեօք միծ մարդ այս հեղինակին: Ո՞ւմ, —հարցրեց Պոկոկուրանտէն: այդ բարբարոսին, որը գրել է փայտի ոտանաւորներով անպիտան մեկնարանութիւն տասն գլուխ, ծննդոց գրքի առաջին գրքի վրայ, այս յոյներին կոպիտ հետևողին, որը այլանդակում է Աստուածաշնչի աշխարհի ստեղծագործութեան պատմութիւնը: Հստ Մովսիսի վերին էակը ստեղծում է աշխարհս իր մի խօսքով, իսկ այս բարբարոսի ասելով Մեսիան հանում է երկնքի պահարանից ահագին կարկինը, և չափում է ապագայ աշխատանքի յատակագիծը... Նա խեղաթիւրում է գժուխքը և չար ոգի Տասոյն, Լիւցիֆերին կերպարանափոխում է երբեմն գետնագորտ, երբեմն թղուկ, ստիպում է նրան հարիւր անգամ կրկնել միւնայն բանը, և վարել աստուածաբանական վէճեր, նա լրջութեամբ հետևելով Արիոստի խելքից դուրս կատակով ասած ինքնահնար հրանօթ գործիքին, նկարագրում է թէ ինչպէս սատանաները թնդանօթներ էին արձակում գէպի երկնքը: Ո՞չ երբէք, ներեցէք, ոչ ինձ և ոչ ոքի իտալիայում չեն զուր գալ այս ողորմելի գատարկարանութիւնները: Մեղքի և մահուան ամուսնանաշու նկարագրութիւնից և իժերից, որոնց ծնում է մեղքը, ամէն մի ճաշակը զարդացած մարդու սիրտը կը խառնի, իսկ հիւանդա-

նոցի երկար-բարակ նկարագրութիւնը միմիայն դադաղ շինուզին կարող է հետաքրքրել: Սյս անմիտ, անճոռնի, զզուելի պօչման անցկացաւ սկզբում աննշմարելի կերպով, և ես բոլորովին համակարծիք եմ ժամանակակիցների հայեացքի հետ: Ես ձեզ յայտնում եմ իմ կարծիքը, սակայն ինձ համար բոլորովին միենոյն է թէ ուրիշներն ինչ են մտածում:

Սյս կարծիքներն ամբոցը ին կանդիտին, նա յարգում էր չոմերոսին, նրան դուք էր գալիս Մարտինը: «Աւաղ, ասաց նա կամացուկ Մարտինին,—վախենում եմ որ այս մարդը մտածելիս լինի մի մեծ ափառ արհամարհանք դէպի մեր գերմանական բանաստեղծները:» «Է՞ն, գետ էդ մի մեծ ցաւ չէ.» ասաց Մարտինը: «Ի՞նչ խելացի մարդ է, մտածում էր կանդիտը,—ի՞նչ մեծ հանճար է այս Պոկոկուրանտէն: Ոչ մի բան նրան դուք չի գալիս:» Այսպէս զննելով բոլոր զբքերն, նրանք իջան այդին: Կանդիտն սկսեց գովել նրա գեղեցկութիւններն: «Ի՞մ կարծիքով, սա ծայրայեղ անճաշակ է, ասաց տանտէրը,—բոլոր զարդերը անտանելի վաս են, բայց ես վաղն և եթ կը հրամայեմ աւելի գեղեցիկ սարքել:»

Հրաժեշտ ապագ սենատորին, կանդիտն ասաց Մարտինին: «Համաձայնուեցէք, սակայն, որ այս ամենաբաղդաւոր մահկանացուն է, նա բարձր է բոլոր բաներից, ինչի որ տիրում է: «Մի՛թէ դուք չէք տեսնում, որ ամեն բան նրան զըզուելի է: Պլատոնը վաղուց ասել է, որ լաւագոյն ստամոքսները նրանք չեն, որոնք մերժում են բոլոր կերակուրները:» «Բայց մի՛թէ դուարձութիւն չէ, ասաց կանդիտը - քննադատել ամեն բան և տեսնել թերութիւններ այնտեղ, որտեղ ուրիշները միմիայն գեղեցկութիւն են տեսնում:»: «Ձեր ասելով դուրս է գալիս—վրայ ընթեց Մարտինը, որ մարդու զուարձութիւնը կայանում է նրանում որ զուարձութիւն չունենայ:»: «Է՞ն, ասաց կանդիտը, նշանակում է բաղդաւոր կը լինեմ միմիայն ես, երբ կը տեսնուիմ Կունիգունդի հետ:»: «Լաւ է որ գոնէ յոյս ունիք», ասաս Մարտինը:

Սակայն անցնում էին օրեր ու շաբաթներ, բայց կակ ամբօն չէր վերադառնում: Կանդիտն այնպէս էր խորասուզուած իր վշտրմէջ որ չմտաբերեց անգամ թէ ինչպէս Պակետան և եղբայր Ժիրովիէն չեկան մինչև անզամ նրան շնորհակալութիւն յայտնելու:

## ԳԼՈՒԽ ՀՀՎ

Թի ինչպէս Կանդիտն ու Մարտինը ընթրեցին վեց օտարականների հետ:

Մի անգամ երեկոյեան երբ Կանդիտը նստած Մարտինի հետ ընթրում էր ընդհանուր սեղանի մօտ, միևնոյն հիւրանոցում ապրող ուրիշ օտարականների հետ, նրան յետևից մօտեցաւ մի մարդ երեսի գոյնը ուշ-մուր և նրա ձեռքին զիսլչելով ասաց. «Պատրաստուեցէք մեղ հետ դուրս գտլու... անպատճառ»: Կանդիտը շուր եկաւ և տեսաւ Կակամբօխն: Միայն նոյն իսկ Կունիգունդի կերպարանքը կարող էր նրան աւելի զարմացնել և ուրախացնել: Նա քիչ մնաց ուրախութիւնից խելքը թոցնէր և վրայ ընկաւ գրկելու հաւատարիմ բարեկամին: «Կունիգունդան այստեղ է, մրտեղ է նա... թող մնոնեմ ուրախութիւնիցս նրա հետ ի միասին»: «Կունիգունդան այստեղ չէ,—պատասխանեց Կակամբօն,—նա Կոստանդնուպոլսումն է»: «Ո՞հ, երկինք, Կոստանդնուպոլսումն է... բայց թող նա Զինառանում լինի, թուչէնք նրա մօտ... կնանք»: «Մինք կը գնանք ընթրիքից յետոյ,—վրայ բերեց կակամբօն,—տապաժմս ևս ոչինչ չեմ կարող ասել ձեզ, ես զերի եմ, իմ տէրս սպասում է ինձ, ես պէտք է գնամ սեղանին ծառայելու... Ո՞չ մի խօսք չառէք, ընթրեցէք և պատրաստ եղէք»:

Կանդիտը լցուած ուրախութեամբ և վշտով, գոհ՝ որ գտաւ իր հաւատարիմ գործակալին, զարմացած՝ տեսնելով նրան գերի, իր սիրունին գոտելու յուսով լցուած, նստեց սարսուող սրտով և մոլորուած մաքով սեղան Մարտինին մօտ. որը սառնասրտութեամբ նայում էր բոլորին ինչ որ կտարւում էր: Նրանց հետ նստած էին վեց օտարականներ, որ եկել էին վենետիկ բարեկենդանն անցկացնելու:

Ընթրիքի վերջում Կակամբօն, որ գինի էր մատուռակում այդ վեց օտարականներից մէկին, կտացաւ գէտի իր տէրն և ասաց. «Չերդ մեծութիւնը կարող է գնալ, երբ կը բարեհաճի, նաւը պատրաստ է»: Ասելով այս խօսքերը նա՝ դուրս եկաւ: Զարմացած սեղանակիցները լուր նայեցին իրար երեսին, երբ յանկարծ միւս սպասաւորը մօտենալով միւս տիրոջն ասաց. «Չերդ մեծութեան կառքը Պաղուառումն է և նամակը պատրաստ է»: Տէրը զլխով արեց և սպասաւորը գուրս գնաց: Բոլոր սեղանակիցները նորից իրար նայեցին և ընդհանուր զարմանքը կրկնապատկուեց: Երբորդ սպասաւորը մօտեցաւ երրորդ օտարական անդամ պատասխան տված էր առաջնորդի կողմէ:

բականին և ասաց նրան.—Հաւատացէք ինձ, ձերդ մեծութիւն,  
մի մասք այսաեղ երկար, ես գնում եմ պատրաստուելու ճա-  
նապարհ՝ ընկնելու», և գուրս զնաց:

Կանգիտը ու Մարտինը կարծեցին թէ սա բարիկենդա-  
նի մի դիմակահանդէս է: Չորրորդ սպասաւորն ասաց չորրորդ  
տիրոջը.—«Ձերդ Մեծութիւնը կարող է ճանապարհ՝ ընկնել  
երբ կը բարեհածի», և գուրս զնաց:

Հինգերորդ սպասաւորն ասաց միևնոյն բանը հինգերորդ  
տիրոջը: Բայց վեցերորդ սպասաւորը ուրիշ կերպ խօսեց վե-  
ցերորդ օտարականի հետ, որը նստած էր կանգիտի մոտ. նա  
նրան ասաց. «Ձերդ մեծութեան այլ ևս ապառիկ չեն հաւա-  
տում նմանապէս և ինձ, և ինձ ձեզ հետ միասին կարող են  
բանատարկել հէնց այս գիշեր, ես գնում եմ գործերս հոգալու.  
մնաք բարե»:

Երբ որ բոլոր վեց պաշտակներն ևս դուրս եկան, Կան-  
գիտը, Մարտինը և վեց օտարականներն նստած էին խորին  
լուռթեան մէջ, Վերջապէս կանգիտը լսութիւնը խղեց. «Պա-  
րոններ,—ասաց, նա, —այ լաւ ծիծագելի հանաք: Միթէ՞ դուք  
բոլորդ թափաւորներ էք: Ինչ վերաբերում է ինձ և Մարտի-  
նին, խոստովանուում եմ որ մենք թափաւորներ չենք»:

Այն ժամանակ կակամբօխ տէրը ծանրաբար սկսեց խօսել  
իտալերէն. «Ես բոլորովին հանաք չեմ անում. իմ անունն է  
Ահմէդ Ալրդ, ևս մի քանի տարի մեծ սուլթան էի. ես գահն-  
կեց արի իմ եղբօրը, բայց իմ քրոջ որդիս էլ ինձ գահից զցեց.  
իմ վեզիրների գլուխները կտրեցին և ես ապրում եմ հին Սի-  
րալում. իմ քրոջ որդին մեծ սուլթան Մահմադը, թոյլ է տա-  
լիս ինձ երբեմն շրջապայել առողջութեանս համար. և ահա ես  
եկել եմ վենետիկ բարեկենդանն անցկացնելու:»

Ահմէդի մօտ նստած երիտասարդն ասաց: «Ինձ կանչում  
են իւլան, ես ամենայն ոռւսաց կայսր էի. գեռ օրօրոցում ինձ  
գրկեցին գահից. հայրս ու մայրս բանտարկուեցան. ես մեծա-  
ցայ բանտում, բայց ինձ երբեմնապէս թոյլ են տալիս ճանա-  
պարհորդելու ինձ վրայ նշանակուած պահնորդների հսկողու-  
թեամբ և ահա ես եկել եմ Վենետիկ բարեկենդանն անցկաց-  
նելու:»

Երրորդն ասաց. «Ես կարլ-էդուարդ անգլիացւոց թափա-  
ւորն եմ. հայրս ինձ թողեց իր գահի վրայ ունեցած իրաւուն-  
քներն, և ես կուռում էի այդ իրաւունքներն պահպանելու հո-  
մար. իմ ութ հարիւր կողմնակիցներիս որտերն հանեցին և  
խփեցին երեսներին. ես բանտարկուեցի, այժմ ես գնում եմ

Հոռմ հօրս մօտ, որը ինձ և իմ պապի նման գտնազուրկ է եղած. ես էլ եմ ցանկանում անցկացնել բարեկենդանը:»

Հերթը հասաւ չորրորդին, նա ասաց: «Ես լեհացոց թագաւորն եմ. պատիրազմի բաղը զրկեց ինձ իմ ժառանգական երկրներս\*): իմ հայրս տարաւ տասն ճակատագրի նոյն տեսակ:

ովոխականութիւնը, ես հնազանդուեցի նախախնամութեանը, սուլթան Ահմէջի, իվան կայսրի և Կարլոս Էդուարդ թագաւորների նման, Աստուած Նրանց երկար կեանք տայ, եկել եմ Վենետիկ բարեկենդանն անցկացնելու:

Հինգերորդն ասաց. «Ես էլ լէհայոց թագաւորն եմ\*\*): ես երկու անգամ զրկուել եմ թագաւորութիւնից, բայց նախախնամութիւնը առւեց ինձ ուրիշ թագաւորութիւն, որտեղ ես արեցի աւելի բարիք, քան սարմատական թագաւորներն ըոլորը միասին կարող էին անել Վիսլայի ափերում: Ես էլ հնազանդուեցի նախախնամութեանն և եկայ Վենետիկ բարեկենդանն անցկացնելու:

Խօսելու հերթն հասաւ վեցերորդ միապետին—«Պարոն ներ, ասաց նա, ես ձեզ նման այնքան էլ երեկի անձրաւորութիւն չեմ, բայց ես էլ նոյնպէս թագաւոր եմ եղել, ինչպէս և ուրիշները. իմ անունս Թէոդոր է, ինձ ընտրեցին Կօրսիկայի թագաւոր. ինձ մեծարում էին՝ ձերդ մեծութիւն տեսդրուով, բայց այժմ պարոն էլ չեն ուզում տաել. ես կտրում էի իմ սեփական ղրամը, բայց այժմ ուրիշի փողից անգամ մի գրօշ չունիմ. ես ունեի երկու արքունական ատենապլիրներ, իսկ այժմ ինձանից հետացաւ և վերջին (լուկէյը) պաշտակը ես նստել եմ գահի վրայ ապա Լոնդոնի բանտում յարդի վրայ, վախենում եմ, որ այստեղ էլ նոյն վիճակին հնթարկուեմ. ձեր մեծութիւնների նման ես էլ եմ եկել Վենետիկ բարեկենդան, անցկացնելու:\*\*\*)

Միւս հինգ թագաւորները լսեցին նրա խօսքերը ազնիւ խղճահարութեամբ: Նրանք տուին Թէոդոր թագաւորին ամէն մէկը քսանական ցեխին, շորեր և սպիտակեղէն գնելու համար. կանդիտը ընծայեց նրան մի գոհար երկու հաղար ցեխին արժէքով: «Այս ի՞նչ մարդ է,—ասում էին հինգ թագաւորները,

\*) Օգոստոս, Սակոսնեացի Կուրֆիւրստ և լէհացոց թագաւոր, քառորդն իր ժառանգական հողերից 1756 թ. պատիրազմների ժամանակ:

\*\*) Ստանիսլաւ Լէշչինսկի, Լիւգովիկոս XV ի աները:

\*\*\*) Բարօն Թէոդոր Նէյզօֆ, Կորսիկայի Գէնուացոց զէմ ապստամբութեան ժամանակ ընտրուեց թագաւոր (1736 թ.) բայց մի քանի ամսից յետոյ ստիպուեցաւ վախչել:

—որ կարողանում է տալ հարիւր անգամ աւելի շատ քան մեզանից ամէն՝ մէկը, և որ զարմանալին է, ի՞նչ է տալիս:» «Միթէ դուք էլ էք թագաւոր, յարգելի պարոն:» «Ո՛չ, —պատասխանից կանգիտը, —և ամենափոքր ցանկութիւն անգամ չունիմ թագաւոր լինելու:»

Երբոր սեղանից վեր կացան, հիւրանոց եկան չորս մեծ իշխաններ, որոնք նոյնպէս պատերազմելիս գահազուրկ էին եղած. նրանք գալիս էին Վենետիկ բարեկենդանի վերջն անցկացնելու, բայց կանգիտը նորեկների վրայ ոչ մի ուշազրութիւն չդարձրեց: Նա ամբողջապէս զբաղուած էր Կոստանդնուպոլիսի իր սիրելի կունիգունդի մօտ գնալու մտքով:

## ԳԼՈՒԽ ՀՀՎՀ

Կանգիտի Կոստանդնապոլիս գնալը:

—

Հաւատարիմ Կակամրօն արդէն պայմանաւորուել էր տաճիկ նաւապետի հետ, որը պէտք է Սուլթան Ահմեդին տանէր Կոստանդնուպոլիս: Նա համաձայնեց ընդունել իր նաւը կանգիտին և Մարտոփնին: Նրանք մտան նաև, ընկնելով նախապէս երեսի վրայ. նորին ողորմելի Մեծութեանն առաջ: Տանապարհին կանոնիտն ասում էր Մարտոփնին. այսպէս ուրեմն մենք ճաշկինք վեց գահազուրկ թագաւորների հետ և նրանց մէջ մինչև անգամ գոնուեց այնպիսին, որին ես ողորմութիւն տուի: Գուցէ կան թագաւորներ աւելի գժբաղզ: Իսկ ես կորցրել եմ միայն հարիւր ոչխար և այժմ թռչում եմ Կունիգունդիս գիրկը: Ո՛չ, սիրելի Մարտոփն, դարձեալ կրկնում եմ. Պանզլուան իրաւացի էր. —ամեն բան գեղեցիկ է: «Ես որտէ ցանկանում եմ, որ այդպէս լինի, ասաց Մարտոփնը. «Սակայն ի՞նչ անհաւատալի զէպք պատահեց մեզ Վենետիկում, —ասաց կանգիտը: —Լսուած բան է, որ վեց գահազուրկ թագաւորներ ընթրէին միասին կասլիլիօնում:» «Ի՞նչ ասես որ չպատահի աշխարհում: Որ թագաւորները գահազուրկ են լինում դա մի հազուագիւտ բան չի, իսկ ինչ վերաբերում է մեզ հետ ընթրելու պատուին, դա ուշազրութեան անարժան բան է: Միենոյն չի թէ ում հետ ես ընթրում, մայն թէ համեղ լինի:

Նաւ մանելով կանգիտն ընկաւ իր հին ծառայ բարեկամ կակամբօի վզովս: «Են ի՞նչ է անում կունիգունդան. էլմ նա առաջուայ նման գեղեցկութեան հրաշալիք է, սիրում է արդեօք նա ինձ առաջուայ պէս, առողջ է նաև Յուսով եմ որ կունրա համար մի պալատ կը լինես գնած կոստանդնուպոլսում:»

«Իմ ըարի տէրս, —պատասխանեց կակամբօն. —Կունիգունդան Պրովոնդիտի ափում ամաններ լուացող է մի իշխանի մօտ, որը սակայն շատ ամաններ չունի. Նա ստրկունի է մի նախկին իշխանի մօտ, որի անուն է Ռակոչչի. \*) Նա փախառական է և մննդի համար Սուլթանից օրեկան երեք պիտօւտը է ստանում: Բայց ամենից տիրապետին այն է, որ նա տգեղացել է և գտրձել է սարսափելի անճունի»: «Ախ, տգեղ է թէ գեղեցիկ այդ մինսոյն է, չէ՞ որ ես ազնիւ մարդ եմ և իմ պարտականութիւնս է նրան միշտ սիրելու, ասաց Կանգիտը: —Բայց Բնչպէս նա կարող էր այդ տեսակ ցածր աշխատանքի մէջ ընկնել: Զէ՞ որ քեզ մօտ հինգ կամ վեց միլիոն կար»: «Հաշուով չէ, ասաց Կակամբօն, այ, երկու միլիոն ստիպուեցի տալ սենեօր Դօն-Ֆերնանդօ զ'իրարաա և Ֆիգէօրա և Մասկարինիաս և Լամզուրաս և Սուզաին—Բուէնոս-Այրէսի նահանգապետին Կունիգունդան տանելու. թոյլաւութեան համար: Բայց զիտէ՞ք թէ Բնչպէս փառաւոր կողոստեց մեղ ծովահէնը: Գիտէ՞ք նոյնալէս, որ այդ ծովահէնը մեղ ծախելու համար ման ածելով տարաւ. Մատապան հրուանդանը, Մելօ, Նիկարիա, Սամոս, Պատրաս, Կարպանէլլը, Մարմարա և Սկուտար: Կունիգունդան և պառաւն ծառայում են իշխանի մօտ, որի մասին ես խօսեցի, իսկ ես գահազուրկ սուլթանի գերին եմ:» «Ի՞նչ տեսաւո՞ գժբաղդութիւնների զուգալիպութիւն է, բացականչեց Կանգիտը: Բայց ոչինչ, ինձ մօտ կան մի քանի աղամանդներ, ինձ դժուար չի լինի ազատել Կունիգունդին: Միայն ափսոս որ նա տգեղպացել է:»

«Ի՞նչ էք կարծում, —ասաց նա, —զառնալով Մարտինին, —ով է մեղանից աւելի գժբաղդ, Անմէդ կայսրը, Իվան կայսրը, Կարլ-Էդուարդ թագաւորը, թէ ևս:» Զգիտեմ, —պատասխանեց Մարտինը, ես Բնչպէս իմանամ: Ես ձեր քաղաքներում չեմ եղել:» «Ախ, —ասաց Կանգիտը Պանզլոսմ այսուեղ լինէր, նա կը իմանար և կը վճռէր այս հարցը:» «Զգիտեմ, —ասաց Մարտինը, —թէ ինչ կշուով է ձեր Պանզլոսը կարողանում կշուել մարդկային թշուառութիւնները և գնահատել նրանց պատճառած վշտերը: Իսկ ես կարծում եմ որ աշխարհումս միլիոնաւոր մարդիկ կան անհամեմատ աւելի խղճահարութեան արժանի:

\*) Ֆրանց Ռակոչչի, Թրանսիլվանիայի իշխան Գեորգի որդին 1703 թուից անցել էր Աւստրիացոց զէմ ապստամբած ունգարացոց զլուխն և միայն 1711 թուին ստիպուած լինելով զիշաննելու հեռացաւ Ֆրանսիա Վերջին իր կեանքի 17 տարին նա ապրեց Տաճկաստանում և մեռաւ Թումելի Ռողոսոտ քաղաքում:

քան թէ թագաւոր Կարլ-Էդուարդը, կայսր հվանը և սուլթան Ահմէջը: «Շատ կարելի է», ասաց Կանդիտը:

Շուտով հասան Սև Ծովի ջրանցքը: Կանդիտն սկսեց նորանով, որ թանգ զնով ազատեց Կակամբօխն և ժամանակ չըկորցնելով, նստեց իր ընկերներով նաւակ, որ վնան որոնելու Պրոպրոդիտի ափերին Կունիգունդին, որքան էլ տղեղ լինէր նա:

Կանդիտն ուշադրութիւն դարձրեց երկու նաւային գերիների վրայ, որոնք թիավարում էին շատ վատ, որի համար ստանում էին նաւի պահնորդների մեծաւորից մի քանի մըտրակի հարուածներ իրանց մերկ ուսերին: Կանդիտն իր սրտի հասկանալի թելավրութեամբ նայեց նրանց վրայ աւելի ուշագրութեամբ քան միւսների վրայ և խղճահարութեամբ մօտեցաւ նրանց: Դրանց խեղաթիւրուած գէմքերի մի քանի զծերը մի քիչ յիշեցնում էին նրան Պանզլոսսին և դժբաղդ բարոն եզրիտին, Կունիգունդի եղրօրը: Այս միտքը վրդովեց և վշտացրեց նրան: Նա նայեց նրանց վրայ աւելի ուշադրութեամբ: «Ուզիղ որ ասաց նա Կակա իրօխն, — եթէ ես ինքս տեսած չլինէի թէ ինչպէս կախեցին վարժապետիս՝ Պանզլոսսին և դժբաղդութիւն չունենայի բարոնին սպանելու, այն ժամանակ կը պնդէի որ նրանք են այս երկու թիավարողները:

Բարօնի և Պանզլոսսի անուններն յիշելիս գերիները բարձրացաւ աղաղակեցին, ստուած մնացին և ձեռքերից թիկը բաց թողին: Կառավարիչն յարձակուեց նրանց վրայ և մարակի հարուածներն կարկարի նման թափուեցին նրանց զլիսին: Դաշդարեցէք, գտարեցէք. — կանչեց կանդիտը. ես կը տամ ձեզ, ինչքան ցանկանում էք:» «Ի՞նչպէս, սա Կանդիտն է» ասաց գերիներից մէկը. «Ի՞նչպէս սա Կանդիտն է», ասաց միւսը: «Արգեօք երազ չի այս, ասում էր Կանդիտը. ընած եմ, ես, ի՞նչ է: Միթէ իսկապէս ես նաւի վրայ եմ: Միթէ սա բարոն եզրիտն է, որին ես սպանեցի: Միթէ սա վարժապետ Պանզլոսսն է, որին ես ինքս տեսայ կախաղան բարձրացրած:»

«Այն, մենք ենք, մենք» պատասխանեցին նրանք: «Ի՞նչպէս, այ թէ ով է եղել մեծ փիլիսոփան», ասաց Մարախնը: «Ասացէք, պարոն մեծաւոր, ի՞նչքան էք ուզում աղատելու համար պարոն Տունգեր-Տին-Տրօնկին, որը կայսրութեան առաջին բարոններից մէկն է և պարոն Պանզլոսսին, որ Գերմանիայի ամենախորին մետափիզիքն է:» «Շուն-քրիստոնեայ, — պատասխանեց մեծաւորը, որովհետեւ այս երկու քրիստոնեայ շուն-թիավարները զուրս են գալիս բարոններ և մետափիզիկներ, որ հաւանական է նոյնպէս մի երեկու տիտղոսէ, դրա համար

գու ինձ կը տաս գրանց փոխարէն յիսուն հազար ցեսին։» «Դուք կը ստանաք այդ, տարէք միայն ինձ կայծակի արագութեամբ Կոստանդնուպոլիս, իսկ այնտեղ իսկոյն կը ստանաք փողերը։ Բայց ոչ, առաջ տարէք ինձ օրիորդ Կունիգունդի մօտ։» Բայց կանդիտի առաջին հրամանի համաձայն մեծաւորը նաւը շուռ տուեց դէպի քաղաք և նրանք սլացան թեերով օդը ճեղքող թոչնի արագութեամբ։

Կանդիտը գրկախառնեց բարոնին և Պանգլոսին։ «Միթէ ես ձեղ չսպանեցի իմ թանկագին բարոն, իսկ դուք իմ թանկագին Պանգլոս, այդ ինչպէս էք դուք կենդանի։ Զէ որ ես իմ աչքովս տեսայ թէ ինչպէս ձեղ կախեցին։ Եւ էղ ինչպէս դուք ընկաք տաճկական նաւի մէջ։» «Ճիշտ է արցեօք որ իմ թանկագին քոյրս այստեղ է», հարցրեց բարոնը։ — Այն, պատասխանեց կակամքօն։ — Այսպէս ուրիմն ես նորից տեսնում եմ իմ սիրեցեալ կանդիտին։» կանչեց Պանգլոսը։ Կանդիտը ներկայացրեց նրանց Մարտինին և կակամքօն։ Բոլորն էլ համբուրուեցին, բոլորը խօսեցին միանուագ։ Նուը թուշում էր, և նրանք արդէն նաւահանգստում էին։ Կանչեցին ջնուզին, որին Կանդիտը ծախեց յիսուն հազարի մի արամանգ, որ արժէր հարիւր հազար. ջնուզը երդուեց Արրահամի անունով որ աւելի չի կարող տալ։ Կանդիտն անյապազ գնեց բարոնին և Պանգլոսին։ Փիլիսոփան ընկաւ իր ազատողի ոտքերը և թըրչեց նրանց արտասուբով. բարոնը ջնորհակալ եղու գլխի շարժումով, և խոստացաւ վերապարձնել փողը առաջին ունենալիս։ «Բայց ճիշտ է որ իմ քոյրս Տաճկաստանումն է», հարցնում էր նա։» «Ճիշտ է, — պատասխանեց կակամքօն։ — Նա լուանում է Թրանսուլվանցի իշխանի ամանեղէնը։» Իսկոյն կանչեցին երկու ջնուզի, կանդիտը նրանց էլի ազամանդներ ծախեց և վարձելով ուրիշ նաւակ նրանք գնացին Կունիգունդին ազատելու։

## ԳԼՈՒԽ ՀՀՎԻԻ.

Թէ ինչ պատահեց կանդիտի, Կունիգունդի, Պանգլոսսի, Մարտինի և այլոց հետ։

«Դարձեալ ներեցէք ինձ, — ասաց կանդիտը Բարոնին։ — Ներեցէք ինձ արժանապատիւ հայր, որ ես ձեղ ծակեցի սրով։» Բաւական է դրա մասին խօսել, ասաց Բարօնը։ — Ես խոսութանում եմ, որ այն ժամանակ ես մի քիչ տաքացայ. բայց որովհետեւ դուք ուզում էք իմանալ թէ ինչպէս էր պատահել

որ դուք ինձ տեսաք թիարանում. ահա ասես ձեզ, որ կօլեզ գիայի եղբայր գեղագործը բժշկեց իմ վէրքը. բայց այդ ժամանակ մեղ վրայ յարձակուեց և ինձ գերեց մի խսպանական զօրախումք. ինձ բանտարկիցին Բուէնոս-Այրէսում հէնց նոյն ժամանակ երբ իմ քոյրս դուրս էր գալիս այդտեղից: Ես թոյլուութիւն ինուրեցի վերադառնալ Հոռու և ինձ նշանակեցին Կոստանդնուպոլիս ֆրանսիական հիւպատոսարանում մնալու: Դեռ ութ օր չէր անցել իմ նոր պաշտօնի մէջ մտնելուց, երբ ես պատահեցի մի շատ գեղեցկատեսիլ երիտասարդ ղզողլանի: Եղանակը սաստիկ շոք էր, երիտասարդն սկսեց լողանալ, իսկ ես օգտուելով այդ զէպքից մտայ նոյնպէս լողանալու: Ես չը գիտէի, որ քրիստոնէի վերաբերութեամբ սարսափելի ոճիր է համարւում տուանձնացած մերկ երիտասարդ մուսուլմանի հետ մնալը: Դալին հրամայեց խփել ինձ հարիւր փալախիկա և վճռեց ինձ աքսորելու թիարան:

Ես կասկածում եմ որ կարելի լինի կատարել աւելի սոսկալի անարդարութիւն: Բայց ինձ շատ ցանկալի էր իմաւնալ, թէ ինչ կերպով իմ քոյրս ընկել է Տաճկաստանում բնակուող Թրանսիլվանիայի իշխանի խոհանոցը!»

«Իսկ դուք, սիրելի Պանդլոս, —ասաց Կանդիտը, —դուք ինչպէս այստեղ լոյս ընկար:» «Հա, —պատասխանեց Պանդլոս: —գուք տեսանք թէ ինչպէս ինձ կախեցին. թէ իսկապէս ասած, ինձ պէտք է այրէին. բայց դուք յիշում էք, որ երբ ինձ ուզում էին խորովել. սաստիկ յորդառատ անձրե սկսեց և այնպիսի եղանակ արեց որ կրակ վառելու հնարք չը գտնելուց յուսահատուեցին և ակամայից ստիպուած եղան ինձ կախելու: Մի վիրաբոյժ գնեց իմ մարմինը, տարաւ տուն և սկսեց անգամատել ինձ: Առաջ նա արեց խաչածե կտրուածք պորտիգս մինչև կրծուկրս: Բայց ինձ շատ խայտառակ կերպով էին կախել: Սուրբ ինկվիզիտիայի գահինը, որ կիսասարկաւագի աստիճան ունէր, հիանալի գիտէր մարդիկ այրել, բայց կախելու մէջ այնքան վարժուած չէր. թուկը թրջուել էր չէր սլքւում և վատ էր կապած, այնպէս որ մի խօսքով ես դեռ կենդանի էի: Խաչածե կտրուածքը ստիպեց ինձ այնպէս բարձր գոռալ, որ իմ վիրաբոյժը վախրց նստեց, և երեակայելով որ անգամատել է դկի, դուրս փախաւ սարսափից կիսամեռ եղած և փոռւեց սանդուխըների վրայ: Աղմուկը լսելով հարեւն սենեակից մօտ վազեց նրա կինը և, տեսնելով ինձ սեղանի վրայ խաչածե ձեղքուածով, վախեցաւ իր մարդուց աւելի և վազեց ընկաւ նրա վրայ: Երբոր նրանք մի քիչ ուշի եկաւ ես լսում եմ որ իիրաբուժի կինն ասում է մարդուն. «Սիրելիս ինչպէս զու

սիրաւ արեցիր հերետիկոսին անդամատելու։ Միթէ գուշ չգիտես, որ նրանց մարմնի մէջ միշտ գեղ նստած է։ Մէկ վաղեմ քահանայի ետևից, թող գայ անիծի գրաւ միջի սատանին։ Ես սարսուռեցի այս խօսքերի վրայ և հաւաքելով վերջին ոյժերս կանչեցի. «Գթացէք» Վերջապէս պորտուգալացի սափրիչը սրուապնդուց և կարեց ճեղքուած տեղի կաշին, իսկ նրա կինը անձամբ ինստում էր ինձ. երկու շաբաթից յետոյ ևս ոտքի վրայ էի։ Սափրին ինձ գործ գտաւ և տեղաւորեց սպասաւորի պաշտօնով Մալթիան ասպետի մօտ, որը ուղևորուեց Վենետիկ, բայց որովհետև իմ տէրս ոչինչ չնւնէր ինձ վճարելու, դրա համար ևս մտայ Վենետիկի վաճառականի մօտ և զնացի նրա հետ կոստանդնուպոլիս։ Մի անգամ խելքիս փչից մտնել մեջտ, այնտեղ գտնուում էր միայն մի ծեր իմամ և մի ջանիլ, շատ գեղեցիկ կին. նա ջերմեանդ աղօթում էր. նրա կուրծքը բոլորովին բաց էր, իսկ կրծքի մէջ դրած էր հրաշալի փունջ կակաչներից, վարդերից, հողմածաղկից, գորտածաղկից և յակինթից. այս փունջը վայր ընկաւ և ևս շառափեցի բարձրացնել նրան և շատ ակնածութեամբ անցկացրի տեղը։ Բայց այստեղ ես մի քիչ ուշացրի, այնպէս որ իմամը բարկացաւ, և տեսնելով որ ես քրիստոնեայ եմ, կանչեց մարդկանց։ Ինձ տարան դադու մօտ, որը հրամայեց տալ ինձ հարիւր փալախիկայ և ուղարկեց թիարան։ Ինձ շղթայեցին մինոյն նաւակի և մինոյն նոտարանի վրայ յարդելի բարոնի հետ։ Այս նաւակի վրայ կային չորս երիտասարդներ և երկու աբեղայ կորփուից. նրանք առում էին որ այսպիսի գէպեր պատահում են համարեա ամէն օր։ Տէր Բարոնը հաւատացնում էր, որ իր հետ սննամեմատաւելի անարդար են վարուել բան ինձ հետ, իսկ ևս պնդում էի որ աւելի թոյլատրելի է զնիլ փունջը կնոջ կրծքի վրայ, բան թէ մնալ առանձին մերկ օղակնի հետ։ Մենք անդադար վիճում էինք և ստանում քսանական մտրակի հարուած ամէն օր, երբ որ այս աշխարհիս դէպրերի զուգադիլութիւնը ձեզ բերեց մեր նաւակը և գուք մեզ ազատեցիք»։

«Ե՞ն ինչպէս էր, սիրելի Պանդոսս, — ասաց նրան կանուիտը, — երբոր ձեզ կախում էին, անդամատում էին, ծհծում էին և ստիպում թիավարել նաւակի վրայ, դուք պահպանում էիք ձեր համոզմունքը, որ աշխարհումս ամէն բան գեղեցիկ է։ «Այս, ևս միշտ անդրդուելի մնում եմ այդ կարծիքին, — պատասխանեց Պանդոսսը, — որովհետև ևս փիլիսոփայ եմ. ինձ համար անվայել բան է հրաժարուել իմ համոզմունքներից այլ և լէյրնեցը չի կարող ճշմարիտ չլինել. նախայաւիտենական

ներդաշնակութիւնն — ամենալաւ բանն է աշխարհում, ինչպէս  
նիւթի յարատնութեան և անոնընթեան օրէնքը:

## ԳԼՈՒԽ ՀXIX

Թէ ինչպէս Կանդիտը դտու Կունիգունդին և պառաւին:

Մինչդեռ Կանդիտը, Բարոնը, Պանզլոսուը, Մարտինը և  
Կակամքոն պատմում էին իրար իրանց արկածները, և խորհըր-  
դակցում էին այս աշխարհի պատահական և նախասահմանեալ  
դէսքերի մասին, վիճում էին պատճառների և հետեանքների  
փիղիքական և բարոյական չարիքի, ազատութեան և անհրաժեշ-  
տութեան և այն միսիթարութիւնների մասին, որոնք կարելի  
է ունենալ Տաճկաստանի թիարաններում, — նաւը կանգնեց  
Պրոպրուգիտի ափում, Թրանսիլվանիայի իշխանի տան մօտ:  
Առաջին անգամից նրանք տեսան Կունիգունդին և պառաւին,  
որ պարանի վրայ անձեռնոցիկներ էին քաշ անում չորացնելու  
համար: Բարոնը տեսնելով այս պատկերը գունատուեց: Կունի-  
գունդի քննքոյշ սիրահարը տեսնելով նրան արևակէզ, կարմիր  
արտասուալից աչքերով, չորացած կրծքով, կնճռոսած այտերով  
կարմիր պատառաւած ձեռքերով, սարսափով երեք քայլ ետ  
գնաց, սակայն ուշարերուեց և քաղաքավարութիւնից զրդուած  
մօտեցաւ: Կունիգունդան համբուրեց Կանդիտին և եղրօրը.  
տմբողջ խումբը ողջունեց պառաւին և Կանդիտը նրանց գնեց:  
Մօտակայքում զանուում էր մի փոքրիկ կալուածք, պառաւն  
առաջարկեց Կանդիտին գնել կալուածքն ընկերութեան համար,  
մինչև աւելի լաւ վիճակի հասնելը: Կունիգունդան չը դիտէր  
որ այնքան ագեղացել է. նրան ոչ ոք այդ բանի մասին չէր  
տաել. նա յիշեցրեց Կանդիտին նրա խոստաման մասին այնպիսի  
մի ձեռվ, որ բարի Կանդիտը չը համարձակուեց մերժել: Եւ  
այսպէս նա յայտնեց Բարոնին որ պակւում է նրա քրոջ հետ:  
«Ես երբէք չեմ հանդուրմի նրա կողմից արած ցածութեանը  
և ձեր յանդգնութեանը, ես երբէք առիթ չեմ տալ ինձ մեզա-  
գրելու այգալիսի գարշելի բանի մէջ, իմ քրոջ որդիները, եթէ  
նա ձեզ հետ ամուսնանայ, երբէք չեն ունենալ իրաւունք գեր-  
մանական կայսրութեան նախարար զառնալու: Ո՛չ, իմ քոյրս  
կարող է ամուսնանալ միմիայն կայսերական Բարոնի հետ:»

Կունիգունդան ընկաւ եղրօր ոտքերը թրջելով նրանց  
արտասունքով, բայց նա անդրդուելի էր: «Մարսնդ, — ասաց  
նրան Կանդիտը, — ես ազատեցի քեզ թիարանից, վճորեցի քո  
և քո քրոջ փրկանքը, նա այստեղ աման լուացող էր, նա ան-

ճոռնի է, ես լարեսը տութիւնից եմ ամուսնանում նրա հետ,  
իսկ դու հակառակ լում ես:» Խորհուրդ կը տամ ինձ չը բար-  
կացնես. թէ չէ նորից կը սպանեմ քեզ»: «Դու կարող ես սպա-  
նել ինձ, — պատասխանեց Բարոնը, — բայց բանի որ ես կեն-  
դանի եմ դու չես ամուսնանայ իմ քրոջ հետ:»

## ԳԼՈՒԽ XXX.

Վերջարան:

Սրտի խորքում Կանգիտը ամենավոքը ցանկութիւն ան-  
գամ չունէր Կունիգունդի վրայ ամուսնալու, բայց բարոնի  
լրբութիւնը ստիպեց նրան վճռել ամուսնութիւնը. բացի զրա-  
նից Կունիգունդան այնպէս էր թախանձում, որ նա չկարողա-  
ցաւ մերժել: Նա կանչեց Խորհրդի Պանգլուսին, Մարտինին և  
հաւատարիմ Կակամբօխին: Պանգլուսը մի գեղեցիկ ճառ ասեց,  
որտեղ ապացուցանում էր, որ բարոնը ոչ մի իրաւունք չունի  
քըոջ վրայ և որ կայսրութեան բոլոր օրէնքների հիման վրայ  
նա կարող է պատակուել Կանգիտի հետ ձախ ձեռքի կողմից:  
Մարտինը եղբակացրեց որ Բարոնին հարկաւոր էր ծովը զցել.  
Կակամբօն վճռեց որ նրան պէտք է ուղարկել թիարան զինուո-  
րական պահակ խմբի մեծաւորի մօտ, իսկ այնտեղից նրան  
առաջին նաւով կ'ուղարկեն Հսոմ հայր գեներալի մօտ: Այս  
խորհուրդը ընդունուեցաւ. Պառաւն էլ գովեց այդ բանը, իսկ  
Բարոնի քըոջն այս մասին ոչինչ չասեցին. փողի ուժով գործը  
կարգի դրուեց և ստացուեց կրկնակի պատականութիւնի, եղու-  
խտին խարել և գերմանական Բարոնի գոռողութիւնը պատժել:

Կարելի էր ենթագրել, որ այսքան դժբաղդութիւններից  
յետոյ ամուսնանալով իր սիրուեռով վրայ և ապրելով Փիլիսոփա  
Պանգլուսի, Փիլիսոփա Մարտինի, Փորձառու Կակամբօի և  
պառաւի հետ, բացի գրանից ունինալով բաղմաթիւ աղամանգ-  
ներ հին ինկօների հայրենիքից, Կանգիտը կ'անցկացնէր ամե-  
նաերջանիկ կեանք. բայց նա այնքան անդամ խարուեց ջը-  
հուդներից, որ նրա մօտ ոչինչ չմնաց, բացի փոքրիկ կալուած-  
քից. Նրա կինը օրէցօր տղեգանում էր և բացի այդ դառել էր  
քմահաճոյ և անտառելի, պառաւն սկսել էր հիւանդանալ ու ևս  
առաւել անտառնելի բան էր դառել: Կակամբօն մշակում էր բան-  
ջարանոցը և գնում էր Կոստանդնուպոլիս ըանջարելէնը ծախե-  
լու. Նա ուժասպառ էր եղել աշխատանքից և անիծում էր իր  
բաղդը: Պանգլուսն յուսահատութեան մէջ էր, որ չի կարողա-  
նում փայլել մի որևէ գերմանական համալսարանում: Իսկ

ինչ վերաբերում է Մարտինին, նա հաստատ համոզուած էր որ ամէն տեղ հաւասարապէս վատթար է. նա ամէն բան տառում էր համբերութեամբ: Կանդիտը Պանգլոսն ու Մարտինը վիճում էին երբեմն ընազանցութեան և բարոյականութեան մասին: Կալուածքի պատուհաններից յաճախ երեսում էին նաւել բեռնաւորուած էֆէնդիներով, փաշաներով և դադիներով, որոնց տանում էին աքսոր՝ կեմսոս, Միտելինէ և երզում. երեսում էր նոյնպէս որ աքսորուածների տեղ գալիս էին ուրիշ էֆէնդիներ, փաշաներ և Ղադիներ, որոնց նոյնպէս իրանց կարգին աքսորում էին, երեսում էին մեծ խնամքով յարգով լցրած գլուխներ, որ ուղարկում էին զանազան կողմերից բարձրագոյն դրանը: Այսպիսի տեսարանները սաստկացնում էին վիճարանութիւնները, իսկ երբոր վիճարանութիւնը գաղարում էր, սկսում էր տիրապետել այնպիսի անտանելի ձանձրոյթ, որ պառաւը մի անգամ ստիպուեց ասել.—«Ես կը ցանկանայի իմանալ, թէ ո՞րն է աւելի վատ. արդեօք հարիւր անգամ նեկըներից ու պիրատներից բռնաբարուած լինելը, յետոյքի մի թշից զրկութիւնը, բոլղարների շարքի միջից անցնթիւնը, ինկվիզիցիայից ծեծուիլն ու կախութիւնը, անդամատուիլն, թիարանում լինելը—մի խօսքով բոլոր մեր կրած թշնամութիւնները կրթիւն է արդեօք աւելի վատ, թէ ոչինչ չանելով այստեղ ապրելը:» «Այս, դա հարց է,» սոսաց կանդիտը:

Այս խօսակցութիւնն յառաջ բերեց նոր խորհրդածութիւններ, և Մարտինը եզրակացրեց որ մարդը ծնուած է խոռովութեան, յուզմունքների կամ ձանձրութեան մահաքնի մէջ ապրելու համար: Կանդիտը այս բանին չէր համաձայնում, բայց ոչինչ չէր պնդում: Պանգլոսսը խոստովանում էր, որ միշտ սարսափելի տանջուելիս է եղել, բայց մի անգամ ասելով որ ամեն բան գեղեցիկ է, շարունակում է պնդել նոյն բանը առանց ինքն իրան հաւատալու:

Մի հանգամանք վերջնականապէս հաստատեց Մարտինին նրա սարսափելի սկզբունքների մէջ, երկրայութեան մէջ զցեց աւելի բան երբ և իցէ կանդիտին և շշկեցրեց Պանդլոսսին: Բանը նրանումն է որ մի անգամ նրանց կալուածք դուրս եկան Պակետան և եղայր ժերոֆլէն, որ դանւում էր վերջին ծայր աղքատութեան մէջ. նրանը շատ շուտով ծախեցին երեք հազար պիաստրը. բաժանուեցին իրարից, յետոյ հաշտուեցին, զարձեալ կոռուեցին, նստեցին բանտը, բանտից փախան և վերջապէս ժերոֆլէն ընդունեց մահմեղականութիւն: Պակետան շարունակում էր պարապել իր արհեստով, բայց ոչինչ չէր վաստակում: «Ես մարգարէացայ, — սոսաց Մարտինը կանդիտին,

որ ձեր ընծայած փողերը շուտով կը վատնուին և աւելի խորը կը զցէն նրանց աղքատութեան մէջ։ Դուք Կակամբօի հետ մի քանի միլիօն պիսատր փչացրիք, բայց էլի եղբայր Ժերոֆլէից և Պակետից աւելի բաղդաւոր չեք։» «Ահ ը—ասաց Պանդլոսու Պակետին, Աստուած ձեզ էլ բերեց մեզ մօտ։ «Գիտէք արդեօք խեղճ որդեսակ իմ, գուք ինձ ի՞նչ նատեցիք. քթիս ծայրը, մի աշքս և մի ականջս։ Բայց, ի՞նչքան դուք փոխուել էք։ Էհէ, իսկ սա ի՞նչ պարոն է։» Այս նոր դէպքը նիւթ տուեց երկարածիկ փելիստիայութիւնների։

Նրանց հարևան տանը բնակւում էր մի դէրվիշ, որ համարւում էր Տաճկաստանի առաջին փիլիսոփիան. նրանք գնացին դէրվիշի հետ խորհրդակցելու. Պանդլոսոն սկսեց խօսել նրա հետ. «Լարդապետ, —ասաց նա, —մենք եկել ենք քեզ խընդրելու որ մեզ պարզես, ինչու համար է ստեղծուած այսպիսի մի տարօրինակ կենդանի, ինչպէս մարդն է։

«Թիզ ի՞նչ, —ասաց դէրվիշը, —միթէ էկ քո զործն է։» «Աւակայն, արժանապատիւ հայր, —վրայ բերեց Կանդիաը։ —աշխարհում սարսափելի շատ չարիք կայ։» «Է՞՞ ի՞նչ անհնը— ասաց դէրվիշը, —շատ չարիք կամ բարիք կայ թէ ոչ—քեզ մինոյն չէ։ Երբ որ նորին Մեծութիւն Սուլթանը նաւ է ուզարկում եպիպոս, միթէ հարցնում է թէ լաւ կը լինի արդեօք նաւում ապրող միների համար։» «Ուրեմն ի՞նչ պէտք է ստել։» Հարցրեց Պանդլոսուը։ «Լուել», պատասխանեց դէրվիշը։ «Իսկ ես պատրաստում էի ասաց Պանդլոսուը—խօսել ձեզ հետ պատճաների և հետևանքների մտսին, աշխարհներից ամենալաւի, չարիքի սկզբնապատճառի, հոգու էռութեան, նախասահմանեալ ներդաշնակութեան...» Այս խօսքերի վրայ դէրվիշը ուժով դուռը վրայ խփեց նրանց քթի առաջ։

Այս խօսակցութեան ժամանակ լուր տարածուեց թէ Կոստանդնուպոլատում խեղգել են երկու վէզիր և<sup>\*</sup> մի մուֆտի և նրանց բարեկամներին ցցերի վրայ են նստացրել։ Այս աղէտը միծ աղմուկ բարձրացրեց միայն մի քանի ժամ։ Պանդլոսու, Կանդիան ու Մարտինը իրանց կալուածքը վերադառնալիս հանդիպեցին մի պատկառելի ծերունու, որ +հանդստանում էր իր զրան առաջ նարնջի ծառերի հովանու տակ։ Հետաքրքիր և շատախօս Պանդլոսուն հարցրեց նրան, թէ ի՞նչ էր խեղգուած մուֆտու անունը։ «Զգիտեմ, —պատասխանեց ծերունին. ես երբէք չեմ իմացել մուֆտիների և վէզիրների անունները։ Ես բոլորսին ոչինչ չեմ իմանում թէ ի՞նչ եղելութեան մասին էք խօսում, առհասարակ ես կարծում եմ որ իրանց քիթը քաղաքականութեան մէջ կոխող մարդիկ բարի վախճան չեն ունե-

նում, և կարծում եմ որ տեղն է: Ես երբէք չեմ հետաքրքըր-  
ւում թէ ինչ է կատարւում Կոստանդնուպոլսում, և բաւականա-  
նում եմ նրանով, որ ուղարկում եմ այնաեղ ծախելու իմ այգու  
բերքերը»: Այս ասելով նա հրաւիրեց օտարականներին իր  
տուն, նրա երկու աղջիկներն և երկու որդիքը բերեցին մի  
քանի տեսակ շերքեթներ իրանց ձեռքով պատրաստած,  
քաղցրեղէններ, նարինջներ, կիտրոններ, անանաս, արմաւ,  
փստղ և մոկայի սուրճ անխառն քատավիսական և ամերիկական  
անպիտան սրճից: Դրանից յետոյ բարի մահմեդականի աղջիկ-  
ներն սրսկեցին անուշահոտ իւղով Կանդիտի, Մարտինի և Պան-  
զլոսսի միրուքները: «Դուք երկի շատ մեծ և հիանալի այգի ու-  
նէք», ասաց Կանդիտը տանտիրոջը: «Ո՛չ, ընդունէնը քսան գեսհա-  
տին է, —պատասխանեց տաճիկը. —ես ինչու եմ մշակումնրան իմ  
որդիկերանց հետ, և աշխատանքը փախցնում է մեղանից երեք  
գլխաւոր չարիքները. ձանձրութիւնը, մոլութիւնն և կարիքը»:

Վերադանալով իր կալուածքը, Կանդիտն երկար ժամա-  
նակ խորհում էր թուրքի խօսքերի վրայ: «Այս բարի ծերու-  
նին —ասաց նա Պանդոսսին և Մարտինին —անհամեմատ աւելի  
լու է բարեկարգել իր վիճակը քան թէ վեց թագաւորները,  
որոնց հետ մենք սրատիւ ունեցանք ընթրելու»: «Երկրային  
միծութիւնը, —պատասխանից Պանդոսսը, —շատ վտանգաւոր  
է. սրա հետ համաձայն են բոլոր վիլիսովիաները: Եյսպէս  
Մօավի թագաւոր էդլոնը սպանուեց Աօդից, Արիսողոմը կա-  
խուել է մաղկեց և վիրաւորուել երեք նետով. Երոբովամի  
որդի Նալավ թադաւորը սպանուել է Բաասից, ելա թագա-  
ւորն ապանուել է Զամվրիից. Ոքովեան, Եհովայից, Գօթո-  
զիան —Յովադայից. Յովակիմ, Յեքոնիս և Աեգիկիա թագաւոր-  
ները ստրկացրած են: Դուք զիտէք ինչպէս են կորստի  
մատուել կրեսոսը, Աժգանադը, Դարեհը, Դիօնիսիոս Սիրա-  
կուզյի, Պիրոս, Պերսէոս, Աննիբալը, Յուլիոս, Արիո-  
վիստը, Կեսարը, Պոմպէոսը, Ներոնը, Օտոնը, Վիտելիոսը,  
Դոմիտիանոսը, Միչարդ և Սնագիայի թագաւորը, Էգուարդ Ա,  
Հենրիխ ԱՎ-Ն, Ռիչարդ ԱՎ-Ն, Մարիա Ստիւարտ, Կարլոս Ի-ի,  
երեք Հենրիխ ֆրանսիական թագաւորները և կայսր Հենրիխ ԱՎ:  
Դուք զիտէք...» «Ես զիտեմ որ ամենից առաջ հարկաւոր է  
բանջարանոցը մշակել, ասաց Կանդիտը: «Դուք իրաւացի եք,  
առարկեց Պանդոսսը, —որովհետև մարդը դրուեց զրախտի մէջ  
ut operaretur eum —առ ի գործել զայն, իսկ սա սպացուցա-  
նում է, որ մարդս անբործութեան համար չի ծնուել»: «Եկէք,  
աշխատենք առանց զատողութեան, —ասաց Մարտինը. —Կեանքը  
տանելի դարձնելու համար սա միակ միջոցնէ:

Ամբողջ փոքրիկ ընկերութիւնը ընդունեց այս բարի նպատակը և իւրաքանչիւրն սկսեց անել ինչ որ կարող էր։ Փոքրիկ կալուածքն սկսեց բերել լաւ արդիւնք։ Կունիգունդան, ճիշտ է շատ անճոռնի էր, բայց նա գարձաւ հիանալի կարկանդակ շինող. Պակետան կարում էր, իսկ պառաւը նայում էր սպիտակեղինին։ Մինչև անգամ եղբայր Ժերօֆլէն սկսեց օգուտ բերել. նա գառաւ լաւ հիւմնու բացի զրանից լաւ մարդ։ Պանզլոսսն երբեմն ասում էր Կանդիտին. «Ամեն բան սերտ կապուած է այս աշխարհներից ամենալաւում, եթէ ձեզ գուրս չ'անէին հիանալի ամրոցի ետևից կիցեր տալով Կունիգունդին սիրելու համար, եթէ ձեզ չը բանտարկէր ինկվիզիցիան, եւ է գուք չը թափասիէք ոտքով Ամերիկայում, չը վիրաւորէք ուրով բարոնին, չը կորցնէիք ձեր ոչխարները որ բերել էիք հրաշալի ելդորագօից, այն ժամանակ մենք այստեղ չէինք կարող ուտել ցուկատներ։» «Այդ բոլորը շատ գեղեցիկ է, ասաց Կանդիտը, — բայց դեռ արի մի գնանք բանջարանոց աշխատելու։»

Թարգմ. Ա. Կ.

Վ Ե Բ Զ

### S T A N C E S

Ինձ թաղէք, երբ կարմիր վերջալոյսն է մարում,  
երբ վերջին գգուանքով արեգակը մեսնող  
Սարերի արծաթեայ կատարին է փարւում  
Երբ փարւում են ծաղկանց հով ու ցող...\*

Ինձ թաղէք, երբ խաղաղ երեկոն է իջնում  
Երբ լոռում է աղմուկը զուարթ,  
Երբ շողերն են մեռնում, ծաղիկները ննջում  
Երբ տրտում խոլում են լեռ ու արտ...\*\*

Իմ շիրմին դալկացող հորսաներ ցանեցէք,  
Որ հանգարտ ու խաղաղ մահանան.  
Երիկուայ խաւարում դուք ինձ լուս թաղեցէք,  
Որ կեանքի հմայիչ շըշուկները շըզգամ։

Վահան Տ.-Դը.

## Մ.-ՅՈՎ. ՕՐ. ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ

Շարունակենք առաջ բերել այդ գպրոցի շուրջը մի խումբ խոռվարաների և ինտրիգանների սահղծած դաւերի մերկացումները:

Նամակներ «Մշակի» խմբագրութեան

### I

Թիֆլիս, 29 յուլիսի

Խնդբեմ զետեղէք «Մշակի» մէջ երկուոս այն բանակոուի առիթով, որը կատարւում է «Ալիք» լրագրի խմբագրութեան և ալ. Հ. Սարգսեան միջն վերջինս Յովսանեան գպրոցի տեսուչ ընտրելու պատճառով:

Ես հարկաւոր եմ համարում հաղորդել մի քանի փաստեր, որոնք յայտնի են ինձ և կատարուել են պ. Սարգսեանի տեսուչ ընտրուելոց առաջ:

Անցեալ յուլիս ամսին, օրը չեմ յիշում, մի քանի ծառնօթների հետ ունեցանք խօսակցութիւն Յովսանեան գպրոցի մասին: Նրանք յայտնեցին, թէ Յովսանեան գպրոցի հողաբարձութիւնը տեսուչ է ընտրելու մօտ ժամանակներում և որ լու կը լինի, եթէ այդ պաշտօնի համար հրաւիրուի պ. Սարգսեանը, որը ցոյց է տուել հմտութիւն և ձիբք գպրոց կառավարելու մէջ: Ես ևս մօտ ծանօթ լինելով պ. Սարգսեանի հետ և յիշելով նրա համբաւը, երբ նա Շուշու թիմական գպրոցի տեսուչ էր, ունեցայ դէպք խօսելու այդ ժամին թեմիս ու առաջնորդի հետ և հոգաբարձուներից պ. Երէցվոխեանի հետ, որոնք համակրանքով վերաբերուեցին այդ մաքին: Ս. առաջնորդը յայտնեց ինձ, որ ինքն էլ երկար մտածել է Յովսանեան գպրոցի տեսուչ ընտրելու հացի մասին և եկել է այն եղբակացութեան, որ պ. Սարգսեանը արժանաւոր թեկնածու է:

Այս դէպքերից յետոյ միայն ես, պատահելով ոլ. Սարգսեանի հետ, յայտնեցի նրան ու առաջնորդի և պ. Երէցվոխեանի կարծիքը.—Նա ինձ ասաց, որ կընդունի Յովսանեան դըպրոցի

տեսչի պաշտօնը, եթէ լինի ակաջարկութիւն հոգաբարձութեան կողմից:

Ահա թէ ինչ է յայտնի ինձ յիշեալ խնդրի մասին և ինչ հանգամանքներ են տեղի ունեցել՝ նախ քան պ. Մարդսեան ստացել է առաջարկութեան Յովանեան գպրոցի հոգաբարձութիւնից և հաստատուել տեսուչ:

Ս. Յարութիւննանց

## II

Թիֆլիս. 11 օգոստոսի

Հինգշաբթի, օգոստոսի 10-ին, նշանակուած էր Յովանեան-Մարիամեան գպրոցի հոգաբարձութեան ընտրութիւնը կատարող 12 պատուիրակների ժողովը, որ բաղկացած էր 9 զուտ գաշնակցականներից և 3 ոչ-գաշնակցականներից:

Ի հարկէ առաջուց յայտնի էր, որ 9 գաշնակցականները չը պէտք է այդուղ գային իրանց անկախ կամքով և համոզմունքով, այլ իրրե բիւրօից ստացած հրամանի հլու գործակատարներ: Այդպէս էլ եղաւ. գործակատարները կատարեցին անմոռնչ իրանց տրուած հրամանը, թէկ հարկ համարեցին մի քիչ կօմեդիա խողալ (չէ որ, գոնէ արտաքուստ, ձեականութիւնը պէտք է պահել), բաժանելով թերթիկներ, գաղտնի բուէրկութիւն կատարելու:

Բայց հարցը այժմ հոգաբարձութեան մասին չէ. հարցը և նրա մէջ չէ, որ Դաշնակցութեան բիւրօն, անշուշտ առ ի չգոյէ մարդկանց, ամեն տեղ խցկում էր իր անզուգական ծակ վաստարամ: Տովահաննիսեանի (և Ներսեսեան գպրոց). և Յովանեան գպրոց, և Կարս, և Վաղարշապատ, և Կաղզուտն ընտրութիւնների ժամանակ թեկնածու): Ես կամենում եմ հասարակութեան զատաստանին ենթարկել և բողոքել մի որոշման գէմ, որ ընդունեցին պատուիրակների ժողովի 9 գաշնացականները, մի որոշման, որ ես համարում եմ վտանգաւոր, անկորեկտ և անիրաւական: Պատուիրակներից մէկը՝ պ. Մուշափէ հանեց գրպանից առաջուց պատրաստուած մի բանաձեռնութիւնը, առաջարկում էր հրահանդ տալ նորընտիր հոգաբարձութեան ավօրէն ճանաչել Յովանեան-Մարիամեան գպրոցի այժմ պաշտօնավարող հոգաբարձութեան բոլոր կարգադրութիւնը վերջին 2—3 ամսուայ ընթացքում, առարկելով թէ այդ կարգադրութիւնները կաշկանդում են եկող հոգաբարձութեան գործունէութիւնը:

Ես սաստիկ բողոքեցի ոչ թէ միայն այդ բանաձեռի գէմ, ըստ

էութեան, այլ և այն բանի դէմ, որ պատուիրակների ժողովը իր քննութեան առարկայ է դարձնում այդպիսի մի առաջարկութիւն։ Եւ բողոքեցի հետեւալ հիմունքներով. 1) մեզ ընտրող ծխական ժողովուրդը երեք եղեղեցիներում էլ (Մողնի, Վանք, Տեթղեհէմ) մեզ պատուիրակներիս տուել է միայն մի մանդատ—ընտրել հոգաբարձուներ. 2) ընտրողական ծխական ժողովներում այդպիսի հարց չէ արծարձուել երբէք, չէ ընտրել, հետեւարար, և մենք պատուիրակներս իրաւունք չունենք այդ հարցը այժմ յարուցա ել, քանի որ լիազօրուած չենք. 3) ամենաարարական արգարութիւնը պահանջում է, նախքան հոգաբարձութեան որևէ է կարգադրութիւնը ապօրէն ճանաչելը, քննել գործերը, լսել և հոգաբարձութեան բացատրութիւններն ու փաստերը, որոնք գուցէ ջախջախիչ լինեն և ցոյց տան, թէ նրա ըոլոր կարգադրութիւնները օրինաւոր են։

Վերջապէս ես յայտնիցի և այն, որ նոր հոգաբարձութեան կարելի է յանձնաբարել միայն մի բան—ճանօթանայ դուծի հետ և եթէ կը դանէ ապօրէն կարգադրութիւններ, գեկուցանել դրանց մասին պատուիրակների կամ ծխակոնների ժողովին և նրանից ստանալ հրահանգ ինչպէս վարվել։ Տալ նորընտիր հոգաբարձութեան սուաջուց պաշտօն՝ ապօրէն ճանաչել իր նախորդի կարգադրութիւնները—դա ոչ միայն նշանակում է բռնանալ նրա մտքի, համոզման և խղճմտանքի վրայ, այլ և շատ վտանգաւոր ինցիդենտներ ստեղծել և զանազան չարիքների գուռ բանալ։

Սակայն 9 դաշնակցական-մեքենաները միայն մի բան գիտէին—հրաման էլն ստացել քուէարկել այնպիսի բանաձև և քուէարկեցին։ Մենք երեքս, (ես, Արասխանեան և Խշանուհի Արզութեան) ստցնել տալով մեր կարծիքը արձանագրութեան մէջ, հեռացանք։

Ես մի աւելորդ անգամ էլ համոզուեցի, թէ ինչպիսի մարդունաներ գիտեն ստեսծել դաշնակցականները, և նրանց նոյն իսկ լաւագոյն ոյժերը, փասսաբարանները, չը գիտեն այն կոպիտ, տարրական ճշմարտութիւնը, թէ չէ կարելի դատապարտել որևէ մի անձն, առանց լսելու նրան, առանց գործը քննելու, ժանօթանալու։

Պատուիրակ՝ Հ. Առաքելյան

## III

## ԱՆԻԼԻՐԾ ԱՏԱԽԻՍՈՍԻ ԹԻՒՆՆԵՐ

Մեր գրական Հաջի-Բարաները բանակոռուի լրճուելով երբէք ըստ էութեան բան չեն կարողանում ասել և աշխատում են մի կերպ խուժանի ասջե իրանց յաղթող ձևացնել:

Իմ «Խուժանապետներին»! յօդուածում չէր տուած «արդի Դաշնակցութեան բիւրօկրատների» հասցէն, բայց և այնպէս ոլաքը դիպել էր նովատակին... Եւ ահա ըստ էութեան բան պատասխանելու փոխարէն, «Ալիքի» զեկավարները փողոցային տղերանց նման, ըստ սովորութեան, կրկնում են նոյն հայ-հոյանքները, յաղթական ծամածութիւններով տում. «Շը, վախեցար մեր անունը տալ. դէ գնա. յաղթեցինք, յաղթեցինք... Խեղճեր...

Այդ ժրկարար սրտահովութիւնը, ինչպէս և հայոյական «բելետրիստիկայի» մէջ անվիրջ վարժութիւններ անելը, թողնելով մեր երեկի գրական Հաջի-Բարաներին՝ անցնենք: Նախ քան բուն հարցին զիմելը, հարևանցի կերպով ներկայացնեմ մի նոր զրպարտութիւն. իբր թէ ես այդ պարոնների արարքները սկսեցի մերկացնեց միմիայն իմ տեսչական հարցից յետոյ: Թէ ես տարի ու կէս է բոլոր ժողովներում՝ դաշնակցական շէֆերի ներկայութեամբ, խիստ բացասական քննադատկան դիրք եմ բոնել գէպի այդ աղջային բիւրօկրատների տակուկան և արարքները—այդ պէտք է որ, վերջապէս, քաղաքացիական բաջութիւն ունենան վկայելու մեր այն ինտելիգենտները, որոնք տխուր դեր են սանձնել լինելու դաշնակցականների համար լոկ օգնութեան խողովակ: Թէ մամուլի մէջ ես քննադատական-բայցասական դիրք եմ բոնել զէպի գաշնակցութիւնը այն օրից, երբ ցեղողուրական պայմանները փոփոխուեցան և ազգային բիւրօկրատները դուրս եկան կոնսպիրատիվ զիրքից հրապարակ, ուսիսկան օրդան հիմնացին, ցուցամոլական բեկլամներ սկսեցին հրատարակել իրանց՝ «Չտարի», «Գօրփի», «Կուռ ոյժի», «Դատաստանական», «Արշաբողական» և այն կորդագլութիւնների մասին տպած թուուցիկներով, հրամաններով և այն—այդ պէտք է յայտնի լինի բոլորին, որոնք կարդում են «Մուրճ» ամսագիրը: Հետեւրար, թէ ժողովներում և թէ մամուլի մէջ ես քաղաքական բաջութիւն եմ ունիցել չը ծածկել իմ համոզմունքները և կարծիքները: Վեր կենալ այժմ խուժանին գրդելու համար բանը այնպէս ներկայացնել թէ ես հրապարակ եմ դուրս եկել իմ տեսչական հար-

ցից յետոյ—դա դիտաւորեալ ստախօսութիւն է, մի բան, որ դառել է երկրորդ բնոյթ ազգային բիւրօկրատներիդ համար, շնորհիւ այն հանգամանքի, որ ինտելիգենտ խողովակները ներողամիտ քննչութեամբ են վերաբերուել գէպի ձեր բոլոր պակասութիւնները և դուք երես էք առել...

Մի նմուշ էլ «Ալիքի» զեկավարների լոգիկայից եթէ դուք ասէք, օրինակ. «Ռուս բիւրօկրատներ, ես այն էլ գիտեմ, որ դուք չէք տարբերում սպիտակը սիկց, շունը՝ զայլից և այլն»—միթէ դա նշանակում է թէ՛ ռուսները աև են կամ գայլեր են. իսկ «Ալիքի» միւսի խմբագիրը ընդունակ է այդպիսի լոգիկական սայլտօմորտալների: Զէք հաւատում. կարդացէք իմ «Ալիքի» մանեօվլրները» յօդուածի վերջին պարբերութիւնը և տեսէք թէ ի՞նչ պրովոկատորական մետամորֆոզի են ենթարկում խօսքերս «Ալիքի» վարած բանակուուի մէջ: Ո՛չ պրովոկատորը վերև բերած օրինակ-նախադասութիւնից պէտք է միայն եղբակացնի, որ ռուս բիւրօկրատները այնքան թիւր, տհաս, սխալ «հասկացութիւն» ունեն, որ չեն զանազանում իրարից շատ տարբեր հասկացողութիւնները... Այդ է սրահանջում լոգիկուն, որ պարտադիր չէ համարւում «Ալիքի» խմբադրութեան մէջ:

(Մշակ № 163)

Հ. Ս.

#### IV

#### Ա Զ Դ

Մ-Յովնանեան օր. ուսումնարանի տեսչի կողսից

Յուլիս 6-ին գրած բացատրութեանու մէջ («Մշակի № 146») ես ասել էի հետեւեալը. «Մինչեւ օգոստոսի 1-ը պէտք է վերջացած լինի հոգաբարձութեան ընտրութիւնն ինդիրը, որովհետեւ ուսուցչական խմբի լաւ կազմ ունենալու հարցը կապ ունի և ժամանակի հետ. օգոստոս ամսում արդէն դժուար է ընտրութիւններ անել. մանկավարժական լաւ ոյժերը տեղաւորուած են լինում»:

Ես սպասեցի աւելի ըին մի ամիս, անցաւ և իմ գրած պայմանաժամը. հոգաբարձութեան ընտրութիւնը և հաստատութիւնը կարող է դեռ շաբաթներ տևել: Ես բարոյական պարտքս եմ համարում այժմ և եթի ձեռնամուխ լինել ուսուցչական խմբի կազմութեան, որովհետեւ յետաձգել նշանակում է զոհել դպրոցի շահերը հայկական անմիտ խորվասիրութեան: Սեպտեմբեր, 1906.

Մի ամսից աւելի ժամանակ էր տրուած, որ բծախնդիր խռովասէրները վերջացնէին իրանց հաշիքները։ Հին հոգաբարձութիւնը, ինչպէս պարզուեց գործիրի ծանօթութիւնից, պաշտօնավարութեան մէջ մտել է սեպտեմբեր ամսում. այս սեպտեմբեր ամսում լրանում է նրա պաշտօնավարութեան երեք տարին. բացի այդ, իւրաքանչիւր կօլեգիա օրինաւոր կերպով շարունակում է իր ֆունկցիաները, մինչև որ չէ գալիս նրան փոխարինող մարմինը։ Այդ մարմինը գեռ չը կայ, և անորոշութեան մէջ թողնել գոլրոցական գործը օգոստոսի համարեա կիսում, նոյն է թէ ենթարկել գործը սրահուա քմահաճոյքին։

Ուսուցչական խմբի կազմութեան ձեռնարկելով խնդրում եմ այդ առիթով ինձ հետ տեսնուել ցանկացողներին դիմել՝ Յովանեան ուսումնարան իւրաքանչիւր օր ցերեկ. ժամի  $1\frac{1}{2}$   $3\frac{1}{2}$ :

(Մշակ № 170)

Լ. Ս.

Թիֆլիս, 8 օգոստոսի

V

Դպրոցը պաշարմնն որութեան մէջ։

Յովանեան դպրոցի համար չորս հոգաբարձուներ ընտրող պատուիրակների ժողովի շարունակութիւնը տեղի ունենացաւ հինգամբի, ամսիս 10-ին, կէսօրից յետոյ առաջնորդարանում։ Ներկայ էին բոլոր 12 ընտրող պատուիրակները։ Նախագահում էր սրբազն առաջնորդը։

Ամենից առաջ կարդացուեց հանգուցեալ Յովանեանի կոտակը, որից յայտնուեց այն, ինչ որ արդէն վաղուց յայտնի էր ամենքին, այն է թէ՝ 7 նովագարձուներից\* չորսը պէտք է ընտրուեն ժողովուրդի կողմից, մէկը պէտք է լինի հանդուցեալի ժառանգներից մէկը, միւրա՞սրբ. առաջնորդը և եօթերորդը կուսանաց վանքի մայրապետը։

Կտակի ընթերցումից յետոյ, հարց յարուցուեց, թէ արդեօք նախ խօսել այն մանդատի մասին, որով ցանկալի է, որ

\*) Կտակում „հոգաբարձու“ կոչումը վերապահած է միայն Անանովի տոհմից արական ճիւղի մէջ աւագացոյնին (§ 6), իսկ մնացած ընտրովի թէ կտակով անդամները կոչւում են „նորօրդի անդամներ“, սակայն գործածութեան մէջ մտել է բոլորի նկատմամբ էլ հոգաբարձու անունը։  
ԽՄԲ.

զեկավարուի նորընտիր հոգաբարձութիւնը, և ապա ըն տրութիւններ կատարել, թէ ոչ ընդհակառակը, նախ ընտրութիւն կատարել և ապա այդ ցանկութիւնները արտայայտել:

Պատուիրակ պ. Տ. Յովհաննիսեանը կատարելապէս վըստահ լինելով ընտրութիւնների հետևանքի մասին (12 պատուիրակներից 9-ը Դաշնակցութեան ծխականներ էին) և համոզուած լինելով, որ ընտրուելիք հոգաբարձուներին արդէն տրուած է «ըիւրօյի» մանդատը, շատ անտարբեր կերպով յայտնեց, թէ այդ միեւնոյն է՝ կուզեն, այդ ցանկութիւնների մասին թող խօսուի ընտրութիւններից առաջ կամ յետոյ:

Որոշուեց նախ խօսել պատուիրակների ցանկութիւնների մասին և ապա ընտրութիւնները կատարել:

Պ. պ. Արասխաննեան և Հ. Առաքելեան այն միտքը յայտնեցին, թէ ընտրող ժողովրդից այդ մասին մանրամասն մանդատ չունինալով, պատուրակները անկարող են ընտրուելիք հոգաբարձուներին առանձին թելադրութիւններ անել, բացի այն, որ նրանք համապատասխան լինեն իրանց պաշտօնին և բարձր պահեն իրանց յանձնուած ուսումնարանի դիրքը և այլն:

Սակայն պ. պ. Տ. Յովհաննիսեան և Լիսիցեանը չը բաւականացան այդքանով և առաջինը շատ հեռուից, քողարկուած ու ծուռ ու մուռ ճանապարհներով, իսկ երկրորդը շատ աւելի համարձակ ու շիտակ կերպով այն միտքը արտայայտեցին, որ ընտրուած հոգաբարձութիւնը պէտք է ապօրինի համարէ պ. Լ. Սարգսեանի՝ տեսչութեան պաշտօնի հրատիրուելը և... մնացածը արդէն յայտնի է:

Այդ ապօրինութիւնը նրանք պատճառաբանում էին նրանով, թէ նախակին հոգաբարձութիւնը հէնց իրանք ապօրինի են եղել, նրանց պաշտօնավարութեան ժամանակ վաղուց է լրացած եղել, ուստի նրանք իրաւունք չունէին ոչ հին ուսուցչական խումբը արձակել և ոչ էլ տեսուչ հրաւիրել և այլն, և այլն, բոլորը ինչ որ արդէն քանիցս անզամ գրուել է «Ալիք»-ում: Ս. առաջնորդը, իրբի Յովհաննեան դպրոցի հոգաբարձուներից մին, բաւական երկար ու մանրամասն բացատրութիւններ տուեց, ապացուցանելով թէ փաստեն ու իրողութիւնները բոլորովին այնպէս չեն, ինչպէս որ այդ մասին խօսում է դրսում և մաւուլի մէջ: Ս. առաջնորդի պատմածով, նախակին հոգաբարձուները ճիշտ այն ժամանակներում, երբ հայոց ուսումնարանները անցան կառավարութեան ձեռքը, և այդ հոգաբարձուներին իրանց պաշտօնի մէջ հաստատել էր ոչ թէ Հայքաբետը, այլ ուսումնարանական դիրեկցիան:

Այդ հաստատման խնդրի մէջ էլ մի այսպիսի մանրամաս-

նութիւն է տեղի ունեցել. դիրեկցիան հոգաբարձուներին հաստատած է եղել յուլիսի 3-ին, բայց հոգաբարձութեանը կանչել, հաստատման թուղթը յանձնել և պաշտօնավարութեան են հրաւիրել միայն սեպտ. 3-ին, այնպէս որ նրանց պաշտօնավարութեան ժամանակաշրջանը լրանում է, ոչ թէ յուլիսի 3-ին, ինչպէս դուրսերը թիւրմացութեամբ խօսում ու պնդում են, այլ սեպտեմբերի 3-ին: «Այնպէս որ,—ասաց առաջնորդը,—այդ հոգաբարձուրերի իրանց ժամանակաշրջանից աւելի ապօրինի կերպով պոշտօնավարութեան մասին խօսք անգան չէ կարող լինել»:

Յետոյ ս. առաջնորդը բացատրեց, թէ ինչու Վեհափառը իսկոյն նոր հոգաբարձական ընտրութիւն կատարել չը տուեց, երբ ուսումնարանները վերստին հոգևոր իշխանութեանը վերադարձուեցին, այլ նա ընդհակառակը վաւերացրեց դիրեկցիայի կողմից վաւերացրած հոգաբարձուներին, մանաւանդ որ դրանցից մէկը արդէն վախճանուած էր, իսկ միւսը բացակայ:

«Դրա պատճառը,—ասաց առաջնորդը,—պարզապէս այն էր, որ անցեալ զեկուեմբերին, ինչպէս գիտէք, այնպիսի քաղաքական ու հայ-թուրքական հանգամանքներ էին ստեղծուել, որ անհնարին էր ընտրութիւնների մասին մտածել: Իսկ վեհափառը այդ հոգաբարձուներին վաւերացրեց նրա համար միայն, որ նա ուզեց և շտապեց իրապէս Յովի. ուսումնարանը իր իշխանութեան տակ առնել, որպէսզի հոգաբարձուները մի անկախ բան չը մնան և պատասխանատու ճանաչուեն Հայրապետի իշխանութեան առաջ»:

«Ինչ վերաբերում է ուսուցչական խմբի արձակելուն—շարունակեց աւեաջնորդը,—որի առթիւ ուսուցչական (?) համագումարը, առանց հոգաբարձութեան արձանագրութիւնները կարգալու, առանց խնդրին մօտիկից ծանօթանալու, ահազին աղմուկ հանեց և բօյկոտ հրատարակեց, նոյնպէս պատճառներից գուրս և ապօրինի քայլ չէ եղել, ինչպէս որ ինթագրուում է: Այդ խումբը հրաւիրուած էր դիրեկցիայի կողմից և իրեն մի սուսական ուսումնարանի համար, որտեղ բոլոր առարկաները աւանդուած էին ուսուերէն լեզուով, և ուրեմն բոլորովին հոգ չէր տարուած այն մասին, որ ուսուցչուհիները հայերէն պիտի գիտենան: Եւ նրանցից շատերը, իսկապէս, չը գիտէին էլ հայերէն: Նրանք նոյնպէս արձակուած պիտի լինէին այն ժամանակ, երբ ուսումնարանները դիրեկցիայից մեր ձեռքը անցան, բայց գարձեալ անպատեհութեան և այլ հանգամանքների պատճառով՝ ուսուցիչների արձակելը յետածգուեց մինչև ուսումնական տարուայ վերջը: Իսկ եթէ արձակման թղթի

մէջ ոչ մի պաճառաբանութիւն չը տրուեց, դա էլ ուղղակի ուսուցչունիներին անպատճութիւն չը բերելու համար էր։ Ուսուցչունիների համար, սակայն, գաղտնիք չը պիտի լինէր իրանց արձակուելու պատճառը։

«Եթէ, պարոններ,—աւելացրեց առաջնորդը,—ժողովի իրաւունքների մասին խօսելու, հոգաբարձութեան դէմ բողոքելու և րօյկօտ հրատարակելու խնդիր կար, այդ այն ժամանակ էր, երբ դիրեկցիան տէր ու տնօրինող դարձաւ Յովսանեան ուսումնարանում։ Բայց այդպիսի բաներ այն ժամանակ չեղան, այն ինչ երբ ուսումնարանում տնօրինողը մեր հոգեոր իշխանութիւնը եղաւ, այն ժամանակ բողոքելու ու բօյկոտների մասին յիշեցին»։

Այս ընդարձակ բացատրութիւններից յետոյ, թւում էր, թէ բողոքի ձայնը բաւական մեղմացաւ և ալիս հիմունքներ չէին մնում նախկին հոգաբարձութեան կարգադրութիւնները Coute que coute ապօրինի ճանաչելու, նամանաւանդ որ այդ ժողովը ոչ դատարան էր և ոչ էլ գումարուած էր հին հոգաբարձութեան գործերը քննելու և դատավճռու կարդալու։ Այդ կարծես զդում էին բոլորն էլ, բայց և դաշնակցական-պատուիրակները, ինչպէս պարզ երկում էր, նոյնպէս զգում էին, որ չէ կարելի խնդիրը այդպէս թողնել, որով և Սարգսեան իր տեսչական պաշտօնում վաւերացուած կարող է համարուել, այնինչ «բիւրօն» իր պատուիրակների վրայ պարտաւորութիւն է գրել հէնց այս ժողովում այդ հարցը վերջացնել։

Եւ յիրաւի, պատուիրակների ղեկավար ու խմբապետ պ. Տ. Յովհաննիսեանի մի քանի փաստաբանական քաշքառուկ սովորութիւններից յետոյ, նրա օգնական պ. Մուշայիձէ գրպանից հանեց մի բեղոլիւցիա, որ և առաջարկեց ժողովին։ Ռեզուլիւցիան մի քանի «ի նկատի ունենալով»-ներից յետոյ նոյն բանն էր ասում, ինչ որ ո. առաջնորդի տուած բացատրութիւններից առաջ ասել էին պ. պ. Տ. Յովհաննիսեան և Ս. Լիսիցեան, այն է՝ նոր հոգաբարձուները պարտաւոր են անվաւեր ճանաչել հին հոգաբարձուների դալիք ուսումնական տարուայ համար արած բոլոր կարգադրութիւնները, ուամկօրէն ասած՝ չընդունել և Սարգսեանին տեսուչ։ Այդ է դաշնակցականների ամբողջ փորի ցաւը։

Միանդամայն պարզ էր, որ այդ բեղոլիւցիան կազմուած էր «բիւրօյում» և խստիւ պատուիրուած, որ, ինչ էլ չը լինի, պիտք էր նրան անցկացնել։ Այդ պարզ էր, ասում ենք, նրանից, որ բեղոլիւցիան առաջարկողները ոչ միայն չէին կարողանում նրան համարձակութեամբ ալաշտպանել, այլև նոյնիսկ

խուսափում էին նրա մասին վիճել, միևնույն է զուք մեզ չէք յետ կանգնեցրի այդ ըեղոլիւցիայից,—այսպէս էր մօտաւորապէս Տ. Յովհաննիսեանի փաստաբանութիւնը: «Աւելի լաւ է քուէի դնենք»—շարունակ պնդում էր նա, շատ լաւ հասկանալով որ իրանք՝ երեք խօսող պատուիրակները այնտեղ այլ վեց անխօս պատուիրակ-ընկերներ էլ ունեն, որոնք անհամբեր ձեռք բարձրացնելու բոպէին էին սպասում:

Իեղոլիւցիայի գէմ առարկում են, թէ ընտրող ժողովրդից այդպիսի մանդատ չունեն պատուիրակները, թէ առանց հին հոգաբարձութեան պատասխաններն ու բացարութիւնները լըսելու չէ կարելի այդպէս դատավճիռ կարգալ ու դրական կերպով ապօրինի համարել նրա գործերը, թէ այդպիսի քննութիւն ու որոշումներ կայացնելը թողնելու է նորընտիր հոգաբարձութեանը, որը գործերին մօտիկ ծանօթանալով ինքն էլ կորոշի իր անելիքը և այն և այն:

Բայց ով էր այդ առարկութիւններին լսողը, «քուէարկութեան դնենք», վասալամ:

Իեղոլիւցիան քուէարկութեան դրուեց և, ի հարկէ, 9 ձայնով ընդդէմ 3-ը ընդունուեց:

Ժողովում բաւականին անյարմար դրութեան մէջ էր ըզդում իրան պատուիրակ տիկին Ս. Արդութեանը, որը, ինչպէս երեսում էր, բոլորպին անծանօթ լինելով «կուսակցական» դիսցիլինայի, ներկայացուած ըեղոլիւցիայի երես ու աստաբի հետ, ոչինչ չէր կարողանում հասկանալ այդ ժողովից ու շուարած սրա-նրա երեսին էր նայում, չը կարողանալով իրան հաշիւ տալ, թէ ինչպէս կարող են մարդիկ այդպիսի արսուրագութեան հասնել ու չը քննուած գործերի մասին նախօրօք կտրական վճիռ արձակել, ինչպէս այդ անում են ճիշտ մեր կառավարչական դատարաններում:

Ինչպէս երեսում էր, տիկնոջը ամենից աւելի պ. պ. Տ, Յովհաննիսեանի, Լիսիցեանի ու Ալիբէկեանի վարմունքն էր զարմացնում, որոնց մասին, երեսի, նա աւելի լաւ գաղափար ունէր:

Սակայն տիկրոջ համար խնդիրը աւելի պարզուեց, եթք ընտրողական կօմիղիան սկսեցին: Բայց այդ կօմիղիան մեզ համար էլ մի այլ բան պարզեց, այն է, որ Դաշնակցութիւնը մնանկացած է և այլև հրապարակի վրայ մարդեկ չունի, ուրոնց կարողանայ թեկնածուներ առաջարկի. նա կամ իրգերը վերջացրած աշուղի նման կրկնողութիւններ ու նէյնըմ նէյնըմ ներ է անում, և կամ լիկվիդացիայի ենթարկուած վաճառակա-

նի նման սկսել է քունջ ու պուճախներում մնացած փասման-դա-ապրանքները հրապարակ հանել:

Մեր խօսքը, ի հարկէ, առաջարկուած ու իրանց 9 ձայնով ընտրուած թեկնածուների մասին է, որոնց անունները երեկ արդէն տպագրուեցին «Մշակ»-ում:

Բոլորովին նորութիւն չէ, որ Դաշնակցութիւնը թեկնածուներ առաջարկելիս երբէք նրանց արժանաւորութիւններն ու պաշտօնին յարմարութիւնները ի նկատի չէ առնում: Նրու համար բաւական է միայն, որ ընտրուողների ճակատին կուսակցութեան «հարլիկ»-ը լինի կազմած և հնարաւոր լինի նրանց միջոցով նոր նոր նուանումներ անել:

Եւ նա «փառաւորապէս» նուանեց Յովսանեան դպրոցը...  
(«Մշակ» № 174)

Խ.

## VI

Թիֆլիս, 17 օգոստոսի

Ահա ուղիղ երկու ամիս է, ինչ լրագրութեան մէջ և հասարակական լանազան շրջաններում քննուում է Յովսանեան դպրոցի հոգաբարձական, ուսուցչական և տեսչական հարցը:

Այդ հարցը նախ և առաջ հետաքրքրում և վերաբերում է մեզ՝ ծնողներիս, որովհետեւ մեր երեխաններն են, որ այնաեղ սովորում են և սովորելու են, ուստի և մենք ամեն կողմից քննելով այդ մեզ համար կարեով հարցը՝ եկել ենք հետեւալ եզրակացութեան:

ա) Հոգաբարձական այն կազմը, որ մենք որպէս ծխականներ ընտրել էինք երեք տարի առաջ, նա հաստատուել է և գործունէութեան մէջ մտել. այդ կազմի օրինական ժամանակամիջոցը լրանում է առաջիկայ սեպտեմբերի 3-ին, ուստի և նրա բոլոր որոշումները օրինական են և ոյժ ունեն մինչև սեպտեմբերի 3-ը, և նոյն իսկ աւելի երկար, մինչև որ նոյն օրինական ձևով ընտրուած նոր հոգաբարձական մարմինը գայ և ստանձնէ հսկից բոլոր գործերը:

բ) Մենք եթէ ծխական ժողովներում բողոքել ենք, բողոքը վերաբերում էր Յովսանեան դպրոցի հոգաբարձութեան այն իրաւասութեանը, որ նա ստանում էր կաթողիկոսից յաջորդեւակի համար, առանց որ դրա համար օրինաւոր ընտրութիւններ եղած լինէին:

գ) Ահա այդ իսկ հիման վրայ մենք հոգաբարձութեան այս որոշումը, որով նա տեսուչ է հրատիրել ալ. Լեռն Սարգս սեանին, համարում ենք օրինական, ուստի և նրան համարում ենք օրինական տեսուչ Յովիանեան դպրոցի:

դ) Ուրախ ենք, որ մեզ աջողուեց վերականգնել մեր ծընական իրաւունքները և այդպիսով սեպտեմբերի 3-ից մենք կունենանք նոր հոգաբարձութիւն, որը և կըվարէ ուսումնական-անահետական գործերը համաձայն հանգուցեալ կտակողի կամքի:

ե) Մենք թոյլ չենք տայ, որ դպրոցի մէջ մուտք գործեն այս կամ այս քաղաքական կուսակցութիւնները և դպրոցի մէջ առաջ տարուեն կուսակցական, անձնական միտումներ, համակրութիւններ, հակակրութիւններ. դրա համար կան մամուլ և այլ ճանապարհներ, այլ ասպարէզներ:

զ) Մենք կամենում ենք, որ դպրոցում լինեն պաշտամանաչ հոգաբարձուներ, հմուտ, իր պաշտօնին արժանի տեսուչ և արժանաւոր ուսուցիչներ, իսկ թէ դրանք քաղաքական բնչ համոզմունք ունեն—դա մեզ և մեր երեխաններին չէ վերաբերում:

Ահա մեր, որպէս ծնողների, ցանկութիւնը, կամքը: Դըպրոցը մի դարձնէք զանազան կուսակցական ինստիտուների բոյն, ուր դուք ցանկանում էք ձեր կուսակցական հաշինները տեսնել:

Այդպիսով գուք կասաջացնէք նոր բարգութիւններ, ուրոնցից արգէն զգուել է հասարակութիւնը: Այս եմ մտածում ես, այս են մտածում ինձ հետ միասին և բոլոր իսկական ծընողները և այս վերաբերում է և ձեզ, պ. լ. Սարգսեան, և ձեզ, պ. պ. նորընտիր հոգաբարձուներ:

Երկուսիդ մէջ մենք մանկավարժական ծրագրի, ուղղութեան և համոզմունքների տարրերութիւն չէ, որ տեսնում ենք այլ անձնական, կուսակցական հաշիններ: Դուրս զցեցէք այդ բոլորը դպրոցից և սկսեք կրթական մեծ և սուր գործը:

Ի դիմաց մի խում ծնողների

Ե. Տէր-Սարգսեանց

Դարձեալ Մ.-Յովն. Օր. Ռւսունարանի մասին

(Նամակ խմբագրութան)

Կարդացի «Մշակի» № 180-ի մէջ (օգոստոսի 20-ից) «ի պիմաց ծնողների՝ Ե. Տէր-Սարգսեանցի» նամակ խմբագրութեան գրուածքը, որ առիթ է տալիս ինձ գարձեալ խօսել այդ ուսումնարանի մասին, մանաւանդ որ առաջին իմ բացատրութիւնից յետոյ, որ տպուած էր «Մշակի» մէջ յուլիսի 7-ին, հարցը ստացել է այժմ նոր կերպարանք, բանակումների շնորհիւ:

Թող ներեն ինձ պ. ոլ. ծնողները, եթէ իմ այս բացատրութեան մէջ գտնեն բուն հարցից մի քանի շեղումներ, որոնք անհրաժեշտ են, քանի որ պ. Ե. Տէր-Սարգսեանցը իմ մէջ ևս տրամադրիր է գտնել ինչ-որ «կուսակցական և անձնական հաշվաներ» այդ ուսումնարանի շուրջը ծագած պայքարի մէջ: Դա մեծ թիւրիմացութիւն է:

Ես 1894 թուականին հրաժարուեցի Շուշու թեմական գլուխոցի տեսչական պաշտօնից և հեռացայ, որովհետեւ համոզուեցի, որ կղերական բիւրօկրատիան, յենուելով եջմիածնում բուն գրած կամարիլիայի վրայ, ամէն կերպ աշխատում է խոչընդուներ դնել իմ գործունէութեանը այդ գպրոցում: Հակառակութիւնը իսկապէս ծագել էր նրանից, որ ես իբրև տեսուչ բարձր էի պահում մանկավարժական ժողովի և հոգաբարձութեան հեղինակութիւնը առաջնորդի և նրա արբանիակների փաշայական ոտնձգութիւնից և, բացի այդ, պահանջում էի հոգաբարձութեան յանձնել դպրոցի ընդարձակ կալուածների տնօրինութիւնը և այդպիսով բարձրացնել թեմական գպրոցի եկամուտները: Առաջնորդը պէտք է հեռացնէր ինձ, որպէսզի շարունակէ իր անկօնարու կամայականութիւնները: Իմ բուն տեսչական գործունէութեան դէմ ոչինչ չը կարողանալով ասել, առաջնորդը իր արբանիակ սկ հարիւրեակով հնարեց միջնադարեան ինկվիզիցիայի մի հալածանք: մէջ եկաւ «Յովին մարդարէի և կէտ ձկան» «դայթակղոցուցիչ» առասպելլու:

Հեռանալով «աղջային-եկեղեցական» ուսումնարանների առաջարէզից, կոնդակների բանադրանքների հետ, ես հետո տարայ մի որոշում: Երբէք ոտս չդնել այդ հաստատութիւնների

մէջ, քանի դեռ այնտեղ տիրող կը հանդիսանայ կղերական քմահաճոյքը:

Եկաւ Ռուսաստանի մեծ յեղափոխութիւնը, որ տապալեց և հայ կղերի գերիշխանութիւնը: Ո՞չ հայ գործիչների ջանքերով տապալում էր և հայկական կեանքի կղերական փաշայականութիւնը: Թւում էր, թէ մենք ևս վերածնուած ենք:

Մայիսի վերջերում մի յարգելի անձնաւորութիւն, որ վազուց հեռացել է մանկավարժական ասպարէզից և ինձ ճանաշում է իրեւ նախկին պաշտօնակից, ոչ մի անձնական շահ հով կապուած չլինելով Յովնանեան ուսումնարանի հետ, բայց նրա բարօրութեան ամենաանկեղծ նախանձախնդիրն հանդիսանալով, յատուկ եկել էր և ինձ աշխատում էր համոզել՝ դնել իմ թեկնածութիւնը այդ ուսումնարանի տեսչական պաշտօնի համար: Նա գիտէր, որ ես մի տարի առաջ մերժել էի Ալէքսանդրոպոլի առևարական ուսումնարանի (կոմերչ. ոչիլ.) դիբեկտորի պաշտօնը, որ հեռագրով առաջարկուած էր ինձ քաղաքագլխից: Եւ ահա «Հքաւոր» և որբ աղջիկների կրթութեան սիրոյն» առաջարկում էր ստանձնել տեսչական պաշտօնը Յովնանեան ուսումնարանում, որի յաւալի վիճակը, և նրա վարժուհիների մի մասի ապիկարութիւնը, ի դէպ ասած, կշտամբում էր այն ժամանակ և «Ալիքը»... Ես գրականապէս մերժեցի իմ կողմից որևէ դիմում անել և դնել թեկնածութիւնս:

Այնուհետև յունիսի 8-ին, Գոլովինսկի պրոսպեկտում, գիշերը ժամի 10-ին, պալատի դիմաց, պատահմամբ հանդիպեց ինձ պ. Ս. Յարութիւնեանը և յայտնեց ինձ այն, ինչի մասին նա ինքը հազորգել է «Մշակում» տպուած իր նամակով: Իսկ իմ առաջին բացատրութիւնը յուլիսի 6-ից լրացնում է տեսչական հարցի ծագումը: Ուրիմն, իմ կողմից, իմ նախանձեռնութեամբ, իմ ջանքերով ոչ մի դիմում չէ արուած Յովնանեան ուսումնարանում պաշտօն ստանձնելու նպատակով: Եւ եթէ ուսումնարանի Խորհուրդը և նրա հոգաբարձուն, ունենալով ուրիշ թեկնածուների անուններ, այնուամենայիւ ինքը իր յօժար կամքով միաձայն որոշել է ինձ ընտրել տեսուչ, առանց նախօրօք տեղեկացնելու այդ մասին գաշնակցական «բիւրօյին», և ապա ներկայացրել է այդ ընտրութիւնը ի հաստատութիւն կաթողիկոսի, ինչպէս պահանջում է հիմնաղը կտակը,—ես այդ բանում «զազտագողի» ոչ մի արարողութիւն չեմ գտնում: Իսկ թէ մըն է «աղգային բիւրօկրատիայի» ցասման և քինախնդրութեան բուն պատճառը, այդ հասկանալի է միայն նըրանց, որոնք գիտեն իմ և դաշնակցական աղաների մէջ անցած դարձուցը:

Դուք, պ. պ. ծնողներդ, առում էք, թէ «կուսակցական անձնական հաշիւներ» կան այդ պայքարի մէջ: Ճիշտ է, ուսկայն ոչ արդարացի երկու կողմերի նկատմամբ: Եւ պէտք է պարզել այդ թիւրիմացութիւնը: Թող ամեն բան լինի պարզ և աշկարա. միայն գոյն է վախենում լոյս ցերեկից և բռնակալը՝ ազատ խօսքից: Ասացէք խնդրեմ, կարելի՞ է, օրինակի համար, ուսւ կամ թիւրք բիւրօկրատիան ամբողջապէս վերցրած «կուսակցութիւն» անուանել. դա որոշ սիստեմի, բեժիմի մէջ շահագրգոռուած խայտարդետ անհատների մի ընկերութցութիւն է և ոչ կուսակցութիւն: Կարելի՞ է այն բոլոր մարդկանց, որոնք քաջութիւն ունեն բողոքելու այդ բիւրօկրատների բռնութիւնների դէմ, «կուսակցական, անձնական հաշիւների» մէջ մեղադրել: Դուք, անշուշտ, կ'ասէք—ոչ, որովհետեւ իւրաքանչիւր շիտակ քաղաքացու բարոյական պարտքն է բողոքել բռնութեան դէմ. այլապէս զօրբաների բանապետութեան վերջ չի լինի: Այդպիսի բողոքները միշտ իրանց վրայ են զրաւուել անկօնտրոլ իշխանութ տեսնդով բռնուած բիւրօկրատների ցասումն և հալածանքը:

Ինչո՞ւ պէտք է մեր կեանքում Գաշնակցութիւնը, շեղուելով իր բռն նպատակից և դառնալով մի անկօնտրոլ բմահաճ բիւրօկրատիա առանց միջոցների խտրականութեան սկզբունքով, պէտք է բացառութիւն կազմէր: Բիւրօկրատները ամեն տեղ նման սիստեմով և միջոցներով են գործում: Գաղափար կազմելու համար զաշնակցական բեժիմի մասին կարգացէք հէնց ծնողներիկ նամակից մի քիչ վերև շարուած մողերը նոյն «Մշակում», եթէ ձեզ ծանօթ չին հապարաւոր այլ փաստեր: Կարգացէք և մի սոսկաք իրքն քաղաքացի, իրքն հայ: Եթէ դուք մոլորուած չէք և դաշնակցական անդիտակից խուժանին չէք պատկանում, պէտք է որ աղաղակէք. «Հերիք է, հեռացէք ասպարէղից»:

Արդ, այդ բաշիրողուկ բեժիմի դէմ մաքառողը մի՞թէ պէտք է ղեկավարուի անպատճառ ինչ-որ «կուսակցական, անձնական հաշիւներով»:

Մի կարստպետ եպիսկոպոս Այլավեանի և իր արբանեակների, իսկ այժմ դաշն. «Բիւրօյի» փաշայական քմահաճովքների դէմ կոուելով բացի անձնական անախորժութիւններից և զրկանքներից ի՞նչ շահ ես պէտք է ունենայի: Բաւական է, որ ես մի քիչ համակերպուէի, «Բալի» տաէի, որ ագատուած լինէի զալմաղալներից և իմ անձնական բաներս դրստէի... Սակայն կան մարդիկ, որոնք անկարող են համակերպուել և լոռութեամբ տանել բռնութիւնն ու անարդարութիւնը, թէև դիտեն, որ այդ

յանդգնութեան հետեանքը անձնական տեսակէտներով բաւական անախորժ է...»

Այս, կուսակցութիւններ ես ճանաչում եմ, սակայն կանքաներ, որ իւրաքանչիւր շիտակ քաղաքացի պէտք է ըմբռնէ, անկախ՝ կուսակցական դաւանանքներից, եթէ նա ֆանատիկոս աղանդաւոր չէ, եթէ նա միջոցների անխորրականութեան հետեւող չէ: «Ածուխը ու է, մածունը սպիտակ»: — մի՞թէ այդ ճշմարտութիւնները խոստովանուելուց առաջ պէտք է տեղեկանալ, թէ ինչ է հրամայում կուսակցութիւնը կամ մեր ռտէրու տնօրէնը»: «ըիւրօն»:

Ես մի ամբողջ տարի է բոլոր ժողովներում բողոքում եմ Դաշնակցական կուսակցութեան սիստեմի դէմ, որովհետև իժ հոգու ամբողջ էութեամբ անզօր եմ զսպել իմ ներքին ձայնը, տեսնելով մի խումբ խելազար, իմաստակ և ապիկար քեալագեօլների խաղերը՝ «կառավարութիւն» դառնալու: Դա բիւրօկրատիական մի համաճարակ, մի պսիխոզ է այդ պարոնների կողմից: Մամուլի մէջ ես բողոքեցի այդ ազգային նոր ցաւի դէմ այն ժամանակ, երբ Յովիսանեան ուսումնարանի տեսչական խնդրի մասին ոչ մի ձայն չկար: Կարդացէք, խնդրեմ, ապրիլի 22-ին գրած «Նպատակը արդարացնում է միջոցները» յօդուածու «Մուրճում» (№ 4—5, եր. 126—135), «Մօտիկ անցեալից» գրուածքը նոյն համարում և գուք կը հասկանաք «բիւրօի» մարդուկների քինախնդրութեան և կատաղութեան պատճառը: Կարդացէք ամսադրի յաջորդ համարում մայիսի 27-ից «Կայծ»-ին նուիրած տողերը և դուք կը հասկանաք շատ բան, ինչպէս և այն, թէ ինչո՞ւ գաղտնի բօյլու էին յայտնել «Մուրճին»: Թոյլ տուէք առաջ բերել մի բանի տողեր միայն, որպէս զի ցնդուի այն սուսոք, որ իրեք թէ իմ կոմիւ այդ բիւրօկրատների զէմ սկսուեց տեսչական հարցից յետոյ: Ահա ինչ էր դրած, մայիս ամսում, գաշնակց. բիւրօկրատների հասցէին «Մուրճում»: — «Մէր մէջ դժբախտ ներքին և արտաքին հանգամանքների շնորհիւ առաջ եկած ազգային յեղափոխական կազմակերպութիւնները կոմաց-կամաց իւրացըրին «Նպատակը» արդարացնում է միջոցները» սկզբունքը և մեծ մասամբ գառան վերջ ի վերջոյ կոնսպիրատիւ ասիական բիւրօկրատիա՝ նրա ըոլոր հրէշաւոր պակասութիւններով. այդ տեսակ «յեղափոխական բիւրօկրատիայի» գոյութեան մէջ շահագրգոռուած կամ յաճախ մոլորուած ու միամիտ մարդիկ չեն կարողանում տեսնել և լսել այն աղաղակող բռնութիւնների ու զեղծումների մասին, որ ամեն օր կատարում են հայ ժողովրդի գլխին զա-

նազան տգէտ, արիւնոռոշտ, վայրենի և բիրտ ոյժեր և ան-  
բարոյականացնում նրան»:

Արդեօք ցնկումց «Ալիքի» սփռած մշուշը և հնարած ա-  
ռասպելը տեսչական հարցիս մասին, թէ ոչ...

Իբրև հրապարակախօս, իբրև շիտակ քաղաքացի և իբրև  
հայ՝ «ազգասիրաբար» լսել, տեսնելով ահարեկուած ժողովր-  
դի ազատութեան ամենատարական իրաւունքների բիրտ ո-  
տանահարում, լսել այդ հայկական փոքրիկ Պլէվէների ինքնա-  
հաւան խօսքերը, թէ նրանք «այդ կերպ կըթում են փչացած  
հայ ժողովուրդը», լսել այդպիսի դաստիարակներից, թէ «դեռ  
լսւ է, որ ծեծից, բանտից, աքսորից բացի կախաղաններ էլ  
չենք բարձրացնում» \*) հայ ժողովրդին, Դաշնակցութեան ցան-  
կացած գրեսսիրօվկայի տակից անցկացնելու նպատակով,—այդ  
ըոլորից յետոյ լսել նշանակում է բարոյապէս փչացած սինլիքոր  
լինել, սորկահոգի կարիներիստ լինել, Ֆրէյլինսկայա փողոցում  
ապաստանած աղանների հացկատակը հանդիսանալ: Թող այդ-  
պէս վարուեն, ովքեր կարող են:

Հասկանալի է, որ մեր կեանքի «տէր ու անօրէն» դառած  
դաշնակցական աղանների ու փաշտների հասկացողութիւններով  
պէտք էր յարմար առիթ գտնել «ոչնչացնելու աներես համար-  
ձակութիւն» ունեցողին: Այդ ընդգծուած խօսքը լսող վկան-  
կենդանի է, իսկ միւս երկու խօսքերը տպուած են «Զանգի»  
մէջ:

Եւ ահա մեր ազգային Պլէվէները յարմար տոփթ համա-  
րեցին Յովլանեան ուսումնարանի տեսչական հարցը, որ և  
դառաւ նրանց համար casus belli: Հեռացրուած վարժուհիների  
բողոքը, Մողնու եկեղեցու միքանի ծխականների տրաունջները  
հին հոգաբարձութեան դէմ և ուսուցչական ծակրուած համա-  
գումարի թեթևամիտ բօյկառ՝ չափազանց նպաստաւոր պայման-  
ներ էին մեր կուրօպատկինների աչքում, և կոիս յայտարա-  
րուեց մի հատիկ անձի դէմ ամբողջ կազմակերպութեան բիւրօի  
կողմից: «Ալիքի» միջից ինձ վրայ նետեցին ինսինուացիաներով,  
ստերով և զրպարտութիւններով լիք սումբեր իրար յետեից եր-  
կու անզամ: Եւ ես սպատախանսեցի երկու վրիպած սումբերի  
գէմ «Ալիքի մանեօվրները» յօգուածովս: Ուրիմն նախայարձա-  
կը Յովլանեան ուսումնարանի ինզրում, պէ. Միքայէլ Յովհան-

\*) Եւ այդ ասողը գերմանական կրթութիւն ստացած մի «բժիշկ» էր.  
այդ «բժիշկը» պէտք է նախ ինքը բուժուէր հոգեկան հիւանդութիւնից.  
կհղծ յեղափոխական փսխողից և ապա հոգ տանէր հայ ժողովրդի մասին...

նիսիկան, ձեր «Ալիքն» էր և ես միայն պատասխանում էի: Բայց թողնենք այդ:

Ես շեզուեցի, որովհետեւ դրսի մարդկանց համար պարզ չէր դաշնակյական աղաների և փաշաների կոիւ նետուելու շարժառիթները: Քողը պատուեց «Ալիքի» մանեօվըները» յօդուածով:

Այնուհետև իմ անձի դէմ մաքառելը դառել էր դաշնակցական բիւրօկրատիայի միակ նպատակը Յովլանեան ուսումնարանի գործում, նրանց ինչ թէ ինչ կը լինի ուսումնարանի հետ, ամեն բան պէտք է զոհել վրէժիմովը թեան: Ես կարող եմ տասնեակ վկաներ բերել, որոնց առաջ այդ աղաները խոռոշովանել են իմ աեսչական ընդունակութիւնների մասին, նոյն իսկ ասել են, թէ եթէ իմ քննադատուկան վերաբերմունքը չինչը դէպի այդ շէֆիրը, այն ժամանակ նրանք մտադիր էին հրաւիրել ինձ տեսուչ Ներսիսան դպրոցում... Բայց այժմ չափազանց անբարեոյս եմ (հեելագոնադեյքն) ճանաչուած ազգային պօլիցիայի և բիւրօկրատիայի աշքում...»

Թէ որ աստիճան ես հետու էի Յովլանեան ուսումնարանի հարցում «կուսակցական կամ անձնական հաշիւներից», այդ երեւում է իմ աւաշին բացատրութիւնից, որ զրուած էր այն ժամանակ, երբ զես ուումբեր չէին նետուած «Ալիքի» էջերից իմ հասցէին և իմ մտավ չէր անցնում, թէ այդ ըիւրօկրատների հոգու աղքատութիւնը կարող է հասնել անհեթիթութեան Հերկուէսեան սիւներին, և նրանք Յովլանեան ուսումնարանը իրենց «կազմակերպութեան» սխրագործութիւնների առարկայ կը դարձնեն: Բայց իրականութիւնը գերազանցեց իմ յունետեսութիւնը այդ պարոնների նկատմամբ: Ինչպէս երեխ յիշում են պ. պ. ծնողները, ես, ծանօթանալով ուսումնարանի իմճուած հարցերի հետ, հինց առաջին անգամից յայտնել էի այն միտքը, որ գալուցը սումբուրից ու քաօսից գլուրս բերելու միակ ելքը նոր հոգաբարձութեան ընտրութիւնըն է: Ես հաւատացած էի, որ մինչև օգոստոսի 1-ը կարելի է գլուխ բերել այդ ընտրութիւնները: Եւ այդ նորընտիր հոգաբարձութեան ևս պատրաստ էի առաջարկել իմ վերջնտրութեան հարցը: Սակայն օգոստոսի 10-ին պատուիրակների ժողովը և մինչ այդ պատուիրակների ընտրութիւնների ամբողջ պատկերը ցոյց տուին, թէ կրքից կուրացած բիւրօկրատները իրանց խուժանի միջոցով ինչեր չեն անիլ: Երեք եկեղեցիների մօտ 8 հազար իրաւատէր ծխականներից մասնակշել էին մօտ 200 հոգի որոնցից 120 դաշնակցական խուժանից, որ և ընարել էր բիւրօյի նշանակած մարդկանց: Այդ

բաւական չէ. «Ընտրուած» պատուիրակներից 9 հոգի իրանց էին վերապահել նաև կեղծել ընտրովների կամքը. իրր այդպիսին յայտարարելով այն մանդատը, որ թելադրել էր «քիւրօն»: Միթէ այսպիսի կեղծիքով արտայայտուած «ժողովրդի կամքը» մի շանտաժ չէ: Միթէ այսպիսի «Ընտրեալների» առաջ ես պիտի կօմեդիա խաղամ, զնելով իով վերընտրութեան» հարցը, թէկուզ այդ լինի իմ գրած պայմանաժամից մի ամիս էլ անց: Ո՛չ, ես կօմեդիա խաղալու ոչ մի ախորժակ չունիմ և եթէ հասարակութիւնը այնքան ճնշուած է, որ այգափիսի ընտրութիւններին բարոյական սանկցիա է տալիս, ես ձեռներս լուանում եմ այդ ինքնասպանութեան գործում...

Տեսնելով, որ այժմ մեր ուսումնարանները ազատուել են կղերական բիւրօկրատների ճանկերից, ընկել են աւելի և բիւրտ և քահանած ազգային բիւրօկրատների բռունցքների մէջ, — և անկարելի եմ համարում արդիւնաւոր դործունէութիւն այդ ասպարէզում, բնաւ չուզենալով օգտուել այդ փաշաների ֆավորիտիզմից:

Մինչ խորհրդի «Ընտրովի» անդամներ հաստատութիւնը ես վարել եմ և վարում եմ իմ պաշտօնը սկսած յուլիսի 1-ից, նուխապատրաստական աշխատանքներ կատարելով առաջիկայ ուսումնական տարուայ համար: Զեր զաւակները կ'օգտուեն այն հիմնական բէմօնաներից, որ իմ խնդիրքով կատարել տուեց Խորհուրդը: Իմ նախապատրաստական զրադմունքների ժամանակ ես տեսայ, թէ իսկապէս մը դասակարգի համար է այդ կրթական հաստատութիւնը: Եւ խոր վիշտ էր համակում ինձ, երբ ես տեսնում էի որը և չքաւոր երեխաներին և աչքս դարձնում այն նեղսիրտ և կոյր մարդուկների վրայ, որոնք պատրաստ են ամէն ինչ զոհել իրանց կիրքը յագեցնելու համար: Երբ տեսնում էի ուսումնարանի հարցով «հետաքրքրուող» կողմանակի և պատահական անձանց, իսկ մի կողմ քաջուած անձանց ծնողներին... Միխթարական էր, վերջապէս կարդալ ծընողների մի մասի նամակը, իրեն զարթնած զիտակցութեան առաջին արտայայտութիւն, շահագրգուած վարժուհիների, թեթեսողիկ «մանկավարժների» և դաշնակցական աղաների ստեղծած այս տնմիտ ու վայրագ ժխորի մէջ: Սակայն ծնողների այդ ձայնը չափազանց թոյլ է և նա չէ բողոքում ընտրողական այն կեղծիքի դէմ, որ կայացրել են մեր դաշնակցական բիւրօկրատները, որոնք կարող են միայն փչացնել ամեն մի հասարակական գործ, որին մեկնում են իրանց ապիկար ձեռները:

ՀԱՅՈՆ ՍԱՐԳԱՆԱՆ

## ԴՕՆ ԿԱՐԱՊԵՏԻ ԱՐՇԱԿԱՆՔԻ ԴԷՊԻ ԿՂԵՐԱՍՏԱՆ

II a b e a t s i b i.

Լուսանալուն պես Դօն Կարապետը վեր կացաւ, զարթեցրեց իր զրահակըին՝ Խէչանենց Խէչօին ու պատուիրեց նրանք որ ձին թամբի, գէնք ու զրահը պատրաստի. այդ օրը նա մեծ արշաւանքի էր գնալու:

Խէչօն (որը Արարատեան դաշտի Քամբաղդ գիւղիցն էր), քնաթաթախն վեր կացաւ ու մեծ անտարբերութեամբ սկսեց թամբի պատրաստութիւնը տեսնել: Ասպետական բոլոր գէնք ու զրահները բերաւ. միտնգամից թափեց Դօն Կարապետի առաջ, ու յետոյ զնաց ձին թամբելու:

Դօն Կարապետը շտապ շտապ հագաւ իր պողպատէ զգեստը, զլիսին զրաւ սաղաւարտը, որ պիտի ասեմ, զալաքիթաս էր ու մեծ հնութիւն ու սրբութիւն էր, որովհետև նա նոյն նողատակով ծառայել էր և մեծահոչակ Դօն Քիշօտին, մեր Դօն Կարապետի ուսուչին, և չեմ իմանում ինչպէս էր սրա ձեռքն ընկել: Մեծ վահանի վրայ, այլ և Դօն Կարապետի աջ ու ձախ թերերին պրօշմած էր «Թ» տառը, որը ցոյց էր տալիս, թէ մեր ասպետը որ ուխտիցն (օրդէն) է. ոմանք ասում էին, թէ Դօն Կարապետը «Դրօշակեան» ուխտիցն է, ոմանք էլ թէ «Դաշնակցութիւն զինուորաց» ուխտին է պատկանում:

Երբ ամեն ինչ սպատրաստ էր, Դօն Կարապետը ոկտեց ճառել, որ հասկացնի Խէչօին իր արշաւանքի նպատակը:

—Ո՞վ վեհ գաղափարներ, վսեմ իդէաներ: Ով աշխատաւոր ժողովուրդ, ով սուրբ սրբութիւն: Ով աղատութիւն, եղբայրութիւն... իմացիր, ով Խէչօ, իմ մեծ ծրագիրները. աղատութիւն, աղատութիւն կը տամ ես Հայաստանէն. կը թոթափեմ նրա վրայից բռնաւորի լուծը. ապա իմացիր Խէչօ, որ ես սոցիալիստ եմ, իսկական, կրոպական սոցիալիստ: Երդւում եմ Խէչօ, ուխտիս անունով, այն սուրբ, որը խողխողեց սուրթանի ստուերն, կը մտցնի սոցիալիդմը ազգի մէջ: Ասպետներ կան, որոնք ասում են... (չհաւատաս, չհաւատաս նրանց, եթէ ոչ...) որոնք ասում են որ իրը ես սոցիալիստ չեմ, կամ

թէ ասում են, որ իբր ևս մեծ կոռուի ժամանակ նստել էի ջուրու վրայ ու մի տեղ կանգնել և սուս «չու, չու» էի անում: Ոչ, ոչ, թող կորչեն այդ զրպարտիչները. ես իսկական, եւրոպական սօցիալիստ եմ. ուզմաւմ ես համոզուել. ապա նայիր վահանիս, աջ և ձախ թերթիս, տես քանի «Դ» ունիմ. իսկ նրանք, հազիւ մի «Ի» ունենան: Ես նոր իմացայ, որ այստեղ էլ թէժիւ կայ, (Տաճկահայաստանից վերադառնալուց յետոյ), թէ չէ զու կը սեսնէիր թէ ինչ՞ր կանէի: Եւ հէնց այսօր ես գնում եմ մեծ ուսուցչի՝ Դօն Յիշոտի գործը շարունակելու— բռնակալներին հալածելու և զրկուածներին պաշտպանելու. ես գնում եմ (ծայնո բարձրացնելով), այս, ես գնում եմ տապալելու կեղեքիչ, բռնակալ կղերին, որը ժողովրդի ազատութիւնը շղթայել է ու ստրուկութեան մէջ է պահում նրան)...

Խէջն, որ վախից ու ահից առնասարակ ոչինչ չէր հասկանում Դօն Կարապետի ասածներից, միշտ նոյն պատասխանըն էր տալիս.—«Հրամանքդ, Տէր, զրուստ ես ասում:» Սակայն այս անգամ Եւայի հետաքրքրութիւնը նրան էլ բռնեց և հարցրեց.

—Էդ ով ա էդ կղերը, որի հետը կափւ անելու ես գնում:

—Ով տգէտ, միթէ չգիտէս, ով է կղերը. տէրտէր, վարդապետ, եալիսկոպոս, բորեպիսկոպոս—ահա սլանք են քո ազատութեան թշնամիները...

—Ջոռ եղիսկոպոսը քեզ ի՞նչ ա արել, որ նրան ուզում ես սպանել. իսկի աչք էլ չունի, թէ տեսնի. չինչ հետը բաժանելու բան ունիս...

—Դարձեալ տգիտութիւն, չգիտես միթէ, որ այդ կղերը տէր է մեծ իրաւունքների ու կալուածների, որ նա խւել է ժողովրդից. և ես կոչուած եմ յետ խլելու այդ բոլորը ու քեզ յանձնելու, ով ժողովրդի զաւակ. այսուհետեւ զու կը լինես միահծան տէր և տնօրէն քո բախտի, քո իրաւունքների, կալուածների, հողերի...

—Հա, հիմի զլխի ընկայ. մթամ ասում ես որ ինձ հողեր պիտի տաս. բաս որ ըտենց ա, շուտ անենք զնանք:

Ու նրանք ճամբար ընկան Քամբազդ զիւղից գէպի կղերաստան վանքը, Դօն Կարապետը ձիով, իսկ Խէջօն՝ իշով:

Դաշտը ամայացել էր. արտերը հնած էին. տեղ տեղ օշազիսի նման երկում էին զիւղերը: Դօն Կարապետն ու Խէջօն ուրախ զուարթ տրտինդ-տրտինդ առաջ էին զնում: Մէկ մէկ Դօն Կարապետը յիշում էր կղերին ու դարձեալ փրփրում, ճառեր էր ասում. այսպիսի բոպէներին Խէջօն սարսափում էր Դօն Կարապետի տոնից, ու մոռանում էր որ արդէն զիտի թէ Սեպտեմբեր, 1906.

կղերն ի՞նչ բան է. և նրան թւում էր թէ կղերը մի ամենի գազան է, որին պիտի սպանի գոշ Կարապետը. (այսպէս էր անուանում նա ասպետին, չկարողանալով յիշել «Դօն» մասնիկը):

Այսպէս նրանք տրտինդատինդ քշում էիր մէկը ձին, միւսը էշը, մէկ էլ յանկարծ Դօն Կարապետը «կղերը» «կղերը» գոչելով, կրակ կտրած ու կատաղի գէմքով յառաջ քշեց իր ձին սրարշաւ, նիզակն առաջը պատրաստի բանած: Խէջօն բերանը բաց արաւ որ զարմանայ, բայց իր էշը ժամանակ չտուաւ. սա էլ ձիու օրինակից վարակուեց, ջուխտ ոտով ոստոստալով զնաց Դօն Կարապետի յետելից: Երբ Խէջօն մօտեցաւ իր ասպետին, տեսաւ, ինչ տեսաւ. մեր Դօն Կարապետը մեծ ինքնարաւականութեամբ դէմ էր տուել իր նիզակը մի խեղճ պառաւի կրծքին. կինը սրածածաք փոռել էր զետնին. իսկ կողքին ընկած էր իր պարկը, որից գուրս էին թափուել չոր հացի կտորները: Ու զի՞ ձայնով Դօն Կարապետը կանչում էր. «յաղթութիւն, յաղթութիւն»...

—Դոշ Կարապետ ջան, էղ ի՞նչ ևս անում, էղ կղերը չի, քու եպիսկոպոսը չի. պառաւ կնիկ առ, տղքատ ա, բայց թող գնա...

Բայց ում ևս ասում. Դօն Կարապետը այնպէս էր յաղթութեան փառքով տարուել, որ Խէջօն ստիպուած մի տասն անգամ նոյնը կրկնեց, մինչև որ մեր առզետը սթափուեց ու աղատ թողեց խեղճ պառաւին:

Նրանք շարունակեցին իրանց ճամբէն: Դօն Կարապետը դեռ ևս զառնցում էր ու շարունակ «կղեր» էր կրկնում. քիչ որ ուշքի եկաւ, ասաց.

—Զհաւատասա, Խէջօ, որ գա կին էր, ճիշտ է, գա իսկական կղեր չի, բայց ու չորերը, որ ունէր հազին, ապացոյց էին որ նա բլոկ է կազմել կղերի հետ: Բայց ես երբէք չեմ վախենալ այդպիսի գաւերից, ես կը տապահեմ ըոլոր կղերականներին և բլոկը:

—Հրամանիդ, Տէր, գրուստ ես ասում:

Ահա վերջապէս երևաց կղերաստան վանքը. տեսնելուն պէս Դօն Կարապետը ուղղուեց, ինքն իրան հաւաքեց, սպառնական դիրք տառաւ. մի քանի անգամ պինդ հազար ու պատրաստուեց յարձակուելու: Զին արագ քշեց ու քշած էլ մտաւ կրնկան վրայ լայն բացուած վանքի գոմերով գաւիթը: Ոչ մի ընդգիւմաղրութին չգտնելով, նիզակը պատրաստ բռնել էր առաջը, որ հէնց պատահի մեծ կղերին, իսկոյն յարձակուի: Հէնց այդ ժամանակ մեծ կղերը գուրս էր եկել զրօննելու. սա ոտքից

ու ձեռքից ընկած ծերունի էր, և հազիւ էր կարողանուժ շարժուել:

Դօն Կարապետը սրարշաւ մօտ քշեց ձին ու իր նիղակը կղերապետի կրծքին դէմ տալով՝ գոռաց.

—Կանգնիր, չհամարձակուես շարժուիլ տեղիցդ, կղեր, եթէ ոչ այս նիղակը, որ պաշտպանում է սօցիալիզմի սուրբ գաղափարը, քեզ գետին կը տապալի: Վերջ, վերջ պիտի տամ քո բռնակալութեան, շուտով, շուտով ստորագրիր այս թուղթը, եթէ ոչ...

Եւ Դօն Կարապետը ծոցից մի թուղթ հանեց, որի վրայ գրած էր. «Ես ի ներքոյ ստորագրեալ մեծ կղերս հրաժարւում եմ իմ ունեցած իրաւունքներից և կալուածներից և այդ բոլորը յանձնում եմ Խէջօխն, որի անչափահասութեան պատճառով կալուածների կառավարիչը կլինի Դօն Կարապետը»:

—Է՞ս, օրհնեալ լինիս, ասաց մեծ կղերը. թուղթ ստորագրելը կուզէիր. Է՞ս, այդպէս կասէիր, էլ զէնք, զրահդ, ահ ու սարսափդ ինչի՞ս էր. թուղթ ստորագրելը կուզէիր. ահ, այն զիւանտառնը լիքն է թղթերով, կուզես կապոց մը թուղթեր ստորագրեմ տամ:

Այս խօսքերի վրայ Դօն Կարապետը զզացուեց.

—Ա՞ս, Վեհափառ, ասաց նա. որքան մեծահոգութիւն, որքան ազատասիրութիւն կայ քո մէջ, թոյլ տուր, ով վեհափառ, աջդ համբուրեմ: Ու Դօն Կարապետը իշաւ ձիուց, չոքեց մեծ կղերի առաջ, աջը համբուրեց ու նա էլ պահպանիչ տսաց Դօն Կարապետի զլիսին:

Երբ ասանաւը ոտի կանգնեց, ասաց.

—Թոյլ տուր, ով վեհափառ, ի պատիւ քո շնորհների իմ ձին քեզ ընծայեմ:

—Օրհնեալ լինիս, պատասխանեց մեծ կղերը. ևս էլ ի պատիւ քո գալստեան այսօր ևեթ քեզ տիրացու կը ձեռնադրեմ:

Այս սիրալի տեսարանից յետոյ մեծ կղերը նստեց Դօն Կարապետի ձին, իսկ Դօն Կարապետը՝ Խէջօի էշն, և մեծ շուքով, հանդիսականների ահագին խմբի հետ նրանք ուղենորուեցան գէպի խորհրդատունը: Երբ Դօն Կարապետը անցնում էր Խէջօի մօտով, նրա ականջին այս փսփսաց. «Դու գնա տուն. իրաւունքների և կալուածների մասին քեզ իմաց կը տամ. քո մասին կը մտածեմ, անհոգ կաց:»

Խէջօն մնացել էր շուարած. ուր գնացին հողերը, կալուածքները... նա մի փոքր էլ մնաց կանգնած, յետոյ կղակը

Քորեց և կամաց-կամաց ճամբայ ընկաւ ոտքով դէպի իր գիւղը,  
ճանապարհին այս երգը երգելով:  
Զին տուել ես, իշուկն առել,  
Առուտուրդ շնորհաւոր.  
Վայ Քեօօղլի, ջան Քեօօղլի...  
Այսպէս երգելով նա հասաւ Քամբաղդ գիւղը:

Փերնանդօ

## Ե Ր Գ

(Հստոներէնից)

Երբ կը յողնես, կը գազագես դու կեանքից,  
Եկ իմ մօտս, դարձիր մօտս դու նորից,  
Իմ հարազատ, սիրտս քեզնով է շնչել  
Զի կամենայ նա վերստին քեզ տանջել...

\* \*

Եթէ բախտն ու մայելքները քեզ ժըպտան,  
Օտարները քեզ դրուանքով ողջոյն տան,  
Գուցէ ես լամ բախտիդ համար, իմ անդին  
Սոկայն դարձիր, դարձիր մօտս դու կրկին...

\* \*

Եթէ հեռւում ճակատագիրն անհոգի  
Սիրտդ մատնէ ձմեռնաշունչ տանջանքի,  
Օ, գիտեցիր այնժամ սիրտս կը ցաւի  
Ինձ կը տանջէ լուռ կսկիծը քո ցաւի:

Դահան Տ.-Դը.

ԱԳՐԱՐԱՑԻՆ ՀԱՐՑԸ ԵՒ ՆՐԱ ԼՈՒԾՈՒՄԸ ՌՈՒՍԱՍ-  
ՏԱՆՈՒՄ

VII.

Մեզ մնում է այստեղ միայն մի կուսակցութեան,  
այն է Սոցեալ-դեմուատնսրի ազգարային ծրագրի տե-  
սութիւնը, որպէսզի գրանով վերջացրած լինենք Ռու-  
սատանում գործող մեր բոլոր խոշոր քաղաքական կու-  
սակցութիւնների ազգարային ծրագիրների տեսութիւնը:

Անցնենք ուրեմն, Ա.-Դ.—ի ազգարային ծրագրին:

Ազգարային հարցը բոլոր տնտեսական հարցերից  
ամենախճճուածն ու ամենաբարդն է, և գրանով պէտքէ  
բացատրել այն հանգամանքը որ ազգարային հարցը  
այնքան զբաղեցնում է այժմուայ բոլոր տնտեսագէտնե-  
րին: Նբա գիտական պարզաբանութեան թէ Ռուսաս-  
տունում և թէ արտասահմանում նուիրուած են ահազին  
քանակութեան լուրջ ուսումնասիրութիւններ:

Ազգարային հարցի վերաբերմամբ տնտեսագէտնե-  
րը բաժանուում են երկու հակառակ բանակների:

Մէկ Բանակը—օրթոդոքս մարքսիստները, իրանց  
գլուխ ունենալով կ. Մաքքասի ամենատաղանդաւոր հե-  
տեղողներից մէկին՝ Կարլ Կառլուկուն, ապացուցանում են  
որ կապիտալիզացիայ օրէնքը անտասան է ինչպէս խո-  
շոր արդիւնաբերութեան, նոյնպէս և գիւղատնտեսու-  
թեան նկատմամբ. որ խոշոր տնտեսութիւնները գիւղա-  
տնտեսութեան մէջ, ինչպէս և արդիւնաբերութեան միւս  
ճիւղերի մէջ, ունեն առաւելութիւններ և կամաց կամաց  
կլամում են և պէտք է կլանեն մանր տնտեսութիւն-  
ները:

Միւս բանակը, որի տաղանդաւոր ներկայացուցիչներն են՝ Բերնշտէյն, Հերց, Դաւիդ և այլն, հիմնուելով գիւղատնտեսութիւնն առանձնայատկութիւնների վրայ, թուերով ապացուցանում են, որ մանր տնտեսութիւնները գնալով ոչ միայն չեն քչանում և չեն ոչնչանում, այլ նոյն իսկ աճում են, և որ մանր տնտեսութիւնները գիւղատնտեսութիւնն մէջ ունեն իրանց առաւելութիւնները և նոյնիսկ մրցում են խոշոր տնտեսութիւնների հետ:

Չուզենալով շեղուել մեր բուն նպատակից, մենք այստեղ չենք մտնիլ այս երկու բանակների բերած առարկութիւնների մէջ, նաև անաւանդ, որ մենք արդէն մի անգամ առիթ ենք ունեցել այս հարցի վերաբերեալ միենոյն այս ամսագրում (տես «Մուրճ» № 3, 1903 թ. մեր «Մանր գիւղատնտեսութիւն և նրա կարիքների» յօդուածը) աւելի մանրամասն խօսել: Մենք այստեղ կը բաւականանք միայն նրանով, որ մատնանիշ կ'անենք այն հանգամանքի վրայ որ հենց իրանք օրթոդոքս-մարքուսիստները, ինչպէս կ. կառուցին և Պլեխանովը, ընդունում են որ կապիտալիզացեան գիւղատնտեսութիւնն մէջ յամենայն դէպս աւելի դանդաղ և տարբեր է արտայայտւում, քան արդիւնաբերութիւնն ուրրշ ճիւղերի մէջ: Նա (Էնդելսը) համոզուած էր, որ մանր գիւղացիական սեփականութիւնը մատնուած է ոչնչացման, ասում է Պլեխանովը Ֆ. Էնդելսի «Կрестъянскій вопросъ во Франціи и Германії» յօդուածի սուսերէն թարգմանութեան համար գրած յառաջարանում (եր. 3), «բայց նոր հետազոտութիւնների երեսն բերած փաստերը, շարունակում է Պլեխանովը, ցոյց տուին, որ շնորհիւ բազմաթիւ և շատ բարդ պատճառների, — և զիխաւորապէս շնորհիւ այսպէս կոչուած գիւղանտեսական կրիզիսի, — մանր գիւղացիական սեփականութիւնն անհնացման (исчезновеніе) ընթացքը (процессъ) տեղ տեղ (օրինակ Ֆրանսիայում) շատ դանդաղանում է, իսկ տեղ տեղ (օրինակ Գերմանիայում) սոլորովին դանդաղում է»:

յլնդգծումները մերն է): «Մենք ելնում ենք այն տեսակէտից, ասում է Կ. Կառլցին իւր «Границы капиталистического сельского хозяйства» բրոշիւրում (եր. 3.), որ խոշոր ձեփ արդիւնաբերութիւնը ունի տնտեսական առաւելութիւններ գիւղատնտեսութեան բոլոր նշանաւոր ճիւղերում, թէկուզ ոչ այն շափերով (ընդգծումը մերն է) ինչպէս ինդուստրիայի գլխաւոր ճիւղերի մէջ»: Բաւականանք այստեղ այս երկու ցիւտատներով որոնք ցոյց են տալիս որ մարքսիստները յամենայն դէպս չեն ժխտում ինդուստրիայի և գիւղատնտեսութեան մէջ եղած տարրերութիւնները:

Այժ անցնենք Ռուսաստանի Ս.-Պ. ազրարային ծրագրին:

Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ Ս—Պ. լինելով Կ. Մարքսի հետեւողները, պէտք է մշակէին ազրարային այնպիսի ծրագիր Ռուսաստանի համար, որը չը հակասէր Մարքսի ուսման: Այս մէկ: Միւս կողմից լինել միայն կողմնակի դիտող այն մեծ շարժումներին և յեղափոխութեան, որը բռնել էր և շարունակում է գեռ տեղի ունենալ լայնածաւալ Ռուսաստանի բոլոր գիւղերում և որի անուն է ազրարայի շարժում, Ս—Պ. իբրև զործող յեղափոխական կուտակցութիւն չէր կարող: Նա պէտք էր իւր ծրագրին տար այնպիսի ձեռ, որ եթէ չը գրաւէր էլ, գոնէ գիւղացիներին չը «խռոնեցնէր». Նա ստիպուած էր իւր ծրագիրը մշակել, այսպէս ասած, հենց կոռուի դաշտում, ժամանակ չունենալով ծանր. ու բարակ քննել այդ ծրագիրը: Ժամանակը չէր սովորում: Կուրու արդէն յայտարարուած էր և բռնկուել էր սարսափելի ոյժով: Ուշանալ նշանակում էր խաչ կնել իւր գործունէութեան վրայ, յամենայն դէպս՝ գիւղացիութեան մէջ, առանց որի յեղափոխութիւնը Ռուսաստանում չի կարող յաղթական վերջաւորութիւն ունենալ: Եւ ս—դ. մնում էր հէնց կոռուի դաշտում որոշել իրանց տակտիկան. ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ այսպիսի հանդամանքներում չէր կարող մշակուել մի լուրջ և բազմակողմա-

նի մտածուած ծրագիր։ Եւ մենք տեսնում ենք թէ ինչպէս ս.-դ. շուտ-շուտ փոխում են իրանց՝ դէպի աղ- բարային շարժումները և հետևապէս ազրարային հարցը բռնած ընթացքը։ Նախ և առաջ եկան իրանոց «կտոր-ների» (օտքէզէ) ծրագրով, որը ի հարկէ անկարող էր գիւղացիութեան համակրանքը գրաւել։ Եւ շուտով հենց իրանք ս.-դ. այդ հոչակաւոր «կտորների» ծրագիրը ա-նողոք քննադատութեան ենթարկեցին\*։

Յետոյ առաջ եկաւ նացիօնալիցացիայի ծրագիրը (մինչ այժմ էլ ն. կենինը և առհասարակ նրա հետևող «մեծամասնականները» ընդունում են այս ծրագիրը) և վերջուալէս ս.-դ. վերջի՞ Միացնող համագումարում ըն-դունուեց մի փոքր փոփոխութիւններով պ. Մասլո-վի առաջարկած ազրարային ծրագիրը։ Միայն այս վեր-ջի ծրագրի վրայ մենք կանդ կառնենք, որովհետեւ, ինչպէս վերև յիշեցինք, մնացած ծրագրները հենց ի- րանց ս.-դ. կողմից խիստ քննադատութեան են են- թարկուած։

Ահա այդ ծրագիրը։—Ճորտութիւնից մնացած կար- գերի մնացորդների, որոնք ծանր կերպով ընկած են անմիջալէս գիւղացու շինքին, ոչնչացնելու համար և գիւղերում գասակարգային կտուի ազատ զարգաց- ման համար, Ռ. Ս. Բ. Կ. պահանջում է.

1) Գիւղացիների անձնական և սեփականութեան բոլոր գասակարգային սեղմումների վերացում։

2) Վերացում բոլոր հարկերի և պարագանութիւն-ների (платежи и повинности) որոնք կապուած են գիւղացու գասակարգային առանձնացման հետ և ոչն- չացումն բոլոր պարագային պարտաւորումների (долго- выхъ обязательствъ) որոնք ունին ճորտային (кабаль- ный) բնաւորութիւն։

3)Եկեղեցական, վանքապատկան, ուղենի և կա-

\*) М. Масловъ, «Критика аграрныхъ программъ»,  
Н. Валентиновъ, «Аграрный вопросъ и рабочая партія.»

բինետային հողերի կոնֆիսկացիան և նրանց, ինչպէս և պետական հողերի յանձնումը տեղական ինքնավարութեան խոշոր մարմիններին, որոնք միացնում են քաղաքային և գիւղական շրջանները: Միայն այն հողերը, որոնք պէտք է ծառայեն իրեւ ֆոնդ գաղթականութեան համար, նոյնպէս և անտառները և ջրերը, որոնք ունեն ընդհանուր պետական նշանակութիւն, յանձնուում են գեմոկրատական պետութեան տնօրինութեան:

4) Մասնատիրական հողերի կոնֆիսկացիան, բացառեալ մասնը հողատիրութիւնը, և նրանց յանձնումը գեմոկրատիական սկզբունքներով ընտրուած տեղական խոշոր ինքնավարական մարմինների տնօրինութեան:

Կոնֆիսկացիայի ենթարկուող հողերի՝ մինիմալ չափը որոշում են տեղական խոշոր ինքնավարութիւնները:

Նեցուկ հանգիսանալով գիւղացիների յեղափոխական ապստամբութեան գիմագրաւմտն մինչև կառուածատիրական հողերի կոնֆիսկացիան, Ռ. Ս. Դ. Բ. Կ. միշտ և անսփոփոխ կերպով պէտք է ընդդիմադրի ամեն մի փորձի, որը գանգաղեցնում է տնտեսական զարգացման ընթացքը: Զկուելով յեղափոխութեան յաղթական զարգացման շնորհիւ խլած (կոնֆիսկացիա) հողերը յանձնել տեղական ինքնավարութեան գեմոկրատական հաստատութիւնների տնօրինութեան, Ռ. Ս. Դ. Բ. Կ. այս բանի համար անպատեհ հանգամանքներում, կը արտայատուի այն ուղղութեամբ որ գիւղացիների մէջ բաժանուեն այն կալուածատիրական հողերը, որոնց վրայ իսկապէս տանուում է մանր տնտեսութիւն, կամ որոնք այս վերջիններիս կոլորացման համար անհրաժեշտ են: Բայց և այնպէս կուսակցութիւնը ըոլոր հանգամանքներում և գեմոկրատիական ապրանքային ինչ տեսակ որ էլ է փոփոխութիւն լինի, իրա համար նպատակ է դնում անսփոփոխ կերպով ձըդտել գիւղական պրոլետարիատի անկախ դասակարգային կազմակերպութեան, բացատրել նրանց անհաշտելի հակառակութիւնները նրա և գիւղական բուրժուազիայի շահերի մէջ, զգուշացնել նրան մանը գիւղատնտեսու-

թեան սիստեմով հրապուրուելուց, որը (մտնր գիւղատընտեսութիւնը) երբէք, քանի դայութիւն ունի ապրանքային արդիւնաբերութիւն, չի կարող ոչնչացնել մասսաների աղքատութիւնը, և վերջապէս ցոյց տալ սոցիալիստական լիակատար յեղափոխութեան անհրաժեշտութիւնը, իբրև միակ միջոց ամեն մի աղքատութիւն և շահագործում վերացնելու համար:

Ինչպէս ընթերցողը տեսնում է, Ս.-Դ. առաջարկում են մի քանի բացառութիւններով, (§ 3) բոլոր հողերի մունիցիալիզացիա, իսկ եթէ այդ չի յաջողուի, ինչպէս ոռում է ասում «на худой конец» կարելի էև կալուածատիբական հողերը բաժանել գիւղացիների մէջ։ Մունիցիպալիզացիան Ս.-Դ. կարծիքով սոցիալիզացիայի առաջ ունի այն առաւելութիւնները, որ առաջինը չի որոշում ամեն մի դիւղացու կամ նրա ընտանիքի հասանելիք հողի չափը և չի պարտաւորեցնում վերցնել անքան, որքան որ մի ընտանիքի կամ պիտոյքները հոգալու համար է հարկաւոր (ՈՐՈՎՈՅՆԵՎԵՆԻ հօրմա)։ Կամ որքան որ մի ընտանիք կարող է մշակել (աշխատաւորական նորմա), այլ որքան ուզում է։ Այսպիսով ոչնչացնուում է միայն հողի սեփականական իրաւունքը, իսկ օգտուելու իրաւունքը չի սահմանափակվում։ Եւ սա հասկանալի է, ի հարկէ, ս.՝դ. ուսման տեսակետից։ Սրանով կապիտալիզացիայի առաջ ոչ մի խոչնորած չի գնուում։ Այս վերջինիս համար ոչ մի նշանակութիւն չունի թէ հողը ումն է պատկանում։ Մենք գիտենք օր, որ Անգլիայում կապալով վերցրած հողերի վրայ կան շատ խոշոր և կապիտալիստական տնտեսութիւններ։

Թէ ինչ պայմաններով պէտք է հողը կապալով տրուի և ինչպէս պէտք է այդպիսով գոյացած փողը գործադրուի, զրա մասին, ինչպէս ընթերցողը տեսնում է, ծրագրում ոչինչ չի ասուած, ենթադրելով, ի հարկէ, որ այդ կ'որոշեն ապագայ դեմոկրատիական կազմ ունեցող աեղական ինքնավարութիւնները։

Նացիոնալիզացիայի առաջ մունիցիպալիզացեան, ս.՝դ. կարծիքով, ունի այն առաւելութիւնները, որ 1) այս ծրագիրը աւելի հեշտ է իրագործել, որովհետեւ առ չի կպչում գիւղացիների շահերին 2) որ կապալով տըրուած հողերից ստացած փողերը չեն գումարով մի տեղ, պետութեան ձեռքը, որը որքան որ էլ է դեմոկրատիական լինի այնու ամենայնիւ արտայայտում է այս կամ այն դասակարգի շահերը և ուրեմն այդ փողերը անցնելով այդ կառավարութեան ձեռքը կ'ուժեղացնեն նրան: Իսկ հողերի տնօրինութիւնը յանձնելով տեղական մարմիններին, այսպէս ասած, բաժանում են այդ փողերը շատ մասերի, հետևապէս բաժանում և ջլատում են ոյժերը: 3) Հողերի մունիցիպալիզացիայի դէպքում քաղաքային պրոլետարեատը աւելի ներգործական գեր է կարող խաղալ և կապալափողերը կարող է ծառայեցնել ընդհանուրի օգտին:

Պէտք է առնասարակ նկատել, որ ս.՝դ. հանգամանքներից և պայմաններից ստիպուած, առաջ բերելով այս ծրագիրը, նրանք չեն ուզում (և չեն էլ կարող ցանկանալ) դրանով ավանովացնել մանր տնտեսութիւնները: Նրանք ինչպէս ոլ. Մալովն է ասում, պաշտպան են հանդիսանում ոչ թէ մանր սեփականութեան, այլ մանր սեփականութեան տէրերին:

Ս.՝Դ. կարծիքով այժմուայ գրութիւնից ապատուելու համար, ինչպէս գիւղատնտեսութեան նոյնպէս և ինդուստրիայի մէջ, կայ մի ճանապարհ — այն է՝ մանր տնտեսութիւնները կամաց-կամաց հաւաքուելով սահմանափակ թուով անձանց ձեռքը վերջոյ յեղափոխութեան միջոցով պէտք է դառնան ընդհանրական սէփականութիւն:

Բայց Դանիայի, Բելգիայի, Իտալիայի և ուրիշ երկիրների գործերը ցոյց են տալիս որ գիւղատնտեսութեան մէջ կայ և մի ուրիշ ճանապարհ մասնաւոր սեփականութիւնից (հողի, գործիքների և ստացած եկամուտի) տուանց երկրորդ ֆազիսի կենարունացման (ԿՕՀ-

ცენტՐԱЦԻЯ) ուղղակի անցնել սոցախիզացիայի: Այդ ճանապարհը կօպերատիւ ընկերութիւնների ճանապարհն է: Այս տեսակետից ամենափայլուն օրինակներ են ներկայացնում Բելղիան և Դանիան, որոնք ծածկուած են մանր ընկերութիւնների խիտ ցանցերով: Այս երկրներում կան ընկերութիւններ, որոնց անդամների թուերը հասնում են տասնեակ հազարների և բռնում ամբողջ շրջաններ: Ինչու չենթազրել որ այսպիսի ընկերութիւններ լայնանալով կարող են ընդդրկել սմբողջ երկիրը:

Բայց այս հարցը մեզ էլի մօտեցնում է այն խընդրին, որից և մենք սկսեցինք այս գլուխը. այսինքն դիւղատնտեսութիւնը ենթարկուած է արդեօք նոյն օրէնքներին, ինչ որ ինդուստրիան, թէ չէ: Յամենայն գէուս Ս.-Դ. առաջարկած ազրարային ծրագրի մասին կարելի է ասել, որ նա իրագործելի է միայն ոչ մօտագայ ապագայում և կարող է իրուկանանալ միայն մեծ յեղափոխութեան միջոցով, իսկ թէ այդ գէպքում ինչ ընթացք կրատանայ ազրարային հալցի լուծում—առաջուց գժուար է ասել: Մեզ թւում է որ, եթէ ազրարային հարցը վճռուի գիւղացիների միջոցով յեղափոխութեան մէջ, հաւանական է, որ իրագործուի Ս.-Դ. «Հա խո- դոյ կոհեց» կազմած ծրագիրը, այսինքն հողը կը բա- ժանուի գիւղացիների մէջ իբրև նրանց անձնական սե- փականութիւն: Թէ որքան ցանկալի է այդ—դա ար- դէն ուրիշ հարց է:

Այսպիսով ուրեմն, Ս.-Դ. ծրագրով հողի միայն մի մասն է դառնում համայնքների սեփականութիւն, իսկ միւս մասը, որ գտնուում է գիւղացիների ձեռքում, մը- նում է նրանց մօտ իբրև մասնաւոր սեփականութիւն: Զի կարելի ասել ուրեմն, որ Ս.-Դ. կուում էր առնա- սարակ հողի սեփականական իրաւունքի դէմ, այլ միայն մի յայտնի կաթեգորիա կազմող հողային սեփականու- թեան դէմ: Յետոյ, հասկանալի չէ թէ եթէ յե- ղափոխութեան միջոցով կարելի է ոչնչացնել հողային

սեփականութիւնը և կոնֆիսկացիայի ենթարկել մեծ կալուածները, բնչու աւելի հեռու չը գնալ և այս մասնաւոր կոնֆիսկացիան չը տարածել և միւս ուժիականութիւնների վրայ և մի անգամից վերջ չտալ կապիտալիզմին և ստեղծել սոցիալիստական կարգեր։ Եթէ դժուար է այս վերջինը ներկայ պայմաններում — նոյնքան անիրարկործելի է և առաջինը։

Ի՞նչու, իսկապէս, ոչնչացնել միայն հողային սեփականութիւնը և ոչ բոլոր ձևերի սեփականութիւնները։

### VIII

Վերջացնելով սրանով մեր դանազան քաքաքական կուսակցութիւնների աղբարային ծրագիրների տեսութիւնը, աւելորդ չենք համարում մի քանի խօսք էլ ասել։

Ինչ կերպով էլ որ վերջի վերջոյ չը լուծուի հողային (ոչ աղբարային) հարցը Ռուսաստանում, դրանով դեռ չի լուծուած աղբարային հարցը, որը կազմում է զիւդացիական հարցի ամենախոշոր մասը։

Հողային հարցի լուծումը Ռուսաստանում անպայման շատ հասունացած է և նա պէտք է այս կամ այն ձևով վճռուի, որովհետև այդ է պահանջում թէ արդարութիւնը և թէ ամբողջ Ռուսաստանի շահերը։ Միւս կողմից անհերքելի է, որ հողային հարցի լուծումը յամենայն դէպո կը դիւրացնի աղբարային հարցի լուծումը. նոյն իսկ մի քանի տեղերի նկատմամբ կարելի է ասել որ առանց զիւդացու հողաբաժնները աւելացնելը անհնարին է զիւդացու տնտեսական դրութիւնը որևէ կերպով բարուոքել։ Արդարութիւնը և ժողովուրդի շահերը պահանջում են որ հողը անցնի նրա ձեռքը, ով նրա վրայ աշխատում է, և եթէ հնարաւոր է դա պէտք է լինի առանց վարձարպութեան։ Բայց ենթարկել որ հողային խնդրի լուծումը միակ դեղն է, որ կարող է բուժել զիւդացու ցաւերը և նրան հանել այժմուայ կիսակուշտ դրութիւնից, կարծել այդպէս ասում ենք, նշանակում է

Հը հասկանալ գիւղացիական հարցի բարկութիւնը, նըշանակում է բարդ հասարակական երևոյթները բացատրել մէկ պատճառով: «Եթէ որևէ մի հրաշքով, ասում է պրօֆ. Չուպրովը, բոլոր հողերը անցնեն գիւղացիների ձեռքը, այն ժամանակ էլ նրա հողաբաժինը կ'աւելանայ միայն  $42^{1/0}$ ». Բայց որովհետեւ գիւղացիների ճորտութիւնից սպատուելուց յետոյ, այսինքն 45 տարուայ ընթացքում, գիւղացիների հողաբաժինները կրծատուել են համարեա երկու անգամ, ուրեմն մի որևէ 20 տարուայ ընթացքում գիւղացին կ'ունենայ հողաբաժնի նոյն չափը ինչ այժմ, այսինքն հենց մեր աջքի առաջին 20 տարուց յետոյ գիւղացին կը լինի նոյն թշուառ (եթէ ոչ աւելի թշուառ) գրութեան մէջ ինչպէս և այժմ:

Եւ իսկապէս չէ որ Ծուսաստանում գիւղացու ըստացած բերքի քչութիւնը չի կարելի բացատրել միայն սակաւահողութեամբ: Չէ որ Ծուսաստանում բոլոր գիւղացիները սակաւահող չեն: Չէ որ կան գիւղացիք, որ ունեն բաւականաչափ հող, բայց և այնպէս նրանց բերքն էլ շատ քչով է զանազանում սակաւահող գիւղացու բերքից:

Չէ որ նոյն իսկ կալուածատէրերի ստացած բերքը, որը միայն մի  $10-15^{0}/0$  աւել է քան գիւղացունը, չի կարելի բացատրել սակաւահողութեամբ: Ծուսաստանում գիւղացու արտում ստացուող ցորենի, հաճարի, վարսակի և գարու բերքի 40 փութական նորման ֆրանսիայում և Գերմանիայում տեղի է ունցել գեռ 100 տարի սրանից առաջ: Այժմ այդ երկրներում գիւղացու միջակ բերքը հաշումէ  $100-120$  փութ: Այստեղ հետաքրքիր է մատնանիշ անել այն հանգամանքի վրայ, որ նոյն իսկ Ծուսաստանի հոչակաւոր սեահողում (Черноземъ) բերքը ոչ միայն չէ անցնում այդ 40 փութանոց նորմից, այլ նոյնիսկ մի քիչ էլ պակաս է այդ քանակութիւնից:

Հասկանալի է, որ եթէ այս ձևով էլ շարունակուի հողագործութիւնը Ծուսաստանում—ոչ մի հողային բե-

ֆորմ չի կարող հանել գիւղացուն այժմուայ անսախանձ գրութիւնից: Եթէ այժմ էլ տալ նրան բոլոր ազատ հողերը, մի 20 տարուց յետոյ, երբ էլ ֆոնդ չի լինի դրա համար, այն ժամանակ անխուսափելի կը լինի ուրիշ միջոցների գիւղելը, այն է՝ գիւղանտեսութեան մէջ հարկուոր կը լինի մոցնել աւելի կատարելագործած միջոցներ: Զէ՞ որ աւելացնել բերքի քանակութիւնը օր. 50%—կամ 100% միննոյն է (ԷԿՎԻՎԱ-ՊԵՒԹԻՒՆԸ) թէ աւելացնել գիւղացու հողաբաժինները այդ քանակութեամբ: Թէ հեշտութեամբ կարելի է բերքի քանակութիւնը բարձրացնել մի քանի տարուայ ընթացքում՝ ցոյց է տալիս իտալիայի վերջի տարիների ընթացքում արած առաջադիմութիւնը գիւղանտեսութեան մէջ\*): Շատ դէպքերում բաւական է կատարելագործուած գութանով հողը մշակել և լնտիր սերմեր ցանել, որովէս զի բերքը բարձրանայ մի քանի տասնեակ տոկոսներով:

Ամենամեծ յեղափոխութիւն գիւղանտեսութեան մէջ առաջ բերեց թիթեռնակերպ ընտանիքին (МОТЬЛЪКОВЫЯ) պատկանող բոյսերի կուլտուրան և արուեստական պարարտացման նիւթերի գործածութիւնը, որը եւրոպայում հոկայկական քայլերով է աճում և հնարաւորութիւն է տալիս առանց բարդ և թանգ բարենորոգութիւնների անմիջապէս աւելացնել բերքի քանակը: Ռուսաստանի գիւղանտեսութիւնն էլ անպայման պէտք է հետեւ արտասահմանեան գիւղանտեսութեան զարգացման ճանապարհն: Գիւղանտեսական հին պապական եռամանական ձեռ (трехполе) արդէն անցրել է իւր ժամանակը, և պայմանները նպաստաւորում են ուրիշ աւելի կատարելագործած ձեռքի գիւղելու, միայն հարկաւոր է զրանց խմալու, զարկ, որ գիւղանտեսութիւնը Ռուսաստանում յեղափոխութիւնը իսկ այդ խմալուը այդ զարկը պէտք է տան նոր կարգերը, որոնք կը նորոգեն Ռուսաստանի վատած և նեխուած մթնոլորդը: Եւ արդէն

\*) Տես «Մուրճ» № 3 1903 թ. մեր վերև յիշած յօղուածը:

սկսել է այդ այլանդակ կաղմի տարրալուծուիլը։ Արտաքին և խիստ միջոցներով միայն կարելի է ժամանակաւորապէս դադարեցնել քայլայման այդ պրոցեսսը, և ոչ ընդմիշտ։ Ինչպէս ամեն մի օրգանիքական մարմին որ սկսում է փտել, սաոցնելով կարելի է միայն ժամանակաւորապէս դադարեցնել նրա փտելու պրոցեսսը, և ապա հարկաւոր է միայն որ մի քիչ տաքանայ այդ մարմինը, որպէսզի նորից շարունակուի փտման պրոցեսսը, նոյնպէս և ոռւսաց բէժիմը դիկտատուրայով կամ զանազան իրատութիւններով միայն ժամանակաւորապէս յետաձգում է իր խորտակումը և ոչ թէ անհնար դարձնում այն։

Միայն բաղադրականուպէս ազատ գիւղացին է կաջող աւելի ըացիոնալ և կատարեալ տնտեսութիւնով ալարապել։ Ուրեմն, պէտք է վերացնել բոլոր այն սահմանափակումները, որոնք ճնշում են զիւղացուն մի կողմից իբրև ոռւսաց քաղաքացու, իսկ միւս կողմից՝ իբրև զիւղացու պէտք է տալ նրան միայն իշխութեալավարնեց զիւղուն և գործին լաւ ծանօթ մասնագէտներ, հիմնել փորձնական առարակներ և այլն, և զիւղացին ինքը կիմանայ-ի՞նչպէս դուրս գալ այն խուլ անկիւնից, որի մէջ ընկել է նա շնորհիւ Ռուսաստանի ներքին կեանքու մ տիրող անհորմալ կարգերին։

Ուրեմն տուէք զիւղացուն «ազատութիւն և հող» և նա կ'իմանայ իր անելիքը։

Վերջացնելով սրանով իմ «Ազրարային հարցը և նրա լուծումը Ռուսաստանում» յօդուածների շարքը, ես սլատրաստ եմ ցոյց տալ հարցով աւելի մանրասան հետաքրքրուողներին ազրարային հարցի վերաբերեալ գրականութիւնը, որ շատ հարուստ է. և ոռւսերէն լեզուով կարելի է մի քանի տամնեակ լուրջ ուսու մնասիլութիւններ մատնանիշ անել։ Յանկացողները թող բարեհաճեն դիմումներ անել ինձ, «Մուրճի խմբազրութեան հասցէով։ Իմ նպատակս էր այս յօդուածներով տալ ընթերցողներին լսու կարելոյն ամփոփ գաղափար այդ բարդ և լուրջ հարցի մասին, մի կողմ թողնելով ոչ կարևոր մանրասամասնութիւնները։

Երուանդ Սարգսեան

## «ԱԶԳԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ»

Մեր գառն հայկական իրականութեան վրայ ծանրացել է մի նոր ցաւ՝ ազգային բիւրօկրատիա, որի լուծը յիշեցնել է տալիս հայբն անգամ թուրք-պարսկական տիրապետութեան ժամանակներում կրած տանջանքները։ Բնութեան մէջ կան օպտակար և վասարակար միկրոբներ։ հասարակական կիանքում էլ՝ օգտակար և վասարակար յեղափոխականներ։ Մեր ազգային «յեղափոխականները», ինչպէս դառն փորձերը ցոյց տուին, վեսսակար միկրոբներ են, որոնք իրանց իմաստակ և քաղաքեօպ արարքներով միայն աւելի, թշուառութիւն, բռնութիւն և ապականութիւն են մայնում մեր կեանքում։ Ամեն հիւանդութեան բուռումը միայն այն ժամանակ է հնարաւոր, երբ հիւանդութեան բուռուած լաւ ուսունաասիրուած են Սրդ մեր ժողովուրբը տառապում է «ազգային կառավարութիւն» սահեծելու տենչով ըսնուած վասակար միկրոբներից։ Այդ ցաւի լիակատար ուսումնասիրութեան համար ցանկալի է ճիշտ, մանրամասն նիւթեր հաւաքել։ Այդ նիւթեր հաղորդողները կարող են միանգամայն վատահ լինել որ կը պահպանուի նրանց ինչկողնիտօն։ Առաջ հնք բերում այս համարում մի քանի փաստեր։

### 1. Սիրագործութիւններ Նախնական գաւառում.

Դատաստանական ճնշումներ.—Գաւառի ամբողջ դատաստանական դեկլ դաշնակցականները բանի կերպով ձեռք ունելով՝ բանտարկութեան, ծեծի այլ և այլ չտեսնուած պատիժների տեսակները շատացան խաղաղ և ուժասպառ ժողորրգի վրայ։ բռնութիւնը հասաւ իր գագաթնակից տիւն։ պատահեցաւ, որ անմեղ մարդիկ ես սպանուեցան կոմիտէների լիազօրների ու զինուորների ձեռքով։ այդ ճնշումներից ու պատիժներից անմասն չըմաց նաև հայ իբական սեռը, ինչպէս նորսում, երբ Սարգիս Մահ։ Սարգսեանին, որը համարձակուել էր զինուորի (Դրօ) խօսքին պատասխանել, ծեծում էին ամբողջ խմբով (Քեռու) իր տան մէջ և վճռել էին ծեծելով սպանել։ մայրը, կինը և վեհականները, 1906։

հարսները, պատռելով՝ իրանց երեսի ծացկոցը՝ ամօթխածութիւնը մի կողմ թողնելով և ըստ իրանց սովորութեան ծծերը դուրս քցած, ոտքերը ընկած աղի արցունքով աղերսում էին խնայել իրանց անմեղ սիրելիին (այդ տեսաբանին ներկայ էին գիւղացիներից շատերը, որոնք ատրճանակի ձայնից իսկոյն շտապել էին գէղի վայրը), բայց անգութները իրանց ահագին գագանակները դարձրին գէղի կանայք և անխնայ ծեծեցին։ Բարեբախտաբար տէրութեան զինուորները ատրճանակի ձայնը լսելով վրայ հասան և մեր «կտրիճները» թողին և փախան իրանց բները, մեծ արտունջ առաջացնելով գիւղում։ Այս գէպքից յետոյ Սարգիսը իւրայիններով զինուած ուղեցան յարձակուել յիշեալ խմբի վրայ, զէնքի ոյժով գիւղից հեռացնելու բայց աղսախկաները միջամտեցին—գնացին խմբապետին խնդրեցին որ անմիջապէս գիւղից հեռանան, հակառակ դէպքում կարող է շատ վատ հետեւանք ունենալ։ Թէկ մերժութիւն ստացուեց, բայց հանգամանքների պահանջմամբ՝ նոյն գիշեր հեռացան գէպի Զանգեղուրք։ Ծեծուողներից շատերից մէկն էլ ժողովրդի համակրութիւնը վայելող՝ մայիսեան աղէտալի օրերում ժողովրդին պաշտպան հանդիսացող Գոսերի ուսուցիչ Պետրոսն է, որը իր հմտութեամբ կարողացաւ պաշտպանութեան զիրքը ըռնել և մի ամբողջ ամիս, պաշտպանուած զրութեամբ կոռուկով թուրքերի հետ, պաշտպանել Գոսերում ժողովուած 5000 հոգուն։ Իսկ ծեծելու պատճառը այն էր, որ խմբապետը առաւտեան վաղ՝ մինչդեռ վարժապետը քնած է լինում, կանչում է նրան, բայց նա ուշանում է ներկայանալ։

Ծեծելու պատի ունեցաւ նաև Նախճաւան քաղաքի բնակիչ Ստեփան-բէկ Գաստարբէկեանը որը համարձակուել էր պաշտպանել մի ոմն ուսմանողի, որի տնմեղ հօրը տէսորի էին ենթարկել և իրան էլ հրապարակով ծեծում էին։ Այդ գէպքի հետեւանքը շատ վատ անցաւ։ Դաշնակցութեան ահեղ զատաստանը ճանաչելու հոմար այսրանը կ'ասեմ, որ մի երկու ապահով անմեղ մարդկանց մահ են պատճառում, ինչպէս օր, անցեալ յունիս-յուլիս ամիսներում զարաբարեցի 65—70 տարեկան ծերունի Դավարին մի քանի ապատուկ խփելով (լսմբ. 4.) վայր է զլորում զետին և մի երկու քացի ևս կողքերին, իսկզն զոհը մնում է անշնչացած, այդպիսի անակընկալ գէպք պատահեց նաև Փարաղաշտում։ Երբ դաշնում բնացնում էր Փարաղաշտի արտերով՝ Ազուլիս գնալու, պատահում են փարաղաշեցի Նէկողոսին դաշտում աշխատելիս։ Նրանց պահանջը Նիկողոսը չկատարելով ենթարկում է ծեծի խմբի բոլոր անդամների կողմից, իսկողին թողնում են կիսամեռ վիճակի մէջ

և հեռանում են. զիւղից գալիս են և դպրագի վրայ դնելով տուն տանում, երկու օրից յետու մեռնում է:

Դաշնակցական զինուորները թոյլ են տալիս իրանց խառնուելու ոչ միայն անհատական գործերում, այլ և եկեղեցական կարգու կանոններում. օր, սպառնացել են (շրջիկ Գալուստը) Շահապունեաց գործակալին սպառնել՝ եթէ չպսակէ զարաքարեցի Ստեփանին, որը ապօրինի կին է պահում և սինօդի հրամանով պէտք է հեռացնէր՝ բայց զինուորի հրամանը—« խառնար տէրտէրոյշ տըփելով պլսակիրինք տուէ, դու ինոնց մէ աւելչեզնիս» խօսքերը սարսափեցրել են գիւղական քահանաներին:

Շնչումն տնտեսական տեսակէտից. — բոնի կերպով, նոյն իսկ ծեծելով «Կարապետ—Հասանին» ստացել են կողովածուած գիւղերից խոտ, զարման, զարի, ոչ մի կոպէկ չվճարելով, մինչև անգամ ամսով ալքատ գիւղացու ձին գրաւել են (Նորուեցի Մովսէս Աւագեանի, գիժամարդոցի...) զրկելով խեղճերին իրանց ունեցած միակ ձիու աշխատանքից:

Խնքնապաշտպանութեան տեսակէտից. — Խլելով ժողովրդի ձեռքից զէնքեր ու փամփուշտներ զըկել են ինքնապաշտպանութեան միջոցներից, ինչպէս օրինակ Ս. հանցի երեք հատ բերդան հրացանները 400-ի չափ փամփուշտներով Երևանի Կենտրոնիական այս ինն ամիս է ինչ յափշտակել է. չնայելով այսքան երկար ժամանակուայ քաշած նեղութիւններին ու խնդիրներին դեռևս չեն յետ զարձրել, որովհետև տուել են իրանց զինուորների ձեռքը: Տէր. Ղևոնդից ստացել են փամփուշտներ և չեն յետ զարձրել: Տեղական ժողովրդի թուոցիկ խմբերը վերցնելով իրանց իրաւասութեան տակ կորիւ են տանում առանց մի փամփուշտ տալու, ինչպէս կոուի սկզբում նոյնպէս և վերջումս: Նոյնիսկ այն հանգամանքում, երբ տեղական կոուորչներին աշողւում է խլիլ աւազակներից հրացանները (Մինեանից 18 հատ) զաշն. խմբապետը ձեռքներից առնում է «յարքունիս» (գաշնակց. կազմակերպութեան) մի հատ էլ չտալով տղերը մէկի կորցրած հրացանի փոխարէն: Բաղամլեցի Ասրու բերդանը գնտին խվիւլով փշեցին \*) և փամփուշտները գրաւեցին:

Ոչ գաշնակցուկաններին բոյկոտի են ննիթարկում և զլանում են վտանգի ժամանակ օգնութեան համանել. (Արաշին, Ապրականիս...) մօռանալով, որ ընդհանուր ազգի ձեռք առած ինքնապաշտպանութեան միջոցները իրանց ձեռքին է և բարոյական պարտականութիւնն է առանց ի նկատի ունենալու որևէ է

\* ) Որովհետեւ հրացանի տէրը անգիտակցաբար հրացան էր ալճակել գէպի կզազի կոնդնած տեղը:

կուսակցական միտումներ, օգնութեան համնել ուր հարկ կայ: Իսկ գաշնակցականները աղջր բաժանել են դաշնակցական հայերի և ոչ—գաշնակցական հայերի, որոնց նկատմամբ թշնամական դիրք են բռնել, ինչպէս մի ժամանակ լուսաւորչական ները գէպի աղանդաւորները:

Զինուորների հայհոյանքներին ու ափեղցիեղ խօսքերին թիւ ու համար չկայ. մեծամասնութիւնը իմանալով որ ոչ մի պատասխանատւութեան չպիտի ենթարկուեն արատաւորում են ոչ միայն հայ կնոջ ուստիւը, այլև ֆիդայի անունը: Բացի այդ իրենց զուարձութեան համար գնդակահարում են գիւղացու միակ ընկեր և պահապան շներին (Նորս, Առինջ երեք շուն են խփել): Պէտք է ասել, որ գաշնակցութիւ սրտել, որ ոտք է գրել այսուհեղ ոչ գաշնակցականներ և ու ուր ստեղծուել է մի անսանիլի գրութիւն, չունենալով խօսքը, մօղովների, նոյն իսկ լրագիր ստանալու ազատութիւն (ահօ «Կայծ», համար 4 և 13): Բռնութիւնը յայտնուեցաւ և էջմիածրի կենդրօնական ժողովի պատգամաւորական ընարութիւնների ժամանակ... կոմիտէի հրամանով պիտի ընտրեին նշանակած մարդկանց: Բռնութիւնները հասան իրանց գագաթնակէտին. այնպէս որ ՀՀ գիւղում տիկին Երին ազատ և ճշմարիտ խօսքերի համար (գաշ. բռնութիւններիվերաբերութեամբ) որոշուած էր տեսօրի հնթարկել, որպիսի վարժուանքով ամբողջ ժողովրդի սարսափի մէջ են պահում: — Ազատութիւն — ժողովների, խօսքի և մամուլի ճըռճըսան բաները լոկ թող վէշելու համար են, դրսեցիների տչքում «յեղափոխական» երեւալու համար, իսկ ներքին, գաղանի հրանանդները խայտառակ բռնակալութեան մի մի նմուշներ են: Եթէ վախը չլինէր ամեն մի անկիւնից բողոքի ձայներ կապշեցնէին արար աշխարհը:

Z.

## 2. Մի պահապանի արծակման պատճառով ահարեկում:

Ահարեկուած լինելով գաշնակցականների մահուան սպառնալիքներից, ինչպէս կը տեսնէք ներփակ հրամանից \*), իբրև մի փոստաթղթից, և հետեւարար, հնարաւորութիւնից միանգամայն զրկուած լինելով ազատորէն մամուլի օգնութեան զիւմելու և հասարակութեան դատաստանի տառջ զնելու ենիչերին միայն յատուկ զաղիր քայլերը՝ դիմում եմ Ձեզ, պ. խըմ-

\*) Դօկումենտը պահուում է խմբագրատանը:

բաղիր, և խնդրում մամուլի միջոցաւ հասարակութեան դատաստանի առաջ զնելու թէ ի՞նչ կապ կայ յեղափոխութեան և մի եկեղեցւոյ գիշերային պահապանին արձակելու հարցի մէջ։ Որպէս զի Զել համար հարցը մութ կողմեր չ'ունենայ, ես միայն կ'աւելացնեմ, որ մեր եկեղեցւոյ գիշերային հայ պահապանին արձակել եմ և նրա տեղը վարձել հայ պահապան, իսկ ժ կոմիտէի միջամտութիւնը ես բացասարում եմ նրանով, որ արձակուած (ի հարկ է, գաշնակցութեան մահուան սպառնալիքի ազգեցութեան տակ արձակուածը վերստին ընդունուած է) պահապանի որդին մեր եկեղեցում տիրացութիւն է անում և «գաշնակցական» է։ Մի ամբողջ կաղմակերպութեան կոմիտէ որ յաւակնութիւն ունի իրան գաղափարական և սոցիալիստ անուանելու, միթէ այն քան է ընկել որ իրան թոյլ է տալիս միջամտելու գիշերային պահապաններ վարձելու ու արձակելու հարցերին։

Խնդրում եմ ձեզ չյիշել ոչ իմ անուն և ազգանունը և ոչ քաղաքը, որովհետև ինձ կարող են սպանել, իսկ ես 4—5 մանր երեխաների տէր եմ և կերակրում եմ ծերունի ծնողներին։

Կատարեալ յարգանքներով...

3. «Ով մեզ հետ չէ, նա մեր թշնամին է եւ պէտք է ոչնչացով»։

Քանի քանի անկեղծ։ անձնուէր գործիչներ ընկել են Դաշնակցութեան տէսօրից։ Բաւական է յիշել յայտնի գործիչներ, Խաչատուր Կարենիցեան (Կարնեցի), Յակով սարկաւագ (Մշեցի), Արշակ Բարյամեան (յայտնի դաշնակցական գործիչ Նէլօն), Ժողովրդական գործիչ, զրագէտ և հրապարակախոս Թոխմախեան վարդապետը, «Թատրոնի» խմբավիր Թարխանեան, հայութեան թշնամի Գօլիցինի տէսօրիստ Մհերը, Թողնենք տասնեակ ուրիշները, ընկել են նոյն խուժանապետական տէսօրից։ Էլ չեմ առում Արփիար Արփիարեան և այլ հնչակեանների գէմ զործ զրած տէսօրների մասին։ Այս բապէիս աչքիս տուածն է Բ. քաղաքում այն յարգելի անձնաւորութեան պատկերը, որից մահուան սպառնալիքների տակ ստորագրութիւն են առել, թէ «ի՞նչը յիմար է»... Եւ նա արդէն բարոյապէս մեռած և խորսակուած է համարում իրեն...

Վաղուց էր, որ հայ ժողովուրդն զգում էր այդ մթնոլորդի հեղձուցիչ լինելը, ամենքն էլ զգում էին աղջային բռնապետութեան սոսկալի ուժիմի ծանրութիւնը, սակայն տէսօրը, հարազատ եղրօր փայլ-փլուն գաշոյնը՝ ամենքին էլ սարսափեցնուեց

էր, և ոչ ոք չէր յանդգնում հրապարակ դալ, մերկացնել խուժանաբետական չարիքը:

Յեղափոխական կուսակցութիւնների սուր քննադատութիւնները ցարդ համարուել են կուսակցական կրքից յառաջացած թշնամանանք: Առաջին անգամ քաջնակցական բիւրօկրտուների դիմակը պատռեց նոյն Դաշնակցութեան Բոլգարիայի օրգան «Շարժումի» խմբագիր Վարդօն: Նա երբ մօտկից հանաչեց Դաշնակցութեան բիւրօի էութիւնը, իր շանթերն ուղղեց դէպի նա: Օ՛, իզայրոյթ բրթեալ ամբողջ Դաշնակցութիւնը, սկսեց հայնոյելնրան, ամբաստանել, նոյն իսկ պաշտօնական օրգան «Դրօշակի» մէջ խուլ սպառնալիքներ տալ: Սակայն «անցեալն էանց»՝ Ամերիկայի և Բոլգարայի դաշնակցականների մի մասը կանգնեցին և պաշտպանեցին Վարդօյին, պահանջելով «քննութիւն»: Դաշնակցութեան խոփը այս անգամ քարին դէմ առաւ: Միթէ նրանք կարող էին բննութեան ենթարկուել: Խեղճ Վարդօն մահուան սպառնալիքների ազդեցութեան տակ, փախաւ Վատոնայից, բայց շարունակեց իր մերկացումները: Դաշնակցութիւնը իւր բոլոր ոյժը լարեց, որ «Շարժումը» մուտք չըդորձէ Ռուսաստան և այսուեղ էլ «մտքերը չըպղտորէ»...

«Ով մեզ հետ չէ—նա մեր թշնամին է և պիտի ոչնչացնել...»—ահա դրանց լողունգը:

Դ.

---

Բազմաթիւ փաստեր պատմել են մեզ բերանացի, վախենալով զրի անցկացնել: Դա ստրկահոգութիւն է հայեր, Մինչեւ անչափորէն և ճիշտ կերպով բոլոր փաստերը չարձանագրուեն դժուար կը լինի չարիքի առաջն առնել: Դաշնակցական բիւրօկրտուններից շատերը համոզուած են որ այս կամ այն յանցանքը անհատների գործ է և գեռնս չեն գիտակցում որ այդ բոլորը ծնունդ է սիսալ սիստեմի, հետեւանք այն յուի սկզբունքների, որոնցով զեկավարւում են նրանք, ցանկալով մի անհեթեթ միտք իրագործել—ստեղծել կոնսովիրատիւ «ազգային կառավարութիւն»: Մինչև չփոխուեն սիստեմը և սկզբունքները չեն վերանալ և նման երևոյթները: Բուժումը պէտք է սկսել անաշառ մերկացումներով:

## ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԳԵԱԲՐԵԲԸ

(Զբարաշտական պարսիկներ)

### I.

ՎԱ դարի կիսում մահմեդականութիւնը, շատ ուրիշ հարաւային երկրների հետ, մուտք գործեց և Պարսկաստան։ Մօտ 630 թ. Սասանիան Յագկերա Ա թագաւորը, չկարողանալով դիմանալ տրաբական թարս զօրբերի խուժանքին, տեղի տուեց, թողեց երկիրը, հեռացաւ գէպի արհելը. և Պարսկաստանը անցաւ մեծ Խալիֆայ Օմարի իշխանութեան տակ, իսկ պարսիկները հետզ-հետէ ընդունեցին իսլամը։

Օմարի և Ալիի ու սրանց յաջորդների միմեանց գէմ մըլղած արիւնահեղ պայքարից յետոյ, մահմեդական Պարսկաստանը ամփոփուեց իր մէջ ընդունելով շիա դաւանանքը։

Զնայելով որ այս նոր կրօնի նշանաբանն էր սրով և հրով տարածուիլը, բայց և այնպէս պարսիկները ամբողջովին մահմեդականութիւնը չընդունեցին, այլ և եղան այնպիսիները, որոնք դիմացան նորածին իսլամի կողիտ բռունցըներին և իրանց տանջանքների մէջ պարուրած պինդ պահեցին Զենդաւեստան, կրակն ու կրակատունը և Զբաղացոի անունը, ապաւինելով Հնդկաստան կրօնակից Հէնդուների մօտ և կամ բռն հայրենիքում տանջուելով դարեր շարունակ մահ նեղական Փանաթիկոսութեան բոցերում։

Ահա հէնց այդ տանջուած նախնիքների աւանդապահ ժառանգներն են, որոնք կոչւում են Ֆարսեր, Զարդուշտիներ (Զբաղացտականներ) և կամ Գիաբրեր։

<sup>1)</sup> Յօդուածո զբելու համար ձեռքի տակ չեմ ունեցել գյորադդաբար կարեոր զբաւոր աղբիւրներ, այլ զբել եմ հիմունելով իմ գեարերի մէջ տպրած ժամանակամիջոցում ձեռք բերած ծանօթութիւններիս վրա։

Ներկայումս գեարբերը տարածում են Պարսկաստանի հարաւարեկեան մասերում։ Հստ մի վիճակագրութեան, որ տեղի է ունեցել 1897 թուին, գեարբերի ընդհանուր թիւը Պարսկաստանում 9876 է,<sup>1)</sup> որոնցից՝

Թէհրան	- - - - -	300
Եազդ	- - - - -	7000
Քերման	- - - - -	2500
Լիրաղ	- - - - -	40
Բաշան	- - - - -	20
Ղում	- - - - -	3
Սպահան	- - - - -	3
Բէնգիր Աբրաս և Բուշիր	-	10

Ընդամենը 2876 հոգի

Ինչպէս ցոյց է տալիս վիճակագրութիւնը, տեսնում ենք որ գեարբերը մեծ մասամբ ապրում են Եազդ (7000 հոգի) և Քերման (2500 հ.), իսկ մնացած քաղաքներում անշան թիւ են ներկայացնում, ի բաց առեալ մայրաքաղաք Թէհրանը (300 հ.).

Սակայն սխալ կը լինի կարծել, որ ընդհանուր գեարբերի թիւը 9876 է, այսք է ասել, որ բացի վերոյիշեալ թուերից, բաւոհանչափ զրադաշտական պարսիկներ կան և Հնդկաստանում, որոնք ցըսւած են Հնդկաստանի զանազան քաղաքներում, օրինակ, Բոմբեյ, Կալկաթա, Մինդապուր, Մադրաս և այլն. որտեղ պարապում են զիսաւորապէս առևտուրով. և որոնց ճիշտ թիւը անկարող եղանք որոշել միւս զրագաշտականներից:

Փակագծերում ասենք, որ բացի զրագաշտական պարսիկներից կան և զրագաշտական Հնդկուներ. Ամբողջ զրագաշտականների թիւը հաշւում է Հնդկաստանում 110,000 հոգի, Պարսկաստանում 9876 հ., Լոնդոնում 200 հ., Ամերիկա 25 հ., Եգիպտոս 15 հ., ընդհանընը կարելի է հաշուել մօտ 120,000 հ.

Գեարբերը Պարսկաստանում պարապում են զլիաւորապէս վաճառականութեամբ և մեծ մասամբ ապահով ու շիտակ առևտուրականներ են. Մըանը մի տեսակ միջնորդ են հանդիսանուում Հնդկաստանից անգլիական (աւստրիական, ֆրանսիական և գերմանական) առլուանքները, իսկ վերջին ժամանակներու էլ Թէհրանի միջոցով և ոռուսական ապրանքները, Պարսկաստան ներմուծելու մէջ. իսկ փոխարէնը. բամբակ, բուրդ, չոր մրգե-

1) Այս թւերը հաղորդել է մեղ Քերմանի գլուխների աւագ ուսուցիչ Միրզա-Ֆէյ-Խոսրով-Ականդարեանը:

դէն և քաթիրայ 1) են բարձում Բէսդէր-Արբասի վրայով Հնդկաստան կամ ուղղակի լոնգին: Պարսկաստանի վաճառականների մէջ, հայ ազգի Թումաննեաններին համահաւասար յարգ ու պատիւ են վայելում գեաբրներից Զիմշիդեանների 2) առևտրական տունը, որոնք իրենց բաժանմունքները ունին հարաւային Պարսկաստանի շատ տեղերում, ինչպէս օր. Սպահան, Եազդ, Շիրազ, Քիրման, Քաշան ևայլն:

Տայի վաճառականութիւնից, Գեաբրերը պարապւում են և երկրագործութեամբ: Եազդի և Քիրմանի նահանգներում ունեն իրենց սեպհական գիւղերը և կամ կալուածատէր արաբների մօտ խոշնշին են (կամաւոր նասողներ): Գեաբրերը Երկրագործ գասակարգ չունին ինչպէս և ամբողջ Պարսկաստանի 4/5-ամառ, որ իր սեպհական հողը ունենայ, այլ կան բարձիգարներ (հոգագործներ) որոնք կալուածատէր արաբների (աղանների) հոգն են մշակում և կեանքի ծանրագոյն բեռանտակ ճնշուոծ կալուածատէր ըստերին են կերակրում:

Արհեստաւորները շատ անշան են Գեաբրերի մէջ, իսկ դրա փոխարձէն ունին բերակիրներ (չարուագարներ), որոնք գործում են Քիրմանից—Եազդ—Թէհրան, մասումը Սպահան, Շիրազ, Բէսդէր-Արբասի ճանապարհներին: Գործում են որպանք միայն ջորիներով, ճիկերով և էշերով. բայց ոչ ուղտերով:

Ենորհիւ վաճառականութեան Գեաբրերը միծ մասումը տնտեսապէս ապահով վիճակի մէջ են. սրանց մէջ չկան ճուրացկաններ. իսկ եղած չքաւորների համար գործ են ճարում իրենց ցեղակիցները և կամ իրանք են դործ տալիս:

## II.

Դարերով արիւնակից, համացեղ և համարարբառ մուսուլման պարսկից զրադաշտական պարսիկը (նոյնպէս և այլակրօն ցեղերը) զրկանքներ և տանջանքներ շատ են կրել և ի՞նչեր առէք, որ մահմեդական պարսիկը չէ հնարել իր այդ նախնիքնե-

1) Ներկայումս Պարսկաստանից արտահանուող նիւթերի մէջ նշանաւոր տեղ է բռնում քաթիրան (տարակ). առ մի տեսակ խեծ է, որ սուացւում է փշատերի թփերից: Այս խեծը սուացւում է միծ մասամբ Քիրմանշահի, Քիւրդաստանի, Սովուչ-Բուլաղի, Սպահանի և Քիրմանի նահանգներից. կայ նոյնպէս և Սէյստանում, բայց անժակ:

2) Սկանդարեան, Զիմշիդեան ևայլն անունների եան գերջաւորութիւնը ոչ թէ ազգասիրաբար է արտած մեր կողմից, այլ որովհետեւ Գեաբրերի ազգանունները եւ հայկականի նման վերջանում է «եան» մասնիկով:

րի աւանդապահ ժառանգներին իսլամի գիրկը գլորելու համար։ Խլել են նրանց՝ հարստութիւնը, յափշտակել նրանց կեանքը, բռնութեամբ հարեմ են տարել կինն ու աղջիկը և այս ոչ թէ սպատմութեան մի որոշ շրջանում է տեղի ունեցնել, այլ միշտ, մինչև Նասր-Էդդին-շահի թագաւորութիւնը։ Այդ է պատճառը որ Գեաբբերի թիւլ հալուել, մաշուել է և այդ ողորմելի քանակութեան հասել։ Նոյն իսկ այսօր Քերմանում և մանաւանդ Հաղդում կարելի է հանդիպել բաւականին մուսուլման լնաւանիքների, որոնք անցեալ դարի առաջին կիսում բռնութեամբ Իսլամն են ընդունել, սակայն նրանցից շատերը մինչև օրս էլ ծածուկ մնացել են զրադաշտական և կատարում են բոլոր ծէսերը, չընայած որ մի սերունդ արդէն անցել է, իսկ շատերն էլ սիրով ընդունել են Բարի վարդապետութիւնը, իհարկէ դարձեալ ծածուկ։

Սկսած Նասր-Էդդին շահի թագաւորութեան առաջին տարիներից, Գեաբբերը սկսեցին քիչ ազատ շունչ քաշել, չնայած որ դեռ մինչև օրս էլ ազատ չեն մնացել մահմեդական Փանատիկոս հոգևորականութեան և մոլիկանդ ամբոխի կոպիտ վարժուանքներից։ Նոյն իսկ այժմ Գեաբբերը (Նոյնակէս և հրէաները) Եաղգում և Քերմանում իրաւունք չունեն քաղաքում հեծնել ձի, էջ և կամ մի այլ զրաստ։ Ես տեսայ թէ ինչպէս Քերմանի նահանգում Ռաֆսանջան կոչուած գիւղաքաղբում անգիտուէն ծեծեցին մի հարուստ Գեաբբի, որ յանդնել էր քաղաքի մէջ նստել իր սեպհական էշը։

Նասիր-Էդդին իր թագաւորութեան վերջին տարիներում, այն է 1890 թ. Բ. (հէջրայի 1308), կայսերական Փէրմանով, Եաղգի և Քերմանի Գեաբբերից ընտրուած ծերակոյտ (մաջլիսը Ռիշսիփիդհան) հաստատեց, ամեն մի քաղաքում առանձին բազկացած 12 հոգի պատուաւոր Գեաբբերից։ Այդ ընտրուած մարդիկ մնում են իրենց պաշտօնում ց'մահ, իսկ մեռնելու գէպքում համայնքն է ընտրում նրա տեղը մի ուրիշին, առանց ներկայացնելու պետութեան հաստատութեան, Գեաբբերի այդ ծերակոյտն է կառավարում իրենց համայնքի ներքին գործերը, նրանք են վերջացնում իրենց մէջ եղած վէճերը, ժառանգական ինսդիրները, հոգում են զպլոցների և կրակատների կարիքները, հոգ են տանում որբերի և աղքատների մասին, մի խօսքով սա մի ժողով է, որից կախուած է Գեաբբերի համայնքի յառաջադիմութեան ու քարօրութեան գործը։ Պէտք է տսիլ, որ այդ ժողովը գեղեցիկ կերպով կառավարում է համայնքը, որի վճիռներին և նոյն իսկ խորհուրդներին ենթարկում են Գեաբբերը առանց-արտունջի։

Չնայած արտաքին աննպաստ հանգամանքներին\*), սրոնցից ձնշում են Գեաբրերը, բայց և այնպէս նրանք ձգտել և ձրգում են դէպի լուսաւորութիւն ու յառաջադիմութիւն և կարելի է ասել, որ նրանք դպրոցների լարելաւման համար զործ են դնում ամեն ջանք թէ բարոյական և թէ նիւթական։ Գեաբրերի դպրոցում դուք չէք գտնիր ասիական այն կողմանութիւնն ու բթացնող մեթոդը, որ մինչև օրս պահպանւում է մահմեղական մեղրէսէխներում։ Նրանք չեն խորում մանուկ սերնդի միտքը զուրանական ֆանատիզմով, Սադիի, Հաֆիզի, Խայամի ոուֆիական միստիկ բանաստեղծութիւններով։ որանով չենք ուզում ասել, որ Գեաբրերը խորշում են այդ մեծ բանաստեղծների երկերից, այլ ընդհակառակը նրանք սիրով կարգում են և անգիր զիտեն ինչպէս և մահմեղականներից շատերը, Հափիզի, Սադիի, Խայամի, գինու և գեղեցկունու վրայ գրած ախորժալուր ոտանաւորները. մանաւանդ Ֆրանսու «Շահ-Նատմէ» ն, որից ամբողջ զլուխներ անգիր զիտեն նրանք: «Շահ-Նատմէ» ն Գեաբրերի ամենից սիրած գիրըն է, որտեղ երգուած է իրենց հերոս նախնիբների դիցազնական կոփեները։ Սակայն այս ամենը անում են նրանք դպրոցից դուրս։ Գեաբրերը ուսուցանում են երեխաներին չնդկաստանում կազմուած դիւրըմբոնելի դասագրքերի վրայ։

Դեղեցիկ տպաւորութեամբ է հեռանում այցելուն Գեաբրերի դպրոցից։ Այստեղ երեխաները չեն նստած յետ ու առաջ, աջ ու ձախ, զլսարկներով, ինչպէս մահմեղական մէղրէսէխներում. անսովոր բան է թիւում Պարսկաստանում, սրանց կարգն ու կանոնը։ Սաները բաժանուած են գասարանների ուր առանձին ուսուցիչներ են պարապւում. աշակերտները նստուած են շարքերով ծալտարտիկ առանց գլխարկների. դասարանի պատից կախուած է աշխատրհագրութեան մեծ քարտէզը (անգլերէն տառերով) և երկու կիսագնդերի քարտէզը. կան դպրոցական այլ առարկաներ, անկենում զլուած է սեղան և աթոռ ուսուցչի համար։ Բաւական է այցելել Գեաբրերի դպրոցը, որպէս զի հասկանալ թէ որքան կուլտուրա է խեղզել իսլամը և ով

\*). Ուսանելի է ոչ-քրիստոնեայ այս մարդկանց (հին հեթանոս հայրի ազգակիցների և կրօնակիցների) կուլտուրական յառաջադիմութիւնը։ Թող մեր ճուռմարանները որոշ բանակից շաբունակեն իրանց բարբաջանքները «քրիստոնեայ հայութեան» երելի «կուլտուրական յատկութիւնների» մասին և կղերական-ազգասիրական եքստազից գժուած յոխորտանքներով աշխարհ գարմացնեն։ Թէ այս գրուածքը և թէ Վօլտերի «Լանդիտը» գուցէ մի քիչ սմակեցնեն մեր Պանդոս փիլիսոփաներին և ինքնահաւո՞ւ վինիստներին,

գիտէ դեռ ժըքան պիտի խեղդի նա, խեղճ Պարսկաստանում Հարաւային Պարսկաստանում, Դեարքերի կրթական գործը հետեւել պատկերն է ներկայացնում. բերենք թուեր, աւելի<sup>1)</sup> պարզ և որոշ կացուցանելու համար գործի գրութիւնը:

	Պաղոց-ներ	աշակերտ	աշակերտակի	ուսուցիչ	Ուսուցչունի
Եազգում	3	290	146	4	1
Չ գիւղերում	2	87	??	2	—
Քերմանում	3	175	120	3	1
Չ գիւղերում	1	56	??	1	—
Ընդամենը	9	608	266	10	2

Այսպէս ուրեմն, ինչպէս տեսնում ենք, վերևի ցուցակից գեաբրերը ունին 9 դպրոց, 12 ուսուցանող, 874 սովորողներով, որը կազմում է ընհանուր ազգարնակութեան 110/օ-ը, սակայն այս 0/օ-ը շատ փոքր է համեմատած իրականութեան հետ: Պարսկաստանում, ոչ թէ միայն գեաբրերի և բարիների, այլ նոյնիսկ մահմեդական պարսիկների մէջ, խիստ տարածուած է գրադիտութիւնը, որը մասամբ առանց մեղքեսի երես տեսնելու են սովորում գրել կարգալը զանազան խանութիւններում ծառայելու ժամանակ:

Դպրոցներում ուսուցանում են աղաներին հետեւեալ տառարկաները. 1) պաղոցերէն, 2) անողերէն, 3) ընդհանուր աշխարհագրութիւն և 4) թուարանութիւն. իսկ աղջկերանց. 1) պարսկերէն, 2) ընդհանուր աշխարհագրութիւն. 3) թուարանութիւն, 4) կար ու ձե:

Բաղաքների գպլոցները 5 տարուայ դասընթաց ունին: Աշակերտաներին փոխադրում են դասարանից դասարան առանց թուանշանների, տարուայ վերջը հրապարակական քննութիւնից յետոյ: Յառաջադէմ աշակերտները փոխադրում են ընծաներով, որը լինում է գրքերով կամ այլ ուսումնական պիտոյքներով, իսկ ամենայառաջադէմ և լաւ վարքով աշակերտներին վարձարում են երծաթէ մեղաններով: Այդ մեղանները տրում են հոգարարձութեան (ծերակոյտը պիտի ինկատի ունենալ և ոչ մի առանձին մարմին) կողմից, աւագ ուսուցչի անունով: Մեղալի մի երեսին պատկերացրած է արեգակը, իսկ միւս երեսին կայ հետեւեալ մակագրութիւնը պարսկերէն լեզուով.

1) Եազգի գպլոցների մասին թուեր հաղորդել են մեզ Խուզամուրադ Ռոստոմիանը և Շահրիար Սրգաշիրեանը, իսկ Քերմանի զպլոցների մասին՝ Միլզա—Քէյ—Առուսվ—Սկանդարեանը:

«Դար զմանը Ֆադիշահ, Մուղաֆէր-Էգդին շահ, ապ Միրզա Քէյ-Խոսրով թէ շագիբով» (ի թագաւորութեանն Մուղաֆէր-Էգդին շահի, Միրզա-Քէյ-Խոսրովից իր աշակերտին):

Դպրոցական գործը առաջ է տարւում բացառապէս Հընդկաստանի, մանաւանդ Բոմբէյարնակ ազգակիցների նիւթական օժանդակութեամբ: Բոմբէյարնակներն են հոգում ուսուցիչների վարձն ու աշակերտների և աշակերտուհների գասական պիտոյքները:

Նոյն հնդկաստանցիների միջոցներով, այժմս Քերմանում կառուցւում է մի փասաւոր գպրոցտկան չէնք. քաղաքի հիւսիսարելեան կողմք գեաբրերի Դոլաբ կոչուած քաղաքամասում: Այդ շինութիւնը իր փաստհեղութեամբ առաջինն է Քնրուանում. տաշած քարից և եփած աղիւսից. շինութեան համար դրուած է մօտ 10,000 թուման փող. գպրոցը իր ձեռվ, յարմարութիւններով և ընդարձակութեան կողմից պակաս չէ Նորջուղայի Թանանեան դպրոցից: Այդ շինութիւնը պատրաստելուց յետոյ այնտեղ պիտի տեղափոխուեն թէ տղաները և թէ աղջիկները: Այդ գպրոցի կառուցւմն խանդարելու համար շատ աշխատեցին Քերմանի մահմեդական հոգեորականները և չարունախանձ մարդիկ, բայց Թէհրանից եկած խիստ հրամանը փակեց խոչնդու հանդիսացողների ըերանը և գործը յաջողութեամբ առաջ տարուեց:

Դպրոցական գործի գլուխն է կանգնած Եազգում Զուան-Մարզը Ֆարար, որին նոյնպէս և անուանում են Ռւսաս-Մէռտէր. իսկ Քերմանում՝ Միրզա-Քէյ-Խոսրով-Սկանդարեանը: Այդ երկու իստելիգենտ անձնաւորութիւններն են գեաբրների մուաւոր յառաջադիմութեան շարժիչները. որոնցից առաջինը ինքնակըթութեամբ է առաջ զնացել ի՞նկ երկրորդը իր կըրթութիւնը ստացել է Հնդկաստանի Բոմբէյ քաղաքի անդիփական կոլէջում: Միրզա-Քէյ-Խոսրովը իր աշխատասիրութեամբ, եռանդով և իսոնեմ գործունէութեամբ, ամբողջ հասարակութեան, թէ մահմեդական, թէ բարի և թէ գեաբրերի սերն ու յարգանքն է վայելում: Այս անձնաւորութիւնը հարաւային Պարսկաստանի երսական կուլտուրայի միակ անկեղծ սերմացանը կարելի է համարել. սա իր անբիծ գործունէութեամբ ոչ մի նմանութիւն չունի անգլիական հոգիորսող միսիօնարների հետ: 1904 թուի սեպտեմբերի 12-ին Մուղաֆէր-Էգդին շահը վարձատրեց այդ անկեղծ մշակին Շիր-Խուրշիդ շքանշանով. իսկ անգլիական կառավարութիւնը, նոյն թուին, անգլիստկան լեզուն ուսուցանելու համար՝ երկրորդ կարգի շքանշանով:

Դպրոցական գործից գուրս գեաբրերը հոգս են տանում,

իրանց համայնքի առողջապահութեան և հիւանդանըի հոգատարութեան մասին։ Քերմանի գեաբրերը սկսած 1904 թուից վճարում են անդլիական հիւանդանոցին 500 թուման, երկու սենեակ իր մահմակալներով պահելու հիւանդ գեաբրերի համար, մինը կանաց, միւսը՝ տղամարդկանց համար և այսպիսով դժբաղդութեան օրերում, գեաբրերը կարող են գիմել բժշկին և հիւանդանոցին, առանց սենի խարութեան, առանց հարստի և աղքատի տարբերութեան և գեղ գանել իրենց ցաւերին։

Սակայն այս ամենը Պարսկաստանի միայն հարաւային մասի գեաբրերին է վերաբերում։ Բայց թէ ինչ վիճակի մէջ է գտնւում մայրաքաղաք Թէհրանի գեաբր համայնքի գործերը—դժբաղտարար ոչինչ տաել չենք կարող, որովհետեւ ծանօթ չենք։

## III.

Գեաբրները կամ ֆարսերը, ինչպէս յայտնի է գաւանում են զրադաշտական կրօնը, որպէս և իրենց նախնիքներն էին. այդ մասին մեր պատմագրերից յիշում են. Եղիշեն, Մովսէս Խորենացին և մանաւանդ Եզնիկ Կողբացին, որ յայտնի է իր «Եզծ բեշին պարսից» քննադատական գրուածքով։ Սակայն այս օրուայ զրադաշտականները իրենց վարք ու բարքով, իրենց վերաբերմունքով դէպի օտարները, չեն յիշեցնում մեզ Շապուհների և Յաղկերտների օրը, այն խրոխտ ու հպարտ արքայից արքաներին, որոնք զրադաշտականութիւնից գուրս ոչ մի բան չեն ուղում ճանաչիլ\*):

Առհասարակ տմեն մի կրօն կամ տմեն մի վարդապետութիւն, ծառայում է իր նալատակներին երբ վոքրամամնութեան սեպհականութիւն է և աղանդաւորութեան շրջանում. սակայն երբ նա սկսում է ճանաչուել, դառնալ մեծամամնութեան դաւանանք՝ չէ ծառայում իր նապատակներին, այդպիսի դէպի բերում կրօնը և նոյն իսկ զրադափարները դառնում են միւմի բենու որ մեխում են մարդկային ազատ մատածութիւնը և կասեցնում մտքի ու հոգու ազատ թոխչքը։

Զրադաշտական կրօնի հիմնագիրը Զրադաշտն, որի տնուանով և ֆարսերը կոչում են զրադաշտական կամ ինչպէս իրանք են անուանում իրանց զրադաշտի, իսկ այդ վարդապետութեան հաւատամբը և այլ սրբազն պատմուածքներ և պատուէրներն ամփոփուած է մի գրքի մէջ, որի հեղինակը Զրադաշտ մար-

\*.) Եթէ առանց քննադատաբար վերաբերուելու հաւատամբ մեր վարդապետ-պատմապիլերին...  
Ռ. Խնդ.

գարէն է համարւում. այդ սրբազն գիրքը կոչւում է ԶՀԱՂ-Աւեհստա կամ թէ ԶՀԱՂՈՒ-ՓԱ-ՂԷՆԻ. Զրադաշտի վարդապետութիւնը կայանում է գուալիղմի մէջ: Այն ամենը ինչը որ բարի աղնիւ, առաքինի և օգտակար է՝ ստեղծագործութիւն է Որմղգի, որը բարւոյ ներկայացուցիչն է, իսկ այն ամենը ինչ որ չար է, անազնիւ և ֆասակար Ահրիմանի ստեղծագործութիւնն է համարւում, որ չարի ներկայացուցիչն է, սակայն թէ Որմիղգը և թէ Ահրիմանը երկուն էլ ծնունդ են մի աստծոյ, այն է Մեծ Ահրումազդայի: Այսպիսով զրադաշտականները դաւանում են մի Աստուած. այդ իսկ պատճառով կոչւում են նրանք նոյնապէս և Մազդիսին, որ նշանակում է Աստուածածանուչ: Հստ Զրադաշտի վարդապետութեան կեանքը ներկայացնում է որպէս մի կոռուի ասպարէղ, ուր մշտական պայքար են մդում Որմիղգն ու Ահրիմանը իրանց հպատակ ոգիներով: Սակայն նա գտնում է որ յաղթանակը պիտի տանէ Որմիղգը՝ բարւոյ ներկայացուցիչը. որովհետեւ ըստ Աւեհստայի Ահրումազդանը խոստացել է զրկել երկիր Հոշիգորին, որ պիտի ջնջէ Ահրիմանի իշխանութիւնը և հաստատէ Որմղի մշտատես թագաւորութիւնը. զրադաշտականները սպասում են Հոշիգորի Գալստեան: (Սա յիշեցնում է հրէտան Մնուեան, քրիստոնէանների Քրիստոսի երկրորդ գալուստը և մահմեղականների Մախղին, որին բոլորն էլ սպասում են): Աստծոյ ներկայացուցիչը երկնքում Արեղակն է (Աւտար, Խուրշիդ) որ կեանքի աղբիւրն է, իսկ արեգակի ներկայացուցիչը երկրի վրայ կրակն է (Աթիշ): Զրադաշտականները պարտաւոր են յարգել և նոյնիսկ պաշտել Սբենքակը երկնքում իսկ Կրակը երկրում: Կրակը պաշտելու (բայց աւելի ճիշտը յարգելու) պատճառով կոչւում են նրանք նոյնպէս և կրակալպաշտ (Աթիշ փարաար): Կրակին մշտական յարգանը և պաշտօն մատուցանելու և սրբազն հուրը անշէջ պահելու համար, ունեն նրանք կրտակամներ ինչպէս և հնում: Ներկայումըս գեաբրերը ունին Եազդում 21 կրտակատուն կամ ազօթատուն իսկ Քերմանում 3-ը. այդ կրտակամները իրանց լիզուով կոչւում է Դարրէ-Մէհրիգուն կամ Խունակը-Մէհրիգուն որ նըշանակում է Մէհրի տուն: Կրտակամները ունին քառակուսի ձև, որի արկերեան կողմը քիչ բարձր է, ուր շինուած է պատի մօտ մի հնոց, որի շուրջը աղատ է և կարելի է պտտել: Հնոցը կամ օջախը ծածկուած է թաղով, որի ծինելոյզը ոլոր-մոլոր դուրս է հանուած կտուրից որպէսզի սրբազն հուրը պատահական կելպուտութիւնների չենթարկուի. Հնոցը որի ճակտին նկարուած է արեգակի պատկերը ծածկուած է լինում մի վարագոյրով, որ և ըստ մեծի մասին անտեսանների է մնում հա-

ւատացեալ աղօթաւորներից. նա մատչելի է միմիայն մովքեղին և կրակատսմ սպասաւորներին, որոնք սրբազան հուը պիտի արծարծեն միշտ։ Կրակատներում վասուած կրակը իրանց լիւզով կոչում է աթիշ վար ահրամ. այս կրակը անշէջ պահելու համար գործ են ածում վայս, բայց ներկայումս գործադըրաւում է և փայտի ածուլիք։ Կրակատները անմատչելի են օտարների համար, այնտեղ լացի զրադաշտականներից մուտք գործել չէ կարող ոչ ոք, ուստի սրբազնութիւն է համարւում։

Կրակատներում կրակին պաշտօն մատուցանելու և այլ հոգեսոր պղնոյցքները հոգալու համար, գեարերը ունին ըրմեր ինչպէս և հին ժամանակը։ Ճիշտ է, այսօր էլ քրմութեան պաշտօնը ժամանակուկու։ Է, առակայն այժմուայ քրմերը իրենց պատմական հայրերէ առանձին կաստայ չեն կաղմում, սորա ոչ մի բանով չեւ յանում այն զօրեղ դասակարգը, որ իր շահերի համար արքաներ էր խաղացնուած ձեռքին և մզում նըրանց կոռուի գաշաը յանուն զրադաշտական կրօնի։ Այսօրուայ զրադաշտական քուրմը, որին իրենք մովքէդ կամ դաստուր են անուանում, չեն տարբերուած իրենց հօտի մի հասարակ անդամից. նոյն իսկ հադուստի ձեռով, կամ նիտո ու կացով այնքան նման են իրենց համայնքի մնացած անդամներին, որ անծանօթ օտարականը չի կարող տարբերել քուրմը մնացած գեարերից։ Քըմերի ցեղից քրմութեան պաշտօն յանձն են առնում նրանք որոնք ցանկանուած են, մի խօսքով կամաւոր է և այնքան հոգի որքանի կարիք կայ, իսկ սրանց ապրուստի միջոցները հայթայթում է համայնքը, իր նուէրներով և տուրքերով։ Գեարբերը բաժանուած են ցեղերի, որոնցից յայտնի են ներկայումս Քէյանի և Սասանեան անուններով. և զրանց մէջ կայ մի փոքրիկ ատելութիւն, ստեղծուած պատմական հողի վրայայսպէս Քէյանիները մեղաղբում են Սասանեաններին զրադաշտականութիւնը ձեռքից տալու և պարսկական թագաւորութեան անկման պատճառ դառնալու համար, իրենց զեխ կեանքով. իսկ Սասանեանները մեղաղբում են Քէյանիներին նրա համար, որ Մանէի պէս մի աղանդաւոր անձնաւորութիւն իրենց ցեղիցն էր ու Մանէի աղանդն են համարում զրադաշտականութեան անկման պատճառը ու իրանց մէջ երկպառակութիւն գցողը որ և պատճառ դարձաւ հայրենիքի անկման։ Այդ ցեղերից ամեն մէկը ներկայումս ունի իր առանձին քուրմը. սակայն այս ատելութիւնը համարեա թէ ջնջուելու վրայ է, Հնդկաստանի գեարբերի և Պարսկաստանի գեարբերի մէջ էլ կայ մի փոքրիկ ատելութիւն, բայց այստեղ ինզիրը կրօնի գոգմային չէ վերաբերում և ոչ էլ պատմական մեղա-

դրանքներ են միմիանց գէմ. այլ լոկ տումարտկան տարրերութիւն է, պարզ ասած ժամանակաղբութեամբ են իրարից տարբերում, այսինքն տօն օրերի կատարման ճիշտ ժամանակի որոշելու վերաբերմամբ:

Զրադաշտականները իրանց յարդանքը արտայայտում են գէպի կրակը ամեն կերպ. օրինակ, նրանք չեն ծխում, այդ համարում է անպատճութիւն գէպի սրբազն հուրը. չեն փըշում կրակին կամ ճրագին և երեքը բռնի միջոցներով չեն հանգցնում կրակը. զգուշանում են սյրել այնպիսի նիւթեր որոնք կարող են անախորժ հոտ ունենալ. սա նոյնպէս մեղք է, այլ ընդհակառակը դործադրում են անուշահոտ խունկեր և կնտրուկներ: Երեկոնները ճրազը վառելուց յետոյ վասնում են վառուղի ճրագին յարդալից բարենկերով, այն է «սալամ չըտղ» նոր պարսկերէնով, որ նշանակում է բարեն ճրագին: Այս սովորութիւնը նոյնութեամբ պահուում է և մահմեկական պարսիկների մէջ:

Զրադաշտականները աղօթում են օրեկան հինգ անգամ, ճիշտ այնպէս ինչպէս այսօր շիա պարսիկները. այդ աղօթքները տօն օրերին և զոհի ժամանակ բաւական երկար է լինում, սովորական լի օրերից, նրանք աղօթում են ամեն տեղ ուր օտար աչք չէ տեսնում նրանց և այն ժամանակ երբ աղօթքատուն չեն գնում: Առաջին աղօթքը կատարում են առաօտեան վաղ արեածագից առաջ, երկրորդը՝ արել քիչ բարձրացած, երրորդը՝ կէսօրին, չորրորդը՝ կէսօրից յետոյ վերջալոյսից առաջ և հինգերորդը՝ երեկոյեան քնելուց առաջ:

Կրակատներում զոհի և պարապմունքի ժամանակ հետեւեալն է տեղի ունենում: Քուրմը հագնում է մի մաքուր, սովիտակ, երկար շաղիկ, որին իրենք սատրա են անւանում, գլուխին գնում է նոյնպէս սպիտակ մի գլխարկ որի երկու կողմերը կապ կայ, այդ կապերը իջնում են ականջների վրայով, ծածկում ականջները և կապւում ծնոսի տակ, իսկ բերանը նոյնպէս ծածկում է մի ուրիշ կտորով որը կոչւում է Բայրհանաւ այսինքն բերանակապ. այնպէս որ զոհաբերութեան ժամանակ քուրմի բերանը ծածկուած պիտի լինի, որպէսզի արարողութեան միջոցին շունչը չ'դոչի կրակին և պղծէ նրան, շապկի վրայով կապում են 3—4 հանգոյց երկարութեամբ բըրդից գործած մի բարակ գոտի. այս վերջինս պիտի ունենան անպայման բոլոր զրադաշտականները, գա անհրաժէշտ է համարում աղօթքի ժամանակ: Քուրմը կանքնած է ամենից առաջ, երեսը դէսի արեկելք, ապա նրանից յետոյ աղօթաւոր հաւատացեալները շարք շարք երեսները դարձեալ դէսի արեսեպտեմբեր, 1906.

ւելք, և սկսում է խուլ քրթմնջոց, որ որոշ չափով հրէտական աղօթատունն է յիշեցնում, սակայն այստեղ կարգն է տիրապետում, կարգում են աղօթքը, հանելով ծոցներից փոքրիկ աղօթագրքերը, իսկ անդրագէտները մրմնջում են բերանացի. ձայները երբեմն լսելի են լինում և երբեմն էլ իջնում մարում են լութեան մէջ, աղա թեթև խոնարհում են գլուխները երկրագութեան ձևով և նորից ուզիղ կանգնում ու շարունակում մրմնջալ. 10 բոպէաչափ անցնելուց յետոյ և մրմնջում են և արձակում իրենց կոճակները և շապկի վրայով կապած այն բրդէ բարակ գօտին որի մասին վերև յիշեցի. արձակում են այդ գօտին և զցում աջ ուսի վրայ կամ բռնում աջ ձեռքում և գարձեալ շարունակում մրմնջալ անընդհատ, իրենց այդ երկար տղօթքները: Մոսացայ յիշել որ զոհարերութեան օրերին մովերեղի առաջ գրուած է լինում մի միծ Սկուտեղի, որի մէջ լինում են զանազան մրգեր և պատուղներ, այն ինչ որ ունեն իրենց բերքերից, նոյնպէս և մի գաւաթ օդի, մի գաւաթ գիւնի, մի գաւաթ սոկէտոյն խմբչը և մի փունջ էլ հոմի բոյս, վերջնուն շատ նման է մեր անանուխին (նաևա): Քուրմը վերցնում է իր առաջ զրած հոմի բայսից մի հատ և բարձր կրկնում մի քանի խօսք, այն ժամանակ աղօթողները բարձրացնում են իրանց աջ ձեռքի ցուցամատը, ապա վերցնում է երկրորդ բոյսը և կրկնում նոյն անհատկանալի բառերը, աղօթողները բարձրացնում են նրանց ձեռքի 5 մատները ու նորից ցած են զցում ու շարունակում մրմնջալ, այս կրկնում է երկու անգամ, մէկը յոտնկայս (կանգնած), միւսը ծունկ չոքած. երբ վերջանում է աղօթքը աջ ձեռքը տանում են դէպի ձախ և բութ մատը միտոցներով միջամտալին խփում են այսպէս ասած չիրթմա ու բարձր կրկնում «նահլաթ վար Անդիման», որ նշանակում է՝ անէծք Անդիմանին. ապա կապում են բրդէ գօտին մարմնի վրայով, արձակած կոճակներ ամրում, կապում ասխական լայն գօտին ու հեռանում: Զմուռնամ յիշել որ արարողութեան ժամանակ Քուրմի յիտել կանգնած է լինում կրակատան սպասուրը, որ աղօթելու ժամանակ մի ամանում ծխացող անուշանունկն է սպասուէցնում աղօթողների շարքերի մէջ. որը շատ նման է լուսաւորչական եկեղեցու խնկարկութեան արարողութեանը:

Աւելնորդ չեմ համարում երկու խօսք էլ ասել զբաղաշտակաների տօների մասին: Զրադաշտականները ունին տօներ ստկայն նրանցից ամենանշանաւորները հետեւալ երկուսն են միայն:

Առաջինը՝ եյիդը՝ Հարգորում. այս տօնը որ կատարում են տահն՝ տարի օգոստոսի 20-ին մօտաւորապէս, յիշատակն է Զրադաշտ մարզարէի աղատման, այն փորձութիւնից որին ենթարկուեց նա չար ողիների ձեռամբ:

Անրիմանի հպատակ չար ողիները Զրադաշտին դցեցին եօթ կովերի ուների տակ կոխան լինելու համար. սակայն անառունները Որմզդի հրամանով ոչ թէ չեն վնասում նրան, այլ նոյնիսկ անփորձ են պահում և ուրիշ վտանգներից: Այդ օրը ամեն մի զրադաշտական կթում է մի կով ու կաթը ածում ջրի մէջ ձկների համար:

Երկրորդ՝ եյիդը՝ Մէհրիկէդ—որ նշանակում է տիրոջ օր. սա կատարում է մօտաւորապէս յունուար տասի 12-ին: Այդ օրը, որ նուիրուած է տիրոջ, ըոլոր զրադաշտականները արիւնոտ զոհ են մատուցանում: Մորթում են մի-մի ոչխար, իսկ չուներները հաւ, զոհի արիւնը սրսկում են տան պատերին, իսկ միսը եփում են թոնքում. ապա զոհի արիւնից մի բուռ և եփած միս ուղարկում են կրակատուն, որտեղ քուրմը պարտեցնում է զոհը կրակարանի շուրջը, իսկ արիւնը սրսկում կրակին և կրակատան պատերին, ու միենոյն ժամանակը աղօթքներ կարդում վրան. յետոյ նա կտրում է մախ մի կտոր, որպէս տիրոջ կամ նրա ծառայի բաժին, իսկ մնացածը զոհի տէրը յետ է տանում տուն. ուր բաժնում են աղքատներին և բարեկամներին: Համարեա թէ սրանց զոհի ժամանակ նոյն է տեղի ունենում ինչ որ լուսաւորչականների մատաղի ժամանակ:

---

Զրադաշտականների՝ կամ գեարբերի՝ ամենահետաքրքիր բանը, նրանց մեռեալների բնակարանն է ներկայառնում, որ կոչում է զափմէ, որի բառացի նշանակութիւնն է «Լոռութեան ամրոց»: Յիրաւի սա մի ամրոց է ուր ամենքը լուսութեան են դատապարտուած: Այս ամրոցներից ամրող Պարսկաստանում դեարբերը ունին 5 հատ. Թէհրան 1, Եազգը իր շրջակայրով 2, Թիրմանը նոյնակէս շրջակայրով 2: Դախմէները շինուած են լինում քաղաքներից դուրս առնուազը 3—4 ֆարսաղ յեռաւորութեան վրայ, բարձր լեռների զագաթներին, իսկ եթէ մօտիկ սարեր չկան, այն ժամանակ նա շինում է նայած յարմարութեան, պատահած բարձր բլուրների գագաթներին: Դա բաւական բարձրութեամբ մի աշտարակ է, որը ունի մի մուտք. իսկ ներսը շինուած է մի խոր ստորերկրեայ արհեստական այր, որտեղ իջնում են սանդուխըներով մինչև յատակը. ահա այդ տեղ են հանգչում զրադաշտական մեռելների ոսկորները:

Զրագաշտականները իրենց մեռելները չեն թաղում հողի մէջ, որովհետև ըստ Աւեստայի երկիրը ստեղծուած է 4 տարբերից, այն է՛ հող, ջուր, կրակ և օդ. (զամին, ար, աթիշ, հաւա) չ'պիտի պղծել և կեղտոտել. հէսց այդ հիման վրայ էլ նրանք իրենց մեռելները չեն յանձնում հողին որպէսդի չ'պղծուի նեխուող մարմնով: Մէկը մեռնելուց յետոյ լուանում են, պատանում ու լոռւթեան ամրոցը տանում. այնտեղ յանձնում են աշտարակի պահապանին, միակ կենդանին մարդուն, որ մեռեալների վրայ հոգալու տիսուր դերն ունի, վերցնում է զիակը գնում այրից դուրս, աշտարակի ներսը, փայտից, քարից կամ երկաթից շինուած յարմարաւոր նեցուկի վրայ, բայց երկնքի տակը. և այգակս մնում է նա, այնքան ժամանակ մինչև որ դիակի մկանունքները փառութեան են ենթարկում կամ մեծ մասսամը երկնային թռչունների կերակուր զանում, հէսց այս վերջին հանգամանքի ջնորհիւ է, որ դախմէների մօտ կարելի է տեսնել միշտ մեծ քանակութեամբ գիշերակեր թռչուններ, որոնք շարունակ ճախրում են լոռւթեան ամրոցի վրայ և նրա յաւիտենական լոռւթիւնը խանգարում իրենց կըսողցով: Երբ զիակի կմախքն է մնում, մաքրուած մկանունքներից, աշտարակի ոլահապանը հաւաքում է ոսկորները, լցնում նրան պատկանող պատանքի մէջ, բերանը կապում և տանում ձգում այն ստորերկեայ այրը, ուր լցուած է իրանց նախնիքների աճիւները: Մեռեալը գախմէ դնելուց 30 օր յետոյ վառում են մի մեծ կրակ մեռելատիրոջ տանը և զոհ են մատուցանում, իսկ եթէ ունեոր է՝ նրա ունեցածից աղքատներին ողորմութիւն են բաժանում:

Այստեղ ուր չկայ լոռւթեան ամրոց և անյարժար է փոխագրել զիակը—զնում են նրանց մօտիկ սարերից մէկի գագաթին և շուրջը քարեր դարսում. օրինակ նոյն ձեռվ վարուեցին Սպահանի զրագաշտականները երբ իրանց երեք ընկերներից մէկը վախճանուեց Ապահանում: Դիակը զրեցին Զուղայի հարաւային կողմը գտնուած Սուֆու սարի գագաթներից մէկի վրայ:

## IV

Գեաբբերը հին պարսիկների մնացորդը լինելով, կրում են իրանց վրայ արխական ցեղի ամբողջ կնիքը. նրանք իրանց արտաքինով, իրանց դէմքի գծագրութեամբ, ամենից շատ և աւելի շուտ յիշեցնում են հային, քան թէ արխական ցեղին պատկանող մի այլ ժողովուրդի: Անձանօթ օտարականը և մանաւանդ եւրոպացիները, եթէ առաջին անգամ են լինում հա-

բաւային Պարսկաստանում, հեշտութեամբ են շփոթւում և գալրիբն հայի տեղ ընդունում, այդ շատ անգամ է պատահել, նոյնիսկ հայ մարդը եթէ ասաջին անգամն է այդ կողմերը լինում, նոյն սխալն է անում ինչ որ արևմուտցիք: Գեաբրերը բարձրահասակ են մեծ մասամբ, գեղեցիկ գէմքով և նոյնիսկ արծուաքիթ, որ սովոր ենք կարծելու թէ միակ հային է յատուկ: Սև ու խոհուն աչքերը նայում են թախծոտ, չգլուխեած մահմեղականութեան ճնշումն է պատճառը, թէ ցեղական մի յատկութիւն է, որ գեաբրերը մեծից սկսած մինչև փոքրը՝ բոլորի ճակատին դրօշմուած է սակաւախօսութեան մի կնիք, որ շատ անընական է թւում մահաւանդ երեխաների մէջ. գիտողին թւում է, թէ որանք լուռ են մէկի հրամանով և չ'պիսուի խօսին յաւիտեան, եթէ չ'խօսացնէք նրանց: Տարբերել որանց հայերից և մահմեղականներից հեշտ է միայն զգեստներին նայելով, այստեղ արգէն շփոթուելու տեղիք չ'կայ. բանի որ մոլեսանդ իսլամը նրանց համար յատուկ տարագ է որոշել, որից հեռու գնալ անկարող են նրանք (թէհրանը որպէս մայրաքաղաք այնտեղի բնակիչ գեաբրերը բացարիկ պայմաններում են զանուում զգեստների և նիստ ու կացի վերաբերմամբ): Գեաբրերը հաղնում են մահմեղական պարսկի նման երկար լարադա (կապայշվերնազգեսա), առկայն մեծ մասամբ մոխրագոյն կտորից, իսկ վարտիկները պիտի լինին սպիտակ, սեղ հագնելու իրաւունք չունին, իսկ զլմներին փաթաթում են մոխրագոյն կամ շագանակագոյն փաթոյթ (առամա չալմա). որանք չեն հաղնում արա կոչուած պարսկական վերաբերկուն: Շորերի այս ձերից կարելի է ճանաչել գեաբր տղամարդկանց: Գեաբր տղամարդկանց շորերից սպիտակ շապակի վրայով հագնուող արխուալուխը կարծեք վոլսանցել է զարաքաղցի կնոջ երեք փեշկանի արխուալուղին, որը իր ձեռվ նոյն է առանց փոփոխութեան. ինչ որ գեաբրերի արխուալուղն է:

Տարօրինակ է թւում տեսնողին և միանգամայն զարմանալի գեաբր կնոջ դիրքը ամբողջ մօտիկ արեկելքի կանանց մէջ: Այն կրօնը որ իսլամ է կոչում և որը իր կապարի պէս ճնշող ծանրութեամբ իսեղդել է իր հաւատացեալ կնոջ մէջ ազատ ոգին ու իր կրքոտ ու խանգոտ հայացըների տակ սափեկել է կանանց փաթաթուել զանազան սաւանների (չաղբա) և լայն վարդիկների (փայթավա) մէջ, իր կոպիտ և վատ ազգեցութիւնն տարածել է շրջապատող և հպատակ այլակրօնների (մութիւն—իսլամ) վրայ, ինչպէս օրինակ հրէաների և քրիստոնեաների վրայ:

Այսպէս մահմեղական երկրներում ապրող հրէուհիները

հագնուում են այն ձևով, ինչ ձևով որ մահմեդական կանայք են հաղնուում. օրինակ Պարսկաստանում բնակուողները՝ պարսկունու ձևով, իսկ կենտրոնական Ասիայում հագնուում են սարթունիների. նման և այլն, նոյնպէս և հայ կանայք ենթարկուել են իսլամի կանանց ազգեցութեան: Մինչև օրս էլ Նոր-Զուղայում և Թէհրանում հայունիները շրջում են չաղքաներով, նոյնիսկ Նոր-Զուղայի ազգային դպրոցի վարժուհիներից շատերը տյգպէս են վարուում. ի՞նչու հեռուն զնալ, Կովկասում շամախեցի հայ կոնջ զգեստները նոյն մահմեդական կոնջ զգեստն է անշահան փոփոխութեամբ. իսկ խեղճ զարարացի կանանց շրերը և մանաւանդ նրանց զանազան քննթակալերն ու կանգունաչափ բարձրութեամբ պալիներից յաւիտենական լալկանութիւնն է խօսում, որոնց մէջ փաթաթում են նրանք իրանց սիրուն զէմքը ու այլանդակում իսլական գեղեցկութիւնը. այս բոլորը մեր կարծէքով արուած է իսլամի կրքոտ հայացքից գեղեցկութիւնը փախցնելու, և մանաւանդ որ իսլամը բաց երեսով կին չէ ուզում տեսնել: (Խաչնարած և վրանարնակ իսլամ ցեղերը, գանուելով բոլորովին այլ պայմաններում, քան նստակեացները, չեն ենթարկուել իսլամի այդ պահանջին):

Սակայն գեաբը կինը բոլորովին հակառակն է զրանցաւում եմ տարօրինակ է թւում, երբ մարդ մի մահմեդական երկրում բաց երեսով շրջող արևելցի կին է տեսնում. և դա զեաբը կինն է: Բազմամբոխ շուկայում, մութ չարսուների տակը խուլ փողոցներում, աղասի գաշտերում, մի խօսքով ամենուրէք, նա շրջում է բաց, առանց չաղքայի և առանց երեսը ծածկելու շրջապատող հայեացքներից. և նայում է նա բոլորի գրայ ոչ վարագոյրի տակից, այլ բաց երեսով, իր ու նեղ աչքերով՝ Ո՛քան քաջութիւն և հոգեկան արիութիւն է հարկաւոր մի իսլամ երկրում ինքնուրոյնութիւնը պահպաննելու համար և նա գեաբը կինը, ոչ մի կերպ չէ ենթարկուել մահմեդական կոնջ օրէնքներին: Գեաբը կինը չէ փախչում օտարականից և ոչ էլ հարազատից. նա խօսում է ամենքի հետ նոյն ձևով պարզ ուրաց երեսով: Տարօրինակ է մանաւանդ սրանց զգեստների ձեր որ հետևեան է:

Գլխներին կապում են մի եռանկիւն թաշկինակ, որը գագաթից ծածկում է զլիսի յետեկի մասը ու տըսները անց են կացնում ծնոտի տակով և կապում ծոծրակի վրայ. գրայ կապում են երկրորդ թաշկինակը—ճակատից գագաթի վրայով անց են կացնում ու կապում ծոծրակի վրայ գարձեալ և ուրիշ ոչինչ, իսկ ձմեռ ժամանակ գործ են ածում ձմեռուայ շալ. որ մեծ մասամբ Եազդի դործուածք է լինում. սրանը բոլորովին

միապաղաղ գոյնով, կամ մի կտորից կարած շաղիկ չեն հագնում. որանց շապիկը կտրուած է համարեա թէ ամեն գոյնի կտորների միացումից որ ներկայացնում է մի տարօրինակ ու խայտաճամուկ բողչա, որը նայողի աչքերն է խատղեցնում. այս զարմանալի գոյների միացումից կարած շաղիկը իջնում է մինչև ծնկները և շատ անզամ էլ ծնկներին չէ համում. իսկ որանց վարոտիքը մի տեսակ ուսած պարկի է նման, որը իջնում է մինչև սրունքները և այնտեղ կապւում կամ ազատ արձակւում: Շորերի այս զարմանալի տարապին ես հանդիպել եմ մահմեղականներից միմիայն ազատութեան սիրահար, ազատ Բախտիեացիների և Լոռերի մէջ, Բախտիարների երկրում, սակայն ոչ այնպէս խայտաճամուկ գոյներով, այլ միապաղաղ սե, կամ սե ու կարմիր գոյներով:

Դեաբրերը, բայցի մահմեղականներից, ոչ մի օտարականից չեն խորշում, իսկ մի առանձին սէր են ցոյց տալիս նրանք գէպի հայերը որոնց մօտ իրենց աւելի ազատ և լաւ են զգում քան ուրիշների:

Դեաբրերի ընտանեկան կեանքը խազաղ է տնջնում. սրանք մահմեղականների պէս բաղմակնութիւն չունին, ընդհանրապէս պահնում է նրանց մօտ միակնութեան ձեզ, չնայած որ զրադաշտական օրէնքը թոյլատրում է ուժինալ երկրող կին ևս, եթէ առաջինը ամուլ է. առկայն կարեիր է առել, որ երկու կին ունեցող զեարք հազիւ թէ ճարուի Պարուկաստանում, իսկ ապահարզանը օրէնքով չէ ընդունւում: Կինը այստեղ այնպէս չէ ճնշուած, ինչպէս մահմեղականների մօտ. Նու ընտանիքի անզամն է իր լիակատար իրաւունքներով և իր ամուսնու ընկերը իր տան անտեսութեան մէջ. որանց ընտանիքը և կինը շատ ևն յիշեցնում հայ գիւղացուն և հայ կինը իր ընտանիքով:

Վերջացնելով մեր խօսքը գեարերի ներկայ զրութեան մասին, երկու խօսք էլ առենք նրանց ապագայի վերաբերմամբ: Այն ինչ որ չէ կարողացել անել իսլամը բոնութեամբ ու կոպիտ ոյժի միջոցով, այն որ չէ կարողացել իր բարոյական ոյժով միացնել զրադաշտականութեան այս մի բուռը հետողներին իրա հետ (ասենք իսլամը բարոյական ոյժից էլ զուրկ է), այդ անում է այսօր բարփականութիւնը իր սիրով ու մարդասիրական գտղափարներով, այն ինչ որ չէ կարողացել համոզել բոնութիւնը, այսօր զրաւում ու զէպի իրան է քաշշում իր շուրջը հաւաքում այս ամենահին կրօնի հետևողներին բարփների մարտիբոսութիւնն ու տանջանքը: Ես ճանաչում եմ թէ Քերմանում և թէ հազդում բաւականաշափ գեարերի, որոնք թէև ծածուկ, բայց սիրով հետեւում են Բարի

վարդապետութեան (աւելի ճիշտը՝ Բահեայի վարդապետութեան) և երբ ազատ քաղաքացիական իրաւունք ստանայ բարիականութիւնը Պարսկաստանում, այն ժամանակ հաւանական է որ գեաբրերի մեծագոյն մասը պիտի հետեւ այդ նոր կրօնին, որովհետև նրանց ամենակրթուած տարրն անգամ հակուած է գէպի այդ նոր կրօնը:

Վերջացնելով իմ այս փոքրիկ յօդուածը գեաբրերի մասին, մեր ազգագրագէտների ու մեր հին պատմութիւնը ուսումնասիրողների ուշադրութիւնն եւ հրաւիրում Ասիայի այս հին ու վասաւառը աղգի փոքրիկ մնացորդների վրայ. այն ազգի որի աղղեցութիւնը անցեալում անպայման եղել է մեզ վրայ շատ մեծ. որի հետ մեր անցեալ կեանքն ու պատմութիւնն է շաղկապուած եղել մինչեւ այն ուս օրերը, երբ թագն ու պալատը փոխանակեցինը բռութիւնը ու ճգնարանների, իսկ սուրբ՝ խաչերի ու այգակէս դարերի համրաքալ ընթացքում ձնշուած ծանրութեամբ մեռանք տանջուեցինք և մինչև օրս, որովհետեւ բրիստոնեայ եղանք, բաժանուեցանք մեզ կրօնակից և ցեղակից պարսերից: Այսուեզ մեր ազգագրագէտները շատ բան կը գտնեն մեր անցեալից, մեր անփառունակ կորած, քրիստոնէութեան զոհ դարձած անցեալից:

Սար—Ծով.

### ՔՆԵՇԴԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԵՏԵՆԵԼԽՈՍՈՒԹԻՒՆ

Գր. Այսեցեան աշամական ժեռականութիւն՝ արեեւան հայոց լեզուի թիֆլիս, 1906, գ. 75 հ.

Մեր այն ուսուցիչները, որոնք սւզում են հայոց քերականութիւն աւանդելիս ունենալ պատմական—վիշլիսովայական որոշ նախապատրաստութիւն մեր նոր լեզուի մասին—մեծ օգուտ կը ստանան ալ. Դր. Վանցեանի այս աշխատութիւ-

նից, որի մասնագիտական քննակատաթիւնը մեր նպատակ ներից դուրս է: Մենք միայն յանձնաբարում ենք մեր ուսուցոչների ուշադրութեան այդ գիրքը, որի մէջ ի մի են ամփոփուած շատ նիւթեր արևելահայ լեզուի մասին, և որոշ սիստեմի են վերածուած: Այս զբարյկը կարող է լրացնել անցաւեալ համարում մատնանիշ արած պ. Մ. Արեգեանի քերականութիւնը:

N.

Կոմիտագիծ կանանագրութեան եւ ծրագիր նախա եկեղեցական ռարական դօլոցների, Թիֆլիս, 1906 թ. գ. 30 կ.

Անցեալ 1905 թ. յուլիսի 20-ին Կաթողիկոսի կոնդակով նշանակուեց մի յանձնաժողով «վասն մշակելոյ կանոնագրութիւն և ծրագիր մի»: Այդ յանձնաժողովը մշակեց կանոնագրութեան հիմնական կէտերը և օգոստոս ամսում հրաւիրեց ուսուցիչներից և ձեռնհաս անձերից մի ժողով, կարծիք յայտնելու յանձնաժողովի մշտկած սկզբունքների մասին: Ժողորը ընտրեց մասնաժողով, որի մշտկած կանոնները և ծրագրները պէտք է նախ ըննուեէին ուսուցչական—հոգարաբձական պատգամաւորների համագումարում առաջ հաստատուենին Կաթողիկոսից: Սակայն մեր ազգի տէր ու տնօրէն բիւրոկրատները ուղեցին այդ համեստ կուլտուրական գործում էլ իրանց քիթը կոխել և տհասօրէն ամեն բան տակնուվարայ անել. բօյկու յայտարարուեց համագումարին, կենդրանական ժողով պահանջուեց զանազան քաղաքականութիւններ անելու և «յեղափոխական» իշմաստակութիւնների մասին պոռոտախօսելու նպատակով: Ինչպէս ամեն մի ձեռնարկ, որին ձեռք է մէկնում «սարսափելի տղերանց» խմբակը, այնպէս է կենտրոնական ժողովը վիժեց: Եւ ահա աւերի և ապականութեան ասպետները այն արեցին որ դպրոցական քաօնն էլ մեզանում մնաց անփոփոխ:

Արդ, գոնեա իբրև մի ժամանակաւոր ուղեցոյց մեր ողբարյալի «կուլտուրական» սումբուրի մէջ, թող ծառայէ այս նախագիծը, որի պակասաւոր կողմերը մատնանիշ կ'անի մի տարուայ փորձը:

Φ.

Գրադարան «Անսմբլ»-ի, № 8, Լուսակենսպառովնարիատը և յնդափոխութիւնը. (Թարգմ. ռուսերէնից Ա. Ս.) Թիֆլիս, 1906, թ. գին. 5 կոպ.

Ի՞նչպէս մի ժամանակ մեզանում զանազան զրչակներ և հասարտկական տղիտութիւնը շահագործող «գործիհներ» իջարն էին գործ զնում «ժողովուրով» խօսքը, այնպէս էլ այժմ շահագործում են «աշխատաւոր զասակարգ» և պրոլետարիատ հասկացողութիւնը: Իր գասակարգային շահերը և իր արժանապատճութիւնը զիտակցող պրոլետարիատը ի հորկէ թոյլ չի տալ որ իր անունը չշահագործեն զանազան բիւրոկրատներ և բախտախնդիրներ, սակայն հասարակութեան տականքը կամ անդիտակից, անսկզբունք խուժանը հեշտոթեամբ գործիք է գառնում զանազան մութ, ոճրագործ անձանց ձեռներում, որոնք իրանց յարգը աւելացնելու համար միշտ սիրում են յինուել այդ խուժիկանացած խուժանի վրայ և իրանց կեղտուարաբքները ծածկել այդ quasi—սրոլետարիատի անունով: Գիտակից պրոլետարիատը իրան խիստ տարբերում է խութար խուժանից: Ահա այդ խուժանն է այն լուժակնովութեարիատը, որի մասին շատ ճիշտ գաղափար է տալիս յիշած զրբոյկը: Արժէ, շատ արժէ որ այդ զրբոյկը կ'արդացուի այն բոլոր շըջաններում, որ մեր խուժանապետները օգտուելով մասսայի տղիտութիւնից կողմնակիցներ են հաւաքում:

R.

### ՆՈՐ ՍՏԱՑՈՒԱՅՐ ԴՐՅԵՐ

- 1) Վ., Բրակէ, կորչին սոցեալ—դէմօկրատները, թարգ. հրատ. «Կայծի», Թիֆլ. 1906 թ. գինն է 10 կ.
- 2) Ս. Շահուման, ազգային հարցը և սոցեալ դէմօկրատները Թիֆլ., 1906 թ. գ. 10 կ.
- 3) Կ. Մարքս և Ֆ. Էնգէլս, Մասիփէստ կոմունիստական կուսակցութեան 1906 թ., գ. 25 կ.
- 4) Ա. Արովիկան, Պատկերներ, Ա. գիրք, Թիֆլիս 1906 թ. գ. 30 կ.
- 5) Ա. Ղարիբեան, Մոմուռ, բանաստեղծական փնջիկ, Ա. Պևտեր. 1904 թ. գ. 10 կ.
- 6) Ա. Բերել քրիստոնէութիւն և սոցեալիզմ, թրդմ. Խորէնի վազարչ. 1906 թ. գ. 12 կ.

- 7) Գ. Վանցեան, Դպրոցական քերականութիւն, Ալէքսանդրոս. 1906 թ. գ. 25 կ.
- 8) Գ. Վանցեան, Պատմական քերականութիւն արևելահայ լեզուի, թիֆլիս, 1906 թ. գ. 75 կ.
- 9) Ն. Տէր Ղևոնդեան, Մայրենի լեզու Ա. տարի 32-րդ տար. 1906 թ. գ. 25 կ.
- 10) Ն. Տէր Ղևոնդեան, Մայրենի լեզու Բ. տարի 21-րդ տար. 1906 թ. գ. 40 կ.
- 11) Ն. Տէր Ղևոնդեան, Մայրենի լեզու չորրորդ զիբք 12-րդ տար. 1906 թ. գ. 55 կ.
- 12) Ն. Տէր Ղևոնդեան, Մայրենի լեզու քերականութեան տարբերքը Ա. և Բ. մաս 1906 թ. գ. 50 կ.
- 13) Կ. Ս. Բարթոլդ, Պատմութիւն Յունաստանի, Ալի-վաշա և Հետերիա, թարգմ. Ստ. Կանաեանի, Վաղարշ, 1906 թ. գ. 1 ր.
- 14) Ամպրէ, բանաստեղծութիւններ, Վաղարշ 1906 թ. գ. 7 կ.
- 14) Ռомансы и п'есни З. А. Багдасаряна, Элегия, изд. Халаджіева. Երդ և բոմանո Ե Բաղդասարեանի, Էլեգիա, հրտ. Խալաջեանի.
- 15) Իննամսեայ հաշիւ աղքատաց Եկաղերինողար քաղաքի. Նոր Նախիջևան, 1901:
- 16) Համառօտ հաշիւ Շուշուայ նպաստամատոյց յանձնաժողովի 1905 օգ. 26—1906 թ. Յուլիս 1-ը:
- 17) Տարեկան հաշիւ վասն 1903 ամի աղղային, կրօնուկան, բարեկարծական և կրթական հաստատութեանց Նոր Զուզայի և գիւղօրէից, Նոր Զուզա 1904:
- 18) Վ. Լիբինեիս, երկու աշխարհ, թարգմ. Հ. Յով. հրտ. «Կեանք»-ի № 6, թիֆլիս, 1906, գ. 15 կ.
- 19) А. С. Дагбашийն, Полный Русско-Армянский словарь, девятый выпускъ, ц. 1 р. 50 к. սրանով լրանում է բառանութ. Ամբողջ բառարանի գինն է 8 ըուբլի, կազմած 9 ըուբլի, ճանապարհածախրով 10 ր.: Հեղինակին պահանջով դիմուղները ճանապարհածախր չեն վճարում:
- 20) Նախագիծ կանոնադրութեան և ծրագիր հայոց Եկեղեցական տարրական գպրոցների, 1906, գ. 30 կ.
- 21) Լուժենապլորետարիատը և յեղափոխութիւնը, հրտ. «Կեանք»-ի, 1906, գ. 5 կ.
- 22) Էմին Տէր-Գրիգորեանց, Սուր և հուր (Քվ է մեզաւոր). Էպիգովներ 5 արարուածով և ասպօթէօղով, 1905 թուին հայ-թաթուրական ընդհարումներից, 1906, Երևան, գ. 1 ր.:
- 23) Օրացոյց 1907, սեփականութիւն Ս. Փրկչեան հիւնուդանցի Հայոց, Կ. Պոլիս:
- 24) Ա. Անենոկոյա, Հանրապետութիւն, թարգմ. Ա Տէր-Սն. թիֆլիս 1906 թ. 5 կ.
- 25) Գիւ զը Մոպասան, «Մի կեանք» վէպ, (Տօլստոյի յառաջարանով) թարգմ. Ա. Տէր-Սն. թիֆլիս 1906 թ. գ. 1 ռ.
- 26) Ա. Բերեկ, «Բրիսոսոնէութիւն և ոսցիալիզմը», թարգմ. Ա. Տէր-Սն. թիֆլիս 1906 թէ 10 կ.

## ՆԵՐԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մի տարւայ յեղափառախան գաստիարակութիւն.—Արեան քաղաքներ. —Հասարակութիւն կառավագանք. —Մեռա բիոլոգասների ամօքիսածութիւնը. —Ս. զեմ. բանի միջոցներով փառ Կարգերու մասին. —Քիսակից մասսայի դեր. —Եշմիածնի կենսանական ժաղավի բնառութեալ մի հանի խոռեալ. —Թարւար թիւն թէ խառնութիւն:

Մի ամիս է մնում որ կաարուել Հոկտեմբերի 17-ի տարեդարձը, բայց յեղափոխական հումկուալեկոծութիւնը լայնածաւալ մուսաստանում դեռ ևս չի խաղաղուել: Մի տարուայ յեղափոխական կեանքը ահապին փոփոխութիւններ է մոտցրել ժողովրդական կեանքի բոլոր խորչերում, խորացնելով դասակարգերի գիֆերնոցիցիան և գիտակցութիւնը, պայծառացնելով մասսաների քաղաքական-հասարակական ըմբոնութիւնը: Եւ մի տարուայ յեղափոխական կեանքը առելի մեծ ծառայութիւն ցոյց տուեց ժողովրդի հասունութեան գործին, քան տասնեակ տարիների սովորական կերպով ընթացող առաջնաշաղկումը:

Յեղափոխական տարին իր ազգեցաւթիւնը թողել է նոյն իսկ ամենարէակցիօն տարրերի՝ հասկացողութիւնների վրայ. եթէ համեմատէք դրանց հայեացքները այժմ և մի տարի առաջ —կը տեսնէք ակամայ, անգիտակցական զիջում դէսլի ձախ. նոյն իսկ հաջակաւոր Տրէպավը մահից մի քանի տարսա առաջ դառնել էր «սահմանագրական» և կամարիլիային հակառակ պնդում էր թէ Պետական Դուման չարձակելու և թէ ընդգիմադիր սեծամանութեան միջից մինիստրութիւն կազմելու մասին: Կովկասի պօլիցիայի գլխաւոր Շիրինկընն էլ հրաժարուելուց առաջ «սահմանագրական» խրատներ էր կարգացել փոխարքայի գլխին: «Իսկական ուսւ մարդկանց գաճնակցութիւնը» պատրաստում է «սահմանագրական եղանակով» հստարական կարծիքը իր կողմ գրաւել, «ազիտացիա և օրգանիզացիա» է լսում այնտեղ, ուր առաջ «ամպուտացիա և պրօվոկացիա» էր անումնոյն հստարակական կարծիքի դէմ:

Բիւրօկրատիան անդամ ուղում է «լիրերալ» և «սահմանագրական» երեալ, մի շարք «բեֆորմներ» է մոցնում զիւզացիների ազատ հողեր ծախկու և նրանց գասակարգային սրդմումները վերացնելու մասին, իսկ զինուորական—գաղտային դատարանները մացնելը, իսուրի և միութիւնների ճնշումները ի հարեկէ բացատրում է նրանով որ նախ խաղաղութիւն պիտի վերականգնեն, որ տպա հնարաւոր լինի լուրջ բեֆորմներ մոցնել... Դուրս է դալիս որ այդ «խաղաղութիւնը» կը վտանգնուէր եթէ թոյլ արուէր սահմանագրական-ժողովրդական կուսակցութեան (կ. դ.) համագումարը և օրինականացումը: Այդպիսի արգելք դնելով Պետական Դումայի կենարօնի առաջ, միւս կողմից բիւրօկրատիան աջակցում է և խրախուսում աջակողմեան կուսակցութիւններին և ինքն էլ մեծ պատրաստութիւն է տեսնում ապագայ ընտրութիւնների ժամանակ բիւրօկրատիական թեկնածուների ընտրութիւնը աջողցնելու: Հասարակական կարծիքի վրայ ազգելու նպատակով պիտի զաւաններում հիմնուեն կիսուպաշտօնական (օֆֆիցիօգ) օրգաններ, մի մի փոքրիկ «Россия» թերթիք: Այդպիսով կառավարութեան ճնշումը առաջիկայ ընտրութիւնների ժամանակ ձգտելու է կեղծել ժողովրդի ազատ կամքը: Այնշուշտ, ժողովրդուկան ձայնը կեղծող բիւրօկրատ այդ շահտաժիստները չեն զատարելու տմին տեղ րդառել թէ իրանք են ժողովրդի, աշխատաւոր դասակարգի իսկական ներկայացւցիչները, գտնուելու են խուժան, իմաստակ պոռուտախօսների, շահագրգուռած չինովնիկների և հասարակական ցեցերի լեգիօններ, որոնք ընդունելու են ժողովրդական կամքի այդ կեղծիքը: Փոքրիկ չափով բիւրօկրատիական այդ օրինակ կեղծիք մենք տեսանք մեր հայկական կեանքում ես... Իր այդ «լիրերալ» և «ուհամանագրական» զործունէութեան հետ միաժամանակ բիւրօկրատիան շարունակում է բաղմացնել արեան բաղանիքների վայրերը, ուր հրէաններին խելքի են բերում հակայեղափոխական տարրերը: Բէլասովկին, Գոմելին, Բիշինևիքին, Օդեսային յաջորդեց օգոստոսի 26-ին Սէգեցի ջարդը: Թնդանօթային սմբակոծութիւններով և հրացանների համարիկերով ջարդում էր անզէն խաղաղ ընակիչների ապատամբութիւնը, իսկ խուլիգանները միաժամանակ մաքրագարգում էին հրէանական տները և խանութները աւելորդ ապրանքներից և կահկարասիքներից: Մի յեղափոխական պատժելու համար սպանում էին հարիւրաւոր անմեղ և խաղաղ ընակիչներ: Այդ է սպիտակ տերրորի լոգիկան:

Այդ լոգիկայով է առաջնորդուել բիւրօկրատիան և կովկասում, «յեղափոխականներին» պատժելու համար ամբողջ բիւ-

դեր և քաղաքներ մատնելով կատաղած խուժանի եղբայրասպան վայրագ բնագդների վակիսանալիային։ Թող իրար կոսոռեն, թող արխնաշտութեան, աղդային ամսմիտ քինախնդրութեան պսիխօղը վարակելով մասսաները աւեր և սրածութիւն սփոփի ամբողջ երկրում, թող այս դժոխքի մէջ տապակուի խաղաղ մասսան—միայն թէ հատարաւոր անոնեղ մարդկունց մէջ ոչչանան մի քանի ցեղավոխաւկան» համարուած անհատներ և խմբակներ։ Ահա անարխիան պահպանելու դիւային միտքը։

«Մեղնից յետոյ թէկուզ ջրհեղեղ»—այս է բիւրօկրատիայի բարոյական սկզբունքը. իր գերիշխող գիբքը, իր կաստային շահերը պաշտպանելու համար նա պատրաստ է ամեն ինչ կործանել, ունատառի անել։ Ոչ ոք իրեն թէ չի դիտակցում երկիրը ներկայ գրութիւնից հանելու միջոցները, ոչ ոք չգիտէ այդ ճանապարհ և բիւրօկրատիան պէտք է զօռով, բոնի միջոցներով ստիպի որ ժողովուրդը կնայ այն ճանապարհով որ հաճելի է այդ ինքնակոչ, ինքնընտիր ներկայացուցիչներին։ Տնարոյս բիւրօկրատները կ'ասէին. այդ լինում է «զափտելու իրաւունքով», ու զափտելու իրաւունքով, ու զափտելու իրաւունքով, ու զափտելու իրաւունքով, ու զափտելու իրաւունքով։ Պահպանական ոյժ ունի...

Դրական ոյժերի յարաբերութիւնն այդպէս է! վաղը կը փոխուի այդ յարաբերութիւնը և հրամաններ, օրէնքներ թիկաղը կը լինի ոչ բիւրօկրատիան, այլ վիտակից մասսան, որ առկայն խաղալիք չի գառնալ դեմագոգների և բիւրօկրատների ձեռքում և եղբէք չի գաւաճնանի ազատութեան սկզբունքներին։ Խոր ակօնէք գիտակցութիւնը մասսաների մէջ որ պակասին խուժանի շարքերը! Հետևարար, բէալ ոյժերը գիտակից մասսայի կողմը գրաւելու համար պէտք է շարունակել նրա մէջ գիտակցութիւն զարթեցնող ագիտացիան և դիմագրաւելու կարողութիւն ստեղծող օրգանիզացիան (կազմակերպումը)։ Երկու զործողութիւնների լրջութիւնը պահանջում է ժամանակ և անդուլ աշխատանք։ Ի՞նչպէս ծառի բունի մէջ անթիւ բջիջներ աննկատելի աճելով վերջի վերջոյ ճաքեցնում են իրանց կաշկանդող կեղեր և շարունակում իրանց աճումը և ոյժերի ամրարումը, որպէսզի նորից լայնացնեն այդ ճեղքուածը, նոյնը և յեղափոխական կեանքում։ Խռովարարական լրակումները, յեղափոխական ֆէյքերկերկները, ճռճռան ֆրազները և տարտարենական յոխորատանքները անզօր են վուգութիւն առաջ բերել բէալ ոյժերի յարաբերութիւնների մէջ։ Ժողովրդական բջիջների մէջ պէտք է շարունակել անդուլ աշ-

խատանք գիտակցութիւն և կազմակերպութիւն ստեղծելունը պատակով։ Իսկ թէ մեր կովկասում զեռ որ աստիճան յետ է մը նացել զասակաց զայինդիտակցութեան զարգացումը և ի՞նչ խառնափնթորութիւն է տիրում մի «մեծ» քաղաքական «կուսակցութեան» կազմակերպման և «կառավարութիւն» խաղալու տեսչերի մէջ—այդ պէտք է որ յայտնի լինի բոլորիս Կենտրոնական ժողովի պատգամաւորական ընտրութիւնները ցոյց տուին թէ ինչ ըան է «աղքային կառավարութիւնը» մեղանում։ Ռուս բիւրօկրատիան անդամ այդ տեսակ հարցում ամօթխածութիւն է պահպանում։ Պետերբուգիան Հեռազրական գործակալութիւնը շտապեց պաշտօնական հերքում տպել թէ «իբր ներքին գործոց մինիստրութեան մէջ եռանդուն աշխատանքներ են կատարում այն նըւպատակով որ առաջիկայ ընտրութիւնների ժամանակ Պետական Դուման անցկացնեն կառավարութեան հաճելի ժարդիսնց»։ Այդ հերքումը չի գոհացնում «Русс. Вѣдом.»ին և նա իր կողմից նկատում է հետևեալը. «Իթէ մինիստրութիւնը բացարձակ կերպով հրաժարուէր պաշտօնական թեկնածութիւնից, եթէ նա ուղարկէր գաւառական վարչապետներին հրահանգներ, որոնց մէջ եռանդուն կերպով պնդէր ընտրութիւնների ազատութեան վրայ և խիստ պատասխանաւութիւն սպասնար պաշտօնական անձանց կողմից ընտրողների վրայ ճնշումներ գործելու փորձերի համար, —եթէ այդ յայտարարուած լինէր պարզ և հրաժարակաւ, ինարկէ աւելորդ կլինէր որ և է հերքում... բոլորին յայտնի է թէ նապոլէօն III-ի ժամանակ ինչ ճնշումների տակ էին կատարում ընտրութիւնները»։

Սակայն միջոցների անխարականութիւնը փոխում է մարդկանց մաշտարը աղնուութեան և բարոյականութեան մասին և գժուար է լինում այնուհետեւ որևէ չ բան ճամովիլ. միշտ ճարշում է սովիետութիւն արդարացնելու համար թոյլարուած զեղծումը։ Մաքուր յեղափոխական կազմակերպութիւնները ի հորկէր չեն կարող այս կամ այն սպատճառարանութեամբ ընդունել ժողովուրդը անբարոյականացնող միջոցները։ Յայտնի է թէ, օրինակ, բռնի միջոցով փող կորպել թէ մասնաւոր անձից և թէ արքունական հաստատութիւններից որքմն ի չար են գործ զրել զանազան խուլիկանական, շանտաժիստ և յանցաւոր կազմակերպութիւններ ձաւ Մաֆիա, Կոմմորակ կոմմունիստ—անարխիստները... Սոցիալ-Դեմոկրատիան երրէք այդ միջոցները չի արդարացրել և վերջի ժամանակներում կայացած «Զ-րդ հիւսիսային շրջանայինկօնքերենցիայում» ու բացորոշյալնեց որ նատնի լատրելի է համարում կուսակցութեան անդամների համար մասնակցել զուով դրամական միջոցներ կորպելու գործունէութիւնները»։

րին և օդուռել այդպիսի գումարներից։ Մաքոր, գաղափարական յեղափոխականը այլ կերպ չեր կարող վարուել, բայց մեղանում...

Նշանակած ժամանակին էջմիածնում կայացաւ «կենտրոնական ժողովը», որ գաշնակցականները Սահմանադիր անունն էին տալիս։ Ընտրական ամեն տեսակ զեղծումներով և ճնշումներով ժողովրդի կամքը կեղծելով այդ «կուսակցութիւնը» էջմիածին տարաւ իր բոլոր մտաւորաբարոյական ոյժերը և ցոյց տուեց թէ ինչ կերպ է նա առնասարակ վճռում հասարակական-քաղաքական հարցերը։ Էջմիածնի հիւանդանոցում ազգույին պարլամենտ խաղալու գաւեշտական փորձեր եղան։ լսուեցան տեղի, ժամանակի, հանգումանքի և քննուող տուրքակաների հետ կապ չունեցող յեղափոխական պուստախօսութիւն, ձախամոլական իմաստակութիւններ, դօնկիխօսական հարայ հրացներ և տարտարէնական յօխորտանքեր—այդ բոլորը կարդաց հայ ժողովուրդը և հիսութափուած ասաց ինքն իրան։ «Եւ այդ մարդիկ յանդգնութիւն են ունեցել զօռով իրանց ամբողջ ազգի տէր ու տնօրէն յայտարարելով ամեն տեսակ էքոպերեմենտներ կատարել նրա գլխին»։ Միշտ «ամենածայրայեղ յեղափոխական» հրեալու տենչով բանուած այդ պարունները մոռացան որ զնում են պալլիատիւններ, ժամանակաւոր բարեփոխութիւններ մշակելու և ոչ իսկական յեղափոխական ակտեր կատարելու էջմիածնում։ Եւ երբ ոպառուեցան ճոռմաքանների նիւթերը և յոգնեցին ճգակելուց և բղաւելուց—տեսան որ իրական աշխատանք կայացնելու միանգամայն անպատճառ են և անկարող։ Խուս բիւրօկրատիան իր անտեղի միջամտութիւնով վերջ զրեց կոմեգիային—ուրի վերջին արարողութիւնը այդպիսով չահսան հաղիսականները։ Պօլիցիայի երկուուր բաւական սթափեցը է տաքացած «յեղափոխականների» արիւնը և նրանք համեստօրէն ստորագրութիւն են տուել և հեռացել՝ «էլ չանելու» խոստումով, ինչպէս վայել է սովորական օննատելուներին։ Իսկ կենտրոնական ժողովի սուջն զրուած հարցնատ հարցերը, դպրոցական, կալուածական և վարչական մնացել են նոյն դրութեան մէջ և նոյնիսկ աւելի խըճընուել, որովհետեւ էջմիածնի կամարիլիան տեսաւ որ վայելում է առանձին համակրութիւն աղքային բիւրօկրատների կողմից։ Կամարիլիան և բիւրօկրատիան ամենասերտ բլոկ են կազմել։ Եւ կաթողիկոսը իրան զգում է աւելի մեծ չափերով միահեծան, ըան առաջ, մեր բիւրօկրատաները գիտեն որ այդ մեահեծանութիւնը միջոց է տալիս զանազան հաջախների և վեհարանի կամարիլիայի աղղեցութիւններով գլուխ բերել իրենց ցանկա-

ցածները: Այդ կողմից մեր ազգային բիւրօկրատները յիշեցնում են գերմանական խնկերներին, որոնք սիրում են ասել. «Կայսրը արսօլիւմ է, երբ նա մեր կամքն է կատարում»...

Երկու ամիս շարունակ կագ ու կոիւ, տուր ու գմփոց, ընտրողական պայքար զուլուսական միջոցներով, ճռճռան ֆրագ-ներ, սպառնալիքներ, ռազմական կոչեր, բուտաֆորական նիշակների և սրերի թափահարում և հետևանքը ...ոչինչ: Անշուշտ դրանց Պանզլոսս փիլիսոփաները դարձեալ պատճառ-ների և հետևանքների մասին երկար ու բարակ դատողութիւններ կը գրեն և կ'ապացուցեն որ ամենայն ինչ կատարեալ է դաշնակցութեան կառավարութեան ներքոյ և հայ ազգը բախ-տաւոր է որ նրա վիճակը գտնւում է այդպիսի հանճարեղ քա-դաքագէտների ձեռքերում...

Անշուշտ, «տղերանցից» շատերը տոգորուած են՝ բարի ցան-կութիւններով և գործելու եւանդով. սակայն ցանկութիւնը և եռանդը առանց առողջամտութեան, առանց գիտութեան, ա-ռանց լուրջ մշակուած ուղղութեան և գործելակերպի ընդունակ են անել այն, ինչ որ եղաւ Թիւրքիայի, Պարսկաստանի և այժմ էլ Կովկասի հայերի կեանքում. քայքայում, աւեր, կործանում ժողովրդի, սումբուր, քառ և ինարալս աղկային կոչուած բոլոր գործերում: Մեր «տղերքը» խակութիւնը չեն ջոկում թարմութիւնից: Խակ պտուղներից չափազանց տարբեր են հա-սուն և թարմ պտուղները: Խակ մտքի պտուղներից հասարա-կական փորլուծութիւն, գեղինտերիա և մահ է առաջ գալիս միայն և՛ ոչ թէ առաջադիմութիւն...

15 սեպտ.

Հ. Ս.

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Պարսկաստանի եւ Թիւրքիայի վերածնութիւնը,

Շահնշահի երկիրն էլ ստացաւ սահմանադրութիւն։ Ռուսական մեծ յեղափոխական արտաքին արձագանքներից մէկն էլ այդ էր։ Եթէ ի նկատի ունենանք այդ պիտութեան ներկայ տնտեսական, սօցիալական վիճակը՝ պիտի համոզուենք որ այդ սահմանադրութիւնը տիրող հոգեորական-ֆէօդալական գառակարգի պահանջներն է միայն գոհացնելու։ Հոգեորականութիւնը ահապին ազդեցութիւն ունի մահմեգական Պարսկաստանում։ այդ դասակարգը գորեզ նկատական-կրօնական ոյժ լինելոց բացի միաժամանակ այդ երկիրի մտաւորականութեան (ինտելիգենցիայի) ներկայացուցիչն է։ Խոշոր կալուածատէրերի շարքում են կանգնած բազմաթիւ մուշտէիդներ, որոնք խաների հետ մի-մի աւատական իշխաններ են։ Երբորդ տեղը բռնում է վաճառականների դասակարգը։ Այդպիսով, կղերը, ֆէօդալները և բուրժուազիան իրեն իշխող դասակարգեր այժմ ըստանում են քաղաքական իրաւունքներ միջամտելու իրենց երկրի օրէնսդրական աշխատանքի մէջ։ Այդ դասակարգերը իրենց ազատագրական ձգտումների մէջ բաւական զօրեղ աջակցութիւն են գտնում և անգլիական դիպլոմատների ներկայացուցիչների կողմից, իսկ կղերը պաշտպանում է, յենուելով խուժանի զգացմունքների վրայ և «բասուա մտնելու» անխախտելի սովորութիւնը օգնում է նրան աբսոլիւտիզմի վրէժինդրութիւնից։ Այդպիսի նպաստաւոր հանգամանքներին միանում է ներկայ շահի մեղմ բնաւորութիւնը և դէպի երոպական կարգերը ունեցած հակումները։ Ինչքան և պակասաւոր լինեն Պարսկաստանում ստեղծուող այդ «լիբերալ» նոր կարգերը, այնուամենայնիւ նրանք մի էտապ են այդ երկրի զարթնած գիտակցութեան մէջ և առաջադիմական մի քայլ նրա էվոլյցիայի մէջ։ Եթէ Արդարութեան Տունը կարողանայ վարչական-օրէնսդրական այնպիսի կարգեր մտցնել երկրի մէջ, որոնք հընարաւորութիւն տան նրան տնտեսապէս առաջ գնալ՝ անշուշտ

յարութիւն կ'առնեն ժամանակով և աշխատաւոր դասակարգերի մէջ քաղաքական ձգումներ և գիտակցական նուաճումների հետ միասին կընկնեն կրօնական կապանքները ու հնագարեան նախապաշտամունքները: Եւրոպական միտքը և սօցիալական արդարագագութեան գաղափարը անընդիմադրելի թափով մուտք կը գործեն ժողովրդական խաւերում, կը յեղաշընուի շիրտերի իրական ոյժերի յարաբերութիւնները, որոնք իրանց հերթում փոփոխութիւններ կը մտցնեն այժմեան բուրժուական-ֆէուլալական սահմանադրութեան մէջ, աւելի գեմօկրատիկ դարձնելով նրան, և ճանաչել կը տան առանց կրօնի խորութեան սկզբունքը:

Այժմ ընտրողական իրաւունք ունին արական սեռից 30 տարեկանից սկսած մինչև 70 տարեկան հասակը բոլոր զբագէտ մահմեղական պարսկահպատակները, որոնք պետական ծառայութեան մէջ չեն և դատաստանով արատաւորուած չեն: Պարսկաստանը բաժանուած է 12 ընտրական շրջանների: Թէհրանը կազմում է 13-րդ շրջանը 50 պատգամաւորներով: Բոլոր պատգամաւորների թիւը լինելու է 126: Ընտրութիւնները երկաստիճան են լինելու գաւառներում և ուղղակի թէհրանում: Պատգամաւորները ընտրում են 2 տարով: Պատգամաւորների անձը անձեռնմխելի է, բացի այն դէպքերից, երբ յանցանք են գործում: Առաջին նիստը կը կայանայ շահի նախագահութեամբ:

Այդպիսով Պարսկաստանը նշանաւոր քայլ է անում և մենք ցանկանում ենք որ խաղաղ կուլտուրական էվոլյուցիան հաստատ արմատներ գցի այդ հինաւուրց պետութեան մէջ, որի ժողովուրդը դեռ կիւրուսների ժամանակ զարմացնում էր յոյններին իր ընդունակութիւններով և առաքինութիւններով:

Վերածնուելու տիսչը զօրեզանում է և Թիւրքիայում: Այդ տեղ դարձեալ նրա տնտեսական զարգացման ֆազը այն վիճակում չէ որ քաղաքական յեղափոխութեան մէջ պրօլետարիատը որ և է զեր կատարի: Թիւրքիան իր ներկայ տնտեսական և մտաւոր յետամեացութեան մէջ անկարող է զարգացնել զիստակից պրօլետարիատ. գիւղացիները և ֆիզիկական աշխատանքով ապրող մասսան իր ներկայ մտաւոր վիճակում անկարող է զօրեղ գիտակցական զեր կատարել Թիւրքիայի ներքին յեղափոխութեան մէջ. այդ զերը իվոլիւցիայի օրէնքով գեռ վերապահուած է ինտելիգենտ-բուրժուական խաւերին, որոնք առմեն տեղ եղել են քաղաքական տարրական իրաւունքներ ձեռք բերելու կուում առաջ խաղացող տարրը: Պրօպագանդան և կադակերպումը կարող է սկսուել միայն այդ խաւերի միջից, քանի որ մտաւոր և տնտեսական ոյժը այդ տեղ է ամբարուած:

Զանազան խմբակների խռովարարական փորձերը, մասնակի հայլուկային կոիւները, այն էլ աղքարնակութեան մի փորբաթիւ ցեղի կողմից—և շովինխոտական գունաւորմամբ, ոչ մի աշողութիւն չեն ունենալ: Թիւրքիայի պէս երկրներում մանաւանդ պէտք է խոյս տալ աղքային ագգրեսիւ քաղաքականութիւնից, չգրգռել աղքային անտագոնիզմն ու կըքերը, որոնք բռնկուելով դաւնում են ամեն ինչ կործանող և լափող հրդէնաւոր: Բաւական չէ խօսքերով համոզել թէ այս կամ այն քայլը նացիօնալիստական չէ, այլ գործով պէտք է այնպիսի տակտիկայ գտնել որ բախտակից ժողովրդների ատելութիւնը, և զայրոյթը չգրգռուեն, հայրենասիրական ընական զգացմունքները չվերաւորուեն: Թիւրքը կարող է ձեռք ձեռքի տուած, օրինակ հայի հետ, կուռել վատթար բեժիմի դէմ, ամբողջ հայրենիքը վերանորոգելու նպատակով, բայց եթէ նրա վրայ մեծամիտ յոխորաւանքով նայի չնչին ոյժ ներկայացնող հայութիւնը, անջատում, դրսից միջամտութիւն, բռնի անդամահատութիւն պահանջի, գօնկիխոտական քալլագիօղութիւններ անի—երբէք «համերաշխութեան» մասին մբուած թղթի կըտորները վատահութիւն չեն յարուցանիլ: Մի կողմ պէտք է թողնել աղքային բոմանտիզմը, յուսահատութեան թելադրած «արեան բոմանտիզմը» և նոր ճանապարհի, նոր գործելակերպերի մասին լուրջ մտածել:

Թէ իսկապէս նոյնիսկ լաւագոյն թիւրքերը կարող էին հայ խակամիտ և ցուցամոլյեղափոխականների անտակտ գործողութիւններին ոչ համակրանքով վերաբերութիւն այդ երևում է իշխան Սարահեղինի իր «Թերակկը» օրգանում գրած հետևեալ խօսքերից («Ե՞՞» № 201). «Ի՞նչ որ մենք խորապէս ափսոսում ենք այդ այն ձեն է, որով երբեմն կատարւում են մի շարք ցոյցեր, որոնց մենք գտնում ենք վասակար այն դատի համար, որին ցանկանում ենք ծառայել միասին... թող թոյլ տրուի ինձ աւելացնել ե՛ այն, որ եթէ մեր հայ հայրենակիցները Արտասահմանում ցոյց տուած իրանց ջանքերի միայն մի մասը գործ դրած լինէին թիւրք աղատական շարժման ընկերակցելու նպատակով, ներկայ բէժիմը վաղուց վերջացած կըլինէր»:

Իսկ մերոնք յամառութեամբ շարունակում են մոլորեցնել խուժանը միրաժներով և բարբաջել «արեան բոմանտիզմի» մասին և Վօլտերի փիլիսոփայ Պանդլոսսի նման անմիտ կոտորածների ու աւելմունքների դիմաց մխիթարել թէ Սինիօրոսի պատմութեան մէջ փոխարէնը մի քանի տող կլինի գրուած... մի քանի տողի համար աղդ կործանել! Այս դուք Պանդլօսներ և ցուցամուներ!:

## ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Խմբագրութիւնը յատուկ խնդրում է յօդուածագրերից՝ զրել պարզ մանաւանի քւերը, յասով անոնեն ու օսուր բառերը, և թերի միայն մի երեսի վրայ, առանձնապես ու ույարձնել կէտաղրութեան, ուղազարեան և նոր պարեւութիւնները ոռոշակի լինելու վրայ; Թարգմանութեան հետ պէտք է ուղարկել խմբագրութեանը նաև բնագիրը:

2. Զբնդուուած մեծ յօդուածները պահւում են խմբագրատանը 6 ամիս, իսկ յետոյ ոչնչացնուում են: Զեսաղիքը յետ սոտանալու համար պէտք է ուղարկել ճանաւարածախուը: Փոքը յօդուածներն ու սոտանաւորները չեն վերադարձնուում:

3. Գրուածքների վարձատրութեան չափը որոշում է խմբագրութիւնը: Խմբագրութեան առանց պայմանների ուղարկուած ձեռագիրները համարւում են անվճարելի:

4. Խմբագրութիւնը իրան է վերապահում ուղարկուած յօդուածները փոփոխելու կամ կրթատելու իրաւունքը:

5. «Մուրի» համարը չստացուելու գեղքում պէտք է խմբագրութեանը տեղեկութիւն տալ ոչ ուշ, քան յաջորդ համարի լոյս տեսնելը:

6. Խմբագրութեանը զանազան հարցումներով դիմող անձինք պէտք է պատասխանի համար ուղարկեն նամակադրոշը կամ պոստային բլանկ:

7. Հասցէ փոփոխելու համար պէտք է ուղարկել 40 կոսէկ: Հասցէ փոփոխումը պէտք է ստացուի իւրաքանչիւր՝ ամսի 10-ից ոչ ուշ, որպէսզի առաջիկայ համարն ուղարկուի նոր հասցէով: Նոր հասցէի հետ պէտք է յայտնել նաև հին հասցէն:

## ՅՈՎՀԱՆՆԻՍ ԴԱԼԻԹԵԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՄԲ

լրաց են տեսնել՝

№ 5. Մօպտուան — «Մի կետնը»

Թարգմ. Ա. Տէր-Անանեան 1 ո.

№ 6. Ա. Ագառոյն, Կոսոչեկ խնճճա, ոնդուխ

Թարգմանից Վ. Բարեան. 10. կ.

№ 7. Ա. Աննենսկայա, «Հանրապետութիւն»

Թարգմ. Ա. Տէր-Անանեան 5. »

№ 8. Ա. Բերել, «Քրիստոնէութիւն և Սօցիալիզմ»

Թարգմ. Ա. Տէր-Անանեան 10. »

«Շուտով լոյս պիտի տեսնեն.

№ 9. «Զւիցէրիա» և

№ 10. «Կորչին Սօցիալ Դեմոկրատները»:

ՅՈՒՐԴԱԿԱՆԻ Ե ԲԱԺԵԿԵՐՊԱԳՔԻ ԹԻՖԻՆ

1906 թ.

# ՄՈՒՐԴԱԿԱՆ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍՏԱՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա. Մ. Ս. Ա. Գ. Ռ. Ի.

(Եսպ. շրջան Վ1 տարի)

Բ Ա. Ժ. Ա. Շ. Ո. Բ. Դ. Գ. Ի. Ն. Լ.

Խումանական	տարեկան	10 լ.	(32 դ.)
կէս տարին	6 »	կէս տարին 7 »	(18 դ.)
ամսական	90 կ.	ամսական	(3 դ.)

Բաժանորդագինը կարելի է վճարել նաև և մասմաս(5—5 ր.), եթէ բորդ վճարը լինում է մայիսին: Ճխ. ղղղղոցներում ուսուցանողների, աշակերտների, ուսանողների, գիտացիների և լանուտըների համար բաժանորդագինն է 8 ըուբլի տարեկան, որ կարելի է վճարել մաս-մաս(4-4)ր.:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆՆԵԼ ԸՆԴՈՒՆԵԼՈՒՄ Է

Թիֆլիսում—իմբագրատանը (ձավճակածեմ վաղոց, ա. № 12)

Կայունութեան այլ տեղերից պէտք է զիմել Տիֆլիս, և

въ редакцио журнала «МУРЧ».

Առաջամատնեից՝ Tiflis, Rédaction de la revue «MOURCH».

ՅՈՒՐԴԱԿԱՆ, ընդունում է ամեն լեզուով: Յայտաբարութիւնների համար վճարում են: — 1 երես բանող յայտաբարութեան համար 15 ր., 1/2 եր. 8., 1/4 եր.—4 ր., տողատեղ (կողակ.)—40 կ.:

Խմբագիր՝ Անդրն ՍԱՐԳՍՅԱՆ